ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՄՓՈՓ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետություն	ՀՀ
Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան	Պաշտպան
«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք	Սահմանադրական օրենք
Մարդու իրավունքների եվրոպական դատարան	ՄԻԵԴ
Արդարադատության միջազգային դատարան	ԱՄԴ
Տեղական ինքնակառավարման մարմիններ	ՏԻՄ
Կարմիր խաչի միջազգային կոմիտե	ԿԽՄԿ
Զինված ուժեր	ԶՈՒ
Պաշտպանության նախարարություն	ՊՆ
Կանխարգելման ազգային մեխանիզմ	ԿԱՄ
Քրեակատարողական հիմնարկ	ՔԿՀ
Ձերբակալված անձանց պահելու վայր	ՁՊՎ
Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտե	ԽԿԿ
Հոգեկան առողջության կենտրոն	ՀԱԿ

ԵՐԵՎԱՆ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

II. ՆԱԽԱԲԱՆ..... 7

III. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9

1. ՆՈՐ ՄԱՆԴԱՏ 9

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 9

3. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ 10

4. ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ 10

5. ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 11

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ. 14

7. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹԵԺ ԳԾԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ՈՒ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ 14

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ 15

1. ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ15

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԵՏ 16

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ, ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԵՐ, ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ 19

V. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ 24

V. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 25

1. ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ 25

2. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ 2022Թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-14-Ի ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՈՒ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ..... 34

1. Փաստահավաք աշխատանքներ հարձակման ենթարկված համայնքներում..... 35

2. Առաջարկությունների ներկայացում կառավարությանն ու հոգեբանական աջակցության կազմակերպում հարձակման ենթարկված որոշ համայնքների բնակիչներին..... 36

3. Սեպտեմբերի 13-15-ին ամփոփ տեղեկանքների կազմում ու ներկայացում միջազգային գործընկերներին. 37

4. Միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների հետ հաղորդակցություն. 2022 թ. սեպտեմբերի 13-14-ին Պաշտպանն անցկացրել է հետևյալ առցանց հանդիպումները՝ 37

5.Պաշտպանի կողմից արտահերթ զեկույցների մշակում և տարածում. Նախորդիվ բաժնում մանրամասն ներկայացվել են ի թիվս մյուս արտահերթ զեկույցների,

սեպտեմբերի 13-14-ի ու դրան հաջորդած իրադարձությունների առնչությամբ կազմված զեկույցների մասին մանրամասն տեղեկատվությունը: Դրանք են՝ 37
6. Համագործակցություն փաստահավաք առաքելություն իրականացնելու մանդատ ունեցող միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ 38
7. Աջակցություն այլ դերակատարների կողմից իրականացված փաստահավաք աշխատանքներին. 39
8. Պաշտպանը նաև հետևողական է եղել հայ զինծառայողների կողմից ենթադրյալ հանցագործությունների կատարման վերաբերյալ տեղեկություններին արձագանքելու տեսանկյունից: 39
9. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքային այցը Ստրասբուրգ 2022թ. սեպտեմբերի 26-ից 29-ը: 39
10. Հարցազրույցներ միջազգային հեղինակավոր պարբերականների լրագրողների հետ. 40
3. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ, ՊԱՀՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ և ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ..... 41
4. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊՈՂ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ) ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ 45
5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՐԾԻՔՆԵՐ 47
6. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ..... 48
7. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 52
8. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 53
9. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 55
1. Կալանավորված անձի հաղորդակցության ազատության իրավունքի խախտման վերաբերյալ կայացված որոշում 56
2. Վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձի սահմանահատումներն արգելելու կապակցությամբ իրավունքների խախտման վերաբերյալ որոշում 58
3. Վստահորդին տեսակցելու նպատակով Փաստաբանի մուտքը խոչընդոտելու խնդրահարույց պրակտիկա 59
4. Անձանց ազատ տեղաշարժի համար արգելքներ հարուցելու խնդրահարույց պրակտիկա 61
5. Խնդրահարույց պրակտիկա ոստիկանության բաժիններում և քրեակատարողական հիմնարկներում 63
10. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԱՆՑ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ..... 66
1. Ընդհանուր դիտարկումներ 66
2. Արագ արձագանքման ընթացքի տվյալներ 67

3. Այլ հավաքներ 72
4. Առաջարկություններ ոստիկանության գործելակերպերի բարելավման վերաբերյալ 74
11. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 77
1. Մոնթորինգային, արագ արձագանքման և այլ այցեր 78
2. Պաշտպանի հետևությունները շարունակվող երեք համակարգային խնդիրների վերաբերյալ 81
3. Անհատական բողոքներով բարձրացված այլ տարածված խնդիրներ 86
4. Համագործակցություն 89
12. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 91
1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ 92
2. Աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրներ 98
3. Առողջության պահպանման իրավունք 102
4. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի սահմանափակելը 104
13. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 105
14. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ.. 107
1. Ոլորտի ընդհանուր բնույթի խնդիրներն ու Պաշտպանի նախաձեռնությունները 107
2. Պաշտպանի գործունեությունը Արցախից Հայաստան բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ 111
VII. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ 113
1. Մշտադիտարկումներ. 114
2. Երեխայի իրավունքների վերաբերյալ թեմատիկ արտահերթ ու այլընտրանքային զեկույցների պատրաստումը 116
3. Երեխաների իրազեկվածության բարձրացում և մասնակցության իրավունքի ապահովում 117
4. Մասնագետների ու երեխաների վերապատրաստումներ երեխայի իրավունքներին առնչվող թեմաներով 120
5. Օրենսդրության բարելավում և վերլուծությունների իրականացում 122
6.Համագործակցություն 122
VIII. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ 123
1. Իրազեկում և կրթություն 125
2. Իրավունքների խախտումների կանխարգելում 127

3. Ոլորտային իրավական դաշտի և պրակտիկայի բարելավման նպաստում 129
4. Մշտադիտարկումներ և այցեր 131
5. Դիմումների ուսումնասիրություն և քննարկում 134
6. Համագործակցություն քաղաքացիական հասարակության կառույցների, շահագրգիռ մարմինների հետ 136
IX. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ 138
1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների մշտադիտարկման արդյունքները 140
2. Հոգեբուժական հաստատությունների մշտադիտարկման արդյունքները 167
3. Ոստիկանության ձերբակալված անձանց պահման վայրերի մշտադիտարկման արդյունքները 198
4. Դատարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահելու համար նախատեսված խցերի մշտադիտարկման արդյունքները 204
X. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՎՅԱԼՆԵՐ 207
XI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 214
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ՔՐԻՍՏԻՆՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ 214
ՀԱՎԵԼՎԱԾ 2.ՊԱՇՏՊԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 224
ՀԱՎԵԼՎԱԾ 3.ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 237

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանն Ազգային ժողովի կողմից այդ պաշտոնում ընտրվել է 2022 թվականի հունվարի 24-ին և պարտականությունների կատարմանն է անցել 2022 թվականի փետրվարի 25-ից, երբ ավարտվել էր հաստատության պատմության մեջ առաջին անգամ Սահմանադրությամբ նախատեսված ամբողջ ժամկետով պաշտոնավարած Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների ժամկետը:

Մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանը հրաժարականի դիմում է ներկայացրել 2023թ. հունվարի 23-ին, ապա ըստ Սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի, հաջորդ օրը կրկին հրաժարականի դիմում է ներկայացրել Ազգային ժողովին:

Սույն ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է Սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորման հիմքով, ըստ որի, «Հրաժարականի հիմքով Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Պաշտպանը հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում իր հերթական տարեկան հաղորդումը ներկայացվելուց հետո մինչև հրաժարականի դիմում ներկայացնելն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության վերաբերյալ ամփոփ հաղորդում»:

Սույն ամփոփ հաղորդմամբ ՀՀ Ազգային ժողովին է ներկայացվում Պաշտպան Քրիստիննե Գրիգորյանի գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ ներառելով 2022թ մարտի 30-ից մինչև 2023թ. հունվարի 24-ը ընկած ժամանակահատվածը:

Փորձ է արվել Ամփոփ հաղորդման մեջ ներառել ոչ միայն Պաշտպանի գործունեության մասին տեղեկությունները, այլև հաստատության 2022թ.-ի Տարեկան հաղորդման մեջ ներկայացվելիք վերլուծություններն ու առաջարկությունները:

II. ՆԱԽԱԲԱՆ



Քրիստիննե Գրիգորյանը ձգտել է Մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունն իրականացնել անաչառորեն, մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով՝ հավատարիմ մնալով Ազգային ժողովում տրված երդմանը:

Պաշտպանն առաջին հերթին շնորհակալություն է հայտնում հաստատությունում աշխատող կանանց ու տղամարդկանց՝ հաստատության առաքելության բարձր գիտակցման, անձնական մեծ նվիրումի և պաշտոնավարման ընթացքում իրեն ցուցաբերված բարձորակ մասնագիտական աջակցության համար: Իր հերթին Պաշտպանը ներդրել է առավելագույն ջանքը հաստատության ինստիտուցիոնալ զարգացման և անցումային ու ճգնաժամային իրավիճակներում դիմակայունության բարձրացման ուղղությամբ:

Քրիստիննե Գրիգորյանը շնորհակալություն է հայտնում Ազգային ժողովի նախագահին, պատգամավորներին, խմբակցություններին ու հանձնաժողովներին բարձր մակարդակի համագործակցության համար: Որպես խորհրդարանական պաշտպան՝ Ազգային ժողովի աջակցությունն ու զգայուն խնդիրները քննարկելու պատրաստակամությունը չափազանց մեծ նշանակություն են ունեցել հաստատության առաքելությունը պատշաճորեն իրականացնելու համար:

Պաշտպանը շնորհակալություն է հայտնում Կառավարության անդամներին, Վարչապետին ու կառավարությանը ենթակա մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին ու համայնքային ծառայողներին, ինչպես նաև սահմանադրական ինքնավար մարմիններին արդյունավետ համագործակցության համար:

Պաշտպանը շնորհակալություն է հայտնում նաև հասարակական կազմակերպություններին, իրավապաշտպաններին ու լրագրողներին, ում հետ աշխատելու պատիվ է ունեցել այս ընթացքում: Նրանց իրավապաշտպանական գործունեությունը և այն, թե որքանով է դրա համար բարենպաստ միջավայր ստեղծված, լակմուսի նշանակություն ունի մեր երկրի ժողովրդավարական զարգացման համար:

Քրիստիննե Գրիգորյանը շնորհակալություն է հայտնում նաև Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ու դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու անձնակազմերին՝ այս ընթացքում հաստատության առաքելության նկատմամբ ցուցաբերված յուրահատուկ աջակցության, բարձր գնահատականի և քաջալերման համար:

Պաշտպանը կարևորապես իր երախտագիտությունն է հայտնում բոլոր այն անձանց, ովքեր իրավունքների պաշտպանության տարբեր հարցերով դիմել են Պաշտպանի հաստատությանը իրենց վստահության ու շատ հաճախ արտահայտած գնահատականների համար: Եվ անկախ այդ գնահատականների բնույթից, դրանք բոլորը մեծ աջակցություն են եղել այս ընթացքում հաստատության զարգացման գործում:

Պաշտպանն, օգտվելով առիթից, հրապարակավ շնորհակալություն է հայտնում իր ընտանիքին ու ընկերներին՝ համբերության, քաջալերման ու անվերապահ աջակցության համար:

III. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆՈՐ ՄԱՆԴԱՏ

2022թ դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովի կողմից լրացումներ են կատարվել Սահմանադրական օրենքում, որով Պաշտպանի կողմից քննարկվող հարցերի շրջանակն ընդլայնվել է, դրանում ներառելով կազմակերպությունների կողմից ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը: Օրենքն ուժի մեջ է 2022թ դեկտեմբերի 22-ից:

Ըստ Սահմանադրական օրենքի Պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնելու է մոնիտորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևելու է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստելու է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Պաշտպանը տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա: Այս լիազորությունն ուժի մեջ կմտնի ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրության վարման կարգը սահմանող իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Պետք է նկատի ունենալ, որ այս լիազորության պատշաճ իրականացման համար Պաշտպանի աշխատակազմում պետք է ստեղծվի մասնագիտացված ստորաբաժանում՝ ապահովելով նոր մանդատի իրականացման համար անհրաժեշտ ոլորտային մասնագիտացումը:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում 2020թ փետրվարին ուժի մեջ մտած փոփոխություններով նախատեսված էր, որ երկամյա ժամկետում օրենքի գործողության ոլորտը պետք է տարածվեր Պաշտպանի աշխատակազմի վրա: Ըստ էության, քաղաքացիական ծառայության միասնականացմանը միտված այս որոշումը կայացվել էր դեռևս 2018 թվականին, ըստ որի, նախատեսվել էր, որ օրենքում համապատասխան փոփոխության կատարումից հետո սահմանված ժամկետներում օրենքի գործողությունը պետք է տարածվեր թվով 15 պետական կառավարման մարմիններում գործող ծառայությունների վրա՝ ըստ նախատեսված ժամանակացույցի: Պաշտպանի աշխատակազմի դեպքում Պաշտպանը, բավարարված չլինելով քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից իր ներկայացրած անվանացանկի փոփոխությունների վերաբերյալ կարծիքով, դիմել էր ԵԽ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին (Վենետիկի հանձնաժողով)» խորհրդատվական կարծիքի տրամադրման համար: Կարծիքում[1] շեշտադրվել էր, որ հաշվի առնելով Պաշտպանի անկախ սահմանադրական մանդատը, ինչպես նաև այն, որ կադրային քաղաքականության որոշումների ազատությունը պաշտպանական հաստատությունների անկախության

[1] https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2021)035-e

կարևոր երաշխիք են, անհրաժեշտություն կա Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության անցումն իրականացնելիս ապահովել Պաշտպանի առավելագույն ինքնավարությունը կադրերի ընտրության, նրանց ներկայացվող պահանջների, առաջխաղացման ու այլ հարցերում: Նույն հարցով Պաշտպանը խորհրդատվական կարծիք[2] էր ստացել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակից: Պաշտպանը օրենքի այս փոփոխությունները վիճարկել էր նաև ՀՀ Սահմանադրական դատարանում, սակայն Դատարանը վարույթ չէր ընդունել Պաշտպանի դիմումը:

Սույն թվականի փետրվարից մեկնարկած Վենետիկի հանձնաժողովի, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ ծավալուն քննարկումների արդյունքում 2022 թվականի սեպտեմբերի 7-ին Քաղաքացիական ծառայության գրասենյակն ամբողջական համաձայնությունը տվեց՝ Պաշտպանի ներկայացրած անվանացանկին ու ծառայողների շուրջ յոթ տասնյակ պաշտոնների նկարագրությանը, որն առավելագույնս հաշվի է առնում Սահմանադրական օրենքով նախատեսված Պաշտպանի աշխատակազմի տարբեր ստորաբաժանումների գործառութային առանձնահատկությունները: Արդյունքում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի սկզբունքների հիման վրա գործնականում առավելագույն ճկունություն է ապահովված Պաշտպանի դեպքում աշխատակազմի կադրային քաղաքականությունն ինքնավար կերպով իրականացնելու համար: Ամփոփ հաղորդման ներկայացման պահին Պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների շուրջ 25%-ը համալրված է արդեն իսկ կայացված մրցույթների արդյունքում, հաղորդման ներկայացման պահին հայտարարված է ևս 20%-ի համալրման մրցույթները և ըստ պլանավորման՝ 2023թ-ի առաջին եռամսյակում հնարավոր կլինի հայտարարել ու ամփոփել մնացած պաշտոնների համալրման մրցույթները: Արդյունքում Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայողներն այժմ ամբողջությամբ օգտվում են քաղաքացիական ծառայողի կարգավիճակից բխող բոլոր իրավունքներից և սոցիալական երաշխիքներից:

3. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Պաշտպանը հաստատել է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները որպես «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող նորմեր, որոնք կարգավորում են պաշտոն զբաղեցնող անձի բարեվարք գործելակերպը ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում և դրանից դուրս: Վարքագծի կանոնները տարածվում են Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց նկատմամբ: Նախատեսվել են յուրահատուկ կանոններ Պաշտպանի հաստատության գործունեությանը ներհատուկ որոշ գործառույթների, ինչպես օրինակ՝ մշտադիտարկման այցերի իրականացման համար:

4. ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ

Պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումները շատ կարևոր նշանակություն ունեն տեղերում անձանց համար հաստատության հասանելիության, ինչպես նաև Պաշտպանի գործունեության արդյունավետության բարձրացման համար: 2022թ փետրվարի դրությամբ Պաշտպանի մարզային ստորաբաժանումների թիվը 4-ն էր՝

[2] https://legislationline.org/sites/default/files/documents/a7/2021-07-19%20ODIHR%20Opinion%20NHRI%20ARM_Final%20ENG.pdf

Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ և Շիրակ: Պաշտպանի աշխատակազմի առաջին մարզային ստորաբաժանումները ստեղծվել են 2012թ-ին Սյունիքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, Տավուշինը՝ 2019թ-ին: 2022թ ընթացքում աշխատանքներ են իրականացվել 5-րդ մարզային ստորաբաժանումը Լոռվա մարզում ստեղծելու ուղղությամբ: Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքում կատարված փոփոխության և թափուր հաստիքների միջոցով հնարավոր է եղել լուծել Լոռվա մարզային ստորաբաժանման աշխատատեղերի հարցը, քանի որ 2022թ-ին Պաշտպանի կողմից ներկայացված լրացուցիչ հաստիքներ հատկացնելու վերաբերյալ հայտը ՀՀ կառավարության կողմից մերժվել էր՝ վկայակոչելով աշխատակազմում առկա թափուր հաստիքների մեծ թիվը: Այդ թվի բացատրությունն այն էր, որ օբյեկտիվորեն քաղաքացիական ծառայության չանցման նախորդիվ խնդիրներով պայմանավորված՝ սկսած 2020թ-ից Պաշտպանի աշխատակազմում հնարավոր չէր եղել համալրել քաղաքացիական ծառայության որևէ պաշտոն և որևէ մեկի աշխատանքից դուրս գալուց հետո այդ հաստիքը մնացել էր թափուր: Դրան գումարած 2023թ-ի բյուջետային հայտի քննարկումների ընթացքը համընկել է նոր պաշտպանի պաշտոնավարման սկզբի անցումային փուլին, երբ աշխատակազմի ևս շուրջ 25 պաշտոն միանգամից թափուր էին դարձել և բյուջետային քննարկումների ժամանակ՝ 2022թ մարտ-հուլիս ամիսներին, օբյեկտիվորեն դեռ լրացված չէին (քաղաքացիական ծառայության խնդիրները լուծվել են սեպտեմբերին): Հատկանշական է նաև, որ 2019թ-ին Տավուշի մարզային ստորաբաժանման ստեղծման ժամանակ կառավարությունը Պաշտպանի աշխատակազմի հաստիքների թիվը համալրել էր 3-ով՝ նոր ստորաբաժանման ստեղծման նպատակով:

Լոռու մարզի ընտրությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝
ա) Պաշտպանի մանդատի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հաստատությունների գտնվելու փաստը (առկա են Պաշտպանի մշտադիտարկման ներքո գտնվող հաստատություններ՝ զորամասեր, զինվորական հոսպիտալ, Ռազմական ոստիկանության ստորաբաժանում, ինչպես նաև ազատությունից զրկման վայրեր, այդ թվում՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր, քրեակատարողական հիմնարկ, հոգեբուժական հաստատություն, շուրջօրյա խնամքի կենտրոններ, այդ թվում՝ մանկատներ), որտեղ էական է դեպքերին արագ արձագանքում ապահովելու հարցը:

բ) Պաշտպանին ներկայացվող ընդհանուր դիմում-բողոքներին զուգահեռ վերջին տարիներին զգալի աճել է նաև Լոռու մարզից ներկայացվող դիմում-բողոքները: Այսպես, դրանց թվի համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2016 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 224, 2017-ին՝ 213, իսկ 2018 թվականին, նախորդ տարվա համեմատ, դիմում-բողոքների թիվն ավելացել է՝ 80%-ով կամ 171-ով, դառնալով՝ 384 դիմում-բողոք: Լոռու մարզից Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների թիվը շարունակել է բարձր մնալ նաև 2019 և 2020 թվականներին՝ կազմելով համապատասխանաբար՝ 317 և 471 դիմում-բողոք:

Պետական բյուջեի ծախսերը Լոռու մարզային ստորաբաժանման համար ավելացել են միայն տարածքի վարձակալության ու կոմունալ ծախսերի ապահովման ուղղությամբ: Մարզային ստորաբաժանման գրասենյակի կահավորումն ու վերանորոգումը հնարավոր է եղել ապահովել Եվրոպական Միության ֆինանսավորմամբ: Սույն հաղորդումը ներկայացնելու պահին՝ ամբողջությամբ պատրաստ է մարզային նոր ստորաբաժանումը, իսկ գրասենյակի պաշտոնական բացումը նախատեսված է մարտ ամսվա սկզբին:

5. ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հաստատության ինստիտուցիոնալ շարունակական զարգացման նպատակով Պաշտպանը մեծ ուշադրություն է դարձրել աշխատակազմի կարողությունների զարգացմանը՝ նախաձեռնելով գնահատված կարիքի հիման վրա թեմատիկ վերապատրաստումներ, այդ թվում միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: Այսպես՝

Մայիսի 14-ից 15-ը ԵԽ «Մարդու իրավունքները և կանայք Զինված ուժերում. փուլ II» ծրագրի և ԿԽՄԿ-ի աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման՝ Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների համար իրականացվել է «Զինված հակամարտության և հետ-հակամարտության իրավիճակներում միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքը» թեմայով դասընթացը: Դասընթացը նպատակաուղղված էր ստեղծել մտքերի փոխանակման արդյունավետ միջավայր, որի միջոցով կձևավորվի փաստարկների համար հիմնավոր հարթակ՝ երկարաժամկետ հեռանկարում նպաստելով ՄՄԻ (միջազգային մարդասիրական իրավունք), ՄԻԵԴ (մարդու իրավունքների եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի, հակամարտության իրավիճակներում մարդու իրավունքների վերաբերյալ ավելի լայն բանավեճի:

Հուլիսի 8-ին տեղի է ունեցել «Ընտանեկան բռնության դեպքերի ճգնաժամային աջակցության կազմակերպումը գենդերազգայուն մոտեցման սկզբունքներով» թեմայով դասընթաց Պաշտպանի աշխատակազմի համար: Դասընթացն իրականացվել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության. բարեփոխումների օգնության պատուհան» ծրագրի շրջանակներում, որն ուղղված էր ՄԻՊ աշխատակիցների՝ ընտանեկան բռնության դեպքերի վարման կարողությունների զարգացմանը, մասնավորապես՝ ՄԻՊ Թեժ գծով խորհրդատվության իրականացման գործընթացում: «Ընտանեկան բռնության դեպքերի ճգնաժամային աջակցության կազմակերպումը գենդերազգայուն մոտեցման սկզբունքներով» թեմայով դասընթացը նպատակաուղղված էր ընտանեկան բռնության հիմնախնդիրը հասկանալու ուժի և իշխանության (գենդերային անհավասարության) դիտանկյունից՝ դեպքերին պատշաճ արձագանքման ու անձանց տրամադրվող ճգնաժամային աջակցության արդյունավետ կազմակերպման նպատակով:

Հուլիսի 25-ից 27-ը տեղի է ունեցել Պաշտպանի աշխատակազմի վերապատրաստման եռօրյա դասընթաց-աշխատաժողով՝ նվիրված միջազգային համագործակցության ոլորտում Պաշտպանի հաստատության կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը: Վերապատրաստումն իրականացվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համագործակցության շրջանակում: Աշխատաժողովի շրջանակներում, ի թիվս այլ հարցերի քննարկվել են մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության միջազգային չափորոշիչները, համագործակցության մեխանիզմները, ինչպես նաև մարդու իրավունքների հաստատությունների կարգավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքները, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքի Հավատարմագրման ենթակոմիտեի կողմից մշակված Ընդհանուր դիտարկումներն ու հավատարմագրման ընթացակարգը:

Սեպտեմբերի 6-ին տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակում իրականացվող ՄԻՊ աշխատակիցների վերապատրաստման դասընթաց: Դասընթացի նպատակն էր քրեադատավարական նոր օրենսդրության լույսի ներքո զարգացնել ՄԻՊ աշխատակազմի կարողությունները՝ ապահովելու Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող ամենօրյա մոնիթորինգի ու արձագանքման արդյունավետությունը:

Սեպտեմբերի 9-ից 10-ը, ինչպես նաև դեկտեմբերի 2-ին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են դասընթացների՝ միտված նոր քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերի շրջանակներում աշխատակազմի մշտադիտարկման կարողությունների զարգացմանը: Դասընթացներն իրականացվել են «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից և իրականացվել է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի կողմից:

Հոկտեմբերի 11-ին և 12-ին իրականացվել է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների տեսանկյունից օրենսդրության վերանայման վերաբերյալ երկօրյա համատեղ աշխատաժողով՝ նվիրված Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի աշխատակիցների կարողությունների զարգացմանը: Աշխատաժողովն իրականացվել է «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից և իրականացվել է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի կողմից: Միջազգային փորձագետների կողմից իրականացվող աշխատաժողովի նպատակն էր զարգացնել և ամրապնդել աշխատակազմերի կարողությունները՝ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի գնահատման և վերանայման գործառույթների իրականացման հարցում՝ մարդու իրավունքների երաշխավորման ու ապահովման տեսանկյունից:

Նոյեմբերի 18-ին Միջազգային օմբուդսմենների ասոցիացիայի կողմից ֆինանսավորվող «Արտակարգ իրավիճակներում սոցիալ-տնտեսական իրավունքների մշտադիտարկման գործում Հայաստանի և Վրաստանի օմբուդսմենների կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում անցկացվել է Հայաստանի և Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանների աշխատակազմերի կարողությունների զարգացման համատեղ առցանց դասընթաց: Դասընթացի շրջանակներում ներկայացվել են Արտակարգ իրավիճակներում սոցիալ-տնտեսական իրավունքների մշտադիտարկման մարտահրավերները և դրանց հաղթահարման հիմնական ուղղությունները:

Նոյեմբերի 22-ից 23-ը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման՝ Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի կարողությունները զարգացնելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները աշխատանքային այցով մեկնել են Շվեդիայի Թագավորություն:

Դեկտեմբերի 2-3-ին «Երեխաների և երիտասարդների պաշտպանության բարելավում և մասնակցության խթանում» ծրագրի շրջանակում տեղի է ունեցել Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման դասընթաց: Քննարկվել է Հայաստանում բուլինգի հիմնախնդիրը, օրենսդրական և պրակտիկ բացերը՝ Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և մշտադիտարկման համատեքստում, բուլլինգի կանխարգելման և արձագանքման մեխանիզմները: Դասընթացի նպատակն է եղել բարձրացնել Պաշտպանի աշխատակազմի կարողությունները այնպիսի հարցերում, ինչպիսիք են մշտադիտարկումը, ուսումնասիրությունը, գնահատումը, բուլինգի կանխարգելման և արդյունավետ արձագանքման նպատակով տվյալների հավաքագրման կիրառվող մոտեցումները, հանրակրթական հաստատություններում Պաշտպանի աշխատակազմի կողմից բուլինգի մշտադիտարկման առաջարկվող մեթոդաբանությունը և գործիքակազմը:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Պաշտպանի հաստատությունը 2018 թվականից Սահմանադրական օրենքի փոփոխությունների հիմքով հանդիսանում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի դրույթների կիրառության նկատմամբ մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն իրականացնող ազգային մարմին: Հաստատության կենտրոնական գրասենյակը (Երևան, Պուշկինի 56ա) որևէ կերպ մատչելի չէ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: 2022թ ընթացքում Պաշտպանի աշխատակազմի խնայողությունների հաշվին պատվիրվել է շենքը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի դարձնելու համար անհրաժեշտ շինարարական աշխատանքների նախագծանախահաշվարկային փաստաթղթերի ձեռքբերում: 2023թ-ի տարվա բյուջետային հայտում ներառվել է պահանջվող 24 մլն դրամից ավել գումար 2023թ-ի ընթացքում շինաշխատանքներն իրականացնելու համար:

7. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹԵԺ ԳԾԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ՈՒ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ

2022 թվականի սեպտեմբերից նախագծվել և արդեն 2023 թվականի հունվարի վերջին ամբողջ ծավալով կներդրվի Պաշտպանի մանդատի հասանելիության առանցքային մաս հանդիսացող 24/7 ռեժիմով գործող «Թեժ գիծ» ծառայության մատուցման ավտոմատացմանը, պարզեցմանը և թվայնացմանն ուղղված «Զանգեզոր» էլեկտրոնային համակարգը, որի շրջանակներում կապահովվի ստացված զանգերի ինքնաշխատ գրանցումը, բաց թողնված զանգերի հետադարձ կապի ապահովումը, զանգերի ձայնագրումը, դիմողի նույնականացումը աշխատակազմում արդեն իսկ առկա վարույթների հետ և զանգերի՝ դիմում, բողոքների ճշգրիտ ինքնաշխատ վիճակագրության ձևավորումը: Զանգերի ընդունման էլեկտրոնային համակարգի համակցումը «Mulberry» փաստաթղթաշրջանառության պաշտոնական համակարգի հետ հնարավորություն կընձեռի յուրաքանչյուր զանգի շրջանակներում ինքնաշխատ ձևավորել համապատասխան էլեկտրոնային գործ իր բոլոր ելակետային նյութերով՝ բարձրացնելով աշխատակազմի արդյունավետությունն ու կարևորապես մատչելի ու ժամանակին վիճակագրական տվյալներ կապահովի խնդրահարույց ակտուալ հարցերի, իրավունքների պաշտպանության ուղղությունների առաջնահերթությունների մասին:

Բացի թեժ գծից, ընթացքի մեջ է գտնվում Պաշտպանի աշխատակազմի ներքին գործառնությունների (դիմում, բողոք, սեփական նախաձեռնություն) ամբողջովին թվայնացման ու Էլեկտրոնային գործերի կառավարման համակարգի ծրագրային ապահովման ներդրումը: Էլեկտրոնային ծրագրի գործածումը հնարավորություն կտա տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ վարելու գործերը, էլեկտրոնային վարույթի շրջանակներում տեսանելի և հասանելի դարձնելու դիմումին (վարույթին) առնչվող կատարված ցանկացած գործողություն (գրություն, այց, ընդունելություն, զեկուցագիր), գործերը համախմբելու ինչպես դիմողի նույնականացման, այնպես էլ փոխկապակցված գործերի շրջանակով: Համակարգի ներդրումը նաև հնարավորինս կբացառի մասնագետների մոտ գործերի կուտակումները, բարձրացնելով աշխատանքային արդյունավետությունը, ինչն իր հերթին դրական ազդեցություն կունենա մարդու իրավունքների արագ և արդյունավետ պաշտպանության տեսանկյունից: Էլեկտրոնային գործերի վարումը նաև կապահովվի վարույթների էլեկտրոնային արխիվի ստեղծումը՝ վարույթին առնչվող բոլոր նյութերի արագ հասանելիությունը: Գործող համակարգերի

(«Mulberry», «Զանգեզոր») հետ ինտեգրված և անվտանգ համակարգը կստեղծի նաև հնարավորություն առցանց տարբերակով դիմել Պաշտպանին և անմիջականորեն հետևել դիմումի հետ կապված ամբողջ գործընթացին:

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

1. ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պաշտպանին առընթեր հասարակական խորհուրդների գործունեությունը կարևոր ձևաչափ է տարբեր հրատապ հարցերը ոլորտի մասնագիտացված ու փորձառու ոչ կառավարական դերակատարների հետ քննարկելու, իրավունքների խախտումների ու համակարգային խնդիրների վերաբերյալ իրենց հետևությունների ներկայացման միջոցով Պաշտպանին աջակցելու, ինչպես նաև խնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններում ջանքերը միավորելու համար: Տարվա ընթացքում աշխատանքները շարունակել են գործող երեք խորհուրդները՝ Խոշտանգումների կանխարգելման, Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհուրդները: Նշված խորհուրդներում բարձրացված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով կազմակերպվել են նաև դրանց ընդլայնված նիստեր, որոնց մասնակցել են ոչ միայն տվյալ խորհրդի անդամները, այլ նաև իրավասու պետական մարմինների ներկայացուցիչներ և լրագրողներ: Այս նիստերը կարևոր հարթակ են, որտեղ թե՛ հասարակական կազմակերպությունների և թե՛ պետական մարմինների ներկայացուցիչները հնարավորություն են ունենում ներկայացնել իրենց դիրքորոշումները քննարկվող հարցերի վերաբերյալ և հանգել միասնական լուծումների:

Տարվա ընթացքում Պաշտպանը ստեղծել է ևս երկու հասարակական խորհուրդ՝ Կանանց իրավունքների հարցերով և Երեխաների ու երիտասարդների իրավունքների հարցերով խորհուրդները: Առաջինի դեպքում խորհրդում ներգրավել են հատկապես կանանց հարցերով զբաղվող մարզային հասարակական կազմակերպություններ՝ նկատի ունենալով այն, որ շատ հաճախ մարզային կազմակերպությունները պակաս հնարավորություններ ունեն որոշումներ կայացնողների ու հանրային մեծ լսարան ունեցող քննարկումներին հասանելիության առումով: Խորհրդի անդրանիկ նիստը տեղի է ունեցել 2022թ սեպտեմբերին[3]:

Երեխաների ու երիտասարդների հարցերով խորհրդի ձևավորման կարևոր նպատակն է ստեղծել ինստիտուցիոնալ ձևաչափ, որը կապահովի երեխաների ու երիտասարդների լսված լինելու, իրենց վերաբերող հարցերի վերաբերյալ կարծիք արտահայտելու իրավունքների իրացումը: Խորհրդի խնդիրներն են նաև աջակցել Պաշտպանին երեխաների և երիտասարդների հետ համագործակցության զարգացմանը, խթանել երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող խնդիրների վերհանմանը, աջակցել Պաշտպանին երեխաների և երիտասարդների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Երեխաների և երիտասարդների հարցերի խորհրդի առաջին նիստը[4] տեղի է ունեցել 2022թ. նոյեմբերի 20-ին՝ Երեխայի համաշխարհային օրը:

[3] https://ombuds.am/am/site/ViewNews/2339
[4] https://ombuds.am/am/site/ViewNews/2408

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԵՏ

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի գործունեության արդյունավետության հարցում կարևոր է եղել թե օրենսդիր և թե գործադիր իշխանության մարմինների հետ համագործակցությունը: Որպես խորհրդարանական օմբուդսմենական հաստատություն, չափազանց կարևոր է եղել Ազգային ժողովում Պաշտպանի հատուկ ներկայացուցչի աշխատանքը, որն ապահովել է հաստատությունների միջև չընդհատվող ու արդյունավետ կապը:

Կարևոր ուղղություն է եղել ՀՀ կառավարության և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից օրենսդրականն նախաձեռնության կարգով ներկայացված նախագծերի վերաբերյալ Պաշտպանի հաստատության ներկայացրած առաջարկությունների և մտահոգությունների հասցեագրման ուղղությամբ տարված աշխատանքը: Սույն հաղորդման «Վիճակագրություն» բաժնում ներկայացված են հաստատության կողմից հաշվետու ժամանակահատվածում փորձաքննության ենթարկված նախագծերի և ներկայացված կոնկրետ առաջարկությունների թվերը, այդուհանդերձ ստորև ներկայացվում է մի քանի կարևոր նախագծերի շուրջ կատարված աշխատանքի մասին ամփոփ տեղեկատվություն, ընդ որում նախագծերից մի քանիսի դեպքում այս տեղեկատվության ներկայացումը հետապնդում է հանրության ու օրենսդրի ուշադրությունը նշված նախագծերի ընթացքին պահելու նպատակ:
1) Պաշտպանը հատուկ կարծիք է տրամադրել ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից նախաձեռնված «Զանգվածային լրատվության մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ, որով ի սկզբանե խնդրահարույց կարգավորումներ էին նախատեսվել իրավասու պետական մարմինների կողմից լրագրողների հավատարմագրման դադարեցման ընթացակարգերում: Պաշտպանի առաջարկությունները հանգել էին նրան, որ առաջարկվող տեսքով կարգավորումը լուրջ վտանգ է պարունակում լրագրողի մասնագիտական գործունեության անկաշկանդ ու առանց «պատժի հեռանկարի» իրականացնելու համար: Պաշտպանը նաև հեղինակների հետ քննարկել է իր դիտարկումներն ու արդյունքում հեղինակ պատգամավորները լրամշակել են նախագիծն այնպես, որ ապահովվել են հավատարմագրման դադարեցման ընթացակարգային բարենպաստ երաշխիքներ լրագրողների մասնագիտական գործունեության համար:

2) Պաշտպանի հաստատության կողմից ներկայացվել է կարծիք ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից նախաձեռնված «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում նախատեսված փոփոխությունների վերաբերյալ:

Նախագծով առաջարկված փոփոխություններով նախատեսվում էր հրաժարվել Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ հիվանդանոցներում ստացիոնար բուժման մեջ գտնվող ընտրողների քվեարկության համար նախատեսված շրջիկ արկղերի կիրառումից, և շրջիկ արկղերը կիրառել միայն Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրը ձերբակալված անձանց պահման վայրում գտնվող ընտրողների համար: Առաջարկվում էր նախընտրական միջոցների օգտագործման նկատմամբ հսկողությունը փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը, վարույթի իրականացումը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Նախագծով նախատեսվում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը չի կարող հանդիսանալ հասարակական կազմակերպության անդամ:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 30.10.2002թ. «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք Ցուցումներ և Բացատրական» թիվ 190/2002 զեկույցի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումների, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում կարծիքի շրջանակներում Պաշտպանը ծայրահեղ խնդրահարույց է համարել նախագծով առաջարկվող մի շարք փոփոխություններ՝ դրանց հիմնավորվածության և արդարացվածության տեսանկյունից:

Կարծիքի շրջանակներում ընդգծվել է, մասնավորապես, ընտրական իրավունքի իրացման սահմանափակումներ նախատեսող իրավակարգավորումների ընդունման դեպքում այդ գործընթացների խիստ կանոնակարգման կարևորությունը: Որոշ դեպքերում կարծիքում վկայակոչվել է սահմանափակումների նախատեսման վերաբերյալ պատշաճ հիմնավորումների բացակայությունը:

Պաշտպանը առաջարկվող նախագծի հարցը քննարկել է նաև մասնագիտական ոչ կառավարական կազմակերպությունների և մյուս կողմից Ազգայինն ժողովի պատգամավորների հետ: Նախագիծը շրջանառությունից հանվել է նախաձեռնողի կողմից:

3) «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սահմանվում էին մի շարք կարգավորումներ, որոնցից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեսանկյունից առավել խնդրահարույց են եղել կառավարման խորհրդի անդամների թվի, բուհերի միավորման/միաձուլման վերաբերյալ դրույթներ: Պաշտպանի աշխատակազմը ներկայացրել է նկատառումներ, որոնք, ի թիվս այլնի, հիմնավորվել են նաև 2021 թվականի օգոստոսի 2-ի ՍԴՈ-1608 որոշմամբ Բարձր դատարանի արտահայտած դիրքորոշումներով: Ներկայումս, դիրքորոշումը նախագծի վերաբերյալ ներկայացվել է իրավասու մարմնին և գտնվում է քննարկման փուլում:

4) ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում էր, որ շարքային կազմի պարտադիր զինծառայողը պարտադիր զինվորական ծառայությունից վաղաժամկետ կարող է արձակվել նաև ծառայության չորրորդ ամիսը լրանալուց և պատրաստության ուսումնական փուլն ավարտելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 24 միլիոն դրամ վճարելու դեպքում: Ներկայացվածը անընդունելի է եղել Պաշտպանի աշխատակազմի համար, ներկայացվել է բացասական դիրքորոշում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, և Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով արտահայտված դիրքորոշումների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի՝ ՀՀ ԶՈՒ զորամասեր կատարված այցերի ընթացքում վեր հանված և աշխատակազմ ներկայացված դիմումներում ներկայացված խնդիրների համապարփակ վերլուծությամբ: Նախագիծը ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 7-ին և ընդունված տարբերակում բացակայում են՝ ի թիվս այլնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 24 միլիոն դրամ վճարելու դեպքում շարքային կազմի պարտադիր զինծառայողը պարտադիր զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու կարգավորումը:

5) Մարդու իրավունքների պաշտպանը կարծիքի է ներկայացրել ««Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ: Նախևառաջ Պաշտպանը մտահոգիչ է համարել այն հանգամանքը, որ Նախագիծը չի անցել պատշաճ հասարակական և մասնագիտական քննարկում, անգամ ապահովված չէ ապագայում դրանց կատարող մարմինների հետ նախնական խորհրդատվությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը հանգել է նրան, որ առաջարկվող միջոցառումները սահմանափակում են մարդու իրավունքները, առավելապես կարծիքի արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության իրավունքները: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների, կարծիքի արտահայտման ազատության ապահովման և պաշտպանության ՄԱԿ հատուկ զեկուցողի, ՄԱԿ մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զեկույցների և այլ միջազգային-իրավական փաստաթղթերի վերլուծության արդյունքում Պաշտպանը եզրահանգել է, որ Նախագծի խնդրո առարկա իրավակարգավորումները մտահոգիչ են մարդու իրավունքների տեսանկյունից, մասնավորապես՝ կարող են հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության իրավունքների անհամաչափ սահմանափակման: Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ Նախագծով չեն նախատեսվել նաև այն դեպքերը, երբ կարող են կիրառվել նախատեսված միջոցառումները, պայմանները, երաշխիքները, վերահսկողության մեխանիզմներն, ինչպես նաև թե որ մարմինն է իրականացնելու նախատեսված գործառույթները: Ներկայումս, դիրքորոշումը նախագծի վերաբերյալ ներկայացվել է իրավասու մարմնին և գտնվում է քննարկման փուլում:

6) Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է կարծիք «Ոստիկանության մասին» օրենքում և հարակից նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նորմատիվ իրավական ակտերի նախագծերի փաթեթի վերաբերյալ, որի համաձայն՝ «(…) Նախագծով տրված իրավակարգավորումները, որոնցով հանրային իշխանություն մարմինը իրավունք է ստանալու իրականացնելու մասնավոր տարածքի չթիրախավորված, ընդհանուր վիդեոհսկողությունը, խախտում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մարդու անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը 2 ասպեկտով: Նախևառաջ այս միջոցառումը անհամաչափորեն սահմանափակում է այն անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ով մուտք է գործում տվյալ տարածք, ինչպես նաև մասնավոր տնտեսվարողների, որոնց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը ընդգրկում է իրենց՝ սեփական տարածքի նկատմամբ (այդ թվում՝ մուտքի, ելքի, վարքագծի) վերահսկողություն իրականացնելու իրավասությունը (…)»: Ներկայումս, դիրքորոշումը նախագծի վերաբերյալ ներկայացվել է իրավասու մարմնին և գտնվում է քննարկման փուլում:

7) Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է թվով 11 նկատառում «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ, ըստ որոնց՝ ուշադրություն է հրավիրվել «արտաքին հետախուզական գործունեություն» հասկացության, «մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքները» վերտառությամբ հոդվածի առկայության անհրաժեշտությանը, արտաքին հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց իրավական կարգավիճակին և այլ դիտարկումներ: Նախագիծը ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 23-ին, ներկայացված առաջարկություններից 8-ը ընդունվել են ամբողջությամբ, 2-ը՝ մասամբ:

Սահմանադրական դատարանի հետ համագործակցությունը դրսևորվել է թե Պաշտպանի դիմումների ներկայացման և թե Բարձր դատարանում քննվող հարցերի վերաբերյալ դատարանին Պաշտպանի օժանդակ կարծիքների ներկայացման միջոցով: Դիմումների և օժանդակ կարծիքների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են սույն հաղորդման համապատասխան մասում:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՓՈՒՄՆԵՐ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ, ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԵՐ, ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

1) Պաշտպանը հաշվետու ժամանակահատվածում ունեցել է ավելի քան 100 հանդիպում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ: Դեմ առ դեմ հանդիպումները լավ ձևաչափ են եղել ադրբեջանական ագրեսիայի փաստերը, ռազմագերիների վերադարձի, անհայտ կորած ու բռնի անհետացած անձանց իրավունքների խախտումների, ինչպես նաև Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ Պաշտպանի հաստատության հետևությունները ներկայացնելու համար:

2) Պաշտպանն ակտիվորեն օգտագործել է նաև այլ մայրաքաղաքներում միջազգային ու հանրային քաղաքական որոշումների վրա ազդեցություն ունեցող դերակատարների հետ հանդիպումներ անցկացնելու հնարավորությունները, շատ հաճախ անձամբ ստեղծելով նման հնարավորություններ:

ա) Ապրիլի 27-ից 29-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանն աշխատանքային այցով մեկնել է Փարիզ: Պաշտպանը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների հարցերով դեսպան Դելֆին Բորիոնի, ԵԱՀԿ Մինսկի խմբի Ֆրանսիայի համանախագահ, դեսպան Բրիս Ռոքֆոյի և Ֆրանսիայի ԱԳՆ Մայրցամաքային Եվրոպայի տնօրինության ներկայացուցիչների հետ:

բ) 2022 թվականի սեպտեմբերի 26-ից 29-ը Պաշտպանը աշխատանքային այցով մեկնել է Ստրասբուրգ: Այցի շրջանակում՝ սեպտեմբերի 26-ին, Պաշտպանը մասնակցել է Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի 2022 թվականի ամենամյա համաժողովին, որի նպատակն էր բացահայտել և ուսումնասիրել իրավահավասարության ապահովման իրավական և քաղաքական շրջանակների վերանայման ուղիներ և միջոցներ:

Միևնույն ժամանակ, Ստրասբուրգ այցի ընթացքում իրականացվել են մի շարք հանդիպումներ Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այդ թվում՝ Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ-Բուրիչի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Ռոբերտ Սպանոյի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի գլխավոր քարտուղար Ռեջիս Բրիլաթի, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Կլեր Բազի Մալորիի, Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության մարդու իրավունքների հարցերով տնօրեն Քրիստոֆ Պոիրելի հետ:

Հանդիպումների ընթացքում Քրիստիննե Գրիգորյանը ներկայացրել է 2022 թվականի սեպտեմբերի 13-ից Հայաստանի վրա սկսված ադրբեջանական հարձակման հետևանքով քաղաքացիական բնակչությանն ու քաղաքացիական ենթակառուցվածքներին, շրջակա միջավայրին հասցված վնասների, միջազգային մարդու իրավունքներով և հումանիտար իրավունքով արգելված այլ արարքների վերաբերյալ փաստարկված տեղեկատվությունը:

գ) Նոյեմբերի 6-ից 10-ը Պաշտպանը գործուղվել է Բրյուսել՝ մասնակցելու ՀՀ-ԵՄ Մարդու իրավունքների շուրջ երկխոսության 12-րդ նիստին, ինչպես նաև ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներին: ՀՀ-ԵՄ Մարդու իրավունքների շուրջ երկխոսության նիստի ընթացքում Պաշտպանը ներկայացրել է հաստատության

հետևությունները Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի, մարտահրավերների ու հնարավորությունների մասին: Պաշտպանը անդրադարձել է 2022թ.–ի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի վրա հարձակման արդյունքում մարդու իրավունքների կոպիտ խախտումներին:

Բրյուսել կատարած աշխատանքային այցի ընթացքում Պաշտպանը հանդիպել է ԵՄ մարդու իրավունքների հարցերով հատուկ հանձնակատար Իմոն Գիլմորի, Արտաքին գործողության եվրոպական ծառայության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարող տնօրենի տեղակալ Լյուկ Դևինի, Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Դավիթ Քալլենի հետ:

դ) Հունիսի 16-ից 19-ը և դեկտեմբերի 6-ից 10-ը Պաշտպանն աշխատանքային այցով մեկնել է ԱՄՆ: ԱՄՆ կատարած այցերի շրջանակներում Պաշտպանը հանդիպել է ԱՄՆ Պետքարտուղարի Եվրոպական ու Եվրասիական հարցերով փոխտեղակալ Էրիկա Օլսոնի, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամների, հայ համայնքի ներկայացուցիչների, ԱՄՆ Պետդեպարտամենտի Թրաֆիքինգի դեմ պայքարի և մշտադիտարկման գրասենյակի ներկայացուցիչների, Պետդեպարտամենտի Բնակչության, փախստականների և միգրացիայի հարցերով փոխպետքարտուղարի տեղակալ Ջանին Ուինի և Բյուրոյի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցել 20-րդ Միջազգային հակակոռուպցիոն համաժողովին: Հանդիպումների շրջանակներում ի թիվս այլնի ներկայացվել է Լեռնային Ղարաբաղում ապրող անձանց իրավունքների պաշտպանության վիճակը՝ անդրադառնալով նաև արցախահայության նկատմամբ էթնիկ ատելության ադրբեջանական քաղաքականության չդադարող դրսևորումներին:

3) Միջազգային համագործակցության համատեքստում Պաշտպանի հաստատությունը շարունակել է ընդլայնել գործունեության ոլորտները՝ կնքելով փոխըմբռնման նոր հուշագրեր: Մասնավորապես, 2022թ.-ի ընթացքում Պաշտպանի հաստատությունը ստորագրել է թվով 3 համագործակցության հուշագիր.

ա) Նոյեմբերի 3-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ ուղղված Նիդերլանդների Թագավորության կառավարության կողմից ֆինանսավորվող «Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի իրականացմանը՝ հաշվի առնելով ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհում ահագնացող արագությամբ ատելության խոսքի ծավալման փաստը, ներառյալ՝ մեդիայով ու համացանցային այլ ռեսուրսներով:

բ) Դեկտեմբերի 13-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանը և Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերը ստորագրել են համագործակցության հուշագիր: Հուշագրի կնքումը ուղղված է «Գենդերային հավասարության խթանում Հայաստանի իրավապահ համակարգում» ծրագրի իրականացմանը՝ Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է, ի թիվս այլնի, նախնական իրազեկվածության բարձրացման, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման և օրենսդրական փոփոխությունների առաջարկման միջոցով Հայաստանի իրավապահ համակարգում գենդերային

հավասարության խթանումը, այդ թվում՝ ՀՀ պարեկային ծառայությունում կանանց ներգրավվածության ընդլայնումը:

գ) Դեկտեմբերի 15-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Ծվեդիայի Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Համագործակցության հիմնական նպատակն է նպաստել ՀՀ-ում մարդու իրավունքների ոլորտի օրենսդրության և ստանդարտների բարելավմանն ու առավել արդյունավետ կիրառմանը:

դ) 2023 թվականին, ըստ նախնական երկկողմ պայմանավորվածության, մշակվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և Եթովպիայի մարդու իրավունքների հանձաժողովի միջև համագործակցության հուշագրի նախագիծ և ներկայացվել եթովպական կողմի հաստատմանը:

4) Պաշտպանը շարունակել է համագործակցությունը Հայաստան-ԵՄ 2019-2022թթ. Գործողությունների ծրագրի շրջանակներում մեկնարկած ծրագրերի շրջանակներում ակտիվ համագործակցությունը: Ի թիվս այնի, Մարդու իրավունքներ և կանայք Հայաստանի զինված ուժերում – II-րդ փուլի շրջանակներում մայիսի 30-ին կայացել է «Լրատվությունը անվտանգության/պաշտպանության ոլորտում. որո՞նք են լուսաբանման սահմանները» Պատասխանատու լրագրության իմաստով» աշխատաժողովը:

Աշխատաժողովի նպատակն էր զարգացնել լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների գիտելիքներն ու հմտությունները ԶԼՄ-ների և պաշտպանության/անվտանգության ոլորտի հարաբերությունների, ինչպես նաև զինված հակամարտությունների ընթացքում և դրանից հետո ԶԼՄ-ների կողմից լուսաբանման առանձնահատկությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով նաև նոր տեխնոլոգիաները և առցանց հաղորդակցության հարթակների աճող կարևորությունը:

5) Պաշտպանն ակտիվ մասնակցել է Հայաստան-ԵՄ 2023-2026թթ. Գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներին՝ ներկայացնելով Պաշտպանի հաստատության հետ ոլորտային ծրագրերի շրջանակներում համագործակցության առաջարկներ, որոնք ներառվել են ԳԾ-ում: Պաշտպանի՝ ս.թ. սեպտեմբերին Ստրասբուրգում ունեցած հանդիպումների և բանակցությունների արդյունքներով մշակվել և ԵՄ Ծրագրերի համակարգման տնօրինությանն է ներկայացվել Պաշտպանի հաստատության կարողությունների զարգացմանն ուղղված համատեղ ծրագրային առաջարկությունները: Ընթացքի մեջ է Պաշտպանի հաստատության աջակցության նոր ծրագրի մշակումը:

6) ԵՄ/ԵԽ կողմից իրականացվող «Գործընկերնություն հանուն լավ կառավարման» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի զոհերի համար ոչ դատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագրի շրջանակներում մշակվել է Ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված ձեռնարկը ուսուցանողների համար: Նախատեսվում է ձեռնարկը հրապարակել 2023թ. փետրվարին:

7) «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում-II փուլ» ծրագրի շրջանակներում մայիսի 30-ին կայացել է «Լրատվությունը անվտանգության/պաշտպանության ոլորտում. որո՞նք են լուսաբանման սահմանները «Պատասխանատու լրագրության» իմաստով» աշխատաժողովը: Աշխատաժողովի նպատակն էր զարգացնել լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների գիտելիքներն ու հմտությունները ԶԼՄ-ների և պաշտպանության/անվտանգության ոլորտի հարաբերությունների, ինչպես նաև զինված հակամարտությունների ընթացքում և դրանից

հետո ՁԼՄ-ների կողմից լուսաբանման առանձնահատկությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով նաև նոր տեխնոլոգիաները և առցանց հաղորդակցության հարթակների աճող կարևորությունը[5]:

8) Պաշտպանի աշխատակազմի և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի, ինչպես նաև Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից մշակվել են «Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում» և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում» վերտառությամբ հետազոտությունները, որոնց արդյունքերը ներկայացվել են դեկտեմբերի 12-ից 13-ը տեղի ունեցած հանդիպում-քննարկմանը[6]:

9) Պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների միջազգային ցանցերի շրջանակներում՝ մասնակցելով միջազգային բարձրաստիճան գիտաժողովներին, հանդես գալով ելույթներով, հաստատությունների կարողությունների ամրապնդմանը և զարգացմանն ուղղված առաջարկություններով, ներկայացնելով Հայաստանի ՄԻՊ հաստատության առաջատար փորձառությունը, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրականացման միջոցով:

ա) Մարտի 28-ին Պաշտպանը տեսաուղերձով է հանդես եկել Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI)՝ մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության ընթացքում գրանցված հաջողված պատմությունների հավաքագրման շրջանակներում: Մասնավորապես, Պաշտպանը ներկայացրել է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծի վերաբերյալ Պաշտպանի հաստատության կարծիքի տրամադրման, այդ թվում՝ միավորումների ազատության իրավունքի հնարավոր խախտման, և դրա արդյունքում նախագծում համապատասխան փոփոխությունների իրականացման մասին հակիրճ տեղեկատվություն:

բ) Մարտի 31-ին Պաշտպանը մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) առցանց գլխավոր վեհաժողովին: Քննարկումների օրակարգում ընդգրկված էին տարբեր տարածաշրջաններում և ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված մի շարք հարցեր: Մասնավորապես, քննարկվել են Եվրոպայում միգրանտների վիճակին և իրավունքների ապահովմանն առնչվող հարցեր, ինչպես նաև վտանգի տակ հայտնված մարդու իրավունքների ազգային հաստատությունների աջակցությանն ուղղված հնարավոր աշխատանքներ:

գ) Մայիսի 26-ից 27-ը Քրիստիննե Գրիգորյանը առցանց ձևաչափով մասնակցել է Միջազգային օմբուդսմենների ինստիտուտի 2022թ. Եվրոպական կոնֆերանսին և Գլխավոր Ասամբլեային: Գլխավոր Ասամբլեայի շրջանակներում քննարկվել են Միջազգային օմբուդսմենների ինստիտուտի կողմից իրականացվող ծրագրերի ընթացքը, Եվրոպայում Միջազգային օմբուդսմենների ինստիտուտի հետագա գործունեությունը, ինչպես նաև ԵՄ ինստիտուտների հետ հարաբերությունների ռազմավարության մշակման

[5] https://ombuds.am/am/site/ViewNews/2250
[6] https://ombuds.am/am/site/ViewNews/2444

և օմբուդսմենների ու նրանց աշխատակազմի էթիկայի նորմերի ուղեցույցի մշակման համար աշխատանքային խմբերի ձևավորմանը վերաբերող հարցեր:

դ) Միջազգային օմբուդսմենների ինստիտուտի կողմից ֆինանսավորվող «Արտակարգ իրավիճակներում սոցիալ-տնտեսական իրավունքների մշտադիտարկման գործում Հայաստանի և Վրաստանի օմբուդսմենների կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում Հայաստանի և Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանների հաստատությունների կողմից մշակվել է արտակարգ իրավիճակներում Վրաստանի և Հայաստանի օմբուդսմենական հաստատությունների կողմից սոցիալ-տնտեսական իրավունքների մշտադիտարկման մարտահրավերների մասին զեկույց:

ե) Սեպտեմբերի 5-ից 6-ը Վարշավայում մասնակցել է ԵԱՀԿ անդամ պետությունների մարդու իրավունքների ազգային հաստատությունների ղեկավարների բարձրաստիճան հանդիպմանը, որը նախաձեռնվել էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից: Աշխատաժողովի շրջանակում Պաշտպան Քրիստինե Գրիգորյանը առանձնազրույցներ է ունեցել նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի գլխավոր քարտուղար Դեբբի Կոների, ինչպես նաև ԵԱՀԿ անդամ այլ պետությունների ազգային հաստատությունների ղեկավարների, այդ թվում՝ Լեհաստանի, Ուկրաինայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Լիտվայի, Ղրղզստանի և Վրաստանի մարդու իրավունքների ազգային հաստատությունների ղեկավարների հետ:

զ) Հոկտեմբերի 24-ին Սոֆիա քաղաքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը մասնակցել է «Վերանայելով օրենքի գերակայության շուրջ համատեղ աշխատանքի մոտեցումը» խորագրով Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի բարձրաստիճան հանդիպմանը[7]: Հանդիպումը նպատակ ուներ ինտերակտիվ քննարկում անցկացնել մարդու իրավունքների ազգային ինստիտուտների ղեկավարների և Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի բարձրաստիճան փորձագետների միջև՝ միտված ազգային և տարածաշրջանային մակարդակում օրենքի գերակայության ոլորտում ENNHRI-ի կողմից իրականացվող աշխատանքների արդյունվետության բարձրացմանը ENNHRI-ի 2022-2025 թվականների ռազմավարական ծրագրի շրջանակներում՝ հաշվի առնելով Եվրոպայում օրենքի գերակայության ներկայիս վիճակը և առկա մարտահրավերները:

է) Նոյեմբերի 22-ից 23-ը Բրյուսելում Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի Գլխավոր ասամբլեային[8]: Գլխավոր ասամբլեայի հանդիպման նպատակն էր, ի թիվս այլ թեմաների, ուսումնասիրել 2022 թվականին Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի իրականացրած գործունեությունը, առաջընթացը, ինչպես նաև քննարկել 2023 թվականի պլանավորումը և ընդունել նոր ռազմավարական ծրագիր: Քրիստինե Գրիգորյանը ներկայացրել է սեպտեմբեր 13-14-ին Հայաստանի վրա տեղի ունեցած ագրեսիվ հարձակման պայմաններում ու նաև դրանից հետո Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կատարած աշխատանքն ու դժվարությունները:

ը) Երեխաների հարցերով օմբուդսմանների ցանցի (ENOC) հետ համագործակցության շրջանակում Պաշտպանի ներկայացուցիչները 2022 թվականի ապրիլի 7-ից 8-ը մասնակցել են Իտալիայի Հռոմ քաղաքում կայացած բարձրաստիճան համաժողովին՝ նվիրված Եվրոպայի խորհրդի 2022-2027թթ. երեխաների իրավունքների նոր ռազմավարության մեկնարկին:

[7] https://ombuds.am/am/site/ViewNews/2383
[8] https://ombuds.am/am/site/ViewNews/2413

թ) Պաշտպանի աշխատակազմը մասնակցել է հոկտեմբերի 14-ին ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստի որոշումով հաստատված Մարդու իրավունքների հարցերով ԱՊՀ Հանձնաժողովի կանոնակարգի մշակման աշխատանքներին: Կանոնակարգի համաձայն՝ Հանձնաժողովի մանդատը չի նախատեսում կողմերի համար որևէ նոր պարտավորություն մարդու իրավունքների իրավիճակի վերահսկման առումով և գործելու է իբրև խորհրդատվական մարմին: Վերոհիշյալ Որոշումը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է վերապահումով, որի համաձայն չի ընդունում պետությունների և ֆիզիկական անձանց կողմից ստացված դիմում-բողոքները քննելու Հանձնաժողովի իրավասությունը: Սույն հանձնաժողովում ՀՀ ներկայացուցիչ է նշանակվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը:

ժ) ԱՊՀ անդամ պետությունների ԱԳ նախարարների որոշմամբ հոկտեմբերի 12-ին ստեղծվել է Երեխաների իրավունքների հարցերով հանձնաժողով՝ օմբուդսմենների գրասենյակների մակարդակով: Հանձնաժողովում ՀՀ կողմից անդամ են նշանակվել Պաշտպանի հաստատության ներկայացուցիչները: Նախատեսվում է Հանձնաժողովի առաջին նիստը անցկացնել 2023թ. աշնանը Երևանում:

ժա) Պաշտպանի ներկայացուցիչը նոյեմբերի 15-ին Մոսկվայում մասնակցել է Օմբուդսմանների եվրասիական դաշինքի VII-րդ նիստին:

V. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների պաշտպանն իր առաքելությունն իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձրել հաստատության գործունեության հրապարկայնությանը:

Աշխատանքի այս սկզբունքն ապահովել է մի շարք առավելություններ՝ ա) Պաշտպանի հաստատության հանրային տեսանելիության, հետևաբար նաև առավել մեծ թվով անձանց դիմելության հարցը, բ) Պաշտպանի կողմից բարձրացվող խնդրահարույց հարցերի նկատմամբ հանրության առավել լայն շրջանակների ուշադրությունը գրավելու և դրանց լուծման հանրային պահանջ ձևավորելու հարցը, գ) Պաշտպանի մանդատի ներքո մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցերի վերաբերյալ իրազեկումն ու իրավունքահենք քաղաքականություններին հանրային աջակցության ապահովման հարցը: Ուստի, Պաշտպանի հաստատությունը մշտապես բաց է եղել ՁԼՄ-ների հարցերին հնարավորինս օպերատիվ արձագանքելու և անկախ ու պրոֆեսիոնալ մեդիայի հետ համագործակցության հնարավորությունների համար:

Հատկապես կարևոր ուղղություն է եղել օտարերկրյա և օտարալեզու մամուլի միջոցների հետ աշխատանքը, ինչը կարևոր նշանակություն է ունեցել Հայաստանի վրա ադրբեջանական ագրեսիայի, ռազմագերիների ու անհետ կորած անձանց և հումանիտար այլ հարցերի մասին փաստական տվյալներ ներկայացնելու և օտարալեզու միջավայրերում հանրային կարծիքի ձևավորման վրա դրական ազդեցություն ունենալու առումով:

Պաշտպանը կարևորել ու խրախուսել է նաև նեղ մասնագիտական հարցերի վերաբերյալ իր աշխատակազմի ներկայացուցիչների ակտիվ շփումները մամուլի միջոցների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները ավելի քան 110 հարցազրույցի ու հանրային քննարկման են մասնակցել՝ ապահովելով հաստատության գործունեության թափանցիկությունն ու արձագանքելով ՁԼՄ-ներին հետաքրքրող հանրային հրատապ հարցերին: Սույն հաղորդման Հավելված 1-ում

ներկայացված է Պաշտպանի և հաստատության ներկայացուցիչների հարցազրույցների ու հանրային քննարկումների ամբողջական ցանկը:

Պաշտպանն ակտիվորեն օգտագործել է յուրաքանչյուր հնարավորություն գործող ու նաև ապագա լրագրողների հետ հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպելու և հաստատության մանդատը վերջիններիս ներկայացնելու համար:

Ցավալիորեն, Պաշտպանի գործունեության ընթացքում մամուլի հատուկենտ միջոցներ հետևողականորեն թիրախավորել ու իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ են տարածել Պաշտպանի հաստատության ու անձամբ Պաշտպանի վերաբերյալ՝ ակնհայտորեն հետապնդելով քաղաքական որոշ շրջանակների կողմից առաջ մղվող չքողարկված օրակարգեր: Սակայն նշված դեպքերի հատուկենտությունն ու անլրջությունը տեղավորվում է Հայաստանում պրոֆեսիոնալ ու պատասխանատու մամուլի հայտնի խնդիրների շրջանակներում, ինչը հարկավ շարունակում է մարտահրավեր մնալ:

Հանրության հետ տեղեկության սպառողների համար հարմարավետ ձևաչափերով տեղեկատվություն է ապահովվել Պաշտպանի ֆեյսբուքյան, Թվիթերյան, Ինստագրամյան հաշիվների, ինչպես նաև Պաշտպանի պաշտոնական կայքի միջոցով:

V. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը կազմել է 7 արտահերթ հրապարակային, 2 ոչ հրապարակային զեկույց, բացի այդ, միջազգային մոնիտորինգային մարմիններին ներկայացվել է 7 այլընտրանքային զեկույց ու գրավոր հաղորդակցություն: Արտահերթ զեկույցները պարունակել են ոչ միայն իրավունքների խախտման մասին դեպքեր և փաստեր, այլև ներառել են մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Մոնիտորինգային մարմիններին այլընտրանքային զեկույցների ներկայացումը Պաշտպանի հաստատության առաջարկությունների տեսանելիության բարձրացմանը միտված լինելուց զատ, հնարավորություն է ընձեռել ապահովելու, որ Պաշտպանի հաստատության առաջարկությունները հաջորդիվ ձևակերպվել են որպես մոնիտորինգային տարբեր մարմինների կողմից Հայաստանին ներկայացվող առաջարկությունների շարքում:

1) Առաջին արտահերթ հրապարակային զեկույցը[9] հրապարակվել է 2022թ սեպտեմբերի 16-ին՝ ներկայացնելով Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա ադրբեջանական հարձակման հումանիտար և առաջացած մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստերը:

[9] https://ombuds.am/images/files/e436910166d6a83e0c93e86e37d470dc.pdf

Զեկույցում ամփոփել ու վերլուծել են ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված պատերազմական հանցագործությունները, փաստագրել տեղահանված անձանց, բժշկական շտապօգնության մեքենաների ու լրագրողների թիրախավորման, երեխայի ու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների ապացույցները, ինչպես նաև ներկայացվել քաղաքացիական անձանց ու կենսական ենթակառուցվածքների թիրախավորման, անձանց հասցված գույքային ու շրջակա միջավայրին հասցված վնասների փաստերը: Հայ զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև զոհված զինծառայողների մարմինների կտտանքների փաստերը վերլուծվել են զեկույցի ոչ հրապարկման ենթակա հատվածում և պատշաճ կարգով ներկայացվել միջազգային իրավասու կազմակերպություններին և դերակատարներին:

2) Շարունակելով փաստահավաք աշխատանքները, այդ թվում՝ ադրբեջանական մեդիայի ու հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալներն ու հարձակման ենթարկված համայնքներ Պաշտպանի փաստահավաք առաքելությունների արդյունքները՝ 2022թ հոկտեմբերի 4-ին թարմացված զեկույց է հրապարակվել[10], որում նաև անդրադարձել է ադրբեջանական սոցիալական ցանցերում տարածվող հայ զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնության, նվաստացնող վերաբերմունքի, վիրավորանքի և ծաղրանքի, այնպես էլ զոհված զինծառայողների մարմինների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի, խոշտանգումների կադրերին, որոնք բուռն քաջալերման ու գովաբանման են արժանացել ադրբեջանական հազարավոր օգտատերերի կողմից: Զեկույցում ներկայացվել են նաև Ադրբեջանի կողմից էթնիկ հայատյացության քաղաքականությանը բնորոշ այլ փաստեր:

Պաշտպանն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել կին զինծառայողների մարմինների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը փաստող տեսանյութերին, որոնք ակտիվ տարածվում էին ադրբեջանական սոցիալական կայքերում և տարբեր հարթակներում: Պաշտպանն արձանագրել է, որ տեսանյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ կանանց նկատմամբ բռնությունը, նրանց մարմինների խոշտանգումը կատարվել է ոչ միայն ազգային, այլև գենդերային ատելության շարժառիթով:

Պաշպանը զեկույցում շեշտել է, որ հաճախակի բնույթ է կրել զոհված զինծառայողների մարմինների/մարմինների մասերի հրապարակումներին ուղեկցող «լավագույն հայը մահացած հայն է» և «լավագույն հայուհին մահացած հայուհին է» գրառումները: Ատելության ու բռնության կոչեր հնչել են ինչպես սոցիալական ցանցերի օգտատերերի, այնպես էլ հասարակական ու քաղաքական գործիչների, պաշտոնյաների կողմից: Զեկույցում ներկայացվել է նաև, որ ատելության խոսքը քարոզվում ու վերատադրվում է դպրոցներից սկսված մինչև պետական պաշտոնյաների ելույթներով: Վերլուծվել են կոնկրետ օրինակներ:

Հրապարակային զեկույցում անդրադարձ է կատարվում մարդասիրական հարցերին, տեղահանված ու ռազմական ակտիվ գոտիներից չտարհանված առավել խոցելի անձանց, սպանված ու վիրավորված քաղաքացիական անձանց, կենսական ենթակառուցվածքներին, շրջական միջավայրին, ինչպես նաև զբոսաշրջությանն ու տնտեսությանը հասցված վնասներին:

[10] https://ombuds.am/images/files/88015d8ec9e48d869bd8b706233613dd.pdf

3) Հայ ռազմագերիների արտադատական սպանությունների, զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև զոհված զինծառայողների կտտանքների փաստերը վերլուծվել են երկրորդ ոչ հրապարակային զեկույցում:

4) 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ստորաբաժանումների կողմից սկսված ռազմական գործողությունների արդյունքում սահմանամերձ համայնքների բնակչության խնդիրները շարունակել են գտնվել Պաշտպանի ուշադրության ներքո: 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Պաշտպանը փաստահավաք աշխատանքներ է իրականացրել Տավուշի և Գեղարքունիքի մարզի շուրջ երեք տասնյակ համայնքներում, վեր են հանվել մարդու իրավունքների պաշտպանության հրատապ հարցեր ու ներկայացվել դրանց լուծման առաջարկություններ: Նկատի ունենալով անվտանգային յուրահատուկ միջավայրը, որն արձանագրվել է դիտարկված համայնքներում, Պաշտպանի արտահերթ զեկույց[11] է հրապարակել նշված համայնքների խնդրների վերաբերյալ:



Զեկույցում ներկայացվել են սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկման վերաբերյալ փաստերը, ներկայացվել են բնակիչների վկայությունները՝ իրենց հոգեբանական ու ֆիզիկական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգությունների վերաբերյալ, որոնք կազմակերպված ձևով իրականացրել են սահմանամերձ համայնքների հարևանությամբ տեղակայված ադրբեջանական զինծառայողները: Նշված զեկույցի փաստերը հիմնավորում են, որ ադրբեջանցի զինծառայողների կողմից խաղաղ բնակչության ահաբեկման ու վնասման գործողությունները, որպես էթնիկ ատելության շարժառիթով պայմանավորված ու հրամանատարության կողմից համակարգված գործողություններ, փաստացի միտված են եղել սեպտեմբերյան ագրեսիայի համար հիմքեր նախապատրաստելուն, քանի որ հիմնականում թիրախավորել են սեպտեմբերին հարձակման ենթարկված համայնքները:



Այս զեկույցն ամփոփվել էր սեպտեմբերին և պետք է հրապարակվեր սեպտեմբեր ամսվա վերջին, սակայն Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա սեպտեմբերի 12-ի լույս 13-ի իրականացրած հարձակումը փոխեց իրավիճակը՝ Պաշտպանի աշխատակազմի համար առաջացնելով ավելի հրատապ արձագանքման աշխատանքի անհրաժեշտություն: Չնայած դրան, ուշագրավ է, որ սույն զեկույցի տարբեր հատվածներում վերլուծված փաստերը, որոնք մատնացույց են անում ադրբեջանական զինված ուժերի կողմից սահմանամերձ համայնքների բնակիչների նկատմամբ տևական և շարունակական հոգեբանական ճնշումների գործադրումը, ինչպես նաև ադրբեջանցի պատգամավորների հայատյաց ելույթներն ու ուժի սպառնալիքի վերաբերյալ հայտարարությունները, վերահաստատում են, որ ադրբեջանական կողմը չնայած բանակցություններին, մշտապես պատրաստվել է հարձակման: Ավելին, սեպտեմբերի 13-ի հարձակման ընթացքում քաղաքացիական անձանց ու կենսական ենթակառուցվածքների թիրախավորումը, ոչ այլ ինչ է, քան սույն զեկույցում նկարագրված սահմանամերձ համայնքների ահաբեկման ու վնասման գորրծողություններին հաջորդող ակտիվ փուլ:

[11] https://ombuds.am/images/files/fd29830766027e9c10fcfaec2effee4f.pdf

5) Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի իր մանդատի շրջանակներում Պաշտպանը 2022թ նոյեմբերին հրապարակել է «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց, անչափահասների և օտարերկրյա քաղաքացիների իրավունքների ապահովման վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը[12]:

Զեկույցի հիմքում 2022թ.-ի մարտին «Աբովյան» ՔԿՀ Պաշտպանի կողմից կատարած այցի[13], ապա հունիսի 13-ին դրան հաջորդած չհայտարարված մոնիթորինգի այցի արդյունքներն են:

Ներկայացվել է, որ «Աբովյան» ՔԿՀ-ի որոշ հատվածներում շենքային պայմանները գտնվել են ծայրահեղ անբավարար և սանիտարահիգիենիկ անընդունելի վիճակում:

«Աբովյան» քրեակատարողական հաստատությունում բացակայել են հղի կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախատեսված հատուկ խցերն ու կացարանները, հաստատության կողմից չեն ապահովվել նաև երեխաների առանձնահատկությամբ պայմանավորված պահման պայմանները: Բոլոր խցերը չեն, որ կահավորված են եղել երեխայի խնամքի ու զարգացման առանձնահատուկ պահանջներին համապատասխան, օրինակ՝ խցերում բացակայել են երեխայի օրորոցը կամ մանկական մահճակալը, լոգանքի ու խնամքի այլ պայմանները: Նաև արձանագրվել է, որ ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժինն աշխատում է ծանրաբեռնված գրաֆիկով, կան մի շարք բացթողումներ, այդ թվում՝ դեղորայքի տրամադրման գործընթացի կազմակերպման հարցում:



Ազատությունից զրկված անչափահաս անձինք և ՔԿՀ-ում ծնողների հետ բնակվող երեխաները զրկված են դեղորայքային միջամտություն պահանջող առաջին բժշկական օգնության պատշաճ կազմակերպման հնարավորությունից: Պաշտպանն արձանագրել է նաև ՔԿՀ-ում պահվող ժամկետանց դեղորայք:

Արձանագրվել է, որ չեն պահպանվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց նկատմամբ յուրաքանչյուր անգամ բուժում սկսելու կապակցությամբ վերջիններիս իրազեկված համաձայնության պատշաճ ստացումը և դրա իրականացման նկատմամբ հսկողությունը:

Ներկայացվել է, որ բացթողումներ են արձանագրվել սննդի կազմակերպման, լոգանքի և անձնական հիգիենայի, լվացքի, զբոսանքի և զբաղվածության ապահովման, կարճատև և երկարատև տեսակցությունների, արտաքին աշխարհի հետ կապի կազմակերպման հարցերում: Արձանագրվել է, որ մեծահասակներին տրվող սնունդը գրեթե նույն պարբերականությամբ ու բաղադրությամբ տրվում է նաև մինչև երեք տարեկան երեխաներին:

Զեկույցում առանձին անդրադարձ է կատարվել նաև ազատությունից զրկված օտարերկրացի անձանց իրավունքների ապահովմանը: Այս անձանց համար լեզվական

[12] https://ombuds.am/images/files/e7d577353d2df9d1bce7db56e9c32d31.pdf
[13] https://ombuds.am/am/site/ViewNews/2168

խոչընդոտը ու գործնականում թարգմանության ծառայությունների բացակայությունը վերջիններիս պատժի կրման պայմաններում դարձնում են ծայրահեղ խոցելի:

Մտահոգիչ է գնահատվել «Աբովյան» քրեակատարողական հաստատությունում ծառայողների սեռային բաշխվածությունը: Ընդհանուր 135 աշխատակիցներին ընդամենը 36-ն են կին, այդ կանանցից 13-ը քաղաքացիական ծառայողներ են:

Զեկույցում ներկայացվել են 66 կոնկրետ առաջարկներ, այդ թվում՝ օրենսդրական, արձանագրված խնդիրների լուծման համար:

6) Մարդու իրավունքների պաշտպանը «Հայ գերիների նկատմամբ դաժան վերաբերմունքն ու խոշտանգումները՝ որպես Ադրբեջանի հայատյաց քաղաքականության դրսևորում» խորագրով արտահերթ ոչ հրապարակային զեկույց է պատրաստել սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով գերեվարված ու հոկտեմբերին հայրենադարձված բոլոր 17 հայ ռազմագերիների հետ առանձնազրույցների հիման վրա: Առանձնազրույցների միջոցով Պաշտպանի աշխատակազմի կողմից վեր են հանվել հայ զինծառայողների նկատմամբ (գերեվարումից մինչև հայրենադարձությունն ընկած ժամանակահատվածում) խոշտանգումների, դաժան և այլ վատ վերաբերմունքի դրսևորումների վերաբերյալ տվյալները: Առանձնազրույցների արդյունքում հայտնած տեղեկատվությունն ամփոփվել է և համադրվել գերեվարված անձանց ընտանիքի անդամների ընդունելության ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնած տեղեկությունների, ինչպես նաև տարբեր սոցիալական հարթակներում, լրատվամիջոցների աղբյուրներում առկա՝ հայ զինծառայողների գերեվարման և գերության մեջ գտնվելու ժամանակահատվածում արված տեսանյութերի հետ: Բացի այս, նշված տեղեկատվությունը համադրվել է նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման այլ աշխատանքների արդյունքների, Պաշտպանին հասցեագրված անհատական դիմումներում առկա տեղեկատվության և հատկապես ադրբեջանական լրատվամիջոցներում, սոցիալական հարթակներում, այդ թվում՝ տելեգրամյան ալիքներում առկա տեսանյութերի, լուսանկարների, հրապարակումների և այլ տեղեկատվության հետ:



Այս զեկույցի շրջանակներում անդրադարձ է կատարվել հայ գերիների նկատմամբ Ադրբեջանում իրականացված խոշտանգումներին, դաժան վերաբերմունքին, հիմնավորվել է ադրբեջանական իշխանությունների ատելության քաղաքականության ուղղակի պատճառական կապը հայ գերիների նկատմամբ նման վերաբերմունք դրսևորելու ու դաժանություններ գործելու հետ: Զեկույցի շրջանակում անդրադարձ է կատարվել ոչ միայն Ադրբեջանի զինվորականների, իրավապահ մարմինների աշխատակիցների և այլ պետական ծառայողների գործողություններին, այլ նաև գերեվարման հետևանքով ադրբեջանական բժշկական հաստատություններում բուժում ստացող հայ ռազմագերիների նկատմամբ բուժաշխատողների կողմից ցուցաբերված վերաբերմունքին և դրանում առկա անընդունելի դեպքերին:

Զեկույցում Ադրբեջանի կողմից հայ գերիների նկատմամբ խոշտանգումները և դաժան, անմարդկային վերաբերմունքը ներկայացվել է ըստ փուլերի և ադրբեջանական համապատասխան իրավասու մարմինների կողմից դրսևորված վերաբերմունքի: Այսպես՝

նախ ներկայացվել է գերեվարման և ռազմական օբյեկտ տեղափոխելու ժամանակահատվածը, այսինքն՝ այս փուլում խոսքը ադրբեջանական զինվորականների կողմից ցուցաբերվող վերաբերմունքի մասին է:

Հաջորդը ադրբեջանական իրավապահ մարմնում գտնվելու փուլն է, որտեղ ներկայացվում է իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ցուցաբերված վերաբերմունքը, և վերջում՝ բանտում կամ բժշկական հիմնարկում գտնվելու փուլը, որտեղ ներկայացվում է բանտի և բժշկական հաստատության աշխատակիցների կողմից հայ ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքը:

Հաշվի առնելով այն, որ զեկույցը պարունակում է հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող, դաժան վերաբերմունք, զոհված հայ զինծառայողների մարմիններն անարգելու նկարագրություններ և տեսարաններ, ընտրվել է զեկույցի ոչ հրապարակային ֆորմատը՝ նկատի ունենալով թեմայի զգայունությունը, պատկերների և տեսանյութերի բնույթը, ինչպես նաև հայրենադարձված գերիներին ու նրանց և դեռևս 2020 թվականից ադրբեջանական գերության մեջ գտնվող անձանց ընտանիքի անդամներին կրկնազոհայնացումից պաշտպանելու համար:

Հատկապես արժեքավոր նշանակություն ունի զեկույցի մեթոդաբանությունը, որը հրապարակվել է[14]: Միջազգային բոլոր ստանդարտներին համապատասխան մեթոդաբանության կիրառությունը զեկույցում ամփոփված տվյալների ու ռազմագերիների վկայությունների ապացուցողական նշանակության առումով միջազգային դատական ատյաններում կարող է ապահովել արժանահավատության բարձր աստիճան:
Ուստի, Պաշտպանի հաստատությունը նաև նպատակ ունի ներկայացնել ստուգված ու արժանահավատ տեղեկություններ, որոնք հիմք կհանդիսանան հայ ռազմագերիների նկատմամբ հանցագործողություններ իրականացրած ադրբեջանական իշխանության տարբեր մարմինների պատասխանատուներին ու դերակատարներին, ի թիվս ներպետական դատավարությունների, նաև միջազգային տրիբունալներում պատասխանատվության կանչելու համար:

Այս առիթն օգտագործելով՝ Պաշտպանն ևս մեկ անգամ շնորհակալություն է հայտնում հարցազրույցներին մասնակցած բոլոր անձանց իրենց վերապրած տառապանքները հաստատության ներկայացուցիչների հետ կիսվելու քաջության համար:

Զեկույցն ուղարկվել է Հայաստանում հավատարմագրված դեսպաններին, միջազգային իրավասու կազմակերպություններին և պաշտոնատար անձանց, ինչպես նաև միջազգային այլ դերակատարներին: Զեկույցը Միջազգային իրավական ներկայացուցչի գրասենյակի միջոցով հասանելի է դարձվել նաև միջազգային դատական ատյաններին (ՄԻԵԴ, ԱՄԴ), որտեղ ընթանում են ի թիվս այլնի նաև այս հարցերին առնչվող Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև անհատական գանգատները:

7) Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ուսումնասիրություններ են իրականացվել օգոստոսի 14-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի և սեպտեմբերի 21-ն տեղի ունեցած փլուզման դեպքերի առնչությամբ:

Տասնվեց անձի կյանք խլած (ևս մեկ անձ համարվում է անհետ կորած) պայթյունի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններն ամփոփվել են արտահերթ զեկույցի շրջանակներում[15], որի շրջանակներում, մասնավորապես հավաքագրվել, վերլուծվել և ամփոփվել են 2022 թվականի օգոստոսի 14-ին Երևանի «Սուրմալու» առևտրի կենտրոնում

[14] https://www.ombuds.am/images/files/b60edf0ccdca017725227c2cabbf7438.pdf
[15] https://ombuds.am/images/files/135129544482c39c578794a1d69de3c4.pdf

տեղի է ունեցած պայթյունի վերաբերյալ ստացված տեղեկությունները, ինչպես նաև Պաշտպանի կողմից մատնանշվել են իրավասու պետական մարմինների կողմից կատարման ենթակա գործողությունները: Միաժամանակ, զեկույցի շրջանակներում քննարկման առարկա են դարձվել օգոստոսի 14-ի պայթյունին հաջորդած սեպտեմբերի 21-ի փլուզումը և այդ առնչությամբ իրավական մեխանիզմների գործադրման հնարավորությունները:



Զեկույցի նախապատրաստման ընթացքում կատարված հարցումների և ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ մինչ օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունը ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվել են ստուգողական գործողություններ և արձանագրվել են մի շարք խախտումներ, մինչդեռ, ընդհուպ մինչև պայթյունի վրա հասնելը չեն ձեռնարկվել միջոցառումներ՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ տրված կարգադրագրի պահանջների կատարումը ստուգելու ուղղությամբ:

Միաժամանակ, պայթյունին հաջորդած փլուզման դեպքի առնչությամբ արձանագրվել է, որ ՀՀ իրավական համակարգում առկա չեն բավարար օրենսդրական կառուցակարգեր հանրությանը վտանգ սպառնացող գույքի ապամոնտաժման ուղղությամբ օպերատիվ և արդյունավետ միջոցառումների ձեռնարկման համար:

Պաշտպանն արձանագրված խնդիրների վերաբերյալ ներկայացրել է առարկայական առաջարկություններ առկա բացերը լրացնելու, ինչպես նաև համանման իրավիճակներին արձագանքելու արդյունավետ օրենսդրական մեխանիզմներ նախատեսելու առնչությամբ:
8) 2022թ դեկտեմբերի 12-ից Արցախը Հայաստանի և աշխարհի հետ կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի արգելափակման իրադարձությունների մշտադիտարկման արդյունքներով 2022թ դեկտեմբերի 15-ին ՀՀ և ԱՀ Պաշտպանները հրապարակել են առաջին համատեղ զեկույցը[16], որում ներկայացված են փաստեր, որոնք հաստատում են ադրբեջանցի «բնապահպանների» ակցիայի շինծու բնույթը, «ակտիվիստների» ուղիղ կապերը ադրբեջանական կառավարության ու հատուկ ծառայությունների հետ:



Այս առումով փաստեր են ներկայացվել անձանց իրավունքների շարունակական խախտումների վերաբերյալ:

Զեկույցում Պաշտպանները նաև կոչ են ուղղել կառավարություններին, մարդու իրավունքների պաշտպանությամն մանդատ ունեցող միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին ու հակամարտության հանգուցալուծմանը ներգրավված այլ դերակատարներին՝ ձեռնարկելու բոլոր հնարավոր միջոցները Արցախում օրեցօր խորացող հումանիտար ճգնաժամը դադարեցնելու համար:

[16] https://ombuds.am/images/files/54e62052ad99432e130355ec768bd53f.pdf

Զեկույցը պատրաստվել է անգլերենով՝ ներկայացնելով դեկտեմբերի 12-14-ն ընկած օրերի իրադարձությունների վերլուծության վրա:

9) Հաջորդիվ ևս Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը շարունակել է 24-ժամյա կապի մեջ գտնվել Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության, Արցախում գործող ոչ կառավարական կազմակերպությունների ու այլ դերակատարների հետ՝ իրավիճակի արձանագրման, փաստերի հավաքագրման ու հաստատման համար:

Արդյունքներով դեկտեմբերի 26-ին ՀՀ և ԱՀ Պաշտպանները հրապարակել են թարմացված համատեղ զեկույց[17] անգլերենով, որտեղ այդ պահի դրությամբ թարմ տեղեկություններ են ներկայացվել Լաչինի միջանցքի շրջափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ:

Զեկույցում ամփոփվել են նաև ադրբեջանական հանրային խոսույթը և վերլուծվել են ադրբեջանցի պաշտոնատար անձանց հայտարարությունները, որի արդյունքներով հետևությունն այն է, որ ադրբեջանական քաղաքական ղեկավարությունը կառավարության պաշտոնական ու մերձպաշտոնական տեղեկատվական ու հանրային կարծիքի ձևավորման հիմնական միջոցներով և փորձված մեթոդների կիրառմամբ, դեռևս նոյեմբեր ամսից պատրաստել և ուղղորդել է հանրային կարծիքը Լաչինի հումանիտար միջանցքի արգելափակման համար: Հայատյացության ու հենց Արցախի հայության նկատմամբ էթնիկ ատելության հրահրման ու բորբոքման փորձված մեթոդները շարունակվել են լայնորեն կիրառվել ադրբեջանական իշխանական քարոզչամեքենայի կողմից՝ դրանք փորձելով տեղավորել կեղծ բնապահպանական սենտիմենտների համատեքստում:

Զեկույցում թարմացվել են նաև նոր երևան եկած փաստեր կեղծ բնապահպանական ակցիայի մասնակիցների վերաբերյալ, ներկայացվել է ստեղծված հումանիտար ճգնաժամի պայմաններում իրավունքների վիճակը:

Հաստատված պրակտիկայի համաձայն զեկույցը ներկայացվել է միջազգային մարդու իրավունքների մանդատ ունեցող կազմակերպություններին ու դերակատարներին, ինչպես նաև հասանելի է դարձվել միջազգային դատական այն ատյաններին, որտեղ ի թիվս այլնի, նախաձեռնված է Արցախը Հայաստանի ու աշխարհի հետ կապող միակ ճանապարհի արգելափակումը Ադրբեջանի կողմից դադարեցնելու մասին Հայաստանի պահանջը:

2023թ հունվարի 14-ին զեկույցը[18] վերահրապարակվել է՝ ներկայացնելով թարմ տեղեկատվություններ Լաչինի միջանցքի հումանիտար հետևանքների և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Պաշտպանների հետևությունն է եղել, որ միջազգային փաստահավաք առաքելության գործուղումն անհրաժեշտ է ի թիվս այլնի, էթնիկ զտման ադրբեջանական քաղաքականության առավել հեռուն գնացող քայլերը կանխարգելելու համար:

10) 2022 թվականին պատրաստվել և 2023 հունվարին հրապարակվել է «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը[19]: Զեկույցի նպատակն է ներկայացնել, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում

[17] https://ombuds.am/images/files/c01555c03620fb8494eaef308fe9ca15.pdf?fbclid=IwAR2E9Th_Pz8CTaWnlDgBF1J9zaGQ3WL_hzrqEwDxhma3ufdtVVWPLdKVHzc

[18] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2467

[19] https://www.ombuds.am/images/files/5306939633eb1bf202440e912ef1e2e7.pdf

կատարել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների Կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Ուստի, զեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակներում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ դիտարկումները, ներկայացված առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ:

11) Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի հետ համագործակցության շրջանակում 2022 թվականի օգոստոսի 15-ին հրապարակվել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի տարածաշրջանային զեկույցը Եվրոպայում օրենքի գերակայության վիճակի վերաբերյալ[20] և Հայաստանի վերաբերյալ զեկույցները[21]:

Զեկույցում ուրվագծվում են առկա մարտահրավերները և գրանցված առաջընթացը հետևյալ ոլորտներում՝ մարդու իրավունքների ազգային ինստիտուտների արդյունավետություն և անկախություն, մարդու իրավունքների պաշտպաններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, զսպումներ և հակակշիռներ, արդարադատության համակարգի գործունեություն, լրատվամիջոցների ազատություն և բազմակարծություն, կոռուպցիա, COVID-19-ի կանխարգելման միջոցառումների ազդեցություն, ինչպես նաև մարդու իրավունքների կառուցվածքային խնդիրներ:

12) 2022թ Հուլիսի 12-ին ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեին է ներկայացվել այլընտրանքային զեկույց Ադրբեջանի կողմից Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ կոնվենցիայի խախտումների վերաբերյալ (CERD), իսկ դեկտեմբերին Կոմիտեին է ներկայացվել Կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ-ին ներկայացված ամփոփիչ դիտարկումների, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից 12-14-րդ համատեղ զեկույցի վերաբերյալ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույցը:

13) 2022թ Սեպտեմբերի 12-ին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) 83-րդ նիստին ընդառաջ Կոմիտեին է ներկայացվել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Պաշտպանի հաստատության գրավոր դիտարկումները:

Հաջորդիվ, հոկտեմբերի 12-ին Պաշտպանը ելույթ է ունեցել ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) 83-րդ նիստի շրջանակներում «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ՀՀ ազգային զեկույցի առցանց դիտարկման ընթացքում[22]: Իր ելույթում Պաշտպանը անդրադարձել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի ձևավորմանը՝ միտված կանանց օրակարգի առաջմղմանը:

Պաշտպանը ներկայացրել է նաև սեպտեմբերին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի նկատմամբ սանձազերծած ռազմական գործողությունների ժամանակ ադրբեջանցի զինվորականների կողմից հայ կին զինծառայողների նկատմամբ առանձնակի դաժանությամբ իրականացրած պատերազմական հանցանքները՝ պայմանավորված

[20] https://ennhri.org/wp-content/uploads/2022/07/ENNHRI-Regional-RoL-Report-2022.pdf?fbclid=IwAR2FqeX9DoiYD6Tv2h65kTPAQvRQxwbl5lunAf8CFpsOkxWDiqG2BGm5MTU
[21] https://ennhri.org/wp-content/uploads/2022/07/Armenia_CountryReport_RuleofLaw2022.pdf?fbclid=IwAR2NYyCHHdA212eSgXhTHiZm5OGZCiX6OpeldhNOfId0TF6ZDGDjL4J9rVw
[22] https://ombuds.am/am/site/ViewNews/2372

ազգային և գենդերային ատելությամբ, և նշել, որ առավել մտահոգիչ են ադրբեջանցիների կողմից այդ հանցանքները պատկերող տեսանյութերի տարածումը սոցցանցերում: Նշել է, որ այս սեպտեմբերի 13-ին Հայաստանի վրա ադրբեջանական ագրեսիան անհամաչափորեն ծանր է ազդել հատկապես կանանց ու աղջիկների վրա, ներառյալ հաշմանդամություն ունեցողներին:

14) 2022թ Դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի բռնի անհետացումների կոմիտեին (CED) է ներկայացվել Պաշտպանի գրավոր հաղորդակցությունը Կոմիտեի՝ Հայաստանին ուղղված ամփոփիչ դիտարկումների կատարման, ինչպես նաև Հայաստանի Կառավարության կողմից ներկայացված զեկույցի վերաբերյալ:

15) 2023 թվականի հունվարին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին է ներկայացվել ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման (UPR) գործընթացի շրջանակում ՀՀ-ին տրված համապատասխան հանձնարարականների ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ Պաշտպանի միջանկյալ այլընտրանքային զեկույցը:

16) 2023թ. հունվարին Կանոն 9-ի շրջանակներում ԵԽ Նախարարների կոմիտեին է ներկայացվել Շիրխանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 54547/160) գործով ՄԻԵԴ վճռի կատարման վերաբերյալ հաղորդակցությունը:

17) Մշակվել և ամփոփման փուլում է գտնվում ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով (CRC) և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ Պաշտպանի այլընտրանքային զեկույցը:

18) Ամփոփվել և ՄԱԿ Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեին կներկայացվեն Պաշտպանի հետևությունները Հայաստանի կողմից ՄԱԿ «Խոշտանգումների, դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող այլ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ՝ կենտրոնանալով Կոմիտեի կողմից 2019թ-ին Հայաստանի զեկույցի քննարկման ժամանակ բարձրացված մտահոգությունների վրա: Որպես ՄԱԿ կոնվենցիայի ազգային կանխարգելման մարմին, Պաշտպանի հաստատության կողմից ներկայացված հետևությունները հիմնված են հաստատության գործունեության ընթացքում վերհանված փաստերի վրա:

2. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ 2022Թ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-14-Ի ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՈՒ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Պաշտպանի հաստատությունը ադրբեջանական հարձակման մասին տեղեկացել է թեժ գծի ահազանգից, որով Սոթքում ապրող ընտանիքներից մեկը խնդրել է Պաշտպանի աջակցությունը իրենց տարհանման հարցում:

Պաշտպանի աշխատակազմում ձևավորվել է իրավիճակի արձագանքման, մշտադիտարկման ու փաստահավաք աշխատանքների կազմակերպման խումբ, որը երկու շաբաթ 24/7 ռեժիմով աշխատել է մի քանի ուղղություններով՝ (1) հարձակման ենթակա համայնքներ փաստահավաք այցեր կատարելու, ինչպես նաև համայնքների պատասխանատուներից տեղեկություն հավաքելու, հրատապ լուծման ենթակա խնդիրները պատասխանատու պետական ու ՏԻՄ-երին փոխանցելու, (3) Պաշտպանի աշխատակազմ դիմող մեծաթիվ քաղաքացիների (հիմնականում ռազմագերիների ու անհայտ կորած անձանց հարազատներին) ընդունելության ու անհրաժեշտ

տեղեկատվության տրամադրման, (4) ադրբեջանական մամուլի և սոցիալական ցանցերի մշտադիտարկմամբ, (5) տարբեր աղբյուրներից հավաքագրված տեղեկությունների ճշտման ու վերլուծության, (6) միջազգային կազմակերպությունների ու դերակատարների համար օրեկան տեղեկատվական նյութերի ու ամփոփիչ զեկույցների պատրաստման, (7) հարձակման տարածքներում աշխատող մամուլի ու տեղական հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքների ու Պաշտպանին հայտնի դարձած կարիքների հասցեագրմամբ:

Սույն մասում ամփոփ կներկայացվեն մի քանի ուղղություններով կատարված աշխատանքի մասին որոշ տվյալներ:

1. Փաստահավաք աշխատանքներ հարձակման ենթարկված համայնքներում.
Պաշտպանի փաստահավաք առաջին խումբը սեպտեմբերի 13-ի կեսօրից աշխատել է Վարդենիսի տարբեր համայնքներում՝ ակտիվ հրետակոծության պայմաններում:

Փաստահավաքությունը Սյունիքի, Վայոց Ձորի ու Գեղարքունիքի տարբեր համայնքներում շարունակվել է սեպտեմբերի 14-ին, 17-ին և հոկտեմբերի 14-ին: Անգամ ինտենսիվ հրետակոծության պայմաններում աշխատանքի այս մեթոդաբանությունը հնարավորություն է տվել «առաջին ձեռքից» տեղեկատվություն ունենալ թե ադրբեջանական հարձակման ինտենսիվության մասին, և թե ապացույցներ հավաքել քաղաքացիական բնակչության ու քաղաքացիական կենսական ենթակառուցվածքների կանխամտածված թիրախավորման մասին:

Զարգացումների ակտիվ փուլում Պաշտպանի ներկայացուցիչների փաստահավաքությունը (ներառյալ բնակիչների ու զինվորական հոսպիտալում գտնվող զինծառայողների, ՏԻՄ ու այլ դերակատարների հետ) ռեալ հնարավորություն է տվել նաև հետևություններ անելու ճգնաժամային իրավիճակում տեղական ու պետական կառավարման մարմինների արձագանքի բացթողումների ու խնդիրների մասին:

Պաշտպանի թիմերը սեպտեմբերի 17-ին փաստահավաքություն են իրականացրել Գեղարքունիքի մարզի Սոթք, Նորաբակ, Կութ համայնքներում, Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Քարաշեն, Վաղատուր, Վերիշեն, Աղիտու, ինչպես նաև Վայոց Ձորի Ջերմուկ համայնքներում:

Հոկտեմբերի 14-ին Մարդու իրավունքների պաշտպանն այցելել է Սյունիքի մարզի Ներքին Հանդ համայնք, որը սեպտեմբերի 13-ին Հայաստանի վրա ադրբեջանական հարձակման հետևանքով անվտանգային առավել դժվար իրավիճակում է հայտնվել մինչ այս պահը:

Բոլոր համայնքներում Պաշտպանը հետաքրքրվել է համայնքի բնակիչների անվտանգության ապահովման, կենսական ենթակառուցվածքներից ու հաղորդակցության ուղիներից օգտվելու, բնակիչների սեփականության իրավունքի խախտումների փաստերից: Հաջորդիվ քայլեր է ձեռնարկել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով բարձրացված հրատապ հարցերին լուծումներ տալու ուղղությամբ: Պաշտպանն արձանագրել է, որ Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ ադրբեջանական զինուժի ագրեսիվ ու շարունակվող ոտնձգության հետևանքով համայնքի բնակիչների, հատկապես կանանց ու երեխաների համար ստեղծվել է առավել դժվարին իրավիճակ՝ հոգեբանական ու ֆիզիկական անձեռնմխելիության, բնականոն կենսաապահովման, սեփականության ու կրթության և այլ հիմնարար իրավունքների իրացման համար:

2. Առաջարկությունների ներկայացում կառավարությանն ու հոգեբանական աջակցության կազմակերպում հարձակման ենթարկված որոշ համայնքների բնակիչներին

Փաստահավաք աշխատանքների ընթացքում նաև փորձ է արվել Պաշտպանի աշխատակազմի սահմանափակ ռեսուրսով իրականացնել հրատապ հոոգեբանական աջակցության անհրաժեշտության շրջանակի որոշումը հարձակման ենթարկված համայնքների բնակիչների շրջանում: Հաջորդիվ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ հոգեբանների խումբ է մեկնել հաշվառված կարիքների համայնքներ և ապահովվել է դրա կարիքն ուեցող բնակիչներին հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրումը:

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հարձակման ենթարկված համայնքներում փաստահավաք աշխատանքների միջոցով Պաշտպանը վեր է հանել մի շարք խնդիրներ, որոնք վերաբերել են պետական մարմինների և ՏԻՄ կողմից ճգնաժամին արձագանքելուն: Մասնավորապես, հարձակման ենթարկված մարզերում դրսևորվել է տարհանման, ապաստանավորման, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման, տուժած անձանց աջակցության տրամադրման, նման իրավիճակում տոուժած բնակիչների հետ հաղորդակցության իրականացման, հոգեբանական օգնության մոբիլիզացման կազմակերպվածության տարբեր աստիճան:

Պաշտպանի գնահատականները հանգել են նրան, որ անհրաժեշտ է պետական մակարդակով ապահովել ճգնաժամերի արձագանքման համապարփակ պլան՝ պետական ու տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր մարմնի յուրաքանչյուր պաշտոնատար անձի համար հստակ դերերով, հաղորդակցության ու կոմունիկացիայի սխեմաներով, համայնքների համար անմիջապես հասանելի դարձվող ճգնաժամային ֆինանսական ռեսուրսներով: Պաշտպանը նաև առաջարկել է զարկ տալ ինստիտուցիոնալ կերպով քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների ու բնակչության պատրաստման միջոցառումներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեբանական վերականգնողական օգնության հասանելիությանը հարձակման ենթարկված համայնքների բնակիչների համար:

Նկատի ունենալով հարցերի զգայունությունն ու այս հաղորդման հրապարակային բնույթը՝ պետք է նշել, որ Պաշտպանն իրավիճակի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններն ու կոնկրետ առաջարկները ներկայացրել է ՀՀ կառավարությանը, ինչպես նաև հաջորդիվ ներգրավված է եղել առաջարկների քննարկման գործընթացներին:

3. Սեպտեմբերի 13-15-ին ամփոփ տեղեկանքների կազմում ու ներկայացում միջազգային գործընկերներին.
2022թ. սեպտեմբերի 13-ից 15-ը Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմվել և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին, միջազգային կազմակերպությունների, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին ամենօրյա ռեժիմով ներկայացվել են ամփոփ տեղեկանքներ Պաշտպանի կողմից արձանագրված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ՝ փաստարկված լուսանկարներով և այլ անհրաժեշտ ապացույցներով:

Սեպտեմբերի 13-ին Պաշտպանն օնլայն բրիֆինգ է ունեցել ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների մասնակցությամբ՝ ներկայացնելով արդեն իսկ արձանագրված խախտումներն ու իրավիճակը: Ի թիվս այլ մասնակիցների, բրիֆինգին մասնակցել են ՀՀ-ում ԵՄ դեսպանը, ԵԽ երևանյան գրասենյակի ղեկավարը, ՀՀ-ում Լիտվայի դեսպանը և այլ բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Սեպտեմբերի 14-ին Պաշտպանը հաստատության հետևություններն է ներկայացրել ԱԳՆ-ի կողմից կազմակերպված բրիֆինգի ժամանակ, որին ներկա են եղել ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

4. Միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների հետ հաղորդակցություն. 2022 թ. սեպտեմբերի 13-14-ին Պաշտպանն անցկացրել է հետևյալ առցանց հանդիպումները՝
ԵԽ Մարդու իրավունքներով Հանձնակատար Դունյա Միյատովիչի հետ՝ ներկայացնելով Ադրբեջանի հարձակման արդյունքներով մարդու իրավունքների խախտումները: Պայմանավորվածություն է ձեռքբերվել պարբերաբար հանձնակատարի գրասենյակին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև քննարկելու Հանձնակատարի կողմից համապատասխան հայտարարությամբ հանդես գալու հնարավորությունը:
ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունեի հետ,
Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի ղեկավար Դեբբի Քոհների հետ,

5.Պաշտպանի կողմից արտահերթ զեկույցների մշակում և տարածում. Նախորդիվ բաժնում մանրամասն ներկայացվել են ի թիվս մյուս արտահերթ զեկույցների, սեպտեմբերի 13-14-ի ու դրան հաջորդած իրադարձությունների առնչությամբ կազմված զեկույցների մասին մանրամասն տեղեկատվությունը: Դրանք են՝
2022թ. սեպտեմբերի 16-ին Պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց Հայաստանի Հանրապետության վրա ադրբեջանական զինված հարձակման հետևանքների վերաբերյալ: Հայ զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև զոհված զինծառայողների մարմինների կտտանքների փաստերը վերլուծվել են զեկույցի ոչ հրապարկման ենթակա հատվածում:
2022թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է Հայաստանի Հանրապետության վրա ադրբեջանական զինված հարձակման հետևանքների վերաբերյալ արտահերթ զեկույցի թարմացված տարբերակը:

Հայ ռազմագերիների արտադատական սպանությունների, զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև զոհված զինծառայողների կտտանքների փաստերը վերլուծված են երկրորդ ոչ հրապարակային զեկույցում:
Սույն զեկույցները ներկայացվել են ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին, միջազգային կազմակերպությունների ու միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Միևնույն ժամանակ, Պաշտպանի անունից թիրախային նամակներ են ուղարկվել մի շարք միջազգային մասնագիտացված մարմինների ղեկավարներին՝ վերջիններիս ուշադրությունը հրավիրելով իրենց մանդատի շրջանակներում գտնվող իրավունքների խախտումներին, ինչպես նաև կոչ անելով հանդես գալ հրապարակային հայտարարություններով՝ կանխելու իրավունքների խախտումների հաջորդող դեպքերը:

6. Համագործակցություն փաստահավաք առաքելություն իրականացնելու մանդատ ունեցող միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ

Պաշտպանը 2022թ. սեպտեմբերի 19-ին առցանց քննարկում է ունեցել Human Rights Watch կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով բաժնի ղեկավարի տեղակալի ու անձնակազմի հետ: Պաշտպանն առաջարկել է կազմակերպությանը իրականացնել փաստահավաք առաքելություն, տեղում քարտեզագրելու մարդու իրավունքների խախտումները, վերլուծելու հայ զինծառայողների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքը փաստող տեսանյութերը: Պայմանավորվածություն է ձեռքբերվել կազմակերպության կողմից Պաշտպանի հաստատության ներկայացրած տեսանյութերի լաբորատոր հետազոտությունների անցկացման շուրջ: Քննարկմանը հաջորդել է նաև Պաշտպանի պաշտոնական նամակը՝ խնդրելով առաջնահերթ լաբորատոր հետազոտություն իրականացնել հայ կին զինծառայողների խոշտանգմանը վերաբերող տեսանյութերը և արդյունքների մասին տեղեկացնել Պաշտպանի աշխատակազմին:
2022թ. սեպտեմբերի 25-ից ակտիվ հաղորդակցություն է իրականացվել, կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչի միջոցով փոխանցվել է տեսանյութերի վերաբերյալ Պաշտպանի հաստատության ունեցած տեղեկատվությունը, ներառյալ տեսանյութերի նկարահանման հնարավոր կոորդինատները, դեպքերի իրականացման օրվա/ժամին առնչվող և այլ տվյալներ:
2022թ. սեպտեմբերի 19-ին Պաշտպանը առցանց հանդիպում է ունեցել «Մարդու իրավունքների պաշտպանության ֆեդերացիայի» (FIDH) գործադիր ղեկավար Էլեոնոր Մորելի և կազմակերպության ներկայացուցիչների հետ, որի արդյունքով պայմանավորվածություն է ձեռքբերվել ներկայացնելու թարմացված տվյալներ իրավիճակի վերաբերյալ և քննարկելու տեղում փաստահավաք գործողությունների իրականացման հնարավորությունը:
Պաշտոնական նամակ է ուղարկվել «Ամնեսթի Ինթերնեշնլ» (Amnesty International) միջազգային իրավապաշտպան կազմակերպության ղեկավարին՝ կոչ անելով փաստահավաք գործունեություն իրականացնել՝ ամրագրելու մարդու իրավունքների խախտումների դեպքերը: 2022թ. հոկտեմբերի 3-ին կազմակերպության ներկայացուցիչները կապ են հաստատել Պաշտպանի աշխատակազմի հետ՝ հայցելով տեղեկատվություն հայ զինծառայողների արտադատական սպանություններին վերաբերող տեսանյութի իսկության, զինծառայողների նույնականացման, տեսանյութի նկարահանման կոորդինատների և այլնի վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմը ներկայացրել է տեսանյութի վերաբերյալ հաստատության կողմից հավաքագրված տեղեկատվությունը: Ակնկալվում է, որ «Ամնեսթի Ինթերնեշնլ» (Amnesty International) միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հանդես կգա տեսանյութի վերլուծությամբ և համապատասխան հայտարարությամբ:

Նույնաբովանդակ պաշտոնական նամակ է ուղարկվել նաև Բելինգքեթ (Bellingcat)-ի ղեկավարին, որին ի պատասխան վերջիններս նշել են, որ իրականացնում են հետաքննություն և հանդես կգան եզրակացությամբ հետաքննության ավարտին:

7. Աջակցություն այլ դերակատարների կողմից իրականացված փաստահավաք աշխատանքներին.

Սեպտեմբերի 22-ին Պաշտպանի աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանման գրասենյակում[23] ՀՀ-ում Միավորված ազգերի կազմակերպության մշտական համակարգողի պաշտոնակատար Լիլյա Պիտերս Յահիայի գլխավորած պատվիրակությանը ներկայացվել է ադրբեջանական հարձակման հետևանքների վերաբերյալ Պաշտպանի հետևություններն ամփոփող արտահերթ զեկույցը: Պատվիրակության կազմում են եղել նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթին Վայգանդը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի ղեկավար Ծովինար Հարությունյանը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալ Կոնստանտին Սոկուլսկին, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Պաշտպանության հարցերով ստորաբաժանման ղեկավար Անդրեյ Արյուպինը, ՄԱԿ այլ գործակալությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ-ում ԱՀԿ ներկայացուցիչ Ժիհան Թաուիլան:

Պաշտպանը և Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ն.Գ. Անն Լույոն հոկտեմբերի 5-ին այցելել են Սյունիքի մարզ[24]: Միասին շրջայց են կատարել ադրբեջանական ագրեսիայի հետևանքով տուժած բնակավայրերում, եղել են Վերիշեն, Քարաշեն, Վաղատուր, Աղիտու և Նորավան բնակավայրերում, Վերիշենում հանդիպել են նաև վիրավորում ստացած քաղաքացիական անձի:

Պաշտպանի աշխատակազմը նաև տեխնիկական աջակցություն է տրամադրել միջազգային այն հասարակական կազմակերպություններին, որոնք փաստահավաք առաքելություն են իրականացրել ադրբեջանական հարձակումից ազդված համայնքներ:

8. Պաշտպանը նաև հետևողական է եղել հայ զինծառայողների կողմից ենթադրյալ հանցագործությունների կատարման վերաբերյալ տեղեկություններին արձագանքնելու տեսանկյունից: Ի թիվս այլ ջանքերի, Պաշտպանն անձնական նամակով խնդրել և Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարից հոկտեմբերին ստացել է այն տեսանյութերը, որոնց մասին պարոն Կլաարը Թվիթերի իր միկրոբլոգում արել էր հայտարարություն և որոնք առնչվում էին հայ զինծառայողների կողմից ենթադրյալ պատերազմական հանցագործությունների կատարմանը: Պաշտպանը ստացված նյութերն ուղարկել է Գլխավոր դատախազին՝ պատշաճ քննությունն ապահովելու համար, ապա նաև պարբերաբար տեղեկություններ է պահանջել գործերի ընթացքի վերաբերյալ:

9. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքային այցը Ստրասբուրգ 2022թ. սեպտեմբերի 26-ից 29-ը:

Եվրոպայի խորհրդի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են փախստականների իրավունքների պաշտպանության, ԵԽ հետ ծրագրային համագործակցության շարունակականության ապահովմանը միտված գործողությունների իրականացման վերաբերյալ հարցեր:

[23] https://ombuds.am/am/site/ViewNews/2353
[24] https://ombuds.am/am/site/ViewNews/2367

Մասնավորապես Քրիստիննե Գրիգորյանը Ստրասբուրգ այցի ընթացքում հանդիպումներ է իրականացրել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի, Գլխավոր քարտուղարի Միգրացիայի և փախստականների հարցերով հատուկ ներկայացուցիչ Լեյլա Կայաչիկի, ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների հարցերով տնօրեն Քրիստոֆ Պուարելիի, Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահ Կլեր Բազի Մալորիի, ԵԽ Երեխաների իրավունքների ստորաբաժանման ղեկավար, ԵԽ Երեխաների իրավունքների համակարգող Ռեջինա Ջենսդոտիրի և ԵԽ Խտրականության դեմ պայքարի, բազմազանության և ներառման հարցերով ղեկավար կոմիտեի քարտուղար Վոլֆրամ Բեխտելի, ԵԽ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) գործադիր քարտուղար Ռեժիս Բրիլլատի, ՄԻԵԴ նախագահ Ռոբերտ Սպանոյի, ԵԽ Ժողովրդավարության հարցերով Գլխավոր տնօրեն Մարյա Ռուտանենի և ԵԽ այլ գործընկերների հետ:

Գործընկերների հետ հանդիպումների շրջանակում առանձնակի քննարկման առարկա է հանդիսացել 2022 թվականի սեպտեմբերի 13-ից 15-ը Ադրբեջանի զինուժի կողմից իրականացրած պատերազմական հանցագործություններին, այդ թվում՝ քաղաքացիական անձանց և կենսական ենթակառուցվածքների ուղղակի թիրախավորման դեպքերին, առանձին խումբ անձանց իրավունքների կոպտագույն խախտումներին, կյանքի իրավունքի, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքի խախտումներին, զոհված զինծառայողների, մասնավորապես՝ կին զինծառայողների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի վայրագություններին:

Ներկայացնելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից սեպտեմբերի 16-ին հրապարակված արտահերթ զեկույցը՝ Պաշտպանը մատնանշել և հստակ օրինակներով ներկայացրել է Ադրբեջանի զինված ուժերի կողմից ինչպես 2020թ. 44-օրյա պատերազմի, այնպես էլ վերջին ագրեսիայի ընթացքում Ադրբեջանի կողմից կյանքի իրավունքի, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքի խախտումները, զոհված զինծառայողների, մասնավորապես՝ կին զինծառայողների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի վայրագությունները:

10. Հարցազրույցներ միջազգային հեղինակավոր պարբերականների լրագրողների հետ.

2022թ սեպտեմբերի 13-ից սկսած Պաշտպանը պարբերաբար հարցազրույցներ է տվել միջազգային հեղինակավոր պարբերականների լրագրողների (BBC[25], իտալական Tempi[26],

[25] https://www.bbc.com/russian/features-63872328?fbclid=IwAR3b0FpdyKPdUXrxfnA7BRC1d1_TUkj5s5pDT_gOL7uQkC34SxM1fgb1InE
[26] https://www.tempi.it/cosi-l-azerbaigian-tortura-mutila-e-fa-a-pezzi-i-soldati-armeni-armenia/?fbclid=IwAR2H6_kmnhQix0r3Q_Tl2-idrje2cFCGN6RKUGx5qeizaVSLhLB3_ibXDXA

ֆրանսիական Liberation, Le Monde[27], Le Point[28], Radio France[29], Le Figaro[30], բրիտանական GB News հեռուստատեսությանը[31], Մերձավոր Արևելքի արաբախոս Akhbar Al Aan պարբերականին[32]), տրամադրել Պաշտպանի կողմից հավաքագրված տեղեկատվությունը:

3. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ, ՊԱՀՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ և ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Պաշտպանի հաստատության աշխատանքի առաջնահերթ ուղղություններից է հանդիսացել Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների, քաղաքացիական անձանց վերադարձի, ինչպես նաև բռնի անհետացած ու անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկություններ ստանալուն ուղղված աշխատանքները:

Նշված բոլոր ուղղություններով արդյունքի հասնելու համար Պաշտպանն առաջին հերթին փորձել է կապ հաստատել ադրբեջանցի իր կոլեգայի հետ՝ ակնկալելով առնվազն տեղեկատվության փոխանակում և ընտանիքներից ստացվող անհանգստացնող լուրերի ճշտման ուղղությամբ համագործակցություն: Պաշտպանը փորձել է տարբեր միջնորդ կազմակերպությունների ու երկրների միջոցով կապ հաստատել, ապա նաև ուղղակի դիմել է Ադրբեջանի Մարդու իրավունքների հանձնակատարին՝ առաջարկելով համագործակցության իր պատրաստակամությունը: Թեև Պաշտպանին անձնական հանդիպման ժամանակ հայտնած համագործակցության իր պատրրաստակամությանը՝ Ադրբեջանի Մարդու իրավունքների հանձնակատարը մինչ այս հաղորդման ներկայացման պահը խուսափում է գործնական շփումներից:

Գերիների, անհետ կորած ու բռնի անհետացած անձանց հարցերով Պաշտպանի հաստատությունը սերտորեն համագործակցել է ԿԽՄԿ հետ:

1) Ռազմագերիների վերադարձին աջակցման նպատակով աշխատանք է տարվել միջազգային կազմակերպությունների և դերակատարների շրջանում հարցի վերաբերյալ իրազեկում ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես Պաշտպանը հաշվետու ժամանակահատվածում միջազգային դերակատարների հետ ունեցած ավելի քան **100** հանդիպումների ընթացքում (այդ թվում՝ ԱՄՆ կոնգրեսականների[33], ԱՄՆ Պետքարտուղարության ներկայացուցիչների[34], ԵԽ գլխավոր քարտուղարի[35], ՄԻԵԴ նախագահի[36], ԵԽ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի գործադիր քարտուղարի[37], ԵՄ և ԵՄ անդամ երկրների Արևելյան գործընկերության հատուկ բանագնացների պատվիրակության հետ հանդիպումներում[38],ԵՄ Հանձնաժողովի

---

[27] https://www.lemonde.fr/international/article/2022/10/17/l-azerbaidjan-face-aux-crimes-de-guerre-de-ses-soldats-contre-des-armeniens_6146082_3210.html ; https://www.lemonde.fr/international/article/2022/10/17/l-azerbaidjan-face-aux-crimes-de-guerre-de-ses-soldats-contre-des-armeniens_6146082_3210.html?fbclid=IwAR1WkkAiiMr3bsTdNrJLF9vh8HifhwqdwxJnsDNAMRf1x35yByRSTo3ivuo

[28] https://www.lepoint.fr/monde/l-armenie-de-nouveau-sous-la-menace-de-l-azerbaidjan-20-09-2022-2490716_24.php#11

[29] https://www.radiofrance.fr/franceculture/podcasts/grand-reportage/grand-reportage-emission-du-vendredi-16-decembre-2022-2995887?fbclid=IwAR1T8RL8KyF_iY9c5Uqv5k20t4tds6isvyrtIDZaYzMg310om9wxh9StEfk

[30] https://www.lefigaro.fr/international/entre-erevan-et-bakou-le-fosse-des-crimes-de-guerre-20221125?fbclid=IwAR2oI0fZBW78ItWaL_RKFlkpJrZQ2rnc1HZE0Mw65LIS7cZyRPOs4y2L-hQ

[31] Common Sense Crusade with Calvin Robinson at https://www.youtube.com/watch?v=55_H6Q733y4

[32] https://www.akhbaralaan.net/news/special-reports/2022/10/11/ماذا-تقول-أرمينيا-عن-فيديو-قتل-عدد-من-جنودها-الأسرى-على-يد-آخرين-من-أذربيجان؟

[33] https://ombuds.am/am/site/ViewNews/2266

[34] https://ombuds.am/am/site/ViewNews/2268 և https://ombuds.am/am/site/ViewNews/2258

[35] https://ombuds.am/am/site/ViewNews/2355

[36] https://ombuds.am/am/site/ViewNews/2358

[37] https://ombuds.am/am/site/ViewNews/2359

[38] https://ombuds.am/am/site/ViewNews/2403

հետ Մարդու իրավունքների մասին երկխոսությանը[39]) մշտապես ներկայացրել է, որ 2020թ. պատերազմի ընթացքում ու դրանից հետո ադրբեջանական զինուժի կողմից գերեվարված հայ ռազմագերիների պահումն Ադրբեջանում, հակասում է միջազգային հումանիտար իրավունքի նորմերին և պատերազմի ավարտին ստորագրված հրադադարի եռակողմ հայտարարության[40] 8-րդ կետի դրույթին, ըստ որի, Ադրբեջանը հանձնառություն է ստանձնել ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց, ինչպես նաև զոհվածների մարմինների փոխանակում: Պաշտպանը թե հրապարակային հայտարարությունների և թե միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ շփումներում հիմնավորել է, որ պահվող անձանց նկատմամբ Բաքվում կազմակերպված դատավարություններն ապօրինի են, քանի որ այդ անձինք օգտվում են ռազմագերու կարգավիճակից և պետք է անմիջապես վերադարձվեն Հայաստան: 2022թ սեպտեմբերի 13-14-ի ՀՀ-ի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով գերեվարված և հոկտեմբերի սկզբին ՀՀ վերադարձված 17 ռազմագերիների հետ Պաշտպանի ներկայացուցիչներն իրականացրել են հատուկ մեթոդաբանությամբ հարցազրույցներ, որոնց արդյունքներն ամփոփվել են Պաշտպանի կողմից պատրաստված ու միջազգային կազմակերպություններին ու դերակատարներին ուղարկված արտահերթ ոչ հրապարակային զեկույցում (առավել մանրամասն տես սույն հաղորդման «Արտահերթ զեկույցներ» բաժնում):
Պաշտպանի աշխատանքի հատուկ ուղղություն է եղել ռազմագերիների ընտանիքների անդամների հետ աշխատանքը, սկսած պարբերական հանդիպում-ընդունելություններից մինչև նրանց սոցիալ-առողջական խնդիրների լուծմանն աջակցելու նախաձեռնությունները: Պաշտպանի աջակցությամբ նման ցանկություն հայտնած 24-ից ավել ընտանիքներ, ընդհանուր թվով ավելի քան հինգ տասնյակ անձ, իրենց բնակության վայրում անցել են սոցիալ-առողջական գնահատում, որի արդյունքներով նշանակվել ու կատարվել են բժշկական անհրաժեշտ հետազոտություններ ու բուժումներ, ինչպես նաև ապահովել է յուրաքանչյուր անձի գնահատված կարիքից բխող հոգեբանական վերականգնման կուրսեր:

Նույն տրամաբանությամբ հայենադարձված ռազմագերիներին Պաշտպանի աշխատակազմն առաջարկել, ապա նաև ապահովել է հոգեբանական վերականգնման անհրաժեշտ կուրսեր: Բժշկական ու հոգեբանական աջակցության ապահովումն հնարավոր է դարձել «Խոշտանգում վերապրած անձանց վերականգնողական հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության շնորհիվ, ինչի համար Պաշտպանը ևս մեկ անգամ շնորհակալություն է հայտնում կազմակերպության բոլոր ներկայացուցիչներին ու բժիշկներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայել ընտանիքներին անհրաժեշտ աջակցությունն ապահովելու համար:

Պաշտպանի աշխատակազմն ակտիվորեն ներգրավված է եղել կառավարության կողմից ռազմագերիների ընտանիքների աջակցության ծրագրերի և առնչվող այլ իրավական ակտերի մշակման աշխատանքներին, այդ գործընթացում ևս լուծումներ է առաջարկել հաստատությանը հայտնի դարձած խնդիրների լուծման ուղղությամբ:

2) Բռնի անհետացած և անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության ուղղությամբ Պաշտպանի աշխատանքը միջազգային դերակատարների հետ շատ նման է ռազմագերիների մասին տեղեկություն ստանալու մասով տարվող աշխատանքներին: Այլ կերպ ասած, բոլոր բարձրաստիճան հանդիպումներին Պաշտպանը մշտապես բարձրացրել է բռնի անհետացած ու անհետ կորած անձանց և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության հարցերը: Բացի վերը նշված

[39] https://ombuds.am/am/site/ViewNews/2396
[40] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/

հանդիպումներին հարցերի բարձրացումից, Պաշտպանը հարցերը բարձրացրել է նաև ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի շրջանակներում:

Այսպես, Քրիստիննե Գրիգորյանը տեսաուղերձով է հանդես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 50-րդ նստաշրջանի (2022թ. հունիսի 13–հունիսի 8) շրջանակներում անցկացվող ՄԱԿ-ի Արտադատական, առանց դատի կամ կամայական մահապատիժների հարցերով Հատուկ զեկուցողի հետ քննարկմանը[41]: Պաշտպանը անդրադարձ է կատարել 2020թ. Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում և դրանից հետո ադրբեջանական զինուժի կողմից հայ խաղաղ բնակչության, այդ թվում՝ ծերերի և ռազմագերիների նկատմամբ իրականացված խոշտանգումների, արտադատական և ամփոփ մահապատիժների վերաբերյալ արձագանքին և նշել, որ համացանցով անգամ տարածվող նման ծայրահեղ դաժան արարքներին միջազգային արձագանքը եղել է մեղմ ասած անհամաչափ ու անբավարար՝ դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով այլ ընթացիկ հակամարտություններում արտադատական և կամայական մահապատիժների գործելակերպերի համար: Պաշտպանն ընդգծել է Հատուկ զեկուցողի կողմից տարածաշրջան ավելի շատ այցեր կատարելու հրամայականը՝ շեշտելով տեղում իրավիճակին ծանոթանալու անհրաժեշտությունը՝ որպես մանդատի արդյունավետ իրականացման երաշխիք, ինչպես նաև առաջարկել Պաշտպանի հաստատության աջակցությունն այդ հարցերում:

Պաշտպանը տեսաուղերձով է հանդես եկել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 51-րդ նստաշրջանի շրջանակներում անցկացվող Բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խմբի հետ քննարկմանը[42]:

Ներկայացնելով հաստատության կողմից տարվող աշխատանքները՝ Պաշտպանը նշել է, որ նման հանցագործության զոհերը զրկված են իրենց իրավունքներից և ենթակա են անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու խոշտանգումների, արտադատական սպանությունների ենթարկվելու մեծ ռիսկի: Հաճախ այն օգտագործվում է պետությունների կողմից որպես տեղեկատվական պատերազմի զենք՝ ընտանիքներում և ընդհանուր առմամբ, հասարակության մեջ սարսափ տարածելու համար:

Պաշտպանը նշել է, որ ցավալիորեն, ամբողջ աշխարհում ընթացող հակամարտությունները բարենպաստ միջավայր են ստեղծել բռնի անհետացումների համար, և Հայաստանը դա գիտի իր օրինակով: Անհայտ կորածների մասին տեղեկությունների աղճատման կամ ընդհանրապես, տեղեկություններ չտրամադրելու ադրբեջանական քաղաքականությունը և քաղաքական առավելություններ ստանալու համար այդ հարցի օգտագործումը Պաշտպանը մարդու իրավունքների կոպիտ և շարունակական խախտում է համարել:

Պաշտպանը նաև ուղերձ է հրապարակել Բռնի անհետացումների զոհերի միջազգային օրվա առթիվ[43]:

Պաշտպանն անձամբ և իր ներկայացուցիչները պարբերական ընդունելություններ են իրականացրել[44] բռնի անհետացած և անհետ կորած անձանց ընտանիքների անդամների հետ, որոնց ընթացքում ներկայացրել են թե հաստատությունն ինչ աշխատանք է իրականացնում, ինչպես նաև ընդունել ու ընթացք են տվել ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրներին առնչվող դիմումներ:

---

[41] https://ombuds.am/am/site/VideoGalleryView/748

[42] https://fb.watch/hU_3WEYcxB/?mibextid=cr9u03 Տեսաուղերձը նկարահանվել է օգոստոսի 31-ին, քարտուղարության կանոնների համաձայն՝ ուղարկվել է սեպտեմբերի 8-ին:

[43] https://ombuds.am/am/site/ViewNews/2330

[44] Ավելի քան երկու տասնյակ հանդիպում-ընդունելություններ:

Պաշտպանն անձամբ ներգրավված է եղել ՀՀ վարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N 1236-Ա որոշմամբ ստեղծված «Գերիների, պատանդների, անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի» կազմում և այս ձևաչափում ևս հնարավորություն է ունեցել հանձնաժողովին ներկայացնել Պաշտպանի հաստատության աշխատանքի արդյունքում հայտնի դարձած հրատապ խնդիրների մասին և առաջարկել հանձնաժողովի աշխատանքի այնպիսի մոտեցումների որդեգրում, որը հնարավորություն պետք է տա իրենց հարազատների մասին տեղեկություն փնտրող անձանց մոտ պետական մարմինների նկատմամբ արդարացիորեն կուտակված անվստահությունը հաղթահարելու, ինչպես նաև հաշվառված հրատապ խնդիրները լուծելու համար:

Նկատի ունենալով այն համատարած խնդիրը, որ անհայտ կորած ու բռնի անհետացած անձանց ընտանիքի անդամները 2020 թվականի սեպտեմբերից սկսած անցել են պետական տարբեր մարմինների դիմելու ու իրարամերժ տեղեկություններ ստանալու, իսկ առավել հաճախ էլ անպատասխան մնալու վիատեցնող ճանապարհով, հաշվի առնելով փաստը, որ նշված ընտանիքների մոտ անվստահության ու հոգեբանական դժվար վիճակով պայմանավորված անհաջող հաղորդակցությունը, որը շատ հաճախ իրականացվել է պետական տարբեր մարմինների կողմից, առավել է խորացրել վերջիններիս մոտ ձևավորված զայրույթն ու դժգոհությունը պետական մարմինների հանդեպ: Շատ ընտաանիքներ բախվել են քաղաքացիաիրավական ու սոցիալ-տնտեսական դժվարին կամ փակուղային իրավիճակների: Պաշտպանի հաստատությունում ընդունելությունների ու անհատական դիմումների ուսումնասիրության արդյունքում, Պաշտպանը 2022թ-ի հունիսին կառավարությանն առաջարկություն է ներկայացրել մշակելու Անհայտ կորած անձանց կարգավիճակի մասին համապարփակ օրենսդրություն, որը միջազգային վերաբերելի փորձի հիման վրա ու հայաստանյան իրավիճակի հաշվառմամբ կարգավորումներ կնախատեսի նշված խումբ անձանց կարգավիճակի, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների իրավունքների իրացման մասով:

Պաշտպանը նաև առաջարկել է նախատեսել մեկ միասնական մարմին, որը կզբաղվի ոլորտի քաղաքականության ու ընտանիքների խնդիրներին միասնական ու միատեսակ լուծումներ թե առաջարկելու, և թե տրամադրելու հարցերով: Նման մարմնի բացակայությունը հանգեցնում է ոլորտում միասնական, հետևողական և շարունակապես վարվող քաղաքականության բացակայությանը, տարբեր օրենսդրական ակտերում տրված առանձին և էպիզոդիկ բնույթ կրող լուծումներին, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների ոչ պատշաճ իրազեկմանը և այլ խնդիրների:

Անհայտ կորած անձանց հարցերով պատասսխանատու մարմնի առկայության անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև մասնագիտացված, բավարար կարողություններ ունեցող աշխատակազմի առկայության պահանջով, որը, ունենալով բավարար գիտելիքներ և հմտություններ, կկարողանա ռազմական դրության պայմաններում ու դրանից հետո ձեռնարկել անհրաժեշտ անհապաղ գործողություններ՝ ուղղված անձանց անհետացման կանխմանը, ձեռնամուխ կլինի որոնողական աշխատանքների կազմակերպմանը, կհավաքագրի համապարփակ տեղեկատվություն, կկարողանա արդյունավետ կերպով կապ պահպանել անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների հետ, բավարար կերպով իրազեկել վերջիններիս և հանրությանը, ապահովել հակառակորդ պետության, ինչպես նաև այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ այս հարցի առնչությամբ միասնական հաղորդակցությունը, և այլն:

Ոլորտում առկա հիմնական խնդիրներից է նշվել նաև անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների ոչ պատշաճ իրազեկումը՝ ինչպես իրենց հարազատի ճակատագրի, գտնվելու

վայրի, տարվող որոնողական աշխատանքների մասին, այնպես էլ պետության կողմից իրականացվող տարբեր ծրագրերի և դրանց շրջանակներում իրենց իրավունքների մասին: Մասնավորապես, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների հետ Պաշտպանի հանդիպումների, առանձնազրույցների ընթացքում վերջիններս բազմիցս նշել են, որ իրենց համար հստակ չէ՝ ո՞ր պետական մարմինն է զբաղվում իրենց անհայտ կորած հարազատին որոնելու, այդ մասին տեղեկություններ հավաքագրելու հարցերով, ըստ այդմ՝ ո՞ր մարմնին իրենք պետք է դիմեն հստակ տեղեկություններ ստանալու համար: Բացի այդ, ընտանիքի անդամները հայտնել են, որ պետական մարմինները հաճախ տեղեկատվություն չեն ներկայացնում կամ տրամադրում են հակասական տեղեկատվություն:

Շատ ընտանիքի անդամներ դժգոհություններ են հայտնել առ այն, որ չնայած պետական մարմիններին տրամադրել են մարտական գործողությունների ընթացքում իրենց հարազատների տեղաշարժի, գտնվելու վայրի և այլնի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ, սակայն իրավասու մարմինները որևէ գործողություններ չեն իրականացրել: Զինծառայողների ճակատագրերի վերաբերյալ հարազատներին տեղեկություններ չտրամադրելը կրել է համակարգային բնույթ, դրա մասին է վկայում Պաշտպանին հասցեագրված բողոքների քանակը:

Առկա հիմնական խնդիրներից է նաև անհայտ կորած անձանց վերաբերյալ տվյալների միասնական բազայի բացակայությունը: Այս խնդիրն առավել ցայտուն է դառնում սոցիալական աջակցության ծրագրերի տրամադրման ընթացակարգերի ուսումնասիրության դեպքում:

Ի վերջո, անհայտ կորած ու բռնի անհետացած անձանց իրավունքների պաշտպանությունը Պաշտպանի հաստատությունն իրականացրել է նաև ՄԱԿ-ի «Բռնի կամ ոչ կամավոր անհետացումների հարցերով աշխատանքային խմբին» սահմանված ընթացակարգերի համաձայն ծնողների ու հարազատների անունից անհատական դիմումների պատրաստման, ինչպես նաև առանձին հարազատների համար ՄԱԿ-ի նշված աշխատանքային խմբի փորձագետների հետ հանդիպումներ կազմակերպելու միջոցով:

4. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊՈՂ ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ) ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Պաշտպանի հաստատության մշտական ուշադրության կենտրոնում է եղել Արցախում ապրող մարդկանց անվտանգային իրավիճակն ու կենսական իրավունքների ապահովման հարցը: Պաշտպանի հաստատություն բարձր մակարդակի համագործակցություն է իրականացրել Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ: Պաշտպաններն անձամբ գտնվել են ամենօրյա կապի մեջ: 2022թ մարտին Արցախ կատարած այցի ընթացքում Պաշտպանը հանդիպումներ է ունեցել Արցախի իր գործընկերոջ, Արցախի նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, Պետական նախարարի, Գլխավոր դատախազի և այլ դերակատարների հետ: Այս հանդիպումներն ու այցելությունները Խրամորթ համայնք, ինչպես նաև տեղահանվածների կացարաններ կատարած այցերը, Պաշտպանի հաստատության համար հնարավորություն են ստեղծել առաջին աղբյուրից ու տեղում տեղեկություններ ստանալ արցախահայության նկատմամբ ադրբեջանական ատելության քաղաքականության գործնական դրսևորումների հետ:

Նկատի ունենալով, որ Արցախը միջազգային մեկուսացման պայմաններում է կենսագործել, Պաշտպանի հաստատությունն իր առաքելությունն է համարել Արցախում տեղի ունեցող

մարդու իրավունքների խախտումների, գոյաբանական վտանգների մասին տեղեկությունները մարդու իրավունքների միջազգային մասնագիտացած կառույցներին ու դերակատարներին ներկայացնելը: Հենց այս տրամաբանությամբ են համագործակցել Պաշտպանների երկու հաստատությունները:

Արցախը Հայաստանին ու աշխարհին կապող միակ ճանապարհի արգելափակման առաջին իսկ օրվանից՝ 2022թ դեկտեմբերի 12-ից, Պաշտպանի հաստատությունը Արցախի գործընկերների աջակցությամբ սկսել է փաստեր հավաքել տեղում հումանիտար ու մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ: Դեկտեմբերի 15-ին հրապարակվել է առաջին համատեղ զեկույցը Լաչինի միջանցքի արգելափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ: Այնուհետ արգելափակման շարունակության պայմաններում Պաշտպանները թարմացրել են արտահերթ համատեղ զեկույցի տվյալները նոր զեկույց հրապարակելով դեկտեմբերի 26-ին: Զեկույցների բովանդակության մասին մանրամասները ներկայացված են սույն հաղորդման «Արտահերթ զեկույցներ» բաժնում:

Արտահերթ համատեղ զեկույցը, ինչպես նաև բովանդակային տեղեկատվություն առանձին խումբ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ Պաշտպանի կողմից ներկայացվել է շուրջ երկու տասնյակ մարդու իրավունքների պաշտպանության մանդատն ունեցող միջազգային կազմակերպություններին և հակամարտության հանգուցալուծմանը ներգրավված այլ դերակատարներին, այդ թվում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Ֆոլքեր Թյուրքին, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչին, Մարդու իրավունքների հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Էյմոն Գիլմորին:

Ի թիվս այլնի, թեմատիկ հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողներին[45] ու կոնվենցիոն մեխանիզմներ հանդիսացող թեմատիկ կոմիտեներին[46] են ներկայացվել անձանց կյանքի, առողջության պահպանման, սննդի իրավունքների կոպիտ խախտումները և կոչ արվել ձեռնարկելու բոլոր հնարավոր միջոցները Լաչինի միջանցքը վերաբացելու, Արցախում օրեցօր խորացող հումանիտար ճգնաժամը դադարեցնելու համար: Հատկանշական է, որ միջազգային դերակատարների ուշադրությանն է ներկայացվել ոլորտային խնդիրներ, այդ թվում՝ տարեցների, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շարունակական խախտման վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ իրադարձությունների հանգամանալից վերլուծության հիման վրա:

Թեև միջազգային կարևոր դերակատարների հայտարարություններին՝ իրավիճակը չի փոխվել և 120 հազար մարդ, այդ թվում 30 հազար երեխա, 20 հազար տարեց ու 8 հազար հաշմանդամություն ունեցող անձ շարունակում են գտնվել շրջափակման մեջ: Երկու կողմից 1100-ից ավել մարդ, այդ թվում՝ 270 երեխա, չեն կարողանում վերադառնալ իրենց տներ շրջափակման պատճառով: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդների, այդ թվում՝ 4 ամսեկան հիվանդ երեխայի տեղափոխումը, ինչպես նաև երեք շաբաթից ավել տևող շրջափակման պայմաններում մեկ անգամ 10 տոննա հումանիտար բեռի տեղափոխումը Հայաստանից Արցախ, ցավալիորեն չի շտկում իրավիճակը:

Շրջափակման վայրին հասանելիություն չունեն թե հայկական, և թե արտասահմանյան անկախ լրատվամիջոցները[47], և ստեղծված տեղեկատվական վակուումի պայմաններում, ադրբեջանական կառավարական լրատվամիջոցները, որոնք անարգել հասանելիություն

[45] Թվով 6 վերաբերելի հատուկ զեկուցողների:
[46] Թվով 7 թեմատիկ կոմիտեների:
[47] Պաշտպանը տեղեկացված է, որ մի շարք հայ լրագրողներ փորձել են Հայաստանից անցնել դեպի Լաչինի միջանցքի այն հատվածը, որտեղ կեղծ «բնապահպանները» ակցիա են իրականացնում, սակայն ռուսական խաղաղապահ կոնտինգենտի կողմից նրանց արգելվել է շարունակել ճանապարհը:

ունեն «դեպքի վայրին», փորձում են աշխարհի մոտ տպավորություն ստեղծել, որ շրջափակում չկա և օրինակ, ԿԽՄԿ ու ռուս խաղաղապահների տրանսպորտային միջոցներին ադրբեջանցի կեղծ «բնապահպանները» թույլ են տալիս երթևեկել ՀՀ-Արցախ-ՀՀ ուղղություններով: Սակայն հենց փաստը, որ միայն ԿԽՄԿ-ի տարբերանշանով տրանսպորտային միջոցներն են երթևեկում, վերահաստատում է շրջափակման փաստը: Ինչ վերաբերում է ռուս խաղաղապահ ուժերի տեղաշարժին, ապա Լաչինի միջանցքն ըստ 2020թ նոյեմբերի 9-ի հրադադարի եռակողմ հայտարարության, ռուսական խաղաղապահության գոտին է, և առաքելության նպատակների համար նրանց տեղաշարժը չի կարող համարվել արցախում ապրող մարդկանց ազատ տեղաշարժ: Իսկ վերջինի վերաբերյալ չկա գեթ մեկ ապացույց:

Նշված պայմաններում Պաշտպանը դիմել է ՄԱԿ Մարդու իրավունքների հանձնակատարին՝ առաջարկելով փաստահավաք առաքելություն ուղարկել շրջափակման գոտի և ՄԱԿ մեթոդաբանությամբ հավաքագրել փաստերն ու ներկայացնել ՄԱԿ մարմիններին, այդ թվում՝ ՄԱԿ անվտանգության խորհրդին, որտեղ դեկտեմբերի 20-ին քննարկվել էր Լաչինի միջանցքի արգելափակման հարցը: Սույն հաղորդումը ներկայացնելու պահի դրությամբ ՄԱԿ ՄԻ Գլխավոր հանձնակատարից դեռ արձագանք չկա:

Պաշտպանը նաև Լաչինի միջանցքի արգելափակման հումանիտար հետևանքների և մարդու իրավունքների շարունակական խախտումների մասին տեղեկությունները ներկայացրել է ՄԱԿ թվով 6 թեմատիկ հատուկ զեկուցողներին՝ նախաձեռնելով հատուկ ընթացակարգեր, ինչպես նաև իրավիճակի վերաբերյալ գրություններ է ուղարկել ՄԱԿ մոնիտորինգային մարմիններին:

Պաշտպանի հաստատությունն իրավիճակի վերաբերյալ թարմ տեղեկությունները պարբերաբար ներկայացնում է ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակին, ԵՄ Մարդու իրավունքների հանձնակատարին, ինչպես նաև միջազգային հասարակական կազմակերպություններին ու խնդրում ներգրավված դիվանագիտական առաքելություններին և Հայաստան ժամանող պատվիրակություններին:

Պաշտպանի հաստատությունը շարունակում է տարբերակներ փնտրել միջազգային փաստահավաք առաքելության կազմակերպման, ինչպես նաև հումանիտար ճգնաժամի մասին թարմ տեղեկությունները գործընկերներին ներկայացնելու համար:

5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՐԾԻՔՆԵՐ

1) Պաշտպանը 2022 թվականի օգոստոսի 23-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության առնչությամբ: Դիմումով Պաշտպանը վիճարկել է, որ վկայակոչված դրույթներով սահմանված՝ ոստիկանության, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների, զինծառայողների, դատախազների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար նախատեսված՝ արհեստակցական միություններին անդամակցելու, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների համար նաև՝ կրոնական կազմակերպություններին անդամակցելու, իսկ զինծառայողների համար՝ կրոնական

միավորում ստեղծելու բացարձակ արգելքը հանգեցնում է վերոնշյալ անձանց կրոնի ազատության և միավորումների ազատության անհամաչափ սահմանափակման:
Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի ՍԴԱՈ-202 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը նշանակվել է 2023 թվականի մարտի 14-ին՝ ժամը 11.00-ին:

2) Պաշտպանը 2022 թվականի նոյեմբերի 4-ին Բարձր դատարան ներկայացրել է դիմում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ: Դիմումի շրջանակներում հայցվել է որոշել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի ՀՀ Սահմանադրության 29-րդ, 50-րդ, 59-րդ, 60-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը: Մասնավորապես՝ ներկայացված դիմումով հիմնավորվում է, որ խնդրո առարկա փոփոխություններն ուղղակիորեն խոչընդոտում են տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի, ինչպես նաև սեփականության իրավունքի իրացմանը: Ավելին՝ նախատեսված կարգավորումները խնդրահարույց են նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի և իրավական որոշակիության համատեքստում: Սահմանադրական դատարանի 2022 թվականի նոյեմբերի 22 թիվ ՍԴԱՈ-184 որոշմամբ գործն ընդունվել է քննության և գործի դատաքննությունը նշանակվել է 2023 թվականի մարտի 21-ին՝ ժամը 11:00-ին:

3) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ՍԴ ներկայացրած օժանդակ կարծիքները (amicus curiae) Պաշտպանը հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրել է 5 օժանդակ կարծիք, որոնք վերաբերել են արդար դատաքննության, դատական պաշտպանության, սեփականության, նորմատիվ իրավական ակտի հետադարձությանը, իրավական որոշակիությանը: Օժանդակ կարծիքները ներկայացվել են հետևյալ գործերով.
ա. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, բ. «Լարվար» արտադրական կոոպերատիվի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի, 252-րդ հոդվածի 1-ին մասի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով,
գ. Հրայր Թովմասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 41-րդ գլխի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով,
դ. Ալբերտ Եդիգարյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով,
ե. «Ռուզաննա Ղազարյանի դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

6. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1) Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2022 թվականի օգոստոսի 25-ին ստեղծվել է և Սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդրանիկ նիստը:[48] Խորհուրդը կազմված է ոլորտի հասարակական կազմակերպության ներկայացուցիչներից: Խորհրդի նպատակը կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելն է՝ որպես խորհրդատվական մարմին: Խորհուրդը թիրախավորում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ կանանց իրավազորման, տնտեսական հզորացման, իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման, կանանց նկատմամբ բռնության և գենդերային բռնության կանխարգելման, դրանց արձանագրման և աջակցության տրամադրման հարցերը, իրավապահ համակարգում և զինված ուժերում կանանց ակտիվ ներգրավման ու առաջընթացի հարցերը, ռազմավարությունների ու ծրագրերի իրականացման մշտադիտարկման և կատարողականի գնահատման հարցերը, կանանց ու աղջիկների իրավունքների մասին իրազեկման արշավները, կրթական ու մասնագիտական վերապատրաստման ծրագրերը և այլն:

2) Իրավապահ համակարգում կանանց ակտիվ ներգրավման ու առաջընթացի խթանման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշակվել է «Ամփոփ հայացք Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում կանանց ներգրավումը խթանելու ուղղությամբ» հայեցակարգն ու դրանից բխող միջոցառումների ցանկը: Հայեցակարգն ուղղված է Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում կանանց ներգրավումը խթանելուն, ինչին հասնելու նպատակով մշակվել է դրանից բխող գործողությունների ծրագիր, որն էլ իր հերթին մի քանի ուղղություններ է իր մեջ ընդգրկում՝ խնդիրների գնահատում, օրենսդրական փոփոխություններ, իրազեկման նախապատրաստում[49], հանդիպումներ, աջակցություն և ինստիտուցիոնալացում:

2022 թվականի ընթացքում արդեն իսկ իրականացվել են գործողությունների ծրագրով նախատեսված այնպիսի աշխատանքներ՝ ինչպիսիք են պարեկային, ոստիկանության այլ ծառայություններում կին ծառայողների ֆոկուս խմբերի քննարկումները, մատչելի իրազեկման թերթիկների պատրաստում և տարածումը առանձին հեռախոսահամարի և էլեկտրոնային հասցեի նախատեսումը, ներկայումս աշխատանքներ են տարվում Կառավարության 2003 թվականի թիվ 175-Ն որոշման վերանայման ուղղությամբ: Իրազեկման աշխատանքների համատեքստում իրավապահ համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման նպատակով ՄԻՊ-ի կողմից տեղեկատվական պաստառներ են պատրաստվել և մարզային հեռուստատեսություններով ցուցադրվել են հոլովակներ ՀՀ 4 մարզերում՝ Արմավիրում,

[48] https://ombuds.am/am/site/ViewNews/2339
[49] https://ombuds.am/am/site/ViewNews/2457

Արարատում, Վայոց ձորում, Սյունիքում մեկնարկող Պարեկային ծառայությանը կանանց մասնակցություն վերաբերյալ:

<< 4 մարզերում տեղադրված պաստառներ

3) Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի գործունեության համատեքստում 2022 թվականի նոյեմբերի 25-ին Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ տեղի է ունեցել համաժողով՝ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի մեկնարկին ուղղված:[50]

Հասարակական խորհրդի գործունեության համատեքստում և «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի շրջանակներում սոցիալական ցանցերում Պաշտպանի կողմից՝ հրապարակվել է գրառումների շարք՝ հատուկ մշակված նկարների միջոցով պատմելով ընտանիքում բռնության և դրա դեմ պայքարում Մարդու իրավունքների պաշտպանի դերն արտացոլող և մի քանի մասերից բաղկացած մեկ միասնական պատմություն.[51]



հրապարակումներ են իրականացվել անդրադառնալով ինչպես կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանի դերին, այնպես էլ զինծառայողների՝ աղրբեջանական զինված ուժերի կողմից թիրախավորմանը՝ պայմանավորված սեռով ու ազգությամբ.[52]

սոցիալական ցանցերում իրականացվող իրազեկման աշխատանքներից բացի, լայն իրազեկման աշխատանքներ են իրականացվել ընտանիքում բռնության և դրա դեմ պայքարում Մարդու իրավունքների պաշտպանի դերն արտացոլող պատմության հոլովակները հանրությանը հասանելի վայրերում տեղադրելու եղանակով ևս.

[50] https://ombuds.am/am/site/ViewNews/2414
[51] https://ombuds.am/am/site/ViewNews/2418
https://ombuds.am/am/site/ViewNews/2420
https://ombuds.am/am/site/ViewNews/2423
https://ombuds.am/am/site/ViewNews/2424
https://ombuds.am/am/site/ViewNews/2425
[52] https://ombuds.am/am/site/ViewNews/2419
https://ombuds.am/am/site/ViewNews/2427

«Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի ավարտի և մարդու իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մարդու իրավունքների առնչությամբ խնդիրների վերհանման և մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով քաղաքացիների հետ մարզային հանդիպումների շրջանակներում հանդիպումներ են ունեցել նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող աջակցության կենտրոնների ներկայացուցիչների ու կանանց հետ, ովքեր իրենց խնդիրներն են ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն իրենց հերթին ներկայացրել են կանանց և ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանի դերն ու իրավասությունները. իրավապահ համակարգում կանանց ակտիվ ներգրավման ու առաջընթացին խթանման նպատակով՝ հանդիպումների ընթացքում կանանց տրամադրվել են իրազեկող թերթիկներ՝ իրենց մարզերում մեկնարկվող Պարեկային ծառայություն վերաբերյալ:

4) Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը բոլոր հնարավոր միջոցներով՝ հայտարարություններ, ելույթներ, այցեր, միջազգային գործընկերների կողմից իրականացվող ծրագրեր, այդ թվում՝ մենթորության ու զարգացման, միջոցով խրախուսել ու կարևորել է կանանց տնտեսական հզորացման նախաձեռնությունները:

2022թ ապրիլինի Պաշտպանը Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակներում հանդիպում-քննարկումներ է ունեցել Կապանի, Մեղրիի, Գորիսի, ինչպես նաև Գյումրիի, Վանաձորի, Բերդի «ՎԻՆՆԵԹ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի ներկայացուցիչներին ու շահառուներին[53]: Պաշտպանն թիրախային հանդիպումներ է ունեցել արցախից տեղահանված և Սյունիքի[54] ու Լոռու համայնքներում բնակվող շուրջ 40 կանանց ու աղջիկների, հաշվառել վերջիններիս հանդիպող դժվարությունները՝ աշխատատեղերի ու զբաղվածության հասանելիության, երեխաների կրթության կազմակերպման, հյուրընկալ համայնքներում տեղահանված ընտանիքների համար ստեղծված տարբերվող պայմանների, պետության կողմից փոխահոտուցումների աջակցության ծրագրերի հասցեականության խնդիրների և այլ հարցերի հետ կապված:

Քննարկումների ընթացքում վերհանված խնդիրները կոնկրետ

[53] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2193 , https://www.ombuds.am/am/site/ViewNews/2195 , https://www.ombuds.am/am/site/ViewNews/2196
[54] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2197

առաջարկություններով հասցեագրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, Տարածքային կառավարմանն ու ենթակառուցվածքների և ՀՀ Էկոնոմիկայի նախարարություններին:

5) 2022 թվականի ընթացքում Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվել են թիրախային գործողություններ՝ ուղղված սեռական ոտնձգության դեմ պայքարին: Մասնավորապես, պատրաստվել է ուսումնասիրություն՝ աշխատանքում սեռական ոտնձգության վերաբերյալ միջազգային չափորոշիչներին ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ: Ուսումնասիրությունում անդրադարձ է կատարվել աշխատանքում սեռական ոտնձգության արգելքի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված, սեռական ոտնձգության դեպքերի արդյունավետ քննությանը, այդ թվում՝ սեռական ոտնձգության ենթարկված անձանց իրավունքների ապահովման երաշխիքներին, ինչպես նաև ներկայացվել են առաջարկներ ՀՀ օրենսդրությունը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով:

Բացի այդ, մշակվել է սեռական ոտնձգության դեմ իրազեկման արշավը, որի շրջանակներում մշակվել է սեռական ոտնձգության տեսակների, դրանց դեմ պայքարի ու ազդարարման միջոցների վերաբերյալ տեղեկատվական պաստառներ և իրազեկման թերթիկներ, որոնք կհրապարակվեն և հասանելի կլինեն լայն հանրությանը 2023թ. փետրվարին:

7. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Անձանց ընտրելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացման նպատակով Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են գտնվում երկրում ծավալվող ընտրական գործընթացները: 2022 թվականի ընթացքում կայացած ընտրությունները դիտարկելու նպատակով Պաշտպանի հանձնարարությամբ ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք ընտրությունների ամբողջ օրվա ընթացքում, ինչպես նաև նախընտրական քարոզչության և հետընտրական ժամանակահատվածում իրականացրել են ընտրական գործընթացի անկախ դիտարկում՝ ընտրական իրավունքներին առնչվող հնարավոր բողոքներն ուսումնասիրելու և ըստ անհրաժեշտության՝ արագ արձագանքելու նպատակով:

1) **Վեդի խոշորացված համայնքի ավագանու ընտրություն.** 2022 թվականի մարտի 27-ին Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքում անցկացվել է ավագանու ընտրություն՝ համամասնական ընտրակարգով: Ընտրություններին մասնակցել են «Իմ Հզոր Համայնք» և «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունները:

Ընտրությունների օրը Պաշտպանի աշխատակազմն, ի թիվս այլնի, ուսումնասիրել է սոցիալական ցանցերի ու լրատվամիջոցների հրապարակումները: Հրապարակումներով արձանագրված հիմնական խնդիրների թվում են եղել՝ ընտրության ընթացքում ընտրական տեղամաս Ազգային ժողովի պատգամավորների մուտք գործելը, ընտրական տեղամասին հարող տարածքում խմբերով հավաքվելն ու մեքենաների կուտակումը, քվեարկության սենյակի պայմանները և այլն: Մշտադիտարկման արդյունքների հիման վրա Պաշտպանը կապ է հաստատել իրավասու մարմինների հետ՝ նրանց ուշադրությանը ներկայացնելով ընտրական տեղամասին հարող տարածքում խմբերով հավաքվելը և մեքենաների կուտակումները: Վերջիններս հավաստիացրել են, որ կտրվեն համապատասխան հանձնարարականներ ներկայացված խախտումները վերացնելու վերաբերյալ:

Բացի այդ, լրատվական միջոցների մշտադիտարկման արդյունքում ստացվել է տեղեկություն առ այն, որ 27.03.2022 թվականին կայացած Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի ավագանու ընտրության ընթացքում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ են մուտք գործել ընտրական տեղամաս:

Այս առնչությամբ կատարված իրավական վերլուծությունը հանգում է հետևյալին՝ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածի 11-րդ մասի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.15 հոդվածի 1-ին մասի համադրված ուսումնասիրությունից ենթադրվում է, որ Օրենսգրքի իմաստով սահմանափակված է քվեարկության ամբողջ ընթացքում քվեարկության սենյակում գտնվելը, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի իմաստով պատասխանատվություն առաջացնող արարք է համարվում քվեարկության ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը: Այսպիսով, գործող իրավակարգավորումների իմաստով հակահիրավական արարք որակվել չի կարող քվեարկության սենյակում որևէ պահի գտնվելը:

2022 թվականի մարտի 27-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարներին ընտրական գործընթացին վերաբերող ահազանգեր ու դիմում-բողոքներ չեն ստացվել:

2) Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ. 2022 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Պաշտպանի կողմից ձևավորված աշխատանքային խմբի կողմից, ի թիվս այլնի, իրականացվել է նաև սոցիալական ցանցերի և լրատվամիջոցների մշտադիտարկում: Արձանագրված խախտումների առնչությամբ իրականացվել է արագ արձագանքում, խնդիրների օպերատիվ լուծման նպատակով ապահովվել է հաղորդակցությունն իրավասու անձանց հետ:

Մշտադիտարկման արդյունքում վեր հանված հիմնական խնդիրների թվում են եղել՝ ընտրության ընթացքում ընտրական տեղամասի մոտակայքում Ազգային ժողովի պատգամավորի գտնվելն ու ենթադրյալ ուղղորման դեպքերը, ընտրական տեղամասին հարող տարածքում ոստիկանության պարեկապահակետային ծառայության ծառայողների խմբով կանգնելը, ընտրությանը մասնակցող թեկնածուի կողմից սոցիալական ցանցում իր քվեաթերթիկի համարի վերաբերյալ հատուկ հոդված հրապարակելը, տեղամասերում կուտակումների և հերթերի առկայությունը և այլն:

2022 թվականի սեպտեմբերի 25-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարներին ընտրական գործընթացին վերաբերող ահազանգեր ու դիմում-բողոքներ չեն ստացվել:

8. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀՀ վարչապետի 27.01.2022 թվականի «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու և

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի N 181-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 111-Ա որոշմամբ հաստատված Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անհատական կազմում ներառված է Պաշտպանը:

Որպես Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ Պաշտպանի կողմից սահմանադրության փոփոխությունների ուղղությունների առնչությամբ քննարկումներ են իրականացվել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում գույքագրվել են բարձրացված սահմանադրական լուծումներ պահանջվող խնդիրները:

Սահմանադրական բարեփոխումների խորհրդին համապատասխան հիմնավորումներով ներկայացվել են Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Պաշտպանի ծավալուն առաջարկություններ[55:] Պաշտպանի առաջարկությունների համար ի թիվս այլնի, հիմք են հանդիսացել «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 2021թ. իրականացված թեմատիկ հետազոտությամբ վերհանված առաջարկությունները:

Ներկայացված առաջարկությունները, մասնավորապես, վերաբերում են Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխների տարանջատման վերացման և տնտեսական, սոցիալական ու մշակութային բոլոր իրավունքների՝ որպես հիմնական իրավունքների ամրագրման անհրաժեշտությանը, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայմանը, մասնավորապես՝ առաջարկվել է Սահմանադրության 2-րդ գլխում վերականգնել բժշկական սպասարկում և օգնություն ստանալու իրավունքը՝ որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունք, ինչպես նաև Սահմանադրական մակարդակով ամրագրել առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի և նվազագույնից ոչ ցածր վարձատրության իրավունքները որպես անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունքներ:

Առաջարկվել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրել յուրաքանչյուրի՝ բավարար կենսամակարդակի, ներառյալ բավարար բնակարանային պայմանների իրավունքը՝ որպես սուբյեկտիվ իրավունք: Ներկայացված առաջարկություններում անդրադարձ է կատարվել նաև շրջակա միջավայրի իրավունքների սահմանադրական երաշխիքների, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների վերանայմանը: Առաջարկվել է վերանայել նաև մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանադրական հիմքերը, մասնավորապես՝ սահմանափակման իրավաչափության գնահատման առումով կարևորելով «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» ձևակերպման ամրագրումը:

Որոշ փոփոխություններ են առաջարկվել նաև Պաշտպանի պաշտոնում ընտրության և Պաշտպանին աջակցելու վերաբերյալ սահմանադրական կարգավորումներում, մասնավորապես՝ ուսումնասիրելով լավագույն միջազգային փորձը, առաջարկվել է նախատեսել սահմանափակում նույն անձի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում վերընտրվելու առնչությամբ, ինչպես նաև առաջարկվել է հստակեցնել պաշտպանին աջակցելու պարտավորություն կրող սուբյեկտների շրջանակը:

Կարևորելով գործընթացում չներգրավված քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների հաստատության պրակտիկան, Պաշտպանի կողմից

[55] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2319

ներկայացված առաջարկությունները մշակվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնագիտական շրջանակների հետ քննարկումների ու մասնագիտական վերլուծությունների արդյունքում: Պաշտպանը ներկայացվող առաջարկությունները գրավոր ընթացակարգով քննարկման է ներկայացրել նաև Պաշտպանին առընթեր խորհուրդներում:

Մշակված առաջարկությունները ներկայացվել են նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներին, վերջիններիս հետ հանդիպման շրջանակներում Պաշտպանի կողմից ներկայացվել են առաջարկվող սահմանադրական փոփոխությունների էությունը և հիմնավորումները:

9. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է քրեական արդարադատության և իրավապահ մարմինների գործունեության ոլորտներում իրավունքների արդյունավետ ապահովումը: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր բողոքներ, Ոստիկանության բաժիններ, կամ իրավապահ համակարգի այլ ստորաբաժանումներ այցերը ցույց են տալիս, որ ոլորտի պատասխանատու պետական մարմինների կողմից ոչ միշտ է դրսևորվում մարդակենտրոն մոտեցում և շատ դեպքերում դրսևորվում է ոչ իրավաչափ վարքագիծ:

2022 թվականի ընթացքում քրեական արդարադատության ոլորտում Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է արագ արձագանքման այցեր:

Հարկ է նշել, որ իրականացված արագ արձագանքման այցերի ընթացքում բարձրացված հարցերը հիմնականում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ձեռնարկված անհրաժեշտ միջոցների արդյունքում, ստացել են դրական լուծում՝ վերականգնվել է 312 անձի իրավունք:

ՀՀ քրեադատավարական նոր օրենսգրքիերի կիրառությունը վերհանել է մի շարք համակարգային խնդիրներ իրավակիրառների գործելակերպերում, որոնց հիմնական մի քանի խնդիրներ դարձել են Պաշտպանի կողմից կայացված իրավունքների խախտման որոշումների պատճառ:

Պաշտպանին հասցեագրած թվով երկու բողոքների քննարկման արդյունքում 2022 թվականի ընթացքում քրեական արդարադատության ոլորտում Պաշտպանը կայացրել է անձի իրավունքների և ազատությունների խախտման երկու որոշում:

1. Կալանավորված անձի հաղորդակցության ազատության իրավունքի խախտման վերաբերյալ կայացված որոշում

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը՝ ի տարբերություն քրեական դատավարության նախկին օրենսգրքի սահմանել է մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակող որոշման պարբերաբար վերանայման ընթացակարգ: Մասնավորապես, կալանավորվածի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն դատարանի կողմից՝ կալանքի կիրառման համար անհրաժեշտ չափանիշով: Ընդ որում, այս երաշխիքը ներառում է սահմանափակման ժամկետը և սահմանափակման ենթակա անձանց շրջանակը: Մինչ նոր Քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելը այդպիսի սահմանափակում կիրառում էր քրեական վարույթն իրականացնող քննիչը: Մինչդեռ, խափանման միջոց կալանքն ինքնին չի ենթադրում հաղորդակցության իրավունքի սահմանափակում. այն ենթադրում է միայն ազատության իրավունքի սահմանափակում, ուստի այդ լրացուցիչ սահմանափակումը պետք է լինի դատական սանկցավորման առանձին առարկա՝ ապացուցման նույն կանոններով, ինչ բուն կալանքը: Այս սահմանափակումը, Օրենսգիրքը դիտում է որպես կալանքի կիրառման պայման, և այն քննվում է բացառապես կալանքի կամ դրա ժամկետի երկարացման միջնորդության շրջանակներում:

Այնուամենայնիվ, նշված կարգավորումները ուժի մեջ մտնելուց հետո Պաշտպանին է դիմել փաստաբանը և տեղեկացրել, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ապօրինի սահմանափակել են իր պաշտպանյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը և խնդրել է աջակցել հաղորդակցության իրավունքի սահմանափակումը վերացնելու հարցում:

Պաշտպանին դիմելու պահին անձը եղել է կալանավորված: Փաստաբանը հայտնել է, որ 2022 թվականի մարտի 17-ին վարույթն իրականացնող քննիչի որոշմամբ կիրառվել է այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակում: Փաստաբանի տեղեկացմամբ՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2022 թվականի հուլիսի 15-ին, քննիչի կողմից կալանքի ժամկետի երկարաձգման միջնորդությամբ՝ մեղադրյալի այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելու վերաբերյալ հարց (միջնորդություն) չի ներկայացվել դատարան, ուստի դատարանը չի անդրադարձել այդ հանգամանքին և մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելու վերաբերյալ որոշում չի կայացվել:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունից և ՀՀ Գլխավոր դատախազությունից:

Ստացված պարզաբանումների, բողոքի հիմքում ընկած փաստական տվյալների հաշվառմամբ և նկատի ունենալով ներպետական ու միջազգային իրավական ակտերի պահանջները՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն մեկ դեպքում և այդ իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն մեկ պարագայում, եթե այն սահմանափակվել է կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին դատարանի համապատասխան որոշմամբ, և եթե փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվել է այդպիսի սահմանափակման անհրաժեշտությունը, ներառյալ ժամկետին և անձանց շրջանակին վերաբերող պայմանները:

Ըստ այդմ, Պաշտպանն արձանագրել է, որ անընդունելի և ապօրինի է Քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակումը առանց օրենքով սահմանված հիմքի՝ դատարանի որոշման:
Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ նախքան մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելը, հիմնարկը պարտավոր էր հավաստիանալ, որ առկա է դատարանի որոշում՝ խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու և այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելու վերաբերյալ: Այսպիսով, Քրեակատարողական հիմնարկը, չունենալով համապատասխան որոշում, չէր կարող կամայականորեն սահմանափակել մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը:

Պաշտպանը խախտման որոշմամբ արձանագրել է կալանավորված անձի հաղորդակցության ազատության իրավունքի խախտման փաստը և իրավասու մարմիններին՝ ՀՀ արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանն ու Գլխավոր դատախազությանն, առաջարկել.
պրակտիկան զարգացնել այնպես, որ բոլոր այն դեպքերում, երբ կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին դատարանի որոշմամբ չի սահմանափակվել մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը, ապա քրեակատարողական հիմնարկը չի կարող սահմանափակել մեղադրյալի նշված իրավունքը,
միասնականացնել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ նշված որոշմամբ քննարկվող պրակտիկան՝ այն որոշակի ու կանխատեսելի դարձնելու նպատակով:
դատախազական հսկողության շրջանակում ձեռնարկել պատշաճ միջոցներ այսուհետ նմանատիպ դեպքերը բացառելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունից պատասխան գրություն է ստացվել, որ որոշմամբ հաստատված խախտումները բացառելու նպատակով, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին իրազեկել են Պաշտպանի որոշումը և տրվել են գրավոր հանձնարարական՝ դատարանի՝ կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշմամբ մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցման իրավունքը սահմանափակված չլինելու դեպքում բացառել նման իրավունքի սահմանափակումը:

ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված գրությամբ՝ ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակման անհրաժեշտության իրավական հիմքերի և պայմանների առկայության դեպքում, այդ իրավունքը սահմանափակել բացառապես ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումների շրջանակներում:

2. Վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձի սահմանահատումներն արգելելու կապակցությամբ իրավունքների խախտման վերաբերյալ որոշում

2022 թվականին շարունակվել են անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտելու պրակտիկայի ոչ իրավաչափ դրսևորումները, մասնավորապես՝ այդպիսի սահմանափակումների կիրառումը քրեական վարույթի շրջանակում վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ՝ այդպիսի գործողության իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

Պաշտպանին հասցեագրված բողոքով վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց ներկայացուցիչները տեղեկացրել են, որ իրենց վստահորդները «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից փորձել են հատել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, սակայն օդանավակայանում ծառայություն իրականացնող ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ծառայողներն արգելել են նրանց ելքը՝ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում ելքի իրավունքի սահմանափակման առկայության պատճառով և Պաշտպանի աջակցությունն են խնդրել իրենց վստահորդների ելքի իրավունքի սահմանափակումը վերացնելու հարցում:

Ավելի ուշ, բողոք ներկայացրած անձինք տեղեկացրել են, որ իրենց վստահորդների ելքի իրավունքի սահմանափակումը ՍԷԿՏ համակարգում չի վերացվել, վերջիններս բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժին:

Բողոքի քննարկման արդյունքում թե բողոքաբերների ներկայացրած տվյալների և թե Ոստիկանությունից ստացված պարզաբանումների հաշվառմամբ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության, վերաբերելի միջազգային պայմանագրերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների, բողոքի հիմքում ընկած փաստական տվյալների նկատմամբ կիրառելի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ընդունված 1998 թվականին թիվ ՀՕ-248 օրենքով), ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժման իրավունքը չի կարող սահմանափակվել ՍԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու արգելքի հիման վրա, քանի որ դրա օրենքով նախատեսված հիմքերը բացակայում են:

Պաշտպանը վերահաստատել է որոշմամբ իր՝ նախկինում արտահայտած եզրահանգումը և արձանագրել, որ նշված անձանց նկատմամբ ազատ տեղաշարժվելու սահմանափակման կիրառման պրակտիկան, անգամ եթե այն վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման նպատակ է հետապնդում, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն այն դեպքում, եթե այդ նպատակի իրագործմանն ուղղված ընթացակարգն ունի Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքեր: Ուստի, անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանատիպ ցանկացած խախտում պետք է առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:

Պաշտպանը խախտման որոշմամբ արձանագրել է բողոքաբերների ազատ տեղաշարժի իրավունքի խախտման փաստը և առաջարկել ՀՀ ոստիկանությանը իրավակիրառ

պրակտիկան զարգացնել այնպես, որ բոլոր այն իրավիճակներում, երբ անձը չունի որևէ դատավարական կարգավիճակ կամ ունի վկայի, տուժողի կարգավիճակ, բացառվեն նրա ելքը սահմանափակելու դեպքերը:

Հարկ է նշել, որ ի պատասխան ՀՀ ոստիկանությունից ստացվել է պատասխան, որ հետագայում նմանատիպ դեպքերից խուսափելու համար տրվել են համապատասխան հանձնարարականներ:

3. Վստահորդին տեսակցելու նպատակով Փաստաբանի մուտքը խոչընդոտելու խնդրահարույց պրակտիկա

2022 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների շարունակականությունը վկայում է, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր փաստաբանի մուտքը խոչընդոտելու և ազատությունից զրկված անձանց պաշտպանության իրավունքի խախտման դեպքեր: Փաստաբանի մուտքը խոչընդոտելու վերաբերյալ Պաշտպանին ներկայացված յուրաքանչյուր բողոքի դեպքում, բարձրացված հարցն անհապաղ բանավոր ընթացակարգով քննարկվել է իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ, որից հետո, դրական արդյունքի չհասնելու դեպքում, արագ արձագանքման ձևով կազմակերպվել այց տվյալ մարմին:

Փաստաբանի մատչելիության իրավունքի տեսանկյունից հարկ է նշել, որ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է, որ հետաքննության մարմինը կամ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձերբակալվածին հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք բերելուց հետո անհապաղ, ի թիվս այլնի, փաստաբան հրավիրել, չխոչընդոտել փաստաբանի հաղորդակցվելը և տեսակցելը ձերբակալվածի հետ:

Բացի վերը նշվածից, 2022 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանները տեղեկացրել են, որ իրենց վստահորդներին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժին, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և իրենց չեն թույլատրում հանդիպել նրանց հետ:
Փաստաբանները Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել են ահազանգեր նաև առ այն, որ իրենց վստահորդները տեղափոխվել են Ոստիկանության բաժին, սակայն տեղեկություն չունեն թե Ոստիկանության ո՞ր ստորաբաժանումում են գտնվում և վստահորդների գտնվելու վայրը ճշտելու համար դիմել են Պաշտպանի աջակցությանը, ինչի արդյունքում իրականացվել է արագ արձագանքում և վստահորդի գտնվելու վայրը տեղեկացվել է փաստաբանին:

Արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանները տեղեկացրել են, որ իրենց վստահորդներին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանություն, սակայն Ոստիկանության ծառայողներն առաջացնում են խոչընդոտներ՝ ազատությունից զրկված անձանց հետ տեսակցելու վերաբերյալ: Հատկանշական է, որ վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանների մուտքն արգելելու վերաբերյալ իրավապահ մարմինների ներկայացուցիչները ներկայացրել են տարաբնույթ պատճառաբանություններ:
Որոշ դեպքերում իրավապահ մարմինները պատճառաբանել են, որ դեռևս որևէ գործողություն չի իրականացվում ազատությունից զրկված անձանց հետ կամ փաստաբանի մուտքը տվյալ պահին հնարավոր չէ ապահովել: Այսպես, փաստաբանը Պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ներկայացրել, որ իր վստահորդները գտնվում են

Ոստիկանությունում, սակայն Ոստիկանության աշխատակիցները ձգձգում են իր մուտքը և թույլ չեն տալիս տեսակցել իր վստահորդների հետ: Նշվածի կապակցությամբ արագ արձագանքում է իրականացվել, հարցը քննարկվել է Ոստիկանության իրավասու ներկայացուցչի հետ, ինչի արդյունքում ապահովվել է փաստաբանների տեսակցությունն իրենց վստահորդների հետ:

Արձանագրվել են դեպքեր, երբ իրավապահ մարմինները ներկայացրել են պատճառաբանություն առ այն, որ անձը հրաժարվել է իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքից, չեն ցանկանում պաշտպան ունենալ, և փաստաբանի մուտքի արգելքը պայմանավորված է եղել այդ հանգամանքով: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ամրագրում է, որ պաշտպանից հրաժարվելը վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին հայտարարել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր, գիտակցված, վարույթին մասնակցող պաշտպանի ներկայությամբ, և ողջամտորեն ենթադրելի է, որ մեղադրյալն ի վիճակի է ինքնուրույն իրականացնելու իր պաշտպանությունը: Այսպես, փաստաբանները ահազանգ են ներկայացրել Պաշտպանի աշխատակազմ և հայտնել, որ իրենց վստահորդները գտնվում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում և արդեն տևական ժամանակ է չեն կարողանում տեսակցել վերջիններիս հետ: Նշվածի կապակցությամբ Պաշտպանի Ներկայացուցիչը հեռախոսակապ է հաստատել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավասու ներկայացուցչի հետ, որը հայտնել է, որ դեռևս նշված անձինք չեն բերվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Ստացված տեղեկությունները փոխանցվել են փաստաբաններին, որոնք պնդել են, որ անձամբ տեսել են իրենց վստահորդներից մի քանիսին Հակակոռուպցիոն կոմիտեի վարչական շենքում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այց են իրականացրել ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե: Իրականացված այցի շրջանակում առանձնազրույց են ունեցել փաստաբանների, վստահորդների և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավասու ներկայացուցչի հետ: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի իրավասու ներկայացուցիչը հայտնել է, որ վստահորդները հրաժարվել են Պաշտպան ունենալուց և ցանկանում են ինքնուրույն իրականացնել իրենց պաշտպանությունը: Այնուամենայնիվ, Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ներկայացվել է քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված՝ մեղադրյալի կողմից պաշտպանի ներկայությամբ իր պաշտպանության իրավունքից հրաժարվելու օրենսդրական կարգավորումները, որից հետո փաստաբանները տեսակցել են իրենց պաշտպանյալների հետ և ստանձնել վերջիններիս պաշտպանությունը: Բացի այդ, վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը համապատասխան պարզաբանումներ է պահանջել ՀՀ գլխավոր դատախազությունից:

Մեկ այլ ահազանգով, փաստաբանը տեղեկացրել է, որ իր գործընկերոջը, ով նույնպես փաստաբան է քրեական վարույթի շրջանակում ձերբակալել և տեղափոխել են ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, որտեղ խոչընդոտում են իր մուտքը և թույլ չեն տալիս ստանձնել փաստաբանի պաշտպանության իրավունքը: Նշվածի կապակցությամբ Պաշտպանի Ներկայացուցիչը կապ է հաստատել ՀՀ ազգային անվտանգության ծառայության իրավասու ներկայացուցչի հետ, և քննարկել փաստաբանի բարձրացրած հարցը: Դրանից հետո, փաստաբանը հավելյալ տեղեկացրել է, որ խնդիրը չի ստացել լուծում: Վերգորյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այց են իրականացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն: Այցի ընթացքում առանձնազրույց են ունեցել ձերբակալված փաստաբանի հետ, ով հայտնել է, որ տվյալ պահին ցանկանում է վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել միջնորդություն՝ իր նախընտրած փաստաբանի կողմից իր պաշտպանությունը ստանձնելու վերաբերյալ: Ձերբակալվածի պաշտպանության նպատակով փաստաբան ներգրավելու հարցն այցի շրջանակում քննարկել են վարույթն իրականացնող քննիչի և ԱԱԾ իրավասու

ներկայացուցչի հետ, ինչի արդյունքում ապահովվել է փաստաբանի ներգրավումը վարույթին:

Քրեական հետապնդման ենթարկվող անձի փաստաբանի միջոցով իր պաշտպանությունն իրականացնելու իրավունքի իրացման տեսանկյունից պաշտպանի մասնակցության հարցն առավել կարևորվում է նշված անձանց մասնակցությամբ կատարվող ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարման ընթացքում: Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանել է, որ պաշտպանը իրավունք ունի մասնակցելու իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող ցանկացած ապացուցողական կամ վարութային այլ գործողության, այնուամենայնիվ 2022 թվականին Պաշտպանի լիազորությունների իրականացման շրջանակում արձանագրվել է դեպք, երբ փաստաբանը Պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ներկայացրել, որ իր վստահորդը գտնվում է ՀՀ քննչական կոմիտեում և քրեական վարույթի շրջանակում պետք է իրականացվի հարցաքննություն, սակայն արդեն տևական ժամանակ է չեն թույլատրում իրեն տեսակցել իր վստահորդին և առանց իր մասնակցության իրականացվում է քննչական գործողություն: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն իրականացրել են արագ արձագանքման այց: Այցի ընթացքում բարձրացված խնդիրը քննարկվել է Քննչական կոմիտեի իրավասու ներկայացուցչի, փաստաբանի և վստահորդի հետ, ինչի արդյունքում ապահովվել է փաստաբանի մուտքը Քննչական կոմիտեի վարչական շենք և փաստբանը տեսակցել է իր վստահորդին, ապա որպես ներգրավված պաշտպան՝ մասնակցել իրականացվող վարութային գործողությանը:

4. Անձանց ազատ տեղաշարժի համար արգելքներ հարուցելու խնդրահարույց պրակտիկա

2022 թվականին Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ այն մասին, որ քրեական վարույթի շրջանակում տվյալ վարույթին չառնչվող, սակայն համընկնող անձնական տվյալներով անձանց նկատմամբ կիրառվել են ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներ:

Արձանագրվել է դեպք, երբ Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին զանգահարել է ՀՀ քաղաքացի և տեղեկացրել, որ շուրջ 2 օր առաջ փորձել է հատել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, սակայն տեղում ծառայություն իրականացնող ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ծառայողներն արգելել են իր ելքը ՀՀ-ից՝ պատճառաբանելով, որ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա է սահմանափակում՝ քաղաքացու՝ ՀՀ-ի սահմանահատման վերաբերյալ: Քաղաքացին հայտնել է նաև, որ ինքը որևէ քրեական վարույթի շրջանակում չունի մեղադրյալի կարգավիճակ, ուստի իր նկատմամբ կիրառված չէ որևէ խափանման միջոց: Խնդրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը վերոգրյալ հանգամանքները քննարկման առարկա դարձնելու և Պաշտպանի իրավասության շրջանակում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հարցում: Պաշտպանի ներկայացուցիչը վերոգրյալի հաշվառմամբ՝ հարցը քննարկել է ՀՀ ոստիկանության իրավասու ներկայացուցչի հետ, պահանջել պարզաբանում՝ քաղաքացու վերաբերյալ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա սահմանափակման իրավական հիմքերի վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմ ներկայացվել է պարզաբանում առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում 2021 թվականի հոկտեմբերի 10-ին քաղաքացուն առաջադրվել է մեղադրանք, կիրառվել է բացակայելու արգելք խափանման միջոցը: Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է քաղաքացուն, ով նշել է, որ ունի տեղեկություն առ այն, որ իր անունով, ազգանունով և հայրանունով մեկ այլ քաղաքացի վերոնշյալ քրեական վարույթի շրջանակում ունի դատավարական կարգավիճակ, և նրա

նկատմամբ է կիրառված խափանման միջոց: Քաղաքացին խնդրել է Պաշտպանի աջակցությունն՝ իր կողմից հայտնած տեղեկատվությունը կրկնակի ճշգրտելու և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու հարցում: Ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության հետ հարցը լրացուցիչ քննարկվել է, արդյունքում քաղաքացու ներկայացրած պնդումները հաստատվել են և նրա ՀՀ-ից ելքի նկատմամբ կիրառված սահմանափակումը վերացվել է:

Արձանագրվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու սահմանափակման վերաբերյալ ահազանգ, որի ընթացքում անձը զրկվել է մի շարք իրավունքներից, այդ թվում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից: Այսպես. Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին զանգահարել է ազգությամբ հայ, Նիդերլանդների քաղաքացին և հայտնել, որ ժամանել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, սակայն, ըստ պնդման՝ վայրէջքից հետո Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը արգելել են իր մուտքը ՀՀ՝ պատճառաբանելով, որ վերջինիս վերաբերյալ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա է սահմանափակում: Քաղաքացու տեղեկացմամբ՝ տևական ժամանակ է գտնվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ստերիլ գոտում: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել Հայաստանի Հանրապետության «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, առանձնազրույց ունեցել քաղաքացու հետ: Տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում քաղաքացին հայտնել է, որ համակարգում առկա է Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու վերաբերյալ սահմանափակում: Դիմող անձը Պաշտպանի ներկայացուցիչներին տեղեկացրել է նաև, որ ցանկանում է իր իրավունքների և շահերի պաշտպանությունը ստանձնի իր նախընտրած փաստաբանը, փաստաբանը նույնպես հայտնել է իր պատրաստակամությունը:

Նշված հարցը քննարկվել է իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ, ձեռք է բերվել փոխհամաձայնություն՝ քաղաքացուն տեսակցելու նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նեյտրալ գոտի վերջինիս կողմից նախընտրած փաստաբանի մուտք գործելու թույլտվություն տալու վերաբերյալ: Սակայն, ավելի ուշ, Պաշտպանի աշխատակազմ տեղեկություն է ստացվել առ այն, որ փաստաբանի մուտքը այնուամենայնիվ հնարավոր չի եղել ապահովվել: Իրականացված կրկնակի այցի արդյունքում Պաշտպանի ներկայացուցիչների միջոցով հնարավոր է դարձել միայն ապահովվել անձի կողմից փաստաբանին գրավոր լիազորագիր ներկայացնելը: Բացի դրանից, նշված խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է նաև գրավոր բողոք, որով տեղեկություն է ստացվել նաև այն մասին, որ ազգությամբ հայ մեկ այլ քաղաքացու ևս չի թույլատրվել մուտք գործել Հայաստանի Հանրապետություն: Ստացված բողոքով բարձրացվել է նաև հարց առ այն, որ վերոգրյալ սահմանափակումները կրում են համակարգային բնույթ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ համապատասխան պարզաբանում է պահանջվել ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից՝ միևնույն ժամանակ առաջարկելով ներդնել որևէ մեխանիզմ կամ ծանուցման/տեղեկատվական համակարգ, որն անձանց հնարավորություն կտա տեղեկություն ստանալու իրենց վերաբերյալ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու կապակցությամբ առկա սահմանափակումների վերաբերյալ՝ այդպիսով խուսափելով ֆինանսական կորուստներից, ինչպես նաև ապահովել նման իրավիճակում հայտնված անձանց իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը, այդ թվում՝ իր նախընտրած փաստաբանի հետ տեսակցելու միջոցով:

Հարկ է նշել, որ ավելի ուշ պարզվել է, որ վերոնշյալ անձանց մուտքն արգելելու հարցի կապակցությամբ համապատասխան հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական

դատարան, որը 2022 թվականի հոկտեմբերի 27-ին Վարչական դատարանի կողմից ընդունվել է վարույթ:

Բացի այդ, արձանագրվել են դեպքեր, երբ ազատ տեղաշարժման իրավունքը սահմանափակվել է դատարանի՝ ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ առկա սահմանափակումը վերացնելու վերաբերյալ համապատասխան թույլտվության և իրավասու մարմնին համապատասխան գրություն ուղարկելու պարագայում: Մասնավորապես, քաղաքացին Պաշտպանին բողոք է ներկայացրել այն մասին, որ Դատարանի վարույթում քննվող քրեական գործի շրջանակում ունի ամբաստանյալի դատավարական կարգավիճակ: Ըստ հավելման՝ սույն թվականի օգոստոսի 10-ին Դատարանը բավարարել է իր կողմից ներկայացված՝ 2022 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 24-ը ՀՀ սահմանը հատելու հետ կապված արգելանքը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը և համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն, սակայն արգելանքը դեռևս վերացված չէ, քանզի տվյալ պահին ինքը գտնվում է Բագրատաշենի մաքսային կետում, սակայն իրեն տեղեկացրել են, որ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական ՍԷԿՏ համակարգում առկա է արգելանք իր՝ ՀՀ սահմանը հատելու վերաբերյալ: Պարզվել է, որ առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ուղարկված համապատասխան գրությունը հնարավոր չի եղել մուտքագրել համակարգ, ինչի հետևանքով անձի ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը վերացված չի եղել: Սակայն ձեռնարկված միջոցների արդյունքում, հնարավոր է եղել համապատասխան տեղեկատվությունը մուտքագրել ՍԷԿՏ համակարգ և անձը կարողացել է հատել ՀՀ պետական սահմանը:

5. Խնդրահարույց պրակտիկա ոստիկանության բաժիններում և քրեակատարողական հիմնարկներում

2022 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև ահազանգեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ոչ համաչափ ուժի կիրառմամբ, այդ թվում՝ մարմնի տարբեր հատվածներում վնասվածքներ հասցնելու դեպքերի զուգորդմամբ քաղաքացիներին Ոստիկանության տարբեր բաժիններ տեղափոխելու վերաբերյալ:

Մասնավորապես, ստացված ահազանգերից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ իր որդուն և այլ 2 անչափահասի բերման են ենթարկել Ոստիկանության բաժին՝ առանց իրավական հիմքերի և վերջիններիս իրավունքների ու պարտականությունների պարզաբանման: Քաղաքացին պնդել է նաև, որ Ոստիկանության տվյալ բաժնի ծառայողներն այդ պահին ծեծի են ենթարկում բերման ենթարկվածներին: Ըստ հավելման՝ անչափահասների փաստաբանը զանգահարել է Ոստիկանություն՝ բերման ենթարկելու իրավական հիմնավորումները պարզելու նպատակով, սակայն Ոստիկանության ներկայացուցիչները հրաժարվել են տրամադրել որևէ պարզաբանում: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն իրականացրել են արագ արձագանքման այց, առանձնազրույց ունեցել բերման ենթարկված անձանց հետ: Առանձնազրույցների ընթացքում բերման ենթարկված անձանց նկատմամբ բռնություն գործադրված լինելու հանգամանքները հերքվել են, այդ թվում՝ ապահովվել է անչափահասների և նրանց ծնողների հանդիպումը, և վերջիններս ևս համոզվել են, որ նրանց նկատմամբ բռնություն չի գործադրվել:

Մեկ այլ ահազանգով փաստաբանը հայտնել է, որ իր վստահորդին ՀՀ ոստիկանության բաժին բերման ենթարկելիս ծառայողները ֆիզիկական ուժ են կիրառել վերջինիս

նկատմամբ, հարվածներ հասցրել մարմնի տարբեր հատվածներում: Ըստ հավելման՝ վստահորդի վերաբերյալ կայացվել է ձերբակալման որոշում և վերջինս տեղափոխվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահելու վայր: Փաստաբանը տեղեկացրել է նաև, որ տվյալ պահին վստահորդի հետ գտնվում են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում՝ ապացուցողական գործողության մասնակցելու նպատակով, որի ընթացքում, ըստ պնդման, վարույթն իրականացնող քննիչն իր վստահորդի նկատմամբ դրսևորում է անհարգալից վերաբերմունք:

Իրականացված արագ արձագանքման այցի շրջանակում տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում ձերբակալված անձը տեղեկացրել է, որ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ՀՀ ոստիկանության ծառայողները բերման ենթարկելիս իր հասցեին հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ, կիրառել են ֆիզիկական ուժ, մասնավորապես՝ քանիցս հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր մասերին: Նշել է նաև, որ Ոստիկանության բաժնում նույնպես իր նկատմամբ գործադրվել է բռնություն: Հետագայում, վերոգրյալ տեղեկատվությունների ամփոփումից հետո, համապատասխան պարզաբանումների պահանջով գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում անձը ճանաչվել է տուժող և ներկայում իրականացվում է նախաքննություն:

Մեկ այլ ահազանգով քաղաքացին տեղեկացրել է, որ որդուն Ոստիկանության ծառայողները ֆիզիկական բռնի ուժի կիրառմամբ բերման են ենթարկել Ոստիկանության բաժին, և տվյալ պահին ունի հիմնավոր կասկած, որ Ոստիկանությունում նույնպես նրա նկատմամբ ֆիզիկական ուժ է կիրառվում: Իրականացված այցի շրջանակում պարզվել է, որ ձերբակալված անձին տեղափոխել են Ոստիկանության ձերբակալվածների պահման վայր: Նույն օրը Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել նաև Ոստիկանության ձերբակալվածների պահման վայր, առանձնազրույց ունեցել ձերբակալված անձի հետ: Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում ձերբակալված անձը տեղեկացրել է, որ իրենց բնակարան են այցելել Ոստիկանության մի խումբ ծառայողներ, որոնք եղել են դիմակավորված, մայրը բացել է բնակարանի դուռը, ինչից հետո Ոստիկանության ծառայողները ներխուժել են բնակարան, հորը հրելով գցել գետնին և ֆիզիկական ուժի գործադրմամբ հարվածներ հասցրել իր մարմնի տարբեր հատվածներին, ոլորել են ձեռքերը և ձեռնաշղթաների կիրառմամբ բերման են ենթարկել Ոստիկանության բաժին: Ոստիկանության բաժնում իր նկատմամբ շարունակվել է բռնությունը, ծառայողներից մեկը հարվածել է իրեն, գցել գետնին, ինչից հետո տևական ժամանակ եղել է հատակին պառկած վիճակում: Բացի այդ, քննչական բաժնում հրաժարվել է որևէ քննչական գործողության մասնակցելուց, խնդրել է ներգրավել փաստաբանի՝ իրեն իրավաբանական աջակցություն տրամադրելու համար:

Քրեակատարողական հիմնարկներ իրականացված այցերի ժամանակ կալանավորված անձիք նույնպես հայտնել են ոստիկանների կողմից անհամաչափ ֆիզիկական ուժ կիրառելու մասին տեղեկություններ:

Մասնավորապես՝ Քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձը Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում տեղեկացրել է, որ ընկերոջ հետ մեքենայով երթևեկելիս լուսացույցի կարմիր ազդանշանի միացման ժամանակ դադարեցրել են մեքենայի ընթացքը, որից հետո առջևում կայանած մեքենայից իրենց է մոտեցել քաղաքացիական հագուստով մի քանի տղամարդ, բացել մեքենայի դռները և վզի հատվածից բռնած քաշելով՝ դուրս հանել մեքենայից ու կիրառել ձեռնաշղթա, այնուհետև իրեն նստեցրել են ավտոմեքենան և երկու կողմից նստած 25-30 տարեկան անձիք սկսել են հարվածել իրեն:

Ըստ կալանավորված անձի՝ իրեն տեղափոխել են Ոստիկանության բաժին, և, իր հասցեին հայհոյանքներ հնչեցնելով, իրեն քարշ են տվել Ոստիկանության բաժին, որի հետևանքով ոտքերին բազմաթիվ վերքեր և քերծվածքներ են առաջացել: Այնուհետև աշխատասենյակ է մտել մեկ այլ ծառայող, մոտեցել է իրեն, ուժեղ հարվածել գլխին և հայհոյանքներ հնչեցնել իրեն և իր ընտանիքի հասցեին՝ ստիպելով ընդունել հանցագործության առարկայի՝ իրեն պատկանելու հանգամանքը: Որից հետո Ոստիկանության ծառայողներից մեկը ձեռնաշղթայի օղակների միացման շղթայից բռնել է, ոլորել այն և դրանից քաշելով գցել իրեն գետնին, ինչից հետո Ոստիկանության ծառայողները սկսել են ոտքերով ուժեղ հարվածել իր մարմնի տարբեր մասերին, կալանավորված անձը խնդրել է դադարեցնել հարվածները, սակայն Ոստիկանության ծառայողները շարունակել են հարվածել և հայհոյել իրեն: Ոստիկանության ծառայողները դադարեցրել են հարվածները, երբ ինքը գունատվել է և գրեթե կորցրել գիտակցությունը:

Նշված դեպքերով Պաշտպանի կողմից ներկայացված համապատասխան գրությունների հիման վրա թեև նախաձեռնվել են քրեական վարույթներ, և դրանց իրավական գնահատական պետք է տրվի քննության շրջանակում, այնուամենայնիվ անհրաժեշտ է արձանագրել, որ ինքնին մտահոգիչ են Պաշտպանին ներկայացվող բռնության գործադրման վերաբերյալ ստացվող բողոքները և Ոստիկանության ծառայողների կողմից բռնության ցանկացած դրսևորման դեպքով պետք է իրականացվի պատշաճ քննություն և մեղավոր անձինք անխուսափելիորեն ենթարկվեն պատասխանատվության:

2022 թվականին ստացված բողոքների և ահազանգերի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ և առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, այդ թվում տարաբնույթ խնդիրների հետ կապված անժամկետ հացադուլի մեջ գտնվող անձանց հետ:

Առանձնազրույցներից մեկի ընթացքում դատապարտյալը հայտնել է, որ քրեակատարողական հիմնարկի պետը կիրառել է համաներում և իր նկատմամբ նշանակված պատիժը կրճատվել է 1/4-րդ մասով, որից հետո դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ դատավճիռներով հաստատված հանցանքները և իր նկատմամբ նշանակված պատիժները 2022 թվականի հուլիսի 1-ի ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու խնդրանքով, սակայն դատարանն արձանագրել է, որ տվյալ հարցի լուծումը ենթակա է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի իրավասությանը և դատական ակտով որևէ անդրադարձ չի կատարվել նախկինում դատապարտյալի նկատմամբ կիրառված համաներման ակտի դրույթներին: Անձը նշել է, որ կայացված դատական ակտից հետո, քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հրաժարվում է իր նկատմամբ կիրառել համաներման ակտի դրույթները և հիմնարկում իրեն շարունակում են պահել ապօրինի: Նշվածի կապակցությամբ Պաշտպանի կողմից համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ արդարադատության նախարարություն: Արդյունքում, դատապարտյալի կողմից կատարված հանցանքները համապատասխանեցվել են 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքին, և նկատի ունենալով, որ դատապարտյալի նկատմամբ կիրառելի է եղել համաներման դրույթները, քրեակատարողական հիմնարկի պետի նախկին որոշումը վերացվել է, նոր որոշմամբ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կրճատվել է 1/4-ով, և դատապարտյալն ազատվել է պատժի մնացած մասի կրումից:

Առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք հիմանականում բարձրացրել են քրեական վարույթներին, իրենց առաջադրված անհիմն մեղադրանքներին ու ընտրված խափանման միջոցներին առնչվող հարցեր, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկում հանձնուքների ստացման, այլ խուց տեղափոխվելու, պատժից պայմանական

վաղաժամկետ ազատման, իրենց նկատմամբ կիրառված անհիմն տույժերի և այլ խնդիրների վերաբերյալ: Հարկ է ընդգծել, որ իրականացված այցերի շրջանակում որոշ հարցեր քննարկվել են իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ և դրանց մի մասը տեղում ստացել են լուծումներ: Բացի այդ, իրականացված այցերի արդյունքներն ամփոփվել են պաշտպանի աշխատակազմում և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու և պարզաբանումներ ներկայացնելու պահանջով համապատասխան գրություններ են ուղարկվել տարբեր իրավասու մարմիններ:

10. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԱՆՑ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1. Ընդհանուր դիտարկումներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն մշտապես իրականացրել է ՀՀ տարածքում բողոքի ակցիաների և իրավապահ մարմինների գործողությունների ամբողջական դիտարկում: Դիտարկումն իրականացվել է ինչպես անմիջականորեն, այնպես էլ լրատվամիջոցների ու սոցիալական մեդիայի միջոցով: Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին ստացվել են նաև ահազանգեր:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից կազմակերպված տևական բողոքի ակցիաներով (ապրիլ-հունիս 2022թ) ու հանրահավաքներով՝ ուղեկցվելով հավաքի մասնակիցների կողմից հանրային օգտագործման ճանապարհների ու տրանսպորտային հաղորդակցության արգելափակումներով, պետական հաստատությունների մասնաշենքեր շրջափակելով, հավաքին չմասնակցող երրորդ անձանց համար դժվարություններ ստեղծելով: Հավաքներն ու երթերը կազմակերպվեցին ու անցկացվեցին թե Երևանում, թե հանրապետության այլ քաղաքներում ու բնակավայրերում և ընդհանուր առմամբ շարունակվեցին շուրջ 6 շաբաթ անընդմեջ: Հավաքներն աչքի ընկան ոստիկանության կողմից հավաքի ընթացը սպասարկելու համակարգային դժվարություններով՝ հաճախ հանգեցնելով հավաքինն չմասնակցող երրորդ անձանց բերման ենթարկելուն, վարչական ձերբակալման ընթացակարգի մասսայական խախտումներով, ոստիկանության կողմից ամբոխի կառավարման գործուն տեխնիկաների կիրառման անկարողությամբ, երբեմն անհամաչափ ուժի գործադրմամբ, լրագրողների մասնագիտական աշխատանքը խոչընդոտելու ու լրագրողներին մարմնական վնասվածքներ ու այլ վնասներ հասցնելու մի շարք դեպքերով:

Հավաքների ընթացքը նշանավորվեց քաղաքական գործիչների կողմից, հատկապես հավաքների կազմակերպիչ ընդդիմադիր գործիչների կողմից խրախուսվող ու գեներացվող ծայրահեղ բևեռացված քաղաքական, երբեն էլ ատելության խոսքով, հաճախ նաև իրենց մասնագիտական ծառայությունն իրականացնող ոստիկանության ծառայողների հասցեին հնչեցվող վիրավորանքներով ու սպառնալիքներով: Մյուս մտահոգիչ յուրահատկությունը երեխաների լավագույն շահին համապատասխանության տեսանկյունից կասկածելի պայմաններում ատելության ինտենսիվ բովանդակություն ունեցող քաղաքական ակցիաներին երեխաներին մասնակից դարձնելն էր: Անհանդուրժողականության ու բևեռացման նման հանրային միջավայրում ցավալիորեն հնարավոր չեղավ նաև խուսափել հավաքի մասնակիցների և հավաքին չմասնակցող երրորդ անձանց միջև բախումներից, տարբեր զգայուն հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտած հանրային դերակատարների անհատապես թիրախավորմամբ ու բռնության դեպքերով:

Անձանց հավաքների ազատության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում ձևավորվեցին ու ամբողջ ընթացքում անշեղորեն գործեցին

արագ արձագանքման, մամուլի ու կենդանի հեռարձակումների մշտադիտարկման ու վերլուծության խմբեր: Նշված ժամանակահատվածը համընկավ Պաշտպանի աշխատակազմում առաջացած մեծաթիվ թափուր հաստիքների հետ, չնայած դրան, հաստատության մասնագիտական աշխատանքը հնարավոր եղավ ապահովվել մոբիլիզացնելով ամբողջ աշխատակազմի ներուժը, ներառյալ մարզային ստորաբաժանումներինը:

Յուրաքանչյուր օրվա տվյալների ամփոփմամբ Պաշտպանի հաստատությունը դրսևորել է աննախադեպ օպերատիվություն օրեկան ընթացող ակցիաների մշտադիտարկման արդյունքների ամփոփմամբ խնդիրները հավաքագրելու, ճշտելու, վերլուծելու և առաջարկություններով հանդերձ հրապարակումներով հանդես գալու առումով: Ընդհանուր առմամբ այս թեմայով արվել է 25 հայտարարություն[56]:

Օրեկան կտրվածքով Պաշտպանը նաև իրավախախտումների վերաբերյալ փաստեր է ներկայացրել և պարզաբանումներ պահանջել Ոստիկանությունից՝ այդ թվում՝ առերևույթ խախտում թույլ տված ոստիկանության ծառայողների կարգապահական պատասխանատվության ենթարկելու, իսկ նախաքննական մարմիններից քրեական վարույթներ հարուցելու փաստերի վերաբերյալ:

Պաշտպանը մշտական ուղիղ կապի մեջ է եղել թե հավաքի կազմակերպիչ ընդդիմադիր պատգամավորների և թե Ոստիկանության պետի հետ:

Պաշտպանը միջազգային կազմակերպությունների ու Երևանում ներկայացված դիվանագիտական առաքելություններին պարբերաբար տեղեկությունն է ներկայացրել հաստատության կողմից հավաքագրված խախտումների և իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

Պաշտպանի գործունեությունը միտված է եղել մի կողմից իր առաջարկություններով աջակցելու, որ վերհանված խախտումներին իրավասու մարմինները տան հրատապ արձագանք, մյուս կողմից՝ հորդորելու և առաջարկելու հավաքի կազմակերպիչ քաղաքական դերակատարներին՝ ատելության խոսքի լայնածավալ գործածումից ձեռնպահ մնալուց և լարված իրավիճակներում հավաքի խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով ոստիկանության հետ համագործակցության առավել բարձր մակարդակ դրսևորելուն:

2. Արագ արձագանքման ընթացքի տվյալներ

Սույն հաղորդման այս բաժնում ներկայացվում են հաստատության կողմից վեց շաբաթների ընթացքում իրականացված արագ արձագանքման ու մշտադիտարկումների տվյալները:

2022 թվականի ընթացքում Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ իրականացրել է ավելի քան 97 այց:

2022 թվականի ապրիլի 25-ից հունիսի 10-ը իրականացված բողոքի ակցիաների ժամանակ զանգվածային լրատվության միջոցներով և թեժ գծին ստացված ահազանգներից պարբերաբար արձանագրվել են տեղեկություններ առ այն, որ մի շարք քաղաքացիներ Ոստիկանության ծառայողների կողմից բերվել են Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության և մարզային

[56] Հավաքների մշտադիտարկման արդյունքներով արված հաղորդագրությունների ամբողջական ցանկը տես սույն Հաղորդման հավելված 3-ում.

վարչությունների համապատասխան ստորաբաժանումներ, առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, ուսումնասիրել նրանց վերաբերյալ կազմված փաստաթղթերը: Արգելանքի վերցված անձանց իրավունքներին առնչվող որոշ հարցեր քննարկվել են նաև Ոստիկանության իրավասու ներկայացուցիչների հետ:

Ընդհանուր առմամբ 2022 թվականի ապրիլի 25-ից հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում Պաշտպանի ներկայացուցիչները Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում ապահովել են բերման ենթարկված ավելի քան 1176 անձի իրավունքների պաշտպանություն:



Այցերի ընթացքում իրականացված առանձնազրույցների ժամանակ ազատությունից զրկված անձինք բարձրացրել են մի շարք խնդիրներ: Քաղաքացիների մի մասը տեղեկացրել են, որ չեն հանդիսացել բողոքի ակցիայի մասնակից, օրինակ՝ կանգնած են եղել փողոցի հետիոտների համար նախատեսված հատվածում, բակային տարածքում, աշխատում կամ բնակվում են հարակից շենքերում, ուղևորվել են աշխատանքի, խանութ, դեղատուն և այլն: Մի քանի քաղաքացի հայտնել են, որ անցել են բողոքի ակցիայի հարակից տարածքով և ընդամենը ցանկացել են նկարահանել ակցիան:

Ոստիկանության ստորաբաժանումներ վարչական ձերբակալման ենթարկված գրեթե բոլոր անձինք առանձնազրույցի ընթացքում տեղեկացրել են, որ մինչ վարչական ձերբակալման ենթարկելը Ոստիկանության ծառայողները չեն ներկայացել, նրանց կողմից չի հնչեցվել որևէ օրինական պահանջ, կամ այն առնվազն չի եղել լսելի: Ազատությունից զրկված որոշ

անձինք հայտնել են, որ վարչական ձերբակալման ենթարկելու պահին անհնազանդության գործողություններն արդեն իսկ ավարտված են եղել: Մի շարք քաղաքացիներ նշել են, որ կատարել են Ոստիկանության ծառայողների օրինական պահանջը, օրինակ՝ ազատել են ճանապարհի երթևեկելի հատվածը, սակայն իրենց միևնույնն է ենթարկել են վարչական ձերբակալման:

Բացի դրանից քաղաքացիները հայտնել են, որ վարչական ձերբակալման ենթարկելու պահին իրենց չեն ներկայացվել ձերբակալման հիմքերը և իրենց նվազագույն իրավունքները: Ավելին, քաղաքացիներից շատերը հայտնել են նաև, որ հիմքերը և իրենց իրավունքները չեն ներկայացվել նաև Ոստիկանության ստորաբաժանումներում: Որոշ քաղաքացիներ էլ տեղեկացրել են, որ իրավունքների պարզաբանումը կրել է ձևական բնույթ:

Ազատությունից զրկված անձանց մեծ մասը հայտնել է, որ Ոստիկանության ծառայողները վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց նկատմամբ կիրառել են անհամաչափ, երբեմն նաև բիրտ ֆիզիկական ուժ, այդ թվում՝ կանանց, տարեցների և առողջական խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: Քաղաքացիներից մի քանիսի մարմնի վրա առկա էին կապտուկներ, վնասվածքներ, կոտրվածքներ և ուժի կիրառման այլ հետքեր, որոնք ֆիքսվել են Պաշտպանի ներկայացուցիչների կողմից: Մի շարք քաղաքացիներ տեղեկացրել են, որ Ոստիկանության ծառայողները ուժգին հարվածներ են հասցրել իրենց մարմնի տարբեր հատվածներում, այդ թվում՝ գլխին, գցել են գետնին, քարշ տվել և այլն: Ազատությունից զրկված անձանցից մի քանիսի նկատմամբ վարչական ձերբակալման ժամանակ կիրառվել են ձեռնաշղթաներ, որի հետքերը ևս արձանագրվել են Պաշտպանի ներկայացուցիչների կողմից: Ավելին, արձանագրվել է դեպք, երբ Ոստիկանության բաժին բերվելուց հետո ևս շուրջ 3 ժամ գտնվել է ձեռնաշղթաներով: Ընդ որում, վարչական ձերբակալման ենթարկված անձանց մեծամասնությունը պնդել է, որ չեն ցուցաբերել դիմադրություն, հայտնել են Ոստիկանության ծառայողներին, որ կներկայանան Ոստիկանության բաժին կամ տեղեկացրել են վատ ինքնազգացողության կամ առողջական խնդիրների վերաբերյալ: Քաղաքացիների մի մասը մատնանշել է, որ մեկ անձի վարչական ձերբակալման են ենթարկել մեծաքանակ Ոստիկանության ծառայողներ (մինչև 10):

Որոշ քաղաքացիների ինքնազգացողությունից ու առողջական վիճակից ելնելով հրավիրվել է շտապ բժշկական օգնության բրիգադ: Իրականացված արագ արձագանքման այցերի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ մի քանի քաղաքացու համար հրավիրվել է շտապ բժշկական օգնության խումբ: Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ քաղաքացիներին նաև տրամադրվել է ջուր:

Հարկ է առանձնահատուկ մատնանշել, որ արձանագրված դեպքերից մեկով Ոստիկանության թվով շուրջ 15 ծառայող մոտեցել են ակցիայի վայրում գտնվող անձին և ծեծի ենթարկել՝ ուժգին հարվածներ հասցրել մարմնի տարբեր հատվածներին: Նշված անձին բերման են ենթարկել Ոստիկանության բաժին, ապա նաև ծեծի ենթարկել Ոստիկանության բաժում: Նշված հանգամանքների վերաբերյալ համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն: Ըստ ստացված պարզաբանման՝ նախաձեռնվել է քրեական վարույթ, իրականացվում է նախաքննություն:

Նշված ժամանակաշրջանում արձանագրված մեկ այլ խնդիր վերաբերել է քաղաքացիների կողմից լռության իրավունքի իրացմանը խոչընդոտելուն: Մասնավորապես՝ վարչական ձերբակալման ենթարկված մի շարք քաղաքացիներ հայտնել են, որ Ոստիկանության բաժնում հրաժարվել են հայտնել իրենց անձնական տվյալները, սակայն ծառայողները նշել են, որ այդ դեպքում իրենք ստիպված են լինելու բաժնում պահել այնքան ժամանակ մինչև կարողանան ճշտել ինքնությունը կամ կրկին կներկայացնեն Ոստիկանության բաժին՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով: Ըստ պնդման՝

վարչական ձերբակալման ենթարկված մի շարք անձանց նկատմամբ գործադրվել է հոգեբանական ճնշում և ֆիզիկական հարկադրանք, որի եղանակով էլեկտրոնային սարքի (պլանշետ) միջոցով նկարել և այդ կերպ նույնականացրել են ազատությունից զրկված անձանց անձնական տվյալները: Քաղաքացիները տեղեկացրել են, որ Ոստիկանության բաժիններ են ներկայացել Պարեկային ծառայության ներկայացուցիչները, որոնք պլանշետի միջոցով իրենց նույնացրել են առանց իրենց համաձայնության: Արագ արձագանքման այցերի ընթացքում նշված խնդիրը բազմիցս քննարկվել է Ոստիկանության ներկայացուցիչների հետ: Պաշտպանի միջամտությամբ բաժիններում գտնվող քաղաքացիների նույնականացում իրենց անհամաձայնության պարագայում չի իրականացվել:

Այցերի ընթացքում քաղաքացիները նաև հայտնել են, որ Ոստիկանության բաժնում իրենցից վերցրել են բջջային հեռախոսները կամ արգելել են հեռախոսով զանգ կատարել՝ փաստացի զրկելով իր զանգի իրավունքի իրացման հնարավորությունից: Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում մի քանի քաղաքացի հնարավորություն են ստացել իրացնել նշված իրավունքը: Բացի դրանից, արձանագրվել են նաև դեպքեր, որ վարչական ձերբակալման ենթարկող Ոստիկանության ծառայողների մի մասը եղել են դիմակավորված, մի մասն էլ՝ քաղաքացիական հագուստով և հիմնականում այդ ծառայողներն են քաղաքացիների նկատմամբ դրսևորել կոպիտ վերաբերմունք: Առանձնազրույցի ընթացքում քաղաքացիները քաղաքացիները հատկապես մատնանշել են, որ բիրտ և անհամաչափ ուժ են կիրառել Ոստիկանության զորքերի (սև համազգեստով) և պարեկապահակետային ծառայության հատուկ գումարտակի (կարմիր բերետներով) ծառայողները:

Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի ընթացքում արձանագրվել են, բերման ենթարկված անձանց մատյաններում լրացման կարգի խախտումներ, մասնավորապես՝ մատյաններում լրացվել են բերման ենթարկված անձանց տվյալները, այդ թվում՝ ազատ արձակման ժամը և քաղաքացիները ստորագրել են համապատասխան մատյանի սյունակում, սակայն նրանք փաստացի շարունակել են պահվել բաժնում, կամ անձը ստորագրել է համապատասխան սյունակում, սակայն ազատ արձակման ժամի վերաբերյալ կամ այլ սյունակներում առհասարակ գրառում առկա չի եղել: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մատյաններում գրառումներ իրականացնելու պատճառաբանությամբ անձինք ազատությունից զրկելուց 3 ժամը լրանալու պահին դեռևս գտնվել են Ոստիկանության բաժնում: Բոլոր նման դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ անձինք ազատ են արձակվել:

Արագ արձագանքման այցերի ընթացքում արձանագրված մեկ այլ խնդիրը վերաբերում է Ոստիկանության բաժիններում վարչական վարույթի իրականացմանը: Այցերի ժամանակ շատ դեպքերում արձանագրվել է, որ Ոստիկանության բաժին բերվելուց հետո 40 րոպեից մինչև 1,5 ժամ անց վարչական վարույթի շրջանակում որևէ գործողություն չի իրականացվել: Ավելին, արձանագրվել են նաև դեպքեր, երբ անձի հետ կապված բոլոր գործողությունների ավարտից հետո անգամ անձինք պահվել են բաժնում մինչև ազատությունից զրկելու պահից 3 ժամ լրանալը:
Հատկանշական է, որ անհնազանդության ակցիաների վայրերից վարչական ձերբակալման են ենթարկվել նաև անչափահասներ: Անչափահասները մեծ մասամբ եղել են 16-17 տարեկան, սակայն գրանցվել են դեպքեր, երբ վարչական ձերբակալման են ենթարկվել մինչև 16 տարեկան երեխաներ (օրինակ՝ 13տ.): Ընդ որում՝ ըստ ստացված տեղեկության՝ երեխային Ոստիկանության մեքենա նստեցնելու պահին հավաքի մասնակիցները Ոստիկանության ծառայողներին տեղեկացրել են երեխայի տարիքի մասին, սակայն այս հանգամանքը հաշվի չի առնվել վերջիններիս կողմից:

Պաշտպանի աշխատակազմի միջամտությամբ անչափահասների նկատմամբ վարչական վարույթ չի իրականացվել, նրանց ծնողներին հայտնել են գտնվելու վայրի մասին և նրանք ազատ են արձակվել: Հատկապես մտահոգիչ էր արձանագրված այն դեպքը, երբ Ոստիկանության բաժնում Ոստիկանության ծառայողները հայհոյել, ապա ծեծի են ենթարկել երկու անչափահասների: Արձանագրված հանգամանքների վերաբերյալ համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն: Ստացված պարզաբանումների համաձայն՝ նախաձեռնվել է քրեական վարույթ, իրականացվում է քննություն:

2022 թվականի մայիս ամսին Պաշտպանի արագ արձագանքման խմբերի և թեժ գծին ստացված ահազանգերի արդյունքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ ոստիկանության ծառայողների կողմից ավտոերթի մասնակից անձանց տրանսպորտային միջոցները տարվել են հատուկ պահպանվող տարածք և վերջիններիս չեն վերադարձվել: Ընդ որում, մի շարք տրանսպորտային միջոցի մասով դրանք չեն վերադարձվել արդեն մի քանի օր և մեքենաների սեփականատերերին չեն ներկայացվել այն հիմնավոր պատճառաբանությունը, որով դրանք պահվում են հատուկ պահպանվող տարածքում: Այս հարցի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմը համապատասխան գրություններ է հասցեագրել ՀՀ ոստիկանություն և ՀՀ գլխավոր դատախազություն: Ըստ ստացված պարզաբանումների նախաձեռնվել է քրեական վարույթ:

Իրականացված մշտադիտարկման և արագ արձագանքման այցերի ընթացքում նաև արձանագրվել են ՀՀ ԱԺ պատգամավորների բերման ենթարկելու փորձեր, իսկ մեկ դեպքում էլ՝ պատգամավորին բերման են ենթարկել, սակայն բաժնի մոտ նրան ազատ են արձակել: Միևնույն ժամանակ, Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են դեպքեր, երբ ՀՀ ԱԺ պատգամավորների տևական ժամանակ թույլ չեն տվել մուտք գործել Ոստիկանության ստորաբաժանում:

Մտահոգիչ էր նաև այն հանգամանքը, որ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ վարչական ձերբակալման են ենթարկվել անհնազանդության ակցիայի իրականացման վայրում իրավապաշտպան գործունեություն իրականացող փաստաբաններ: Ընդ որում՝ նրանց նկատմամբ կիրառվել է բիրտ ֆիզիկական ուժ՝ անգամ փաստաբան հանդիսանալու հանգամանքի վերաբերյալ հայտարարությունից հետո: Արձանագրվել են նաև դեպքեր իրավապահ մարմինների աշխատանքի ընթացքում լրագրողական գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ բռնության կիրառման վերաբերյալ: Վերոնշյալ ժամանակահատվածում, (օրինակ՝ ապրիլի 26-ին) իրականացված այցերի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ մի խումբ անձինք բողոքի ակցիաների իրականացման վայրից ենթարկվել են վարչական ձերբակալման օրինակ ՎԻՎ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարելու կասկածանքով, սակայն Ոստիկանության բաժնում գտնվելու ժամանակ բոլոր քաղաքացիների նկատմամբ նախաձեռնվել է քրեական հետապնդում (օրինակ ՀՀ քրեական օրենսգրքի/2003թ./ 258-րդ հոդվածի 1-ին մասով):

Արձանագրվել է նաև, որ քաղաքացիները ձերբակալվել են, սակայն ձերբակալման պահից չորս ժամ անց նրանց չեն տրամադրվել ձերբակալման արձանագրությունները:
2022 թվականի ապրիլի 25-ից հունիսի 10-ը ընկած ժամանակահատվածում իրականացված արագ արձագանքման այցերից յուրաքանչյուրի և մշտադիտարկման ընթացքում արձանագրված բոլոր հանգամանքների վերաբերյալ համապատասխան գրություններ են հասցեագրվել Ոստիկանություն և Գլխավոր դատախազություն: 2022 թվականի անհնազանդության ակցիայի ընթացքում իրավապահ մարմինների գործողությունների հետևանքով ըստ ՀՀ առողջապահության նախարարության հայտնած տվյալների՝ բժշկական կենտրոններ դիմել են թվով 60 անձինք, որից 39-ը ոստիկանության ծառայողներ: ՀՀ ոստիկանությունից նաև պահանջվել են պարզաբանումներ 2022

թվականի հունիսի 3-ին հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ: Գրություններով հայտնած տվյալների հիման վրա Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում նախաձեռնվել են մի շարք ծառայողական ուսումնասիրություններ և ծառայողական քննություններ: Ըստ ստացված պարզաբանումների՝ ծառայողական քննությունների մի մասը երկարաձգվել է հանգամանքները պարզելու նպատակով, իսկ որոշ ծառայողական քննությունները կասեցվել են նշված դեպքերի վերաբերյալ քրեական վարույթներ նախաձեռնված լինելու պատճառով:

Գլխավոր դատախազությանը ներկայացված բոլոր հանգամանքները Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ստուգվել են և դարձվել են քննարկման առարկա, նախաձեռնվել է ավելի քան 17 քրեական վարույթ, իրականացվում է նախաքննություն:

3. Այլ հավաքներ

2022 թվականի օգոստոսի 24-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին է ահազանգ է ստացվել առ այն, որ Ազատության հրապարակից մի խումբ անձինք, այդ թվում՝ ՌԴ քաղաքացիներ, բերման են ենթարկվել Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ: Փաստաբանի տեղեկացմամբ՝ անձանցից մեկն իրեն տեղեկացրել է, որ իր նկատմամբ կիրառվել է նաև անհամաչափ ֆիզիկական ուժ: Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները նույն օրը արագ արձագանքման այց են իրականացրել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին: Քաղաքացիները առանձնազրույցի ընթացքում հայտնել են, որ իրականացրել են անհամաձայնության խաղաղ ակցիա Ազատության հրապարակում: Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ իրենց են մոտեցել թվով ավելի քան 15 Ոստիկանության ծառայողներ, որոնցից ութը՝ պարեկապահակետային ծառայության հատուկ գումարտակի ծառայողներ, և հորդորել հեռանալ Ազատության հրապարակից, ապա Ոստիկանության ծառայողները իրենց ձեռքից վերցրել են ցուցապաստառները և պատռել դրանք: Ըստ քաղաքացիների՝ իրենց, բիրտ ֆիզիկական ուժի կիրառմամբ, ձեռքերը ոլորելով և թևերից ուժգին բռնելով, սկսել են հրել դեպի Ոստիկանության տրանսպորտային միջոց, որի ընթացքում ընկել և վնասվել է անձանցից մեկի բջջային հեռախոսը:

Առանձնազրույցի ընթացքում նշված անձինք նաև հայտնել են տեղեկություններ վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման և Ոստիկանության բաժնում անձնական տվյալները ներկայացնելուն հարկադրելու վերաբերյալ պնդումներ: Արձանագրված տեղեկությունների հաշվառմամբ՝ համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ ոստիկանություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է 2022 թվականի դեկտեմբերի 3-ին և 6-ին Երևան քաղաքում Հանրապետության հրապարակի մոտ իրականացվող ակցիայի ընթացքում իրավապահ մարմինների գործողությունների ամբողջական դիտարկում: Զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է հրապարակվել այն մասին, որ 2022 թվականի դեկտեմբերի 3-ին Հանրապետության հրապարակից մի շարք քաղաքացիներ քաղաքացի բերվել են Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին:
Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչները նույն օրը այց են իրականացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին, առանձնազրույց ունեցել ազատությունից զրկված անձանց հետ: Այցի ընթացքում ուսումնասիրվել են արգելանքի վերցված անձանց վերաբերյալ կազմված փաստաթղթերը, վերջիններիս բարձրացրած խնդիրները քննարկվել են Ոստիկանության ներկայացուցիչների հետ:

Պարզվել է, որ քաղաքացիներից մեկը տեղափոխվել էր «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոց, քանի որ ուներ մարմնական վնասվածքներ, այդ թվում՝ գլխի հատվածում:

Ազատությունից զրկված անձինք Պաշտպանի ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ վարչական ձերբակալման են ենթարկվել Հանրապետության հրապարակից: Ըստ վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ իրենց են մոտեցել ՀՀ ոստիկանության ծառայողները և պահանջել ազատել երթևեկելի հատվածը: Ըստ պնդման՝ Ոստիկանության ծառայողներ հետ ձեռք են բերել պայմանավորվածություն 2 րոպեի ընթացքում ազատել ճանապարհը, սակայն չսպասելով նշված ժամկետի լրանալուն իրենց, ոչ համաչափ ֆիզիկական ուժի կիրառմամբ, ենթարկել են վարչական ձերբակալման: Ըստ տեղեկացման՝ երբ քաղաքացիները սկսել են ազատել երթևեկելի հատվածը, նրանցից մեկը, ով ուներ առողջական խնդիրներ, փոքր-ինչ դանդաղ էր շարժվում և Ոստիկանության ծառայողները բիրտ ուժի կիրառմամբ սկսեցին նրան հեռացնել այդ հատվածից: Առանձնազրույցի ընթացքում քաղաքացիներ հայտնել են նաև, որ բռնություն է գործադրվել 2 քաղաքացու նկատմամբ՝ որոնցից մեկը ունի սրտանոթային համակարգի հետ կապված առողջական խնդիրներ:

Քաղաքացիները հավելել են, որ վարչական ձերբակալման ենթարկվելիս իրենք չեն տեղեկացվել դրա իրավական հիմքերի և իրենց իրավունքների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցով տեղեկություն է տարածվել այն մասին, որ ժամը 18:00-ի սահմաններում ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության հատուկ նշանակության գումարտակի ծառայողների բռնի գործողությունների արդյունքում 73-ամյա կնոջ նկատմամբ, որը կոտրվածք է ստացել, ոստիկանության ծառայողները գցել են գետնին և հարվածներ հասցրել նրան:

2022 թվականի դեկտեմբերի 6-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է հրապարակվել այն մասին, որ Հանրապետության հրապարակի հատվածից քաղաքացիներ են բերման ենթարկվել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարբեր ստորաբաժանումներ: Քաղաքացիներին բերման ենթարկելու կապակցությամբ ահազանգեր են ստացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչները նույն օրը այց են իրականացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի, Էրեբունու, Մալաթիայի, Նոր Նորքի, Մաշտոցի բաժիններ: Առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված քաղաքացիները հայտնել են, որ մինչ վարչական ձերբակալման ենթարկելը իրենց չի ներկայացվել օրինական պահանջ, վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց չեն պարզաբանվել իրենց նվազագույն իրավունքները: Քաղաքացիներից մի քանիսը նշել են, որ ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության հատուկ նշանակության գումարտակի ծառայողները հետևից մոտեցել են իրենց ոչ համաչափ ֆիզիկական ուժի, իսկ ազատությունից զրկված անձանցից մի քանիսի ն կատմամբ բիրտ ուժի կիրառմամբ, թևերը ոլորելով, քաշքշելով ենթարկել են վարչական ձերբակալման:

Վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մի քանիսը տեղեկացրել են, որ Ոստիկանության բաժնում ոստիկանության ծառայողներն իրենց նախազգուշացրել են, որ պետք է անցնեն նույնականացում, իսկ անձնական տվյալները չտալու դեպքում կհրավիրվեն ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության աշխատակիցները և էլեկտրոնային սարքի (պլանշետի) միջոցով իրենց կնույնականացնեն: Մի քանի քաղաքացի նաև տեղեկացրել ե Ոստիկանության ծառայողների կողմցի իրենց նկատմամբ դրսևորած անհարգալից վերաբերմունքի և վիրավորական արտահայտություններ հնչեցնելու վերաբերյալ: Բացի դրանից, այցի ընթացքում պարզվել է, որ տվյալ օրը Ոստիկանության

Նոր Նորքի բաժին են տեղափոխված 12 քաղաքացիներից մեկը տվյալ պահին դեռևս բաժնում է գտնվել:

Պաշտպանի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձը տեղեկացրել է, որ իրեն ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության հատուկ նշանակության գումարտակի ծառայողները, առանց որևէ օրինական պահանջ հնչեցնելու ժամը 18:50-ին, վարչական ձերբակալման են ենթարկել և տեղափոխել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին: Ազատությունից զրկված անձը տեղեկացրել է նաև, որ Ոստիկանության բաժնի վարչական շենքի առաջին հարկում իրեն կապիտան ոստիկանության կոչում ունեցող մի ծառայող իրեն տեղեկացրել է, որ վարչական ձերբակալումը կարող է տևել մինչև 6 ժամ: Հարկ է ընդգծել, որ ՀՀ ոստիկանության ծառայողի կողմից Ոստիկանության Նոր Նորքի բաժնի պետին ուղղված զեկուցագրում նշված է եղել վարչական ձերբակալման ժամ, այն է 19:00, մինչդեռ՝ Պաշտպանի ներկայացուցիչների և քաղաքացու առանձնազրույցը տեղի է ունեցել ժամը 22:20-ին և Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ է միայն նշված անձը ազատ արձակվել: Հատկանշական է, որ Ոստիկանության ստորաբաժանում բերված անձանց հաշվառման մատյանում այդ քաղաքացու վերաբերյալ բերման ենթարկելու ժամ է նշված 19:10-ը, իսկ ազատելու ժամ՝ 22:10, մինչդեռ՝ ինչպես արդեն նշել ենք, Պաշտպանի ներկայացուցիչները վերջինիս հետ առանձնազրույց են ունեցել Ոստիկանության Նոր Նորքի բաժնում՝ ժամը 22:20-ին:

Վերոգրյալ տեղեկությունների հաշվառմամբ՝ համապատասխան գրություններ են հասցեագրվել ՀՀ ոստիկանություն և ՀՀ դատախազություն: Ըստ ստացված պարզաբանումների՝ դեկտեմբերի 3-ին և 6-ին տեղի ունեցած դեպքերի առնչությամբ նախաձեռնվել են համապատասխան քրեական վարույթներ:

4. Առաջարկություններ ոստիկանության գործելակերպերի բարելավման վերաբերյալ

Ինչպես 2022 թվականի ապրիլից հունիս իրականացված ակցիաների ժամանակ, այնպես էլ վերոնշյալ դեպքերում առկա են վարչական ձերբակալման ենթարկելու Ոստիկանության ծառայողների կողմից դրսևորվող արատավոր պրակտիկայի դրսևորումներ:

Նշված արագ արձագանքումների և դրանց ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ Պաշտպանը բազմիցս հանդես է եկել հրապարակային հայտարարություններով: Մասնավորապես, անձանց առանց ազատությունից զրկելու հիմքերը բացատրելու, նվազագույն իրավունքները պարզաբանելու (փաստաբանի, լռելու, և այլ իրավունքներ), անհամաչափ ուժի կիրառությամբ բերման ենթարկելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության տարբեր տարիների ուսումնասիրությունները վկայում են, որ վարչական ձերբակալման ենթարկելու և բաժին բերելու այս խնդրահարույց պրակտիկան ունի լայն տարածում: Պաշտպանը վերահաստատում է դիրքորոշումը, որ այս պրակտիկան պետք է բացառվի. ազատությունից զրկելու ցանկացած դեպք անօրինական է, եթե չեն ապահովվում ազատությունից զրկելիս մարդու նվազագույն իրավունքները:

Պաշտպանը նաև արձանագրում է, որ ոստիկանության կողմից պահանջ ներկայացնելուց հետո վերջինս նաև պետք է տրամադրի անհրաժեշտ ողջամիտ ժամանակ այն կատարելու համար, հակառակ պարագայում, ստացվում է մի իրավիճակ, երբ ներկայացված պահանջն ինքնանպատակ է կամ հետապնդում է միայն վարչական ձերբակալում իրականացնելու հիմքեր ստեղծելու նպատակ: Պաշտպանն արձանագրել է, որ այն իրավիճակում, երբ օրինակ անձինք ազատել են փողոցի երթևեկելի հատվածը Ոստիկանի օրինական

պահանջը չկատարելու հիմքով բերման ենթարկելն ի սկզբանե ապօրինի է և անթույլատրելի:

Անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ անթույլատրելի և անընդունելի է որևէ պարագայում Ոստիկանության ծառայողի կողմից անձին վարչական ձերբակալման, ազատությունից այլ կերպ զրկելու կամ անձի նկատմամբ որևէ այլ օրինական ներգործություն իրականացնելու անհրաժեշտությամբ չպայմանավորված ակնհայտ անհամաչափ ուժի կիրառումը:

Պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ Ոստիկանության ծառայողները պետք է զերծ մնան ուժ կիրառելուց այն դեպքերում, երբ անձն արդեն իսկ գտնվում է Ոստիկանության հսկողության ներքո: Ակնհայտ անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է անհապաղ ստանա պատշաճ իրավական գնահատական և մեղավորները ենթարկվեն պատասխանատվության՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանն իր հայտարարություններում մատնանշել է նաև, որ Պաշտպանն անթույլատրելի է համարում բողոքի կամ անհնազանդության ակցիաների ընթացքում պատգամավորի նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառումը հատկապես այն հաշվառմամբ, որ վերջիններիս չեն կարող ձերբակալել կամ ազատությունից զրկել (բացառության հանցագործության կատարման պահին կամ անմիջապես հետո), իսկ այս դեպքում, պատգամավորների նկատմամբ կիրառված ֆիզիկական ուժը նույնիսկ չի կարող հիմնավորվել վերջիններիս բերման ենթարկելու անհրաժեշտ նվազագույն ուժ կիրառելու պատճառաբանությամբ: Ուստի, Ոստիկանության ծառայողներից պահանջվում է բացառել նման դեպքերը և գործել բացառապես օրենքի սահմաններում:

Ոստիկանության բաժնում ֆիզիկական ուժի կիրառումը, անձին հայհոյելը կամ արժանապատվությունն այլ կերպ նվաստացնելուն ուղղված ցանկացած գործողություն ազատությունից զրկված անձի նկատմամբ քրեորեն հետապնդելի արարք է: Հատկապես անթույլատրելի է նման արարքի կատարումն ակնհայտ անչափահասի նկատմամբ: Պետության պոզիտիվ պարտավորությունները և միջազգային չափորոշիչները պահանջում են, որ իրավապահ մարմինների հետ շփվելիս երեխայի համար ապահովված լինի երեխայակենտրոն միջավայր՝ բացառելու ոստիկանական գործողության ցանկացած բացասական ազդեցությունը անչափահասի իրավունքների իրացման վրա:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների մշտադիտարկումները վկայում են նաև, որ անչափահասներին ոստիկանության բաժիններ տեղափոխելիս ոչ միշտ է կիրառվում տարբերակված, մասնավորապես, երեխայակենտրոն մոտեցում, ինչի հետևանքով արձանագրվում են երեխայի լավագույն շահի խախտման դեպքեր: Ավելին, Պաշտպանի դիտարկումները ցույց են տալիս, որ հավաքի մասնակից պատգամավորների հետ ոստիկանության համագործակցությունը հիմնականում ապահովում է հավաքի խաղաղ ընթացքը: Ուստի, Պաշտպանը կոչ է անում հավաքները ղեկավարող պատգամավորի և Ոստիկանության ծառայողներին շարունակել համագործակցության պրակտիկան:

Պաշտպանը անդրադարձել է նաև վարչական ձերբակալման ենթարկված անձանց նկատմամբ ձեռնաշղթաների կիրառմամբ անձանց բերման ենթարկելու իրավաչափության հարցին: Այս մասով Պաշտպանը նախ արձանագրում է, որ ոստիկանության ծառայողի կողմից ձեռնաշղթա կիրառելու անհրաժեշտությունը գնահատելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

Պաշտպանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ցանկացած դեպքում Ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառումը պետք է լինի խիստ համաչափ:

Հատուկ միջոցների կիրառումը յուրաքանչյուր դեպքում պետք է լինի բացառիկ միջոց՝ դրա կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելու տեսանկյունից: Ոստիկանության ծառայողի կողմից հատուկ միջոցների կիրառումը յուրաքանչյուր դեպքում պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ի թիվս այլնի ապահովելու անձի հետագա գործողությունների վերահսկելիությունը, կանխելու փախուստի հնարավոր փորձը առերևույթ իրավախախտում կատարած անձանց կողմից: Ավելին՝ օրենսդրության համաձայն, Ոստիկանության ծառայողը հատուկ միջոցներ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ Ոստիկանության ծառայողները պետք է յուրաքանչյուր դեպքում արգելանքի վերցնելիս տեղեկացնեն անձին՝ իրեն արգելանքի վերցնելու պատճառը, ներկայացնեն նրան նվազագույն իրավունքների մասին և երաշխավորեն դրանց անխոչընդոտ իրացումը: Այս հարցում ցանկացած այլ մոտեցում անընդունելի և անթույլատրելի է: Պաշտպանը արձանագրում է, որ ոստիկանության ծառայողները պարտավոր են ապահովել անձի՝ առնվազն մեկ զանգ կատարելու հնարավորությունը, այդ իրավունքի իրացման սահմանափակումը վարչական ձերբակալման ժամանակ ոչ մի դեպքում արդարացված չի կարող համարվել:

Արձանագրվել է նաև, որ անձի իրավունքների մասին վերջինիս տեղեկացնելը չպետք է կրի ձևական բնույթ, այն պետք է իրականում երաշխավորի այդ իրավունքների իրացման իրական հնարավորությունը և բերման ենթարկված անձը պետք է հնարավորություն ունենա իրեն հասկանալի լեզվով այդ իրավունքների մասին տեղեկացվելու:

Պաշտպանը անդրադարձել է նաև, որ «Ոստիկանություն բերված անձանց հաշվառման մատյանում» անձի չներկայանալու պատճառաբանությամբ կամ աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով համապատասխան գրառումներ չիրականացնելու մոտեցումը հիմնավորված չէ և անձի ոստիկանության բաժին մուտքի, ելքի, բժշկական օգնության ստանալու կարիք ունենալու և այլ հանգամանքներ պարտադիր ենթակա են հաշվառման վերոնշյալ մատյանով: Պաշտպանը ն զգուշացնում է, որ անթույլատրելի է անձին սահմանված ժամկետից ավելին վարչական ձերբակալման հիմնավորմամբ ապօրինի պահելը, ավելին՝ դա ենթադրաբար թաքցնելու նպատակով գրանցամատյանում սխալ ժամ նշելը:

Իր հրապարակային հայտարարություններում Պաշտպանը հատուկ նշել է, որ անհրաժեշտ է զերծ մնալ լրագրողների աշխատանքը խոչընդոտելուց, վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելուց կամ մասնագիտական գործունեությամբ պայմանավորված ցանկացած տեսակի սպառնալիք հնչեցնելուց:

Պաշտպանը նաև արձանագրում է, որ տրանսպորտային միջոցների հատուկ պահպանվող տարածք տանելը և այն դրանց օրինական տիրապետողներին չվերադարձնելը չի կարող իրավաչափ համարվել այն պայմաններում, երբ բացակայում է նախաձեռնված քրեական վարույթը և այդ վարույթի ընթացքում համապատասխան դատավարական ակտը՝ տրանսպորտային միջոցն առգրավվելու վերաբերյալ:

Ավտոերթի միջոցով խաղաղ հավաքի իրավունքի իրացման համար Ոստիկանության կողմից պետք է ձեռնարկվեն պատշաճ և անհրաժեշտ միջոցներ, ի թիվս այլնի, ուղղորդելով երթին և նախազգուշացնելով երթևեկության հնարավոր խոչընդոտների մասին՝ նպատակ

ունենալով մի կողմից երաշխավորել ավտոերթի բնականոն ընթացքը, իսկ մյուս կողմից՝ ապահովել, որ այլ անձանց պատճառվող անհարմարությունները ողջամտորեն հասցվեն նվազագույնի, ի թիվս այլնի ապահովելով, որ իրավիճակը չհանգեցնի երթևեկի տևական ու համատարած արգելափակման:

Պաշտպանն անթույլատրելի է համարում նաև փաստաբանի գործունեության խոչընդոտելը, նրա մուտքը ոստիկանության բաժին՝ վստահորդին տեսակցելու նպատակով խոչընդոտելը, իսկ առավելապես ոչ իրավաչափ և օրինականության հետ աղերս չունեցող է փաստաբանի՝ Ոստիկանության բաժնից ելքը սահմանափակելու փորձը այս կամ այն հիմնավորմամբ:

Պաշտպանը խիստ անթույլատրելի և դատապարտելի է համարում Ոստիկանության ծառայողների, առավելևս բաժնի պետի կամ այլ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ վերջինիս լուռ համաձայնությամբ անձի լռության իրավունքի ոտնահարումը: Ոստիկանության ծառայողը պարտավոր է հարգել անձի լռելու իրավունքը և որևէ պարագայում այդ իրավունքից հրաժարվելուն պարտադրելը օրինական կամ արդարացված չի կարող լինել: Հատկապես անընդունելի է անձի՝ իր կամքին հակառակ նույնականացման իրականացումն էլեկտրոնային սարքերով անձանց անտեղյակությունն օգտագործելով կամ առանց նրանց իմացության՝ գաղտնի:

Եվ որպես համակարգային առաջարկություն՝ Ոստիկանությունը պետք է հիմնովին վերանայի հավաքների սպասարկմամբ ու դրա շրջանակներում լարված իրավիճակների կառավարմամբ զբաղվող ծառայողների ընտրության, վերապատրաստման, շարունակական մասնագիտական կրթության ընթացակարգերը, բացի այդ, ներդնի նման իրավիճակներում արդյունավետ հրամանատարական շղթայի կիրառման պրակտիկա և հավաքների սպասարկման ստանդարտ օպերացիոն ընթացակարգեր, ինչպես նաև օպերատիվ հանրային հաղորդակցության պրակտիկա՝ կիրառելով ժամանակակից արտաքին ծառայությունների արսենալում եղած ամբոխի կառավարման ու բանակցային ոստիկանության միջազգային հսկայական փորձը:

11. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է հանդիսացել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված հարցերը:

Նշված հարցի ապահովմանն ուղղված Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում ակտիվ համագործակցել է ՀՀ պաշտպանության նախարարության և Զինված ուժերի գլխավոր շտաբի, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և մի շարք այլ մարմինների հետ: Ընդ որում, որպես պետական մարմինների հետ համագործակցության լավագույն և հաջողված օրինակ, առանձնացման ենթակա է Պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի առանձին ստորաբաժանումների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը, որը, իհարկե, դրականորեն է անդրադարձել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման վրա: Հատկապես կարևորվում է ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի մի շարք կառույցների, այդ թվում՝ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի, զինկոմիսարիատների, ռազմաբժշկական վարչության, ռազմաբժշկական հանձնաժողովների, հոսպիտալների,

զորամասերի հրամանատարների պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով:

1. Մոնթորինգային, արագ արձագանքման և այլ այցեր

2022 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները իրականացրել են չհայտարարված այցեր ՀՀ ԶՈՒ զորամասեր, Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, ինչպես նաև կենտրոնական հավաքակայան: Թվով 6 (վեց) մոնիթորինգային այցեր են իրականացրել Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերում տեղակայված զորամասեր[57]: Զորամասերի ընտրությունը պայմանավորված է եղել 44-օրյա մարտական գործողություններից հետո այդ զորամասերի ծանրաբեռնվածության խիստ մեծացմամբ, ինչպես նաև ադրբեջանական զինված ստորաբաժանումների հետ շփման գծում մարտական հերթապահության ներգրավված լինելու հանգամանքով: Բացի դրանից, Պաշտպանի աշխատակազմ ստացված առանձին բողոքների ընթացքն ապահովելու համար կարիք է առաջացել տեղում ստանալ հավելյալ պարզաբանումներ, քննարկել որոշակի հարցեր: Այցերի ընթացքում ուսումնասիրվել են բանակում կարգապահության բարձրացման և խաղաղ պայմաններում մահացության դեպքերի կանխարգելման ու պատճառների վերհանման հետ կապված հարցեր:

Զորամասերում Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել սպայակազմի և զինվորների հետ, տեղում արձանագրել են առկա խնդիրները, հրամանատարական կազմի հետ քննարկել դրանց լուծման հնարավոր տարբերակները: Այցերի ընթացքում ուսումնասիրվել են զորամասերի զորանոցային պայմանները, բժշկական ծառայությունների համալրվածությունը, ինչպես նաև առանձնազրույցներ են տեղի ունեցել պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների, այդ թվում՝ կին զինծառայողների հետ:

Արձանագրվել են ինչպես կոնկրետ զորամասին առնչվող, այնպես էլ համակարգային բնույթ կրող մի շարք խնդիրներ: Դիտարկված բոլոր զորամասերում անձնակազմի մտահոգությունները առնչվում էին հիմնականում չորս խումբ խնդիրների. Կարգապահական, ֆինանսական, բնակարանային, կադրային:

Այցերի ընթացքում զորամասերի հրամանատարական կազմը պատրաստակամ համագործակցել է Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների հետ, իսկ այցերի արդյունքների ամփոփումից հետո Պաշտպանը կոնկրետ առաջարկներով գրություններ է հասցեագրել իրավասու գերատեսչություններ (Պաշտպանության նախարարություն, Ազգային Ժողով, Կառավարություն և այլն):

2022 թվականի ընթացքում ամառային զորակոչի ընթացքը տեղում դիտարկելու նպատակով Պաշտպանը և աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման

[57] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2291

ներկայացուցիչները այց են իրականացրել ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական հավաքակայան[58]: Պաշտպանի ներկայացուցիչները հետևել են զորակոչի ընթացքին, ծանոթացել հավաքակայանում զորակոչի կազմակերպման առկա պայմաններին, զորակոչիկների դիմավորման, ընդունման, գրանցման կարգին, ինչպես նաև հետևել վիճակահանության գործընթացին: Հատուկ ուշադրություն է դարձվել բժշկական հանձնաժողովի աշխատանքներին ու զորակոչիկների բուժզննումների ընթացքին: Զորակոչիկների հետ առանձնազրույցում անդրադարձ է կատարվել նրանց հետաքրքրող հարցերին, հատուկ ուշադրություն է դարձվել զորակոչիկների բարոյահոգեբանական վիճակին: Բժիշկների հետ քննարկվել են զորակոչիկների հետազոտության ընթացքի ու մեթոդների հետ կապված հարցեր:

Պաշտպանի ներկայացուցիչները 2022 թվականի ամառային զորակոչի ընթացքը տեղում դիտարկելու և արձանագրված խնդիրները քննարկելու նպատակով այց են իրականացրել ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Երևանի թիվ 3 և թիվ 4 տարածքային ստորաբաժանումներ: Միաժամանակ, աշխատանքային կարգով քննարկումներ են եղել թիվ 1 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումների ղեկավար կազմի հետ: Պաշտպանի ներկայացուցիչներն այցերի ընթացքում հետևել են զորակոչի ընթացքին, ուսումնասիրել զորակոչի կազմակերպման առկա պայմանները, տարածքային ստորաբաժանումների տեխնիկական հագեցվածությունը, կադրային համալրվածությունը և դրանց ազդեցությունը զորակոչիկների և տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների իրավունքների վրա:

Հատուկ ուշադրության կենտրոնում են եղել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիների, վարժական հավաքներին ներգրավվող անձանց, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների զինծառայողների և քաղաքացիական ծառայողների իրավունքների հետ կապված հարցերը: Քննարկվել է նաև բժշկական հանձնաժողովի աշխատանքների ու զորակոչիկների բուժզննումների հետ կապված հարցերը: ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները, ի թիվս այլնի, բարձրացրել են մի շարք հարցեր ու մտահոգություններ (վարժական հավաքների մասնակցության ցածր աստիճան՝ պայմանավորված վերջինների վարկային պարտավորություններով, ընտանեկան տարբեր հանգամանքներով, սոցիալական երաշխիքների բացակայություն և այլն): Նշված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանը գրություններ է հասցեագրել Պաշտպանության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ներկայացուցիչները Պաշտպանի գլխավորությամբ 2022 թվականի մարտ ամսվա

[58] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2296

ընթացքում այցելել են[59] Պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ: ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության և հոսպիտալի ղեկավար կազմի հետ շրջայց է կատարվել հոսպիտալում: Այցի ընթացքում ուսումնասիրվել են զինծառայողների բժշկական սպասարկման հարցերը, առանձնազրույցներ են տեղի ունեցել բաժանմունքներում բուժում ստացող պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների հետ, ովքեր ծառայության տարբեր հանգամանքներում, այդ թվում՝ մարտական գործողությունների ընթացքում կամ առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնելիս վիրավորումներ ու վնասվածքներ են ստացել: Զինծառայողները Պաշտպանին ներկայացրել են իրենց առողջական խնդիրները, բուժման ընթացքը, ծառայողական առօրյան: Այցի ընթացքում վերհանված խնդիրների (բժշկական սարքավորումներով համալրելու, քաղաքացիական բուժհաստատություններում զինծառայողների հետազոտություններն առաջնահերթ կարգով չիրականացվելու, բժշկական անձնակազմի թերի համալրվածության և այլն) կապակցությամբ գրություն է հասցեագրվել Պաշտպանության նախարարություն:

Պաշտպանի ներկայացուցիչները 2022 թվականի ընթացքում արագ արձագանքման այց են իրականացրել նաև Ռազմական ոստիկանություն՝ այնտեղ գտնվող ժամկետային զինծառայողների իրավունքների ապահովման նպատակով: Տեղում քննարկվել է պարտադիր ժամկետային զինծառայողների բարձրացված հարցերը ինչպես իրենց, այնպես էլ Ռազմական ոստիկանության ղեկավար կազմի հետ: Բարձրացված խնդիրների զգալի մասին տեղում Ռազմական ոստիկանության ղեկավար կազմի կողմից տրվել են լուծումներ, քննարկվել են նաև համակարգային բնույթ ունեցող հարցեր և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Այցից բացի, իրականացվել են նաև արագ արձագանքումներ: Մասնավորապես, դեպքերից մեկով քաղաքացին զանգահարել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և տեղեկացրել, որ եղբայրը ստացել է ծանուցում վարժական հավաքներին ներգրավվելու մասին, որից հետո ներկայացել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Արարատի մարզի տարածքային ստորաբաժանում: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ եղբայրը ներգրավվել է վարժական հավաքին, տեղափոխվել Արարատում տեղակայված զորամաս: Նշված զորամասում եղբորը տրվել է պայմանագիր և պարտադրվել ստորագրել: Ըստ քաղաքացու՝ ստորագրելու դեպքում եղբայրը կներգրավվեր առաջնագծում մարտական հերթապահության: Քաղաքացին հավելել է նաև, որ եղբայրը հրաժարվել է ստորագրել պայմանագիրը, ինչից հետո նրա նկատմամբ նախաձեռնվել է ծառայողական քննություն: Արդյունքում, եղբայրը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության և 30 օր ժամկետով տեղափոխվել կարգապահական վաշտ: Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ ռազմական ոստիկանության պետի տեղակալի, ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետի, տեղակալի, ինչպես նաև ՊՆ իրավաբանական վարչության պետի հետ, նրանց ներկայացրել քաղաքացու բարձրացրած խնդիրը: Պաշտպանի ներկայացուցիչը վկայակոչել է ՀՀ կառավարության որոշումների վերաբերելի իրավակարգավորումներն այն մասին, որ վարժական հավաքին ներգրավված քաղաքացին կարող է ընդգրկվել մարտական հերթապահության միայն համապատասխան պայմանագիրը կամավոր ստորագրելուց հետո: Հետևաբար նշված պայմանագիրը չկնքելու հիմքով անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և կարգապահական վաշտ տեղափոխելը վերը նշված իրավակարգավորումների լույսի ներքո խիստ խնդրահարույց է: Ըստ այդմ՝ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել վարժական հավաքի մասնակցին կարգապահական վաշտից ազատ արձակելու ուղղությամբ: Պետական գերատեսչությունների իրավասու ներկայացուցիչները տեղեկացրել են, որ անհապաղ միջոցներ կձեռնարկվեն մասնակցին

[59] https://ombuds.am/am/site/ViewNews/2173

կարգապահական վաշտից ազատ արձակելու ուղղությամբ, որից հետո աշխատակազմ զանգ է ստացվել այն մասին, որ վարժական հավաքի մասնակիցը ազատ է արձակվել Ռազմական ոստիկանությունից և տեղափոխվել զորամաս: Ավելին, մասնակցին չեն ներգրավել առաջնագծում մարտական հերթապահության:

2. Պաշտպանի հետևությունները շարունակվող երեք համակարգային խնդիրների վերաբերյալ

Սույն մասում հիմնական խնդիրների ներկայացումը կատարված է ՁՈՒ-ի առաքելության մաքսիմալ չվնասման սկզբունքով, ուստի, հաշվի առնելով սույն հաղորդման հրապարակային բնույթը խնդիրների նկարագրությունն արված է առավելապես ընդհանրական կերպով՝ խուսափելով օրինակներից ու անհատականացնող տվյալների ներկայացումից: Միևնույն ժամանակ Պաշտպանը տարվա ընթացքում շարունակել է ուղղակի գրագրությամբ ինչպես նաև առընթեր հասարակական խորհրդի փակ քննարկումների ընթացքում ներկայացնել առավել կոնկրետ մտահոգիչ փաստեր, ինչպես նաև առաջարկել լուծումներ:

1) **Ոչ մարտական պայմաններում մահեր, վնասումներ, հրազենային վիրավորումներ**. Իրավակարգը խախտող երևույթների դեմ պայքարը, անկասկած, չընդհատվող ու շարունակական աշխատանք է պահանջում: Այս հարցում, խնդրահարույց ու մտահոգիչ է եղել նաև 2022թ.-ի ընթացքում ՁՈՒ-ում մահվան, ինքնավնասման ու հակառակորդի գործողությունների հետ չկապված հանգամանքներում հրազենային վիրավորումների դեպքերը: Հաճախ ինքնավնասման դեպքերի պատճառների մեջ էական դեր են խաղում զորամասում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, զինծառայողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների ցածր մակարդակը, ինչպես նաև զինծառայողների նկատմամբ անհատական մոտեցման բացակայությունը: Պետք է նկատի ունենալ, որ պետության անվերապահ պարտականությունն է խաղաղ պայմաններում պաշտպանել իր հսկողության ներքո գտնվող զինծառայողների կյանքը: Կյանքի իրավունքը՝ որպես բնական, հիմնարար արժեք, ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով:

Այս առումով Պաշտպանը մշտապես հետևում է խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքի երաշխավորմանն ու բանակում բռնության արգելքի ապահովմանը:

2022թ. Պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ խաղաղ պայմաններում զինծառայողների մահացության դեպքերի հետ կապված: Ներկայում Պաշտպանի աշխատակազմում ակտիվ վարույթներում են գտնվում խաղաղ պայմաններում զինծառայողների մահացության դեպքերով մի շարք դիմում-բողոքներ ու Պաշտպանի՝ սեփական նախաձեռնությամբ քննարկման որոշումներ: Դեպքերը հիմնականում վերաբերել են վարժական հավաքի մասնակցի հանկարծամահ լինելուն, մարտական դիրքում այրվածքներ ստանալու պատճառով, ծառայակցի արձակած կրակոցից, ավտոմեքենայի վթարի հետևանքով կամ հիվանդությունից մահվան դեպքերին և այլն:

Զինծառայողների մահվան դեպքերի կապակցությամբ կոնկրետ հարցադրումներով պաշտոնական պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից (ՊՆ-ից, Դատախազությունից, Քննչական կոմիտեից): Միաժամանակ, մշտապես պահանջվել է ներկայացնել պարզաբանումներ այն մասին, թե իրավասու մարմիններն ինչ գործուն քայլեր են ձեռնարկել զինծառայողների մահվան և ինքնավնասումների դեպքերի կանխարգելման ուղղությամբ: Այս առումով Պաշտպանի հաստատությունը կապի մեջ է հասարակական այն կազմակերպությունների հետ, որոնք ակտիվորեն զբաղվում են ԶՈՒ-ում ոչ մարտական պայմաններում մահերի ուսումնասիրությամբ: Առանձին գործերով վերհանված խնդիրները պարբերաբար նշված կազմակերպությունների հետ քննարկվում են Պաշտպանին առընթեր ԶՈՒ-ում մարդու իրավունքների հարցերով հասարակական խորհրդում:

Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունները, այդ թվում՝ վերջին տարիների զուտ թվային վիճակագրության ու նաև որոշ վարույթների արդյունքների ուսումնասիրությունը, ցույց են տալիս, որ իրավասու գերատեսչությունները (Պաշտպանության նախարարություն, ՀՈՒ, նախաքննական մարմին, Դատախազություն) պետք է հստակ և տեսանելի քայլեր ձեռնարկեն խաղաղ պայմաններում մահացության, վիրավորումների ու դժբախտ պատահարների (ավտովթար, հրդեհ և այլն) պատճառներն ու նպաստող պայմանները վերհանելու, համակարգային լուծումներ տալու և արդյունքում՝ դրանք բացառելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ, սկսված բոլոր վարույթների չափազանց երկար քննությունը, որոնք որպես կանոն ուղեկցվում են տուժողների ներկայացուցիչների հետ վատ կոմունիկացիայով, որևէ կերպ չեն նպաստում ՀՈՒ-ում ծառայության անվտանգության մասին հանրային ընկալումների, հետևաբար նաև ՀՈՒ-ում ծառայության գրավչության մասին հանրային վստահության ձևավորմանը:

Մեկ այլ համակարգային խնդիր է այսպես կոչված դժբախտ պատահարները, մասնավորապես՝ ավտովթարները, հակահրդեհային անվտանգության կանոնների չպահպանման հետևանքով վնասման ու մահվան դեպքերը, որոնք ոչ մարտական մահերի դեպքերում մեծ տեսակարար կշիռ ունեն: Այսպես, «դժբախտ պատահարները[60]» 2022թ-ի ընթացքում կազմում են ոչ մարտական 50 մահերից 17-ը, կամ 34%-ը: Նույն տեսակարար կշիռն ունեն ըստ ՊՆ-ի «հիվանդությունից» մահացած զինծառայողների թիվը, կրկին՝ 17 դեպք ընդհանուր 50-ից: Նախ հետազոտության համար «հիվանդությունից մահ» ձևակերպումը բավարար տեղեկատվություն չի տալիս, ավելին, նշված թվի մեջ Պաշտպանը վարույթ է սկսել նաև այնպիսի դեպքով, երբ հրատապ բժշկական միջամտության կարիք ունեցող զինծառայողն անհրաժեշտ ժամանակում չի ստացել այդ օգնությունը, ընդ որում, տարբեր պատճառներով (դիրքից հոսպիտալ տեղափոխման ուշացում և այլն): Ուստի, անգամ վիճակագրության վարման այս մոտեցումը հարցեր է հարուցում:

Մյուս կողմից, անգամ եղած անորոշության պայմաններում, փաստը, որ բժշկական անհրաժեշտ օգնություն չստանալու հիմքով մահերի թիվը կազմում է ոչ մարտական մահերի 34%-ը, ինքնին ազդակ է, որ զինծառայողների բժշկական սպասարկման ու առողջության պահպանման նկատմամբ վերահսկողությունը ՀՈՒ-ում չի իրականացվում բավարար արդյունավետորեն:

Ինչ վերաբերում է «դժբախտ պատահարներին», ապա դրանք հիմնականում ավտովթարներն են և այլ դժբախտ պատահարները: Այս մասով ըստ ՊՆ կողմից ստացված տեղեկատվության, զորամասերում անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ունեցող զինծառայողների (քաղաքացիական աշխատանք կատարողների և տեխնիկական սպասարկում իրականացնողների) հետ անցկացվում են հրահանգավորումներ՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2015թ. հուլիսի 27-ի N հրամանի: Թեպետ ՊՆ կողմից չի ստացվել տեղեկություն թե արձանագրված 17 ավտովթարից քանիսն են ներառում անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների վթարման դեպքերը, այդուհանդերձ, ձեռնարկվող քայլերի ղեկավար սկզբունքը պետք է լինի ոչ թե վթարված տրանսպորտային միջոցի պատկանելիությունը (անձնական թե ծառայողական օգտագործման) այլ զինծառայողների կողմից դրանցից օգտվելու և դրանք շահագործելու անվտանգության կանոնների մասին թիրախային կրթությունից ու օրիենտացիայից՝ զուգորդված խիստ կարգապահության ապահովմամբ:

Նույն կերպ, հակահրդեհային անվտանգության կանոններին սպասարկող տրանսպորտային միջոցների, շենքերի ու շինությունների համապատասխանության վստահելի վերահսկողության, ինչպես նաև սարքերից օգտվելու կանոնների մասին զինծառայողների մոտ տարրական գիտելիքների ամրապնդման ուղղությամբ հսկայական

[60] Նման ձևակերպում ունի ՊՆ կողմից տրամադրվող վիճակագրությունը:

աշխատանքներ կան անելու: 2023թ հունվարի 19-ի ողբերգական դեպքը, որը խլեց 15 զինծառայողի կյանք ու տարբեր աստիճանի վիրավորում հասցրեց ավելի քան 3 ծառայողի, նշված հետևության ցավալի աղբյուրն է:

Հետագա դեպքերի կանխարգելման նպատակով՝ բացի բարձրաստիճան զինծառայողներին ծառայողական պատասխանատվության ենթարկելուց, անհրաժեշտ է, որ քաղաքականության պատասխանատու մարմինը՝ հստակ ժամանակացույց կազմի, թե ինչպես ու ինչ ժամկետներում է իրականացնելու ՀՈՒ համակարգում հակահրդեհային անվտանգության կանոնների համապատասխանության գնահատում և արդյունքում գնահատված խնդիրների հասցեագրման նպատակով ինչ միջոցներ է ձեռնարկելու, ներառյալ ծառայողների համար հակահրդեհային կանոնների վերաբերյալ պարտադիր բայց մատչելի վերապատրաստում ապահովելու միջոցառումը:

Բացի այս, չափազանց կարևոր և հրատապ է ունենալ բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն), որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծման: Զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտականություններից է զինված ուժերում կարգապահության ամրապնդումը, որի համար առանցքային է իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանումը, կանխարգելման նպատակով կոնկրետ գործողությունների ծրագրի մշակումը:

2) **Կադրային համալրվածություն**. Պաշտպանի մասնագիտացված ստորաբաժանման ուսումնասիրությունները, ստացված բողոքները, զորամասեր այցերը ցույց են տալիս, որ զինված ուժերի ամենախոցելի խնդիրներից շարունակում է մնալ կադրային համալրվածության խնդիրը: Բազմաթիվ հաստիքներ, հատկապես միջին սպայական, թափուր են, ինչը բացասաբար է անդրադառնում ծառայության պատշաճ կազմակերպման ու կարգապահության պատշաճ մակարդակի պահպանման վրա: Օրինակ, արձանագրվել է, որ մի շարք զորամասերում թափուր են եղել վաշտերի կամ մարտկոցների հրամանատարների կամ դասակի հրամանատարների հաստիքները, եղել են դեպքեր, երբ մեկ ստորաբաժանման 4 պարտադիր հաստիքներից լրացված է եղել միայն մեկը: Թափուր հաստիքների պատճառով սպաների ծանրաբեռնվածությունը մեծացել է, կոնկրետ պաշտոն զբաղեցնողը ստիպված է լինում կատարել նաև մյուսի՝ թափուր պաշտոնի համար նախատեսված պարտականությունները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է պարտականությունների պատշաճ կատարման օբյեկտիվ անհնարինության:

Մեկ այլ կարևոր խնդիր է սպա-հոգեբանի, սպա-իրավաբանի հաստիքների թափուր լինելը: Մշտադիտարկման այցերը ցույց են տվել, որ որոշ զորամասերում թափուր են սպա-հոգեբանի հաստիքը, իսկ որոշ զորամասերում էլ ընդհանրապես բացակայել է նման հաստիք: Մինչդեռ, սպա-հոգեբանի և իրավաբանի հաստիքների որակյալ կադրերով համալրվածությունը կարող է էական նշանակություն ունենալ զինծառայողների միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման, կանոնադրային հարաբերությունների ամրապնդման հարցում, բացի դա հոգեբանների կողմից ճիշտ և ամենօրյա ինտենսիվ աշխատանքը կարող է բացահայտել ինքնասպանություն և ինքնավնասում կատարելու հակում ունեցող զինծառայողներին և վերջիններիս հետ թիրախային աշխատանքի արդյունքում կանխել հնարավոր դեպքերը:

Մյուս կողմից, կարող է օգտակար պրակտիկա լինել զորակոչված ծառայողի հոգեբանական պրոֆիլի հաստատումը՝ անձի վարքային ռիսկերի գնահատումով, ծառայության հենց սկզբից (կամ զորակոչի գործընթացի շրջանակներում), ինչը հաջորդիվ ծառայության ընթացքում կվարվի պատասխանատու սպա-հոգեբանի կողմից և ողջամտորեն

կանխատեսելի կդարձնի անձնակազմի բոլոր անդամների հետ աշխատանքի ինտենսիվության ու մոտեցումների ընտրության հարցը՝ վերջնարդյունքում դյուրինացնելով կարգապահականն պատշաճ մակարդակի ապահովման խնդիրը:

Պաշտպանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր զորամասերի անձնակազմերի համար ծառայողական գերծանրաբեռնվածությունը լուրջ խնդիր է, իսկ դա բացասաբար է ազդում հատկապես զորքերում կարգապահության ամրապնդման վրա:

Մշտադիտարկման ենթարկված գրեթե բոլոր զորամասերում որպես կադրային թերի համալրվածության հնարավոր պատճառ զինծառայողները նշել են ցածր վարձատրությունը, հասարակության շրջանում զինծառայողի դերի ոչ լիարժեք ընկալումը, սոցիալական ոչ բավարար երաշխիքները, ինչը ուղիղ ազդեցություն է ունենում ծառայության գրավչության վրա:

3) Ամուր կարգապահություն. Հաջորդ առավել համակարգային խնդիրը ՀՈՒ-ում ամուր կարգապահության ապահովումն է: Անհերքելի է, որ բանակում կարգապահության անընդհատ ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման համար անհրաժեշտ պայման է զինծառայողի մոտ Սահմանադրության և օրենքի նկատմամբ հարգանքի, իրավունքի գերակայության արժեքի գնահատման, դրանով հավասարապես պաշտպանված և կաշկանդված լինելու, սեփական իրավունքների նկատմամբ հարգանք պահանջելու և միևնույն ժամանակ այլ անձանց իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանք դրսևորելու հատկանիշների ձևավորումը:

2022թ սեպտեմբերի 13-14-ից առաջ ու դրանից հետո կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զորքերում կարգապահության հետ կապված առկա են բազմաթիվ խնդիրներ: Ցածր կարգապահությունն իր հերթին ազդեցություն է ունենում ինչպես բանակում բռնության, խաղաղ պայմաններում մահացության դեպքերի թվի, այնպես էլ ռազմական գործողությունների ժամանակ զորքերի մարտունակության վրա:

Պաշտպանին հասցեագրվող բողոքները, ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ կարգապահական խախտումների զգալի մասը պայմանավորվում է մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծի դրսևորմամբ, արատավոր բարքերի և արժեքների կրող լինելու և այդ արժեքները ՀՈՒ ներմուծելու հանգամանքով: Իրավախախտումների կանխարգելման տեսանկյունից անհրաժեշտ է կատարել անձի վարքի ռիսկերի գնահատում և բացահայտված խնդիրների հիման վրա անհատական աշխատանքների պլանավորում և իրականացում, ինչպես նշվել է վերևում: Սակայն նկատի ունենալով, որ սա համակարգային ու հասարակական խնդիր է, անհրաժեշտ է մոբիլիզացնել դրանում հնարավոր ներդրում ունեցող բոլոր դերակատարներին:

Դա կարող է իրականացվել երկու փուլով: Առաջին փուլում դպրոցը և ոստիկանությունն անձի վերաբերյալ տվյալները (բնավորություն, վարքագիծ, հակվածություն, սոցիալական և հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիքների աստիճան և այլն) փոխանցում են զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում (զինկոմիսարիատ): Երկրորդ փուլում՝ զորակոչվելուց հետո, հավաքագրված այդ տվյալները փոխանցվում են զորամաս, որտեղ արդեն սպայական անձնակազմը հնարավորություն կունենա վերլուծել անձի վերաբերյալ տվյալները և նրա հետ տանել թիրախային աշխատանքներ՝ նրա հնարավոր հակահիրավական վարքագիծը կանխելու նպատակով:

Իրավախախտումների կանխարգելման հարցում կարևոր է թիրախային խմբերի (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր

հակահիրավական վարքագիծը բացառելու նպատակով նրանց հետ տանել կոնկրետ անհատական աշխատանքներ: Այս առումով ևս էական կարևորություն է ունենալու սպա-հոգեբանի կողմից կատարվող աշխատանքը:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը, զորամասեր այցերը վկայում են, որ թիրախային խմբերի հետ աշխատանքները ոչ բոլոր զորամասերում են իրականացվում արդյունավետ:

Բացի այդ, կարգապահության ցածր մակարդակի պատճառներից է հանդիսանում սպայական ոչ պատշաճ հսկողությունը և հետևողականությունը: Այլ կերպ՝ ինչպես արդեն իսկ նշվեց միջին սպայական թերի համալրվածությունը հանգեցնում է հրամանատարական կազմի գերծանրաբեռնվածության, ինչ էլ իր հերթին հանգեցնում է պարտականությունների, այդ թվում՝ կարգապահության նկատմամբ հետևողական աշխատանքի թերացման և ոչ պատշաճ հսկողության:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինված ուժերում իրավախախտում ծնող պատճառների ու պայմանների կանխարգելման գործում առանցքային է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող Ռազմական ոստիկանության դերը: Այս առումով կարևոր է նաև զորամասի հրամանատարության և Ռազմական ոստիկանության ծառայողների միջև իրավախախտումների կանխարգելման համար համատեղ աշխատանքների շարունակական կատարելագործումը:

3. Անհատական բողոքներով բարձրացված այլ տարածված խնդիրներ

2022 թվականի ընթացքում բացի մոնիթորինգային այցերից, Պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ, որոնցում բարձրացվում էին տարբեր խնդիրներ, օրինակ՝ զորակոչիկների պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության վերաբերալ: Բողոքներից մեկով զորակոչիկի մայրը տեղեկացրել է, որ որդին ունի մի շարք առողջական խնդիրներ, որոնց մասին նա հայտնել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումում (զինվորական կոմիսարիատ), ներկայացրել բժշկական փաստաթղթերը, սակայն դրանք հաշվի չեն առնվել, և նրան տրվել է զինվորական ծառայության զորակոչման ծանուցագիր: Պաշտպանի աշխատակազմում սկսված բողոքի քննարկման շրջանակներում իրականացվել են մի շարք գործողություններ, ներկայացված խնդիրները քննարկվել են զինվորական կոմիսարիատի, այնուհետև՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի իրավասու ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում զորակոչիկն ուղեգրվել է լրացուցիչ հետազոտության: Բացի դրանից, Պաշտպանը զորակոչիկի ամբողջական հետազոտություններն իրականացնելու պահանջով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, որտեղից տեղեկացվել է, որ զորակոչիկն ուղեգրվել է առողջական վիճակի լրացուցիչ հետազոտման: Արդյունքում, զորակոչիկը կրկին փորձաքննվել և ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Պաշտպանին մեկ այլ խումբ բողոքներ են հասցեագրվել զորակոչիկներին գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճում ունենալու հիմքով տարկետում չտրամադրելու հետ կապված: Մասնավորապես, քաղաքացին նշել է, որ ընդունվել են Բելգիայի «Լյուվենի կաթոլիկ համալսարան» Տնտեսագիտության և բիզնես ֆակուլտետի «Բիզնես ճարտարագիտություն» բակալավրի կրթական ծրագրով: Այնուհետև, Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ին ընդունված թիվ 451-Ն որոշման հիման վրա տարկետում ստանալու հարցով դիմել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, սակայն համապատասխան հանձնաժողովը ներկայացրել է բացասական եզրակացություն: Պաշտպանի աշխատակազմում բողոքների քննարկման

արդյունքում և նախարարության հետ համագործակցությամբ Լյուվենի կաթոլիկ համալսարան դիմած քաղաքացիներին Կառավարության որոշմամբ տրվել են տարկետումներ:

Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բողոքների հաշվառմամբ՝ կարելի է արձանագրել, որ բավականին շատ են եղել բողոքներ կապված զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների բնակարանային ապահովության հետ: Բողոքների մի մասը Պաշտպանի աշխատակազմում քննարկման արդյունքում ստացել է դրական լուծում: Օրինակ՝ բողոքներից մեկի քննարկման արդյունքում քաղաքացու ընտանիքին հատկացվել է 1 սենյականոց բնակարան ձեռք բերելու համար բնակարանի գնման վկայագիր:

Դրական լուծումներ են ստացել նաև զինծառայողների սոցիալական այլ խնդիրներ: Օրինակ՝ քաղաքացին դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին և տեղեկացրել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 28-ից նոյեմբերի 9-ը ակտիվ մասնակցություն է ունեցել 44-օրյա մարտական գործողություններին, սակայն դրամական ապահովություն չի ստացել: Պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման և Պաշտպանության նախարարություն կոնկրետ առաջարկ ներկայացնելուց հետո քաղաքացուն վճարվել է մարտական գործողություններին մասնակցության բոլոր օրերի դիմաց դրամական բավարարում:

Նմանատիպ մեկ այլ դեպքով Պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման մասին որոշում: Նշված դեպքով քաղաքացին ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից տրված ծանուցագրի հիման վրա զորակոչվել է զորահավաքային զինվորական ծառայության: Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից տրամադրված ավտոմեքենայով տեղափոխվել է Ասկերանում տեղակայված զորամաս, սակայն զորամասում թափուր հաստիք չլինելու պատճառով ուղարկել են վետերանների միություն, որտեղ իրեն գրանցել են: Դրանից հետո զորամասից ստացել է զինվորական հագուստ ու զենք: Քաղաքացին տեղեկացրել է, որ ամբողջ անձնակազմից դրամական ապահովություն չեն տրամադրվել միայն իրեն և ևս մեկ հոգու՝ վետերանների միության կամավորների ցուցակում ընդգրկված լինելու պատճառաբանությամբ: Որոշմամբ անդրադարձ է կատարվել «օրինական ակնկալիքին» և նշվել, որ այն առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին: Անհրաժեշտ է նշել, որ ըստ Եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը չի սահմանափակվում ֆիզիկական բարիքների սեփականությամբ: Ավելին, Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ բացի գոյություն ունեցող գույքից, սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանությունը ներառում է նաև գույք ձեռք բերելու օրինական ակնկալիքը: Հետևաբար, Պաշտպանն արձանագրել է, որ քաղաքացին զորահավաքային զորակոչի շրջանակում զորակոչվելով ՀՀ զինված ուժեր, ձեռք է բերել ծառայած օրերի դիմաց դրամական ապահովություն ստանալու պահանջի իրավունք, ունեցել է բավականաչափ իրավական հիմքեր վստահելու իրեն զորահավաքային զորակոչի շրջանակում զորակոչվելու վերաբերյալ ստացված ծանուցագրի իրավաչափ լինելուն, ուստի ունեցել է Եվրոպական կոնվենցիայի դրույթներով պաշտպանության ենթակա գույքային իրավունք, այն է՝ ծառայած օրերի դիմաց դրամական բավարարում ստանալու օրինական ակնկալիք:
Պաշտպանը 2022 թվականի ընթացքում շարունակել է բողոքներ ստանալ 44-օրյա մարտական գործողությունների մասնակցած զինծառայողների (գտնվելու վայրն անհայտ, գերիներ) վերաբերյալ, որոնցից յուրաքանչյուրով անհատական մոտեցում է ցուցաբերվել և

կոնկրետ դեպքերով գրություններ են հասցեագրվել ՀՀ պաշտպանության նախարարություն և այլ միջազգային և ներպետական կառույցներին: Պաշտպանն անձամբ բազմաթիվ անգամներ հանդիպել է 44-օրյա պատերազմի մասնակից զինծառայողների ընտանիքի անդամներին, լսել վերջիններիս կողմից բարձրացվող խնդիրները իրենց հարազատների ճակատագրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իրականացվող ԴՆԹ փորձաքննությունների արժանահավատության, քննվող քրեական վարույթների ձգձգման և արդյունավետության, սոցիալական բնույթի խնդիրների վերաբերյալ: Նշված անձանցից յուրաքանչյուրի բարձրացրած հարցի վերաբերյալ համապատասխան գրություններ են հասցեագրվել, իսկ համակարգային բնույթ ունեցող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ են ներկայացվել և քննարկվել իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց հետ:

Բացի այդ, ակտիվ և ամենօրյա գործունեություն է իրականացվել ինչպես 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի մարտական գործողությունների ընթացքում, այնպես էլ դրանից հետո: Միայն սեպտեմբեր ամսին մարտական գործողություններով և դրանց հետևանքներով պայմանավորված ստացվել է 115 զանգ, որոնցից 68-ը զինծառայողների գտնվելու վայրի վերաբերյալ, 29-ը գերության մեջ գտնվողների վերաբերյալ, իսկ մնացածը՝ առողջական վիճակի, սեփականության իրավունքի խախտման, ինչպես նաև վիրավորում ստացած անձանց մասին տեղեկություններ ստանալու հարցի վերաբերյալ:

Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են 2022թ.-ի սեպտեմբերյան ռազմական գործողությունների արդյունքում գերեվարված և հայրենադարձված բոլոր 17 գերիներին, առանձնազրույցներ ունեցել վերջինների հետ, ներկայացրել իրենց իրավունքները, քննարկել հուզող և խնդրահարույց հարցերը[61]:

Հատուկ մեթոդաբանությամբ իրականացված առանձնազրույցների արդյունքների ամփոփման և ստացված տեղեկատվության հիման վրա կազմվել և հրապարակվել է «Հայ գերիների նկատմամբ դաժան և անմարդկային վերաբերմունքն ու խոշտանգումները՝ որպես ադրբեջանական հայատյաց քաղաքականության դրսևորում» արտահերթ ոչ հրապարակային զեկույցը: Զեկույցի կազմման նպատակներից մեկն է եղել հավաքագրել, վերլուծել և ներկայացնել Ադրբեջանում հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգումներ և դաժան վերաբերմունք դրսևորելու համատարած բնույթը, փաստարկված հիմնավորել Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերի համատարած և կոպտագույն խախտումներն ու պատերազմական հանցագործությունները, դրանցում ադրբեջանական իշխանությունների հայատյաց քաղաքականությունը խրախուսելու նշանակալի դերը և ազդեցությունը, ինչպես նաև միջազգային հանրության և իրավասու կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել դեռևս Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների իրավունքների ապահովման ու նրանց հայրենադարձման նպատակով լրացուցիչ ջանքեր գործադրելու անհրաժեշտության վրա: Զեկույցով Պաշտպանի հաստատությունը նաև նպատակ է ունեցել ներկայացնել ստուգված ու արժանահավատ տեղեկություններ, որոնք հիմք կհանդիսանան հայ ռազմագերիների նկատմամբ հանցագործություններ իրականացրած ադրբեջանական իշխանության տարբեր մարմինների պատասխանատուներին ու դերակատարներին, ի թիվս ներպետական դատավարությունների, նաև միջազգային տրիբունալներում պատասխանատվության կանչելու համար: Զեկույցը առավելապես հիմնված է հայրենադարձված բոլոր 17 հայ ռազմագերիների հետ Պաշտպանի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնազրույցների արդյունքում ստացված տեղեկատվության վրա, որի արդյունքները, բացի սույն զեկույցից, առանձին փաստաթղթի ձևով ամփոփվել է Պաշխատանի աշխատակազմում: Զեկույցը ներկայացվել է ՀՀ պետական համապատասխան

[61] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2320

մարմիններին, միջազգային գործընկերներին և այն դերակատարներին, որոնք լիազորված են պաշտպանել և երաշխավորել մարդու իրավունքները կամ նպաստել պատերազմական հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելուն: Ձեկույցի հետևությունների մասին առավել մանրամասն ներկայացված է սույն հաղորդման «Արտահերթ զեկույցներ» բաժնում:

4. Համագործակցություն

Պաշտպանի ներկայացուցիչները համագործակցությունների ամրապնդման, ոլորտային խնդիրների համակողմանի քննարկման, ինչպես նաև Պաշտպանի և աշխատակազմի դիրքորոշումները այս կամ այն հարցի առնչությամբ պետական մարմիններին, միջազգային և ներպետական այլ գործընկերներին ներկայացնելու նպատակով մասնակցել են բազմաթիվ կլոր-սեղան քննարկումների: Հատկապես կարևոր է ընդգծել «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում-փուլ II» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպել են բազմաթիվ քննարկումներ, օրինակ՝ հակամարտությունների և հետհակամարտությունների իրավիճակներում միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպի վերաբերյալ, «Հայաստանում պաշտպանական ոլորտի արդյունավետ կառավարումը և վերահսկողությունը» թեմայով քննարկումները և այլն:

2022 թվականի մարտի 31-ին և դեկտեմբեր 26-ին իրականացվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստեր: Նիստերի թեմաների ընտրությունը պայմանավորված է եղել Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքների, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրների հաշվառմամբ: Մասնավորապես՝ առաջին նիստի համար ընտրվել են «Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես Զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք. բանակում մահացության դեպքերի հետ կապված հարցեր», «Բանակը և մարդու իրավունքները. շարունակաբար արձանագրվող խնդիրներ», «Վարժական հավաքների հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ» թեմաները: Քննարկման արդյունքում խորհրդի նիստի մասնակիցները ներկայացրել են մի շարք առաջարկներ (զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի կանխարգելման և ընդհանուր իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ, այդ թվում՝ զինծառայողների հետ տարվող անհատական հոգեբանական աշխատանքների իրականացման միջոցով, բանակում յուրաքանչյուր մահվան դեպքի մասին հանրությանը առաջնային աղբյուրից տրամադրել ճշգրիտ տեղեկություններ, բացառել զորավարժություններին և վարժական հավաքներին կանչելու նպատակով օրենքով սահմանված կարգի խախտմամբ քաղաքացիներին ծանուցելու պրակտիկան, միջոցներ ձեռնարկել խաղաղ պայմաններում վարժական հավաքների գործընթացում քաղաքացիների առողջական վիճակի

վերաբերյալ տեղեկությունների պատշաճ հավաքագրումն ու թարմացումն ապահովելու ուղղությամբ և այլն), որոնց կապակցությամբ Պաշտպանը կոնկրետ առաջարկություններով գրություններ է հասցեագրել իրավասու պետական մարմիններ:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանն ակտիվ համագործակցել է «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի հետ, այցելությունների[62] ու ընթացիկ համագործակցության միջոցով փորձել աջակցել կենտրոնի կողմից զինծառայողներին տրամադրվող վերականգնողական ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող խնդիրների լուծմանը:

Դեկտեմբերի 26-ին կայացած խորհրդի նիստի[63] համար ևս ընտրվել են հաստատության գործունեության արդյունքում վերհանված արդիական թեմաներ, ինչպիսիք են՝ «Կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակում Պաշտպանի աշխատակազմի կատարած աշխատանքը (2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի համատեքստում)» և «Վարժական հավաքների գործընթացում մարդու իրավունքների վիճակը»: Քննարկման ընթացքում նիստի մասնակիցները ներկայացրել են բազմաթիվ դիտարկումներ, հանդես են եկել առաջարկություններով, որոնք արձանագրվել են Պաշտպանի աշխատակազմում: Առաջարկների և դիտարկումների հաշվառմամբ այս նիստից հետո ևս Պաշտպանը գրություններ է հասցեագրել իրավասու գերատեսչություններ:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը հատուկ ուշադրություն է դարձրել զինվորական հոսպիտալների բժշկական անձնակազմերի, նրանց իրավունքների պաշտպանությանն ու դերակատարման նշանավորմանը: Պաշտպանի կողմից շարունակաբար ընդգծվել են դպրոցներում նախնական ռազմական պատրաստականության կրթության պատասխանատու ուսուցիչների ու մարզիչների աշխատանքը:

Մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության Տոնի առթիվ՝ Պաշտպանը Ծնորհակալագրեր[64] է հանձնել «Կենտրոնական կլինիկական» և «Կայազորային զինվորական» հոսպիտալների 30 բուժաշխատողների և 44-օրյա պատերազմի հերոս Գևորգ Արշակյանի անվան «Հայրենիքի Պաշտպան» Պաշտպանի Պատվոգրեր է հանձնել երկու զինծառայողի, ռազմագիտության երկու ուսուցչի և մեկ իրավապաշտանի:

Պաշտպանը մշտապես շեշտել է, որ հայկական պետականության համար առկա ժամանակակից մարտահրավերների հաղթահարման համար անհրաժեշտ է բոլոր մասնագիտությունների ու հանրության բոլոր անդամներիի միասնությունն ու հետևողական աշխատանքը:

[62] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2334
[63] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2459
[64] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2249

12. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է եղել անձանց սոցիալական, աշխատանքային իրավունքների պաշտպանության ու վերականգնման աշխատանքները: Թերևս հաստատության ստացած դիմում-բողոքների ամենամեծ բաժինն ընկնում է սոցիալական և աշխատանքային իրավունքներին առնչվող տարբեր խնդիրներին: Հաղորդման այս բաժնում կներկայացվեն այն հիմնական խնդիրները, որոնք ունեն համակարգային բնույթ և ըստ էության արտացոլում են հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի հաստատության աշխատանքի կետրոնացվածությունը:

Նկատի ունենալով դիմում-բողոքների մեծ բաժինը, Պաշտպանի նախաձեռնության 2022թ մարտի 24-ին տեղի է ունեցել Պաշտպանի և ՀՀ Աշխատանքի, սոցիալական հարցերի նախարարի հանդիպումը65, որի նպատակն է եղել ի սկզբանե ձևավորել այնպիսի աշխատանքային ձևաչափ, որը արդյունավետ կլինի ոլորտում Պաշտպանի հաստատության կողմից բարձրացվող հարցերի լուծման համար:

Պաշտպանը կարևոր է համարել մի քանի հարցերի լուծման ուղղությամբ ջանքերի ինտենսիվացումը, մասնավորապես՝

- Արդեն 17 տարի ձգվող «ՀՀ քաղավիացիայի հաշմանդամ օդաչուները» հասարակական կազմակերպության անդամների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի հատուցում ստանալու իրավունքի սահմանափակումների խնդիրը, որի վերաբերյալ Պաշտմանը դիմել էր Սահմանադրական դատարան;

- Պաշտպանի աշխատակազմը կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման կողմից 2021 թվականի հոկտեմբերի 27-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ կատարած այցի շրջանակում վերհանված խնդիրները:

- «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ Բաշտպանի մշտադիտարկման չհայտարարված այցի շրջանակներում 2020 թվականին իրականացված այցի ընթացքում արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի ուսումնասիրման ընթացքում կրկին վերհանված խնդիրները:

Քննարկվել են նաև մարզային սոցիալական ծառայությունների գործունեությունը,հաշմանդամության կարգի սահմանման փորձաքննությունների իրականացմանը, ինչպես նաև անօթևան մնացած մարդկանց արագ և պատշաճ արձագանքման խնդիրների մասով կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ գտնելու միտված հարցեր:

Նախանշված ուղղություններով Պաշտպանի աշխատակազմի և նախարարություն աշխատակիցների ներգրավմամբ համատեղ աշխատանքային խմբեր են ձևավորել, որոնք

[65] https://www.ombuds.am/am/site/ViewNews/2178

տարվա ընթացքում համագործակցել են առաջարկություններն իրացնելու ուղղությամբ: Որոշ հարցերի վերաբերյալ առավել մանրամասն կներկայացվի այս բաժնում՝ ստորև:

1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ

1) Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելը

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2022 թվականին նույնաբովանդակ են: Դրանք վերաբերում են արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձանց դիմումները մերժելուն՝ պատճառաբանությամբ, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող նրանց աշխատանքային ստաժը չի բավականացրել, քանի որ ծանր, վնասակար արտադրությունները, աշխատանքները, մասնագիտությունները, պաշտոններն ու ցուցանիշները սահմանող համապատասխան իրավական ակտերում մարդկանց մասնագիտությունները տառացիորեն ներառված չեն:

Պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է Կառավարության որոշումներով[66] հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները կատարելագործելու անհրաժեշտության հարցը, որին 2022 թվականին ևս լուծում չի տրվել, քանի որ, ըստ Նախարարության, նման անհրաժեշտություն չի առաջացել: Նման կենսաթոշակ նշանակելու դեպքերով հաշվի չի առնվում կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունն ու բնույթը: Հաճախ նաև Կառավարության ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանին[67] համապատասխան ներկայացված տեղեկանքի առկայության պայմաններում կենսաթոշակային մարմինը դիմումը համարում է առանց հիմքերի և մերժում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

1. յուրաքանչյուր դեպքի հիման վրա իրականացնել օբյեկտիվ, պատշաճ, պիտանի վարչարարություն, հաշվի առնել կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունն ու բնույթը, կենսաթոշակառուի օգտին հանգամանքները,

2. Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները կատարելագործել:

2) Մասնակի կենսաթոշակ նշանակելը

2022 թվականին կենսաթոշակային մարմինը նույնպես մասնակի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ քաղաքացիների դիմումները մերժել են՝ զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, ՀՀ կառավարության որոշման[68] մեջ ներառված չլինելու պատճառով:

Պաշտպանը հաստատում է, որ կենսաթոշակային մարմինը մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնի մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ հիմք ընդունելով դրանց էության բացահայտման հետ կապված ոլորտի լիազոր մարմնի առաջարկությունները:

---

[66] Կառավարության՝ 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշումներ

[67] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի N 66 հրաման

[68] ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665 որոշում

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում, որ Կառավարության Որոշմամբ թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկը պետք է վերանայել:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

1. մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ հիմք ընդունելով դրանց էության բացահայտման հետ կապված ոլորտի լիազոր մարմնի առաջարկությունները, ինչպես նաև դատական պրակտիկան, տառացի և նեղ մեկնաբանություն չտալ Կառավարության մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին,

2. իրավակիրառ պրակտիկայում առկա յուրաքանչյուր դեպք հաշվի առնելով Որոշման մեջ իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ:

3) Աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրներ

2022 թվականին խնդիրների մեծ մասը վերաբերել են աշխատանքային ստաժի հաստատմանը. փաստացի աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում չի հաշվառվել: Խնդրի հետ մարդիկ բախվում են, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել աշխատանքային ստաժը հաստատող և ապացուցող փաստարկներ: Ըստ օրենսդրական կարգավորման[69] մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի:

Խնդրի առաջացման հիմնական պատճառը գործատուների սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չպահպանելը կամ արխիվ չհանձնելն է, կամ երբ կենսաթոշակ նշանակելիս չեն գործում (վերացված կամ լուծարված են լինում) այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են: Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ են դեպքերը նաև, երբ կենսաթոշակային մարմինը չի իրականացնում պատշաճ վարչարարություն՝ չի կատարում համապատասխան ուսումնասիրություններ և բավարարվում է միայն Ազգային արխիվից տրված տեղեկություններով:

Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

1.օրենսդրական փոփոխություններով ներդնել աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակառուի համար մատչելի մեխանիզմներ,

2.յուրաքանչյուր դեպքով ցուցաբերել անհատական մոտեցում, քննարկել կոնկրետ խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ:

4) ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը, ինչպես նաև անկանխիկ եղանակով կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան մեկ անգամ բանկ այցելելու պարտավորությունը

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների չվճարված կենսաթոշակը ստանալու հարցը շարունակում է չլուծված մնալ: Համաձայն օրենսդրության՝ առկա է պահանջ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող

[69] «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 32-րդ հոդված

կենսաթոշակառուի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի կողմից բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու պահանջ[70]:

Մեկ այլ իրավակարգավորմամբ կենսաթոշակը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը[71]: Արդյունքում, օրենսդիրը վերը նշված հիմքերի առկայությունը համարում է բավարար կենսաթոշակի վճարումը դադարեցնելու համար: ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարման խնդիրը պետք է դիտարկել ինչպես ներկայում, այնպես էլ նախկինում կենսաթոշակ չստանալու տեսանկյունից՝ հիմք ընդունելով կենսաթոշակի՝ որպես սեփականություն լինելու փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով ամրագրել բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հնարավորությունը:

2022 թվականի ընթացքում շարունակում է արդիական մնալ անկանխիկ եղանակով կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան մեկ անգամ բանկ այցելելու պարտավորության հետ կապված խնդիրը: Կենսաթոշակի վճարումը շարունակելու համար բանկ ներկայանալու պահանջը շարունակում է դժվարություններ առաջացնել հաշմանդամություն կամ տեղաշարժման դժվարություններ ունեցող, այդ թվում՝ տարեց մարդկանց կյանքում. տասներկու ամիսը մեկ անգամ բանկ ֆիզիկապես ներկայանալու հնարավորություն չունենալու պատճառով դադարեցվում է կենսաթոշակի վճարումը: Հարկ է նշել, որ խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի տարեկան հաղորդումներում[72]:

Պաշտպանի կողմից խնդրի բարձրացումից հետո կենսաթոշակի վճարումը շարունակելու համար բանկ ներկայանալու պահանջն օրենսդրական փոփոխությունների է ենթարկվել. Հայաստանում գտնվող քաղաքացիների՝ անձամբ բանկ ներկայանալու պահանջի հարցում նախատեսվել են բացառություններ, որի իրականացումը ոչ բոլոր բանկերն են ապահովում (բանկի աշխատակիցները չեն այցելում շահառուի գտնվելու վայր և ոչ բոլոր բանկերն են ներդրել կամ կիրառում տեղեկատվատեխնիկական միջոցներ), ինչն էլ կրկին սկսել է հանգեցնել մարդու իրավունքների խախտումների:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ կենսաթոշակառուի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու հաստատումն ապահովելու համար օրենքով սահմանել կենսաթոշակների վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների համար հստակ պահանջներ կամ որոշակի խումբ անձանց դեպքում (հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, տեղաշարժման դժվարություններ ունեցող անձինք) իրավունքահեն միասնական պրակտիկա ապահովող բացառությունների կիրառման մեխանիզմներ:

5) Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման խնդիր

Չնայած ՀՀ կառավարության որոշմամբ[73] կանոնակարգվել է նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող երեխաների հաշվառման կարգը, այնուամենայնիվ նպաստ նշանակելու գործընթացում խնդիրներ առկա են:

[70] «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մաս
[71] «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մաս 11
[72] Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 94-97:
[73] ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 2141-Ն որոշում

Կառավարության որոշմամբ[74] նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված նոր ծնված երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները), եթե՝ նոտարական ակտով հաստատված է այդ երեխայի՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը: Ինչպես նախորդ, այնպես էլ 2022 թվականի բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պրակտիկայում նոտարները նման գործարք չեն կատարում, լավագույն դեպքում հաստատում են ծնողի հայտարարությունն այն մասին, որ երեխաների խնամքն իրականացնում է ծնողը (հայր կամ մայր), որպիսի փաստաթուղթն էլ կենսաթոշակային մարմնում հիմք չէ ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ ապահովել առկա իրավակարգավորումների շրջանակում իրավակիրառ պրակտիկայի դյուրին և պիտանի մեխանիզմներ, որոնք դժվարություններ չեն առաջացնի շահառուների համար:

6) ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդի փոխհատուցում

Դրամական ավանդի փոխհատուցման խնդրի վերաբերյալ Պաշտպանին բողոքներ հասցեագրվել են նաև 2022 թվականի ընթացքում:Կառավարությանը որոշմամբ[75] ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմը, որպես կանոն բարձրացվում է 1 տարով: Ուստի, տվյալ պարագայում անհասկանալի է տարիքային շեմի 1 և ոչ թե նախկինում իրականացվող 2 տարվա փոփոխության տրամաբանությունը:

Նախարարության դիրքորոշմամբ՝ ավանդների փոխհատուցման գործընթացը դինամիկ իրականացնելու և շահառուների «հերթերից» խուսափելու (դիմելու և վճարելու ժամանակահատվածը կրճատելու) նպատակով 2023 թվականին փոխհատուցում է տրամադրվելու մինչև 1940 թվականի հունիսի 30-ը ծնված տարեցներին (նախորդ տարիներին տարիքային շեմը բարձրացվել է 1 կամ 2 տարով՝ այս տարվա 6 ամսվա փոխարեն): Այսինքն, առկա իրողություններով պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել այս մասով սահմանափակել շահառուների թիվը: Փոխհատուցման գործընթացում մեկ այլ խնդիր է, որ եթե ավանդատուն մահացել է, ապա ավանդի փոխհատուցումը նրա ժառանգին վճարվում է ավանդատուի տվյալներն ավանդի փոխհատուցման վճարման ցուցակում ներառվելուց հետո:

Առանձնահատուկ կարևորվում է նաև անհայտ կորածների կամ զոհվածների ընտանիքների անդամներին ավանդի արտահերթ փոխհատուցում տրամադրելու իրավունքը: Սակայն Նախարարության դիրքորոշմամբ՝ այն ենթադրում է վերանայում խնդրո առարկա ծրագրի շրջանակներում սահմանված սոցիալական առաջնահերթությունները: Պետության ֆինանսական հնարավորությունների հաշվառմամբ խնդրո առարկա ծրագրի շահառուների կազմն ընդլայնելը ներկայումս նպատակահարմար չէ: Իսկ 2020 թվականին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով անհայտ կորածների կամ զոհվածների ընտանիքի անդամը կարող է հանդիսանալ ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, որպես զոհվածի ժառանգ՝ ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա:

[74] ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշում
[75] 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշման մեջ կատարված փոփոխություն

Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ նախատեսված չեն ավանդների փոխհատուցման հստակ միջանկյալ և վերջնական ժամկետներ: Ավանդի փոխհատուցումը պետք է իրականացվի հնարավոր կարճ ժամկետներում՝ հաշվի առնելով շահառուի տարեց լինելու հանգամանքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1.շարունակաբար ընդլայնել նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտային կազմի շրջանակը,

2.պարզեցնել ավանդների փոխհատուցման գործընթացը, օրենսդրությամբ սահմանել ավանդների վճարումն իրականացնելու կարճ ժամկետներ,

3.քայլեր ձեռնարկել օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով արտահերթ փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտային կազմի շրջանակում անհայտ կորածների կամ զոհվածների ընտանիքների անդամներին ընդգրկելու նպատակով:

7) Սոցիալական և ընտանեկան նպաստների իրավունքի դադարեցման խնդիրները

2022 թվականին Պաշտպանին են հասցեագրվել բազմաթիվ բողոքներ սոցիալական և ընտանեկան նպաստների իրավունքի դադարեցման վերաբերյալ:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության որոշմամբ[76] 2022 թվականի սեպտեմբերի 1-ից բարձրացել է կենսաթոշակների ու նպաստների չափը, ինչի արդյունքում գրանցվել է շահառուների եկամտի չնչին աճ, որն էլ հանգեցրել է բազմաթիվ ընտանիքների ընտանեկան կամ սոցիալական նպաստից զրկվելուն և վերջիններիս արդարացի դժգոհությունների: Ստացվում է, որ կենսաթոշակների 2000-3000 ՀՀ դրամով ավելանալու հետևանքով ընտանիքները զրկվել են նպաստի ավելի մեծ չափի գումարից:

Պաշտպանն անընդունելի է համարում գումարի նման անհամաչափ ավելացման հետևանքով շահառուի նպաստի իրավունքի դադարեցումը: Ավելին՝ սոցիալական կամ ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների եկամտի չնչին ավելացմամբ ոչ միայն զրկվել են ավելի մեծ չափի գումարից, այլ նաև որոշ արտոնություններից՝ պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնությունից, դեղորայքից և այլն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է նախատեսել այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնք կբացառեն եկամտի չնչին ավելացումով նպաստի իրավունքի դադարեցումը:

8) Անօթևան մարդկանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրները

76 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1489-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 24.08.2022թ. թիվ 1340-Ն որոշում:

2022 թվականին շարունակվել են Պաշտպանին հասցեագրվել բողոքներ անօթևան մնացած քաղաքացիներից, ինչպես նաև ահազանգեր պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, որոնք տեղեկություն են տրամադրել այս կամ այն քաղաքացու դրսում հայտնվելու և կացարանի կարիք ունենալու վերաբերյալ:

Անօթևան մնացած քաղաքացիների թվի աճի համար խթան են հանդիսանում նաև այն դեպքերը, երբ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշմամբ սահմանված կարգով քաղաքացիներին հատկացված բնակելի տարածություններում բնակվելու պայմանագրի ժամկետի ավարտով պայմանավորված քաղաքացիները ստիպված լքելու են կացարանը և բավարար ֆինանսական միջոցներ չունենալով հայտնվելու են դրսում:

Բացի այդ, համաձայն Որոշման N 2 հավելվածի 42-րդ կետի 3-րդ ենթակետի, կացարանի և սոցիալական ծառայությունների տրամադրման պայմանագրի ժամկետը կարող է երկարացվել մեկ անգամ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով: Կացարանի վարձակալության պայմանագրի կնքման առանձնահատկությունները սահմանված են Որոշման 6-րդ հավելվածով, որով պայմանագրով վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի չափը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման, որն ուժը կորցրել է:

Ներկա օրենսդրական կարգավորումների առկայության պայմաններում դրսում հայտնված մարդկանց կացարանի տրամադրումը գրեթե չի իրականացվում, այդ մասին վկայում են Պաշտպանին հասցեագրված բողոքներն ու ահազանգերը: Արդյունավետ մեխանիզմեր չգործելու պատճառով անօթևան մնացած քաղաքացուն օգնելու գործընթացը երկար ժամանակ է պահանջում: Հաճախ լինում են դեպքեր, երբ մարդը մի քանի օր շարունակ ապրում է դրսում՝ մինչև կացարանում տեղավորելը:

Չկան շուրջօրյա ծառայություններ դրսում հայտնված քաղաքացիներին հնարավոր սեղմ ժամկետում աջակցելու, մասնավորապես՝ կացարանով ապահովելու համար: Խնդրի լուծման ուղղությամբ Պաշտպանի աշխատակազմի և Երևանի թիվ 1 տուն ինտերնատի անօթևանների կացարանի միջև ակտիվ համագործակցություն է ձևավորվել, խնդիրները ներկայացվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, միասնական սոցիալական ծառայության տարածքային մարմիններին, հասարակական կազմակերպություններին:

Խնդիրն առավելապես սուր է հոգեկան առողջության հետ կապված խնդիր և վարակիչ հիվանդություններ ունեցող անօթևանների պարագայում, քանի որ նման առողջական խնդիրներ ունեցող մարդիկ իրավունք չունեն բնակություն հաստատել խնամքի հաստատություններում[77]:

Ողջունելի է, որ Նախարարության կողմից օրենսդրական փոփոխությունների առաջարկի նախագծի ներկայացումը, համաձայն որի որպես ժամանակավոր լուծում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց համար առաջարկվում է հատուկ (մասնագիտացված) կացարան (մինչև 180 օր)՝ մինչև տեղափոխումը շուրջօրյա խնամքի

[77] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2020թ. տարեկան հաղորդում էջ 153

հաստատություն: Նախագծի ընդունման դեպքում հնարավոր կլինի հստակեցնել կացարանի ծառայությունների տրամադրումը, որն ուղղված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անօթևան անձանց:

Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ կատարված առաջարկը՝

1. անհրաժեշտ է անհապաղ ընդունել «ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

2. սահմանել պայմանագրով վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի չափը հաշվարկում օրենսդրական մակարդակում:

2. Աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրներ

1) Աշխատանքից ազատվելիս վերջնահաշվարկի չկատարելը

2022 թվականին Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վերջնահաշվարկ չկատարելու դեպքերը աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում քիչ չեն կամ կատարվում է ոչ լրիվ ծավալով, ինչը գործատուի պարտականությունն է, այլ ոչ թե իրավունքը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսվում է իմպերատիվ պահանջ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում վերջնաժամկետի կատարման վերաբերյալ, մասնավորապես աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է գործատուների կողմից օրենսդրական իմպերատիվ պահանջների կատարելը, ուստի անընդունելի է համարում գործատուների մոտ ընդունված վերը նշված ոչ իրավաչափ պրակտիկան:

3) Աշխատավարձի չվճարման պրակտիկա

2022 թվականին ստացված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշխատավարձի չվճարման ոչ իրավաչափ պրակտիկան հիմնականում առկա է մասնավոր կազմակերպություններում, հատկապես այն պարագայում, երբ գործատուի և աշխատողի միջև պատշաճ աշխատանքային պայմանագիր կնքված չէ, ինչի արդյունքում գործատուները, դրսևորելով անբարեխիղճ վերաբերմունք, չեն վճարում աշխատավարձ:

Աշխատողին աշխատավարձ չվճարելու պրակտիկան դեռևս նախորդ տարիներից ի վեր գտնվում է Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

Աշխատողի աշխատավարձի, այդ թվում՝ օրենքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետներում այն ստանալու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և պաշտպանված է օրենքով, ինչն իր արտացոլումն է գտել ՀՀ աշխատանքային օրենսգրքում այնպիսի դրույթների ամրագրմամբ, ինչպիսիք են՝ աշխատավարձի վճարման ժամկետները, վճարումն այդ ժամկետներից ուշացնելու դեպքում գործատուի պատասխանատվությունը:

Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է մասնավոր ոլորտի կազմակերպություններում պարբերաբար (սիստեմատիկաբար) ստուգումների իրականացման նոր ընթացակարգերի մշակում՝ անօրինական աշխատանքի դեպքերի արձանագրման, վարչական վարույթի հարուցման և ոչ իրավաչափ պրակտիկայի վերացման նպատակով:

4) Պատշաճ ծանուցման հետ կապված խնդիրներ

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ չծանուցելու ոչ իրավաչափ պրակտիկան դեռևս շարունակվում է մնալ արդիական:

Հիմնական բողոքներն ուղղված են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողին չծանուցելուն կամ ծանուցելու ժամկետների չպահպանմանը, մասնավորապես ձևավորված է այն պրակտիկան, որ աշխատողները ծանուցվում են բանավոր կարգով և (կամ) աշխատանքից ազատելուց մեկ օր առաջ:

Այսպես, վերոնշյալ ոչ իրավաչափ և արատավոր պրակտիկան վերացնելու ուղղությամբ հարկավոր է գործատուներին նկատմամբ իրականացնել որոշակի վերահսկողություն և նախատեսել արտադատական կարգով պատասխանատվության եղանակներ (տուգանք, աշխատողին նախկին աշխատանքին վերականգնել) պատշաճ ծանուցման ժամկետների չպահպանման պարագայում:

5) Աշխատանքից ազատման մասին դիմում գրելուն հարկադրելը

2022 թվականին Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ աշխատանքից ազատման մասին դիմում գրելուն հարկադրելու վերաբերյալ:

Քաղաքացիները Պաշտպանին ներկայացրած բողոքներով տեղեկացրել են, որ որպես ազատման հիմնավորում ներկայացվել են ֆեյսբուք սոցիալական ցանցում կատարած գրառումը, մեկնաբանությունները, քաղաքական հավաքին մասնակցությունը փաստող լուսանկարը: Վերջինիս պնդմամբ՝ ֆեյսբուք սոցիալական ցանցի իր էջում նյութեր է հավանել և կիսվել ոչ աշխատանքային ժամերին, իսկ քաղաքական հավաքին մասնակցել է ոչ աշխատանքային օր՝ մայիսի 1-ին: Այնուամենայնիվ գործատուի պահանջով աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել:

Աշխատանքային իրավահարաբերությունները արտահայտվում են երկու կողմերի կամահայտնությամբ և համաձայնությամբ, հետևապես Պաշտպանն արձանագրում է, որ աշխատանքից ազատման դիմումը ևս պետք է լինի կողմերի ազատ կամքի դրսևորմամբ և (կամ) կողմերի համաձայնությամբ:

Այսպիսով, քաղաքացիների իրավագիտակցության մակարդակի ցածր լինելու պարագայում աշխատողների մեծամասնությունը բախվում է վերոշարադրյալ խնդրին, ուստի լիազոր՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պետք է ձեռնամուխ լինի իրազեկման և վերահսկողության աշխատանքների իրականացմանը:

6) Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցումը

Պաշտպանի ուշադրության ներքո է աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման հետևանքով պատճառված վնասի հատուցման չափի

ոչ բավարար լինելու հարցը[78]: Այն 2022 թվականին ևս արդիական է եղել: Աշխատավայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, Կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) և այլ նորմատիվ իրավական ակտերով: Որոշումը, որը սահմանում է աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման կարգը, վնասի հատուցման չափի փոփոխությունը պայմանավորել է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխությամբ, ինչը խնդրահարույց է: Քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել, որ աշխատանքային պարտականությունները կատարելիս դժբախտ պատահարի հետևանքով իրենց առողջությանը պատճառվել է վնաս և պատճառված վնասի համար 1990-ական թվականներից սկսած նշանակվել է վնասի հատուցում, սակայն վնասի հատուցման չափը ցածր է: Հատուցման գումարի չափը համարժեք չէ կենսապահովման կարիքների բավարարմանը: Վերջիններս շարունակաբար ունեն առողջությունը վերականգնելու կարիք, ինչը պահանջում է ֆինանսական ռեսուրսներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ բարձրացնել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579-Ն որոշմամբ սահմանված՝ աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցման չափը:

7) Հաշմանդամություն ունեցող օդաչուների վնասի հատուցման իրավունքի ապահովման խնդիր

2022 թվականին շարունակել է չլուծված մնալ աշխատավայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով «Հայկական Ավիաուղիներ» ՓԲԸ աշխատակիցների կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի իրացումը չապահովելու խնդիրը:

Խնդրի առնչությամբ «ՀՀ քաղավիացիայի հաշմանդամ օդաչուներ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների առաջին բողոքը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել դեռևս 2006 թվականին: Այս տարիների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանները հարցի լուծման առաջարկություններով տասնյակներով գրություններ են հասցեագրել համապատասխան պետական մարմիններին, կազմակերպել և նախաձեռնել են քննարկումներ:

2021 թվականի մարտի 16-ին Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ հաշմանդամություն ունեցող օդաչուների խախտված իրավունքների վերականգման հարցով, և 2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշմամբ Սահմանադրական դատարանը վիճարկվող՝ ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելը աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը: Պաշտպանի դիմումին

[78] Առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 90-91:

և Սահմանադրական դատարանի որոշմանն առավել մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդմամբ:

2022 թվականի ընթացքում Պաշտպանը գրություններ է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ պահանջելով տեղեկատվություն Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումից բխող՝ «Հայկական Ավիաուղիներ» ՓԲԸ աշխատակիցների փոխհատուցման իրավունքի իրացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների և դրանց ժամանակացույցի մասին: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ մասնակցել է խնդրի հնարավոր լուծումների վերաբերյալ քննարկումների:

Աշխատանքային քննարկումների ընթացքում առկա են եղել տարաձայնություններ վնասի հատուցման իրավունքի ժամանակահատվածի առումով: Այս տեսանկյունից կարևոր է արձանագրել, որ իրավունքի երաշխավորումը պետք է ենթադրի նաև դրա անընդհատություն, այսինքն՝ գործնականում դրա իրացման ապահովում ամբողջ այն ժամանակահատվածի համար, որը պետության կողմից կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ոչ իրավաչափորեն սահմանափակվել է: Ուստի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումն է, որ հաշմանդամություն ունեցող օդաչուներին վնասի հատուցումը պետք է տրամադրվի հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած այն պահից, երբ կազմակերպության կողմից հատուցման տրամադրումը դադարեցվել է:

Քննարկումների արդյունքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2022 թվականի ընթացքում մշակել և շրջանառել է մի քանի օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնք փոփոխություններ և լրացումներ են նախատեսել «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Այնուհետև այս նախագծերի փոխարեն շրջանառության մեջ է դրվել նոր՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ևս մինչ օրս չի ընդունվել: Բոլոր այս նախագծերն ուղղված են եղել հաշմանդամություն ունեցող օդաչուներին փոխհատուցման տրամադրման օրենսդրական հիմքերի ստեղծմանը:

Խնդիրն այն է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշման համաձայն՝ փոխհատուցման տրամադրումը չի կարող կատարվել պարզապես ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշման հիման վրա, և անհրաժեշտ է նախ Կառավարության վերոնշյալ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարել և սահմանել փոխհատուցման տրամադրման կարգը, որի հիման վրա կապահովվի անձանց իրավունքների իրացումը:

Ընդունելի համարելով հարցի իրավական տեսանկյունից լուծման նման տարբերակը, միաժամանակ, Պաշտպանը մտահոգիչ է համարում, որ Սահմանադրական դատարանի վկայակոչված որոշման ընդունումից հետո մինչ օրս՝ ավելի քան մեկ տարի անց, չի ապահովվել անձանց իրավունքի իրացումը: Պաշտպանի աշխատակազմն օրենքով սահմանված կարգով կարծիք է ներկայացրել շրջանառված բոլոր նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև բանավոր քննարկումների ընթացքում մշտապես ընդգծել դրանց ընդունման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում Պաշտպանի աշխատակազմը մշտական կապ է պահպանել «ՀՀ քաղաքացիական ավիացիայի հաշմանդամ օդաչուներ»

հասարակական կազմակերպության անդամների հետ՝ նրանց ներկայացնելով ՀՀ պետական կառավարման մարմինների հետ քննարկումների և վերոնշյալ նախագծային գործընթացների զարգացումները: Պաշտպանը նաև անձամբ հանդիպել է որոշ օդաչուների հետ: Հաշմանդամություն ունեցող օդաչուները մշտապես հայտնել են գործընթացի ձգձգման հետ կապված իրենց անհանգստությունները:

Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ «Հայկական Ավիաուղիներ» ՓԲԸ-ի հաշմանդամություն ունեցող նախկին աշխատակիցները մեծահասակ են, ունեն առողջական խնդիրներ, նրանցից ոմանք այս տարիների ընթացքում մահացել են:

Դեռևս 2018 թվականին «ՀՀ քաղաքացիական ավիացիայի հաշմանդամ օդաչուներ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հասցեագրած գրությամբ հայտնել են, որ վերջիններիս թիվը նվազել է՝ 132-ից դառնալով 4279: Դրանից հետո նույնպես օդաչուները պարբերաբար հաղորդել են մահվան նոր դեպքերի մասին: Պաշպանի աշխատակազմ ներկայացված վերջին տեղեկությունների համաձայն՝ ներկայումս օդաչուների թիվը հասել է մոտ 20-ի:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ առավել կարևոր է անձանց փոխահատուցման տրամադրումը հնարավորինս կարճ ժամկետներում: Նման պայմաններում առավելապես անընդունելի է խնդրի արդյունավետ լուծման շուրջ աշխատանքների ձգձգումը և մինչ օրս անձանց իրավունքների իրացումը չապահովելը՝ հատկապես նկատի ունենալով, որ իրավասու մարմինն ունեցել է անհրաժեշտ միջոցներ ձեռարկելու և խնդրի լուծումը 2022 թվականի ընթացքում ապահովելու համար բավարար ժամանակ և ռեսուրսներ:

Պետք է նկատի ունենալ, որ նշված անձինք իրենց առողջությանը պատճառված վնասի հատուցմանն են սպասում պետությունից արդեն 17-րդ տարին:

3. Առողջության պահպանման իրավունք

1) Բժշկական օգնության հասանելիության և մատչելիության խնդիր

2022 թվականին Պաշտպանին բողոքներ են եղել անհրաժեշտ բուժօգնությունը թանկարժեք լինելու և բավարար ֆինանսական միջոց չունենալու պատճառով բուժօգնության չդիմելու կամ դիմելու պարագայում մերժվելու վերաբերյալ: Վերջիններս դիմելով Պաշտպանին՝ խնդրել են աջակցել ցուցված բուժօգնությունն անվճար ստանալու հարցում: Բողոքներ են ներկայացրել ինչպես սոցիալական որևէ կարգավիճակ ունեցող, այնպես էլ այդպիսի կարգավիճակ չունեցող անձինք:

Խնդրի լուծումը առողջության համապարփակ բժշկական ապահովագրության համակարգ ունենալն է: Պետության կողմից առաջարկվող փաթեթը պետք է լինի իսկապես որակյալ և ապահովի մարդու առողջության համար անհրաժեշտ հիմնական ծախսերը: Քաղաքացին չպետք է զրկվի բուժօգնություն ստանալու հնարավորությունից ֆինանսական միջոց չունենալու պատճառով:

2022 թվականին ստացվել են բողոքներ բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններ ունեցող քաղաքացիներից, ովքեր հայտնել են իրենց մտահոգությունն ախտորոշիչ

[79] 2020 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 123-124, հասանելի՝ https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf (17.01.2023թ. դրությամբ)

հետազոտությունները պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով չիրականացվելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝
1. քայլեր ձեռնարկել չարորակ նորագոյացություններ ունեցող բոլոր քաղաքացիների ախտորոշիչ հետազոտությունները (այդ թվում՝ ամբուլատոր պայմաններով) պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով իրականացնելու ուղղությամբ,
2. հնարավոր սեղմ ժամկետում ներդնել Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության համակարգ:

2) Անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության հետ կապված խնդիր

Պաշտպանը 2022 թվականի ընթացքում բողոքներ է ստացել մասնագիտացված բժշկական օգնություն չստանալու վերաբերյալ: Քաղաքացիները նշել են, որ ըստ բժշկական կազմակերպությունների՝ մերժումը կապված է պետության կողմից տրամադրված գումարներն սպառված լինելու հետ և առաջարկվել է հերթագրում կամ այլ բժշկական հաստատություն դիմելու: Նրանց պնդմամբ՝ հերթագրման դեպքում իրենց բժշկական հետազոտության ժամկետ է նշանակվում դիմելուց 3-4 ամիս անց: Նշված անձինք, որպես կանոն, խնդրում են Պաշտպանի աջակցությունն անհրաժեշտ բուժօգնությունը հնարավոր շուտ ստանալու հարցում: Պատճառները տարբեր են նշվել. հիվանդության, մասնավորապես օնկոլոգիական հիվանդության բարդացում և այլն: Հերթագրման երկար ժամկետների պատճառով անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող պացիենտն ստիպված գերադասում է վճարովի սկզբունքով արտահերթ բուժօգնությունը: Իսկ պացիենտին այլ բժշկական կազմակերպություն ուղղորդելը խախտում է նրա ազատ ընտրության իրավունքը, քանի որ նա ունի բոլոր հնարավորություններն իմանալու և համապատասխան տեղեկատվության հիման վրա իր սեփական ընտրությունը կատարելու իրավունք, ինչը սահմանված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ «Հիվանդների իրավունքների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով[80]:

2022 թվականին նույնպես արձանագրվել են բողոքներ, որ անհետաձգելի միջամտություն պահանջող շատ դեպքեր պետական հոգածության շրջանակներում չեն՝ հաստատված ցանկերում ներառված չլինելու պատճառով: Օրինակ՝ սրտի սուր ինֆարկտների դեպքում անոթների ստենտավորումը, որի վերաբերյալ պարբերաբար ստացվում են բողոքներ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝
1. բնակչության անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված բնակչության համար հատկացվող պետական ֆինանսավորման ծավալներն ավելացնել հերթագրման դեպքում բժշկական ծառայությունն ավելի շուտ մատուցելու նպատակով
2. բժշկական ծառայությունների կազմակերպման չափորոշիչները վերանայել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցելու նպատակով:

3) Բուժօգնությունը պոլիկլինիկաներում
2022 թվականին Պաշտպանին առողջության առաջնայինն պահպանման ծառայությունների կապակցությամբ հայտնած դժգոհությունները հիմնականում վերաբերել են դեղեր չտրամադրելուն, տրամադրվող դեղերի որակին, բժիշկների՝ պացիենտների նկատմամբ անհարգալից և կոպիտ վերաբերմունքին, ինչպես նաև պոլիկլինիկաներում մարդկանց հերթերին:

[80] https://ec.europa.eu/health/ph_overview/co_operation/mobility/docs/health_services_co108_en.pdf

Նախորդ տարում նույնպես արձանագրվել են դեպքեր, երբ քաղաքացիները նշել են, որ պոլիկլինիկաներ չեն դիմում, ինչը հիմնականում պայմանավորված է բժիշկներին չվստահելով, ինչպես նաև տեխնիկական թույլ զինվածությամբ, մատուցվող ծառայությունների փոքր շրջանակով:
Ստացվել են բողոքներ նշանակված դեղերի համարժեքները տրամադրելու դեպքում դրանց որակի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝
1.բժշկական ծառայությունների սպասարկման որակի և հերթերից խուսափելու նպատակով պոլիկլինիկաներում ուժեղացնել վերահսկողությունը,
2.ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող և պոլիկլինիկաներին բաշխվող դեղերով ապահովման գործընթացի վերահսկողությունն ուժեղացնել,
3.պացիենտների նկատմամբ վարքագծային կանոնները խախտելու դեպքում ձեռնարկելել պատասխանատվության միջոցներ բժիշկների նկատմամբ,
4.շարունակական ընդլայնել պոլիկլինիկական ծառայություններն ու տեխնիկական զինվածությունը:

4. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի սահմանափակելը

1) Ներկայում համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումներով՝ քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար մի շարք տարածքներ ձեռքբերող կազմակերպություններին օտարելու, սակայն այդ կազմակերպությունների կողմից օրենսդրության անկատարության հետևանքով տարածքների նախկին բնակիչներին համարժեք փոխհատուցում չտրամադրելու հարցը: Բարձրացված հարցով 2022 թվականին պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, օրինակ, Երևանի Փոքր Կենտրոնում իրացված անշարժ գույքի դիմաց որպես հրաժարագին 2017 թվականին 1 քմ-ի համար վճարվել է 390 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի հաշվարկով փոխհատուցում, մինչդեռ, այլ անձանց պատկանող նույն տարածքում իրացված գույքի դիմաց վճարվել է 1 քմ-ի համար 1096 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ փոխհատուցում: «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում (…) համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:» Նշվածը վկայում է, որ ձեռքբերող կազմակերպությունները իրավատերերի օտարված բնակելի տարածքների դիմաց, խախտելով օրենքի պահանջը, նույն տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գոտում գտնվող բնակելի տարածքի դիմաց վճարել են տարբեր չափերի և շուկայական գնին ոչ համարժեք փոխհատուցում:

Հարկ է նշել, որ օրենսդրորեն սահմանված չեն պետության միջամտության համապատասխան մեխանիզմներ որպես հրաժարագին կնքված գործարքներն արտադատական կարգով վերանայելու և ըստ այդմ արդարացի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝
1. փոփոխել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այս հոդվածում ևս ամրագրելով «նախնական համարժեք» փոխհատուցում եզրույթը,

2. Նշված հողվածից հանել պայմանագրով (կողմերի համաձայնությամբ) համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն և պատասխանատվությունը որոշելու հնարավորությունը,
3. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները,
− կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանել պետության սուբսիդիար պատասխանատվություն՝ այն տարածելով ոչ միայն ձեռքբերող կազմակերպությունների և շահառու անձանց միջև ապագայում, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ,
− սահմանել պետական վերահսկողության մեխանիզմներ սեփականության օտարման գործընթացում ձեռքբերողի կողմից շահառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ՝ նախատեսելով համապատասխան պատասխանատվության միջոցներ,
− «փոխհատուցում» բառը ցանկացած հողվածում օգտագործել «նախնական համարժեք» բառերի հետ միասին, այն տարածելով նախկինում ծագած, սակայն մինչ օրս չկատարված իրավահարաբերությունների նկատմամբ:

2) «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցումը

2022 թվականի ընթացքում նույնպես արձանագրվել են «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած կամ զբաղեցրած անձանց հողատարածքներն այլ նպատակային նշանակության համար վերցնելու և փոխհատուցում չտրամադրելու հարցի վերաբերյալ բողոքներ, որոնք վերաբերել են առանց վերջիններիս գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու, իրենց հատկացված հողամասերը Երևանի քաղաքապետարանի կողմից աճուրդային կարգով առանձին անհատների օտարելուն: Հարկ է նշել, որ 2021 թվականի նոյեմբերի 17-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-353-Ն օրենքը, որով Երևանի քաղաքապետին է պատվիրակվել մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների, Երևանի քաղաքային խորհուրդների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, դրանք ուժը կորցրած ճանաչելու լիազորությունները:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝
1. նշված օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հողամասերը վաճառելու դեպքում հաշվի առնել նշված անձանց գնման նախապատվության իրավունքը, իսկ այդ հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմություն ունեցող անձանց տրամադրել այլ հողամասեր կամ հատուցել նրանց վնասները,
2. համապատասխան մարմնի կողմից (տվյալ դեպքում՝ ՀՀ կառավարության) փոխհատուցել Դալմայի այգիների վարձակալների և (կամ) հողօգտագործողների կրած վնասները:

13. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Պաշտպանի աշխատակազմը հաշվետու տարում շարունակել է ակտիվ մասնակցությունը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի աշխատանքներին, մասնավորապես՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի

կազմակերպման 2023-2025 թվականների ազգային ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի մշակմանը:

Ծրագրի և դրա իրականացման ժամանակույցի մշակման շրջանակներում, ի թիվս այլ առաջարկությունների, Պաշտպանը ներկայացրել է առաջարկություններ՝ ուղղված ԳԱԾ մշտադիտարկման և գնահատման մեխանիզմի բարելավմանը: Մասնավորապես՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի՝ 2022 թվականի Հայաստանի վերաբերյալ երրորդ զեկույցում մատնանշված մշտադիտարկման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությունը, այդ թվում անկախ ազգային զեկուցողի նախատեսմամբ[81], Պաշտպանն առաջարկություն է ներկայացրել ներդնելու մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հարցերով Ազգային զեկուցողի ինստիտուտը և վերջինիս իրավասությունը վերապահել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Այս համատեքստում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվել է միջազգային փորձի համապարփակ ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքներով անդրադառնալով նման մեխանիզմի՝ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության իրավասությանը վերապահելու միջազգային լավագույն և իրավամբ հաջողված փորձին, կարող ենք առանձնացնել Ֆինլանդիայի և Սերբիայի մարդու իրավունքների պաշտպանների հաստատությունների կազմում գործող ազգային զեկուցողների ինստիտուտներին: Իսկ ահա ներպետական մակարդակում նման անկախ ազգային զեկուցողներ առկա են Եվրոպական մի շարք երկրներում (Բելգիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ):

«Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների՝ ՀՀ կողմից իրականացման լույսի ներքո, անհրաժեշտ է օրենսդրական (ոլորտը կարգավորող ներպետական իրավական ակտում և Պաշտպանի մասին ՀՀ սահմանադրական օրենքում) փոփոխությունների իրականացմամբ նախատեսել ազգային զեկուցողի ինստիտուտի ներդրումը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը օժտելով պետական հաստատությունների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ ուղղված գործողությունները մշտադիտարկելու իրավասությամբ:
ԳԾ-ի քննարկմանը նվիրված ՀՀ փոխվարչապետի մոտ կայացած հանդիպման արդյունքներով ԱՄՀՆ ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել մանրամասն քննարկելու սույն ինստիտուտի ներդրման հարցը 2023թ. ընթացքում և նախաձեռնելու համապատասխան իրավական գործընթացները:

Պաշտպանի աշխատակազմը շարունակել է ընդլայնել համագործակցությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարում մասնագիտացված միջազգային կազմակերպությունների հետ: Այսպես. 2022թ. սեպտեմբերի 27-ին Մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել է Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման դեմ պայքարի փորձագիտական խմբի (GRETA) առաջին փոխնախագահ Անտոանետա Վասիլևայի և փորձագիտական խմբի անդամների հետ[82]: Հանդիպման շրջանակներում քննարկվել են Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման դեմ պայքարի իրավիճակը, անդրադառնալով օրենսդրական կարգավորումներին, մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագրի իրականացման ընթացքին, ինչպես նաև նոր Ազգային գործողությունների ծրագրին, հանցագործության բացահայտման գործընթացի շրջանակներում իրավապահ

[81] Հասանելի է https://rm.coe.int/greta-third-evalution-report-on-armenia/1680a6b4ba հղումով, էջ 42:
[82] https://ombuds.am/am/site/ViewNews/2357

համակարգի արձագանքման մեխանիզմներին և այս ոլորտում Պաշտպանի գործունեությանը:

Հոկտեմբերի 31-ին կայացած ԱՄՆ ՄԶԳ Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի ղեկավար, դեսպան Էրին Էլիզաբեթ ՄըքԻի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցում Պաշտպանի հաստատության կարողությունների զարգացման կարևորությունը և պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի շրջանակներում աջակցելու Պաշտպանի հաստատության գործունեությունը այս ոլորտում:[83]

Դեկտեմբերի 6-ին Պաշտպանը հանդիպել է ԱՄՆ Պետդեպարտամենտի Թրաֆիքինգի դեմ պայքարի և մշտադիտարկման գրասենյակի ներկայացուցիչների հետ և քննարկել Հայաստանի կողմից թրաֆիքինգի դեմ պայքարի վերջին տարիների ձեռքբերումներն ու մարտահրավերները: Գրիգորյանը զրուցակիցներին է ներկայացրել Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի մանդատն ու կիսվել թրաֆիքինգի կանխարգելման, զոհերի պաշտպանության, արդյունավետ հետապնդման ոլորտներում եղած իրավիճակի վերաբերյալ հաստատության հետևություններով:[84]

14. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1. Ոլորտի ընդհանուր բնույթի խնդիրներն ու Պաշտպանի նախաձեռնությունները

Ապաստան հայցողների և փախստականների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանների բոլոր տարեկան զեկույցներում, այդ թվում նաև ոլորտին վերաբերող արտահերթ զեկույցի շրջանակներում: 2022 թվականին ևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են իրականացվել ներկայացված անձանց իրավունքների պաշտպանության ապահովմանը միտված աշխատանքներ:

Անհատական բողոքների քննարկման, թեժ գծին ստացված հեռախոսազանգերի և հաղորդագրությունների, մշտադիտարկման այցերի ընթացքում իրականացված առանձնազրույցների ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից ապաստան հայցողներին և փախստականներին են ներկայացվել թե՛ ապաստանի վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական կարգավորումները, և թե՛ Պաշտպանի և այլ պատասխանատու մարմինների իրավասությունների շրջանակը:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմում քննարկվել է թվով 34 բողոք, ինչպես նաև պարզաբանումներ են ներկայացվել Պաշտպանի աշխատակազմի էլեկտրոնային հասցեին և հեռահաղորդակցության մյուս միջոցներին ստացված ապաստան հայցելու իրավական կարգավորումների վերաբերյալ հարցումներին ի պատասխան: Ներկայացված բողոքները առավելապես վերաբերել են ապաստան հայցելու ժամկետներին, դրամական օգնության տրամադրմանը (այդ թվում դրամական օգնության՝ կանխիկ տրամադրմանը, գումարը չբավարարելուն, սեղմ ժամկետում տրամադրելուն), կացարանում տեղակայման խնդիրներին, գտնվելով Հայաստանում այլ երկրում

[83] https://ombuds.am/am/site/ViewNews/2392
[84] https://ombuds.am/am/site/ViewNews/2431

ապաստան հայցելուն, կամ գտնվելով այլ երկրում՝ Հայաստանում ապաստանի տրամադրման դիմում ներկայացնելուն:

Պաշտպանի աշխատակազմի ներգրավմամբ իրենց դրական հանգուցալուծումն են ստացել անհատական բողոքների շրջանակում բարձրաձայնված այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ վարչական վարույթի իրականացման ժամկետների պահպանումը, վարչական վարույթին ներկայացվող պահանջների և սկբունքների ապահովումը, օրենսդրությամբ սահմանված բժշկական օգնության տրամադրման ապահովումը: Պաշտպանի աշխատակազմը չի կարողացել հանգուցալուծում տալ այնպիսի խնդիրների, որոնք չեն վկայում իրավունքների խախտման մասին, սակայն արդյունք են պատկան մարմնի ռեսուրսների սակավության:

Հարկ է նշել, որ հաշվետու տարում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցչության և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են սահմանային մոնիթորինգային այցեր ՀՀ Սյունիքի և Շիրակի մարզեր, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան:

Իրականացվել է թվով 3 վերապատրաստման դասընթաց ՀՀ պետական սահմանի պահպանության ծառայություն իրականացնող ԱԱԾ սահմանապահ զորքերի թվով 60 ծառայողների և սպայական անձնակազմի համար[85]: Վերապատրաստման դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվել Հայաստանում ապաստանի ընթացակարգին, միջազգային պաշտպանության մեխանիզմներին և վերաբերելի օրենսդրական կարգավորումներին:

Վերապատրաստման դասընթացի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ներկայացրել է Պաշտպանի լիազորությունները, գործունեության երաշխիքները, դիմելու կարգը, բողոքների քննարկման ընթացակարգը, ինչպես նաև փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելիք գործողություններն ու ծրագրերը:

Իրականացվել են մոնիթորինգային այցեր «Արմավիր» և «Աբովյան»[86] քրեակատարողական հիմնարկներ, ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն (Հատուկ կացարան):

«Արմավիր» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներ իրականացված այցերի ընթացքում առանձնահատուկ մոնիտորինգի է ենթարկվել անազատության մեջ գտնվող մտահոգության ներքո գտնվող անձանց պահման վայրերը: Այցերի ընթացքում առանձնազրույցներ են իրականացվել անազատության մեջ գտնվող ապաստան հայցող, փախստական և օտարերկրացի հանդիսացող քաղաքացիների հետ, գույքագրվել են վերջիններիս իրավունքների իրացման հիմնական խնդիրները, ինչպես նաև ներկայացվել են հիմանական իրավունքների և ազատությունների շրջանակը, Պաշտպանի իրավասությունները և հաստատությանը դիմելու ընթացակարգը: Առանձնազրույցներ են անցկացվել քրեակատարողական հիմնարկների ղեկավար անձնակազմի հետ, քննարկվել այն խնդիրները, որոնց առերեսվում են վերջիններս, ինչպես նաև այն բացերը որոնք արձանագրվել են այցի ընթացքում: Արձանագրված խնդիրները մեծամասամբ վերաբերում են ապաստան հայցող անձանց և փախստականների հետ իրենց հասկանալի լեզվով

[85] Դասընթացները իրականացվել են մայիսին՝ «Զվարթնոց» («Զվարթնոց» օդանավակայան) սահմանային անցման կետի, հունիսին՝ Հայաստան-Ադրբեջան սահմանի, հուլիսին՝ հայ-վրացական սահմանի «Բավրա» («Նինոծմինդա») և «Գյումրի» («Շիրակ» օդանավակայան) սահմանային անցման կետերի՝ ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների և սպայական անձնակազմի համար:
[86] «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ այցը իրականացվել է 2022թ. հունիսին, իսկ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ օգոստոսին:

հաղորդակցության ապահովմանը, առողջության պահպանման իրավունքի պատշաճ իրականացմանը:

Պաշտպանի աշխատակազմ ստացված թեժ գծի ահազանգով իրականացվել են արագ արձագանքման այց: Հոկտեմբերի 27-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծին ստացված ահազանգից պարզ էր դարձել, որ Կուբայի քաղաքացիները տարաբնույթ հանգամանքներով պայմանավորված մի քանի օր է գտնվում են «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում (այսուհետ՝ Տարանցիկ գոտի):

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները այցի ընթացքում առանձնազրույց են իրականացրել Կուբայի թվով 6 (վեց) և Հնդկաստանի թվով 5 (հինգ) քաղաքացու հետ, պարզելով վերջիններիս՝ Տարանցիկ գոտում հայտնվելու պատճառները, ժամկետները, գույքագրելով վերջիններիս կողմից բարձրաձայնված խնդիրները:

Իրականացված առանձնազրույցների արդյունքներով պարզվել են հետևյալ հանգամանքները. ՀՀ մուտքի արտոնագրի մերժման հիմքով Կուբայի քաղաքացի 1 անձ սեպտեմբերի 21-ից գտնվում է Տարանցիկ գոտում, մյուս 5 անձինք՝ 3-5 օր: Վերջիններս Պաշտպանի ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ իրենց հասկանալի լեզվով չեն ներկայացվել մուտքի արտոնագրի մերժման պատճառները, որևէ հաղորդակցություն չի իրականացվել իրենց հասկանալի լեզվով, չի ներկայացվել նաև ապաստան հայցելու հնարավորության և դրա իրականացման գործընթացներին առնչվող տեղեկատվությունը, անձնական միջոցների բացակայության պայմաններում իրենց ծագման երկիր վերադառնալու անհնարինությամբ պայմանավորված՝ վերջիններիս չի տրամադրվել կացարան, նրանք օրեր շարունակ գիշերել են Տարանցիկ գոտու նստարանին, չի տրամադրվել սնունդ և առաջին անհրաժեշտության իրեր, անձնական հիգիենայի պահպանման պահանջները չեն բավարարվել:

Այցի արդյունքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների օժանդակությամբ իրացվել են օտարերկրացիների որոշ իրավունքներ (իրավունքների և ազատությունների վերաբերյալ՝ հասկանալի լեզվով պարզաբանումների տրամադրում, առաջին բժշկական օգնության տրամադրում, անձնական իրերին հասանելիության տրամադրում), իսկ որոշ իրավունքների իրացման և համակարգային խնդիրների վերաբերյալ հարցադրումներով գրություն է ուղարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին:

Հուլիսի 7-ին Մարդու իրավունքների պաշտպանը չհայտարարված այց է իրականացրել Միգրացիոն ծառայության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ[87]: Այցի ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ. մասնավորապես

1) Կացարանում ընդհանուր օգտագործման կամ այլ հասանելի վայրերում բացակայել են ապաստան հայցողների իրավունքների, այդ թվում՝ Պաշտպանին դիմելու իրավունքի վերաբերյալ իրազեկման նյութերը,
2) Կացարանում բնակվող անձանց հատուկ սննդի տրամադրման հարցը դեռևս ակտուալ է,
3) Կացարանի, հատկապես՝ ընդհանուր օգտագործման խոհանոցի սանիտարահիգիենիկ պայմանները ևս վատ վիճակում են եղել. մասնավորապես, այցի ընթացքում արձանագրվել է խոհանոցում տարատեսակ միջատների առկայություն, որոնք հասանելիություն են ունեցել նաև սննդամթերքին և պատրաստված սնունդին,
4) Ապաստան հայցողներին կացարանում տեղավորելիս Կացարանի շենքային անբավարար պայմանները թույլ չեն տալիս հաշվի առնել նրանց ընտանիքի անդամների թիվը, սեռը, տարիքը և այլ կարևոր հանգամանքներ,

[87] https://ombuds.am/am/site/ViewNews/2290

5) Կացարանն ամբողջովին հարմարեցվածված չի եղել հաշմանդամություն և տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց բնակեցման համար անհրաժեշտ պայմաններին:
6) Ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված անձանց լոգանքի կազմակերպման սահմանափակ հնարավորությունները՝ հատկապես ամառվա ամիսներին, նույնպես ակտուալ են դեռևս,
7) Կացարանում առկա չեն եղել հաղորդակցության համապատասխան տեխնիկական սարքավորումներ, որոնցից ապաստան հայցող անձինք կարող էին օգտվել սեփական հեռահողարդակցության սարքերի բացակայության դեպքում,
8) Առանձնազրույցի ընթացքում Կացարանի տնօրինությունը, որպես առաջնահերթ խնդիր, նշել է Կացարանի անվտանգության ապահովման հարցը. Կացարանի անվտանգությունը ապահովվում է պահակակետի միջոցով, որը, սակայն, բավարար չէր Կացարանի անվտանգության ապահովման հարցերի կարգավորման համար,
9) Ապաստան հայցողների՝ դեռևս շահագործման չհանձնված նոր կացարանի հարցը ևս օրակարգային է, քանի որ այն մասամբ կհանգուցալուծեր վերը ներկայացված ծ հիմնախնդիրները:

Խնդրահարույց է Հատուկ կացարանի սանիտարահիգիենիկ վիճակը, և այս համատեքստում ևս Պաշտպանը քանիցս դիմել է պատկան մարմնին պարբերաբար սանացիոն աշխատանքների իրականացնելու վերջինիս պատշաճ վիճակում՝ նկատի ունենալով խնդիրները, որոնց կարող է հանգեցնել նման իրավիճակը:

Հուլիսի 15-ին Պաշտպան մասնակցել է «Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում՝ ի աջակցություն Կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգի» ծրագրի շրջանակներում անցկացվող «Միջազգային պաշտպանության մասին օրենսդրության համապարփակ բարեփոխում» խորագրով շահագրգիռ կառույցների մեկնարկային հանդիպմանը՝ հանդես գալով բացման խոսքով: Պաշտպանն իր ելույթում ի թիվս այլնի անդրադարձել է մեկնարկող օրենսդրական փոփոխություններին, անդրադառնալով այնպիսի խդիրների հասցեագրման անհրաժեշտությանը, ինչպիսիք են միջազգայնորեն ճանաչված չվերադարձելիության սկզբունքի՝ ներպետական իրավական համակարգում ամրագրմանը, բոլոր պետական մարմինների, այդ թվում սահմանապահ զորքերի, ոստիկանության, քրեակատարողական վարչակազմի կողմից անվճար թարգմանության ինստիտուտի օրենսդրական ու գործնական ապահովմանը:[88]

Թե՛ սահմանային անցման կետերում, թե՛ Հատուկ կացարանում, թե՛ քրեակատարողական հիմնարկներում, և թե՛ այլ պետական մարմիններում շարունակում է խնդրահարույց լինել ապաստան հայցողներին իրենց հասկանալի լեզվով իրավունքների և պարտականությունների ներկայացման, պատշաճ թարգմանության տրամադրման հարցը: Այս խնդրի վերաբերյալ ևս Պաշտպանը թե՛ պատկան մարմինների հետ առանձին հանդիպումների, թե՛ ոլորտին վերաբերող խնդիրների լուծմանը ուղղված հրապարակային ելույթների, զեկույցների շրջանակում անդրադարձ է կատարում: Այս իրավունքի իրացումը անկյունաքարային է, և շատ կարևոր է այն պետության անմիջական ներգրավմամբ հանգուցալուծելը, կամ գոնե մինմալիզացնել թարգմանիչ ունենալու իրավունքի իրացման խոչընդոտները:

Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ ապաստան հայցող անձանց թիվը շուրջ 70%-ով ավելացել է. մասնավորապես, համաձայն ՀՀ միգրացիոն ծառայության կողմից տրամադրված տվյալների 2022 թվականին ներկայացվել է շուրջ 819 ապաստան հայցելու դիմում (2021 թվականին այդ թիվը 260-նն էր), որոնցից թվով 263 անձի տրամադրվել է կարգավիճակ (2021 թվականի նկարգավիճակ տրամադրվել է թվով 78 անձի): Ապաստան

[88] https://ombuds.am/am/site/ViewNews/2295

ստանալու դիմում ներկայացրած քաղաքացիների գրեթե կեսը ուկրաինացիներ են (429) եղել, որոնցից 206–ը 2022 թվականի նոյեմբերի դրությամբ ստացել են կարգավիճակ: Նման պայմաններում օբյեկտիվ անհրաժեշտություն է ՀՀ միգրացիոն ծառայությանը տրամադրվող ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների ավելացումը:

Շարունակում է չլուծված մնալ փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշները չբավարարող, սակայն չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի հարցը: Այս համատեքստում կարևոր է փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակներից զատ՝ օրենդրական փոփոխության իրականացման մակարդակում նախատեսել այլ կարգավիճակի սահմանում այն անձանց համար, ովքեր չեն բավարարում վերը նշված երկու կարգավիճակներին ներկայացվող միջազգային իրավական չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց երկիրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների և հասարակական կարգի զանգվածային խախտումների հետևանքով, ինչպես նաև այն անձանց, որոնք հարևան երկրներից են եկել և ապաստան են փնտրում բնական աղետներից:

2022 թ. սեպտեմբերի 16-ին ՄԱԿ ՓԳՀ-ի և Եվրոպայի խորհրդի (ԵԽ) երևանյան գրասենյակի կողմից համատեղ ազդարարված Հայաստանի համատեքստին հարմարեցված «Ապաստան և մարդու իրավունքներ» թեմայով առցանց դասընթացին, որը Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության եվրոպական ծրագրի (HELP) մասն է կազմում, իր մասնակցությունն է ցուցաբերել և հաջողությամբ ավարտել Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը:

2022 թվականի նոյեմբերին ՌԴ մարդու իրավունքների հանձնակատարի կողմից հրապարակված «Միգրացիայի ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությունը» վերնագրով թիվ 13 հոդվածաշարում հրապարակվել է Պաշտպանի կողմից ներկայացված «Իրավունքի գերակայությունը՝ որպես փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ելակետ» վերտառությամբ հոդվածը:

2. Պաշտպանի գործունեությունը Արցախից Հայաստան բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ

Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախից Հայաստան բռնի տեղահանված անձանց իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ կարիքների պատշաճ գնահատման հարցերը Պաշտպանի առաջնահերթ ուշադրության ներքո են: Այս նպատակով ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարվելու օրվանից սկսած իրականացվել և շարունակվում է իրականացվել գրավոր և բանավոր բողոքների քննարկում, դիմումների ուսումնասիրություն, սեփական նախաձեռնությամբ հարցերի քննարկում և այլն:

Բացի դրանից, Արցախից Հայաստան բռնի տեղահանված անձանց հետ պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են ինչպես անհատական, այնպես էլ համակարգային բնույթի հարցեր: Այդ հարցերի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում կատարվել է բազմակողմանի և մանրամասն ուսումնասիրություն, որի շրջանակում Պաշտպանը Միգրացիոն ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն), ի թիվս այլ հարցադրումների, պահանջել է պարզաբանումներ նաև հետևյալ հարցերի վերաբերյալ.

1) արդյո՞ք որպես ոլորտի քաղաքականության պատասխանատու Ծառայությունը նախատեսում է փախստականի և ապաստան հայցողի կարգավիճակներից բացի, օրենսդրական փոփոխությունների միջոցով նախատեսել այլ կարգավիճակ, այն անձանց համար ովքեր չեն բավարարում վերը նշված երկու կարգավիճակներին ներկայացվող միջազգային իրավական չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց բնակության վայրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, մարդու իրավունքների զանգվածային խախտումների հետևանքով և այլն[89],
2) արդյո՞ք նախատեսվում է օրենսդրական փոփոխությունների միջոցով այդպիսի անձանց համար սահմանել որևէ իրավական կարգավիճակ,
3) օրենսդրական փոփոխությունների կատարման ինչպիսի՞ մոտավոր ժամկետների մասին կարելի է խոսել:

Բարձրացված հարցադրումների վերաբերյալ Ծառայությունը հայտնել է, որ 2022 թվականի հուլիսի 15-ին տեղի ունեցավ Եվրոպական միության և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից համաֆինանսավորվող «Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում՝ ի աջակցություն Կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգի» ծրագրի շրջանակներում միջազգային պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապարփակ բարեփոխման նախաձեռնության մեկնարկային միջոցառումը: Այդ շրջանակում իրականացվելիք օրենսդրական փոփոխությունների մշակման նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ՝ բոլոր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Եվրոպական միության և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից համաֆինանսավորվող «Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում՝ ի աջակցություն Կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգի» ծրագրի շրջանակներում, միջազգային պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապարփակ բարեփոխման նպատակով նախատեսվող օրենսդրական փոփոխությունների շրջանակում, ի թիվս այլ հարցերի նախատեսվում է անդրադառնալ նաև Հայաստանում միջազգային պաշտպանություն հայցող անձանց փախստականի կարգավիճակից բացի, պաշտպանության այլ տեսակների (ինչպես օրինակ՝ ժամանակավոր պաշտպանություն, հումանիտար կարգավիճակ և այլն) տրամադրման հարցին:

Ծառայությունը հայտնել է նաև, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի 94.1-ին կետի համաձայն՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը և ներկայացումը Վարչապետի աշխատակազմ նախատեսված է 2023 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակում:

[89] Պաշտպանի հաստատությունն իրականացրել և Ծառայությանն է ներկայացրել հարցի կապակցությամբ միջազգային փորձը: Նման իրավական կարգավիճակ սահմանվել է օրինակ՝ Վրաստանում և Պորտուգալիայում (տե՛ս «Փախստականի և մարդասիրական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 4-րդ հոդվածը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://mra.gov.ge/res/docs/2014022416564743748.pdf, ինչպես նաև «Փախստականների / Ապաստանի մասին» Պորտուգալիայի 27/2008 օրենքի 7-րդ հոդվածը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.refworld.org/docid/48e5c13c8.html):

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր իրավասության շրջանակում պատրաստակամ է ու մշտապես աջակցում է վերը նշված խնդիրների լուծմանը, ինչպես նաև իրականացնելու է հետագա հետևողական մշտադիտարկում:

VII. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ

2022 թվականի ընթացքում Պաշտպանը շարունակել է Երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ գործունեությունը՝ հատուկ կարևորելով Երեխաների իրավունքների վիճակի մշտադիտարկման գործառույթը[90]:
2022 թվականի ընթացքում Պաշտպանին երեխաների իրավունքների վերաբերյալ հասցեագրվել է 996 գրավոր և բանավոր բողոք, այդ թվում՝ սեփական նախաձեռությամբ քննարկված դեպքեր: Բողոքները, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում վերաբերել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանը, երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքի իրացմանը, կրթության իրավուքնի իրացման, դպրոցում երեխաների նկատմամբ վերաբերմունքին (բուլինգ) և իրավունքների պաշտպանությանը:

2022 թվականի ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում իրականացվել են մշտադիտարկումներ, Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև երեխայի հետ առնչվող այլ կառույցների մասնագետների վերապատրաստումներ, իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ երեխայի լսված լինելու և մասնակցության իրավունքի խթանման միջոցառումներ և այլն:

[90]Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2016 թվականից գործում է առանձին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: Երեխայի իրավունքների կոմիտեի առաջարկության հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված է, որ «Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն»:

1. Մշտադիտարկումներ.

ա) Պաշտպանի կողմից 2022 թվականին մշտադիտարկվել են Տավուշի մարզի 16 գյուղերի սահմանամերձ հանրակրթական և նախադպրոցական հաստատությունները: Պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկման այցեր է իրականացրել Տավուշի մարզի Ազատամուտ, Բաղանիս, Կիրանց, Ոսկեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Այգեպար, Չինարի, Այգեձոր, Արծվաբերդ, Չորաթան, Բերքաբեր, Բարեկամավան, Սարիգյուղ, Կոթի գյուղերում: Մշտադիտարկման այցերի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երեխաների կրթության իրավունքի իրացման պայմանների, կարիքների, ներառական միջավայրի ձևավորման համար առկա հնարավորությունների ուսումնասիրմանը: Այս նպատակով առանձնազրույցներ են իրականացվել բնակիչների հետ, քննարկումներ են տեղի ունեցել նախադպրոցական ուսումնական հաստատությունների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների և պատասխանատուների, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Այցերի ընթացքում վեր հանված անհատական և համակարգային խնդիրները քննարկվել են նաև համայնքապետարանների, վարչական շրջաններում բուժօգնություն և բուժսպասարկում իրականացնող անձնակազմերի ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտային իրավասու մարմինների հետ: Մշտադիտարկման արդյունքներն արտացոլվել են Պաշտպանի կողմից հրապարակված արտահերթ զեկույցում[91], ինչպես նաև ներկայացվել են համապատասխան առաջարկություններ պատասխանատու մարմիններին, և վերջիններիս կողմից ներկայացվել է արձանագրված խնդիրների լուծման ժամանակացույց:

[91] Տե՛ս զեկույցը https://www.ombuds.am/images/files/fd29830766027e9c10fcfaec2effee4f.pdf հղումով:

բ) Մշտադիտարկվել է Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ը (0-6 տարեկան երեխաների համար): Մշտադիտարկման չհայտարարված այցի արդյունքում վեր են հանվել մի շարք համակարգային խնդիրներ: Այցի ընթացքում կիրառվել են տեղադիտման, դիտման, մասնագետների հետ զրույցի, առանձնազրույցների, փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդները: Ուսումնասիրվել է հաստատության բնակելի տարածքը, սանիտարական և կոմունալ հարմարությունները, երեխաների խնամքի, բուժօգնության տրամադրման, սննդի կազմակերպման, աշխատակիցների, երեխաների իրավունքների և հիմնարար ազատությունների վիճակը և համապատասխան փաստաթղթերը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և կիրառելի չափանիշներին:

Հատուկ ուսումնասիրվել են երեխաների սոցիալական ներառման, ընտանիքների և հարազատների հետ հաղորդակցության, երեխայի լավագույն շահի երաշխավորման հետ կապված հարցերը: Այցի ընթացքում արձանագրվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց մի մասն իրենց բնույթով համակարգային են և բնորոշ են երեխայի խնամք ու պաշտպանություն իրականացնող մի շարք այլ հաստատություններին: Մասնավորպես՝ երեխաների կարիքների գնահատման առկա գործընթացը չի երաշխավորում դրանց իրական և անհատականացված լինելը, առկա է մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտություն, երեխաների հետ աշխատանքը անհատականացված չէ, ներդրված չեն որդրեգրող և խնամատար ծնողների տեսակցությունների փաստաթղթավորման մեխանիզմներ, կեսաբանական ընտանիքների հետ տարվող աշխատանքը ոչ լիաժեք է և այլն: Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրված խնդիրները քննարկվել են իրավասու մարմնի հետ[92]:

գ) Պաշտպանի աշխատակազմի կողմից մշտադիտարկվել են 2022 թվականի սեպտեմբերի 13-15 ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված հարձակումների արդյունքում երեխաների իրավունքների պաշտպանության հարցերը, որի արդյունքները վերլուծվել և ներկայացվել են արտահերթ զեկույցում, ինչպես նաև վեր հանված խնդիրներ քննարկվել են իրավասու մարմինների հետ[93]:

դ) Բացի հաստատություններից, մշտադիտարկվել են ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված հարձակումների հետևանքով տուժած բնակավայրերից տեղահանված, ինչպես նաև Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի փակման հետևանքով Հայաստանում գտնվող ընտանիքներին, մասնավորապես՝ երեխաներին տրամադրվող ծառայությունները և դրանց հասանելիությունը: Բացի այդ, կատարվել է վերջիներիս կյանքի պայմանների, իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի ուսումնասիրություն:

ե) 2022 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից մշադիտարկվել են հավաքներին երեխաների մասնակցությունը և նրանց իրավունքների իրացման ապահովման հետ կապված հարցերը մշտապես գտնվել են հատուկ ուշադրության ներքո: Այս նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, այդ թվում՝ հոգեբան-փորձագետը, այցեր են իրականացրել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարբեր ստորաբաժանումներ, որտեղ աշխատակազմի տեղեկություններով բերման ենթարկված անձանց մեջ եղել են նաև երեխաներ: Այցերի ընթացքում առանձնազրույցներ են իրականացվել երեխաների, նրանց ծնողների, ինչպես նաև հավաքներին մասնակցած այլ անձանց հետ, ովքեր այցերի պահին գտնվել են ոստիկանության ստորաբաժանումների մոտակայքում: Առանձնազրույցների ընթացքում արձանագրվել է, որ ոստիկանության բաժիններ ներկայացված երեխաները հիմնականում եղել են 16-17, իսկ մեկը՝ 13 տարեկան: Ըստ երեխաների և այլ ականատեսների հայտնած տեղեկությունների՝ 13 տարեկան

[92]Տե՛ս https://www.ombuds.am/am/site/ViewNews/2397 հղումով:
[93] Տե՛ս https://www.ombuds.am/images/files/88015d8ec9e48d869bd8b706233613dd.pdf հղումով:

երեխան մեքենա է նստեցվել ոստիկանության 4 ծառայողների, իսկ մյուսները՝ 4-6 ծառայողների կողմից: Արձանագրվել է նաև, որ 13 տարեկան երեխային ոստիկանության մեքենա նստեցնելու պահին հավաքի մասնակիցներից ոմանք ոստիկանության ծառայողներին տեղեկացրել են երեխայի տարիքի մասին, սակայն այս հանգամանքը հաշվի չի առնվել վերջիններիս կողմից: Արձանագրվել են նաև դեպքեր մինչև ոստիկանության բաժիններ հասնելը չի ներկայացվել և պարզաբանվել իրենց իրավունքները, այդ թվում՝ չեն տեղեկացրել, թե իրենց ոստիկանության, որ բաժին են տեղափոխում, ինչ հիմքով և նպատակով: Առանձնազրույցների ընթացքում արձանագրվել է նաև, որ ոստիկանության ծառայողները երեխաներին, որոշ դեպքերում ծառայողական ավտոմեքենաներ են նստեցրել անհամաչափ ուժի գործադրմամբ, իսկ որոշների պնդմամբ՝ նաև ֆիզիկական ցավ պատճառելով: Արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության բաժիններում ոչ միշտ է հասանելի եղել երեխաների հուզական կայուն վիճակի ապահովման պայմաններ:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների մշտադիտարկումները վկայում են նաև, որ անչափահասներին ոստիկանության բաժիններ տեղափոխելիս ոչ միշտ է կիրառվում տարբերակված, մասնավորապես, երեխայակենտրոն մոտեցում, ինչի հետևանքով արձանագրվում են երեխայի լավագույն շահի խախտման դեպքեր: Պաշտպանի կողմից այցերի և մշտադիտարկման ընթացքում արձանագրված խնդիրների կապակցությամբ լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից:

2. Երեխայի իրավունքների վերաբերյալ թեմատիկ արտահերթ ու այլընտրանքային զեկույցների պատրաստումը եղել է Պաշտպանի հաստատության աշխատանքի կարևոր ուղղություններից մեկը: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակված 8-ից 5 արտահերթ զեկույցներում առանձին անդրադարձ կա երեխաների իրավունքների իրացման հարցերին: Արտահերթ զեկույցներից բացի, մեկ առանձին զեկույց է պատրաստվել Պաշտպանի կողմից ՄԱԿ Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվելու համար, որում ամփոփվել են Պաշտպանի հետևությունները Հայաստանի կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ Կոնվենցիայի իրագործման խնդիրների մասին: Զեկույցում Պաշտպանը նաև ներկայացրել է առաջարկություններ պետության կողմից Կոնվենցիայի դրույթների կատարման արդյունավետությունը լավարկելու ուղղությամբ:

ա) 2022 թվականին հրապարակվել է «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը: Զեկույցի նպատակն է ներկայացնել, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում կատարել Կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Ուստի, զեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակներում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ դիտարկումները, ներկայացված առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են իրավիճակի վերլուծություններ և առաջարկություններ[94] (տես նաև սույն հաղորդման «Արտահերթ զեկույցներ բաժնում»): Ամփոփման փուլում է Կոմիտեին անգլերենով ներկայացվող այլընտրանքային զեկույցը:

բ) Երեխաների իրավունքների հարցերը մշտադիտարկվել են նաև 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Արցախը Հայաստանի և աշխարհի հետ կապող միակ ճանապարհի «կեղծ բնապահպանների» կողմից փակելու արդյունքում, և արդյունքները ներկայացվել են «Արցախը Հայաստանին և աշխարհի հետ կապող միակ ճանապարհի փակման

[94] https://www.ombuds.am/images/files/5306939633eb1bf202440e912ef1e2e7.pdf

հումանիտար հետևանքների մասին» զեկույցում: Սույն զեկույցի կազմման աշխատանքների ընթացքում արձանագրվել է նաև, որ 120.000 անձ, որից 30000 երեխաներ, Արցախում գտնվում են կյանքի և գոյության պահպանման վտնագի ներքո: Տեղաշարժի փակման հետևանքով ավելի քան 270 երեխա չեն կարողացել տուն վերադառնալ: Պաշտանի աշխատակազմի կողմից արձանագրվել է, որ խախտվել են երեխաների անվտանգության իրավունքը, կրթության իրավունքը, ընտանիքով ապրելու իրավունքները: Պաշտպանի աշխատակազմի կողմից հավաքագրված տեղեկատվության համաձայն՝ 270 երեխաներ, որոնցից մոտ 70-ը առանց ծնողների չի կարողացել վերադառնալ ընտանիք[95]: Սույն հաղորդման պատրաստման պահին ԿԽՄԿ-ի միջնորդությամբ 2023թ հունվարի 17-ին Արցախ է վերադարձել 19 երեխա, որոնք Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով մի ամսից ավել բաժանված էին ընտանիքներից:

գ) Պաշտպանի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) Հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության արդյունքում 2022 թվականին նախաձեռնվել է Հայաստանում բուլինգի հիմնախնդրի ուսումնասիրություն: Ուսումնասիրության մեթոդաբանությունը ներառում է. երեխաների շրջանում անկետավորում, խորին հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, կրթության ոլորտի մասնագետների շրջանում՝ խորին հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, ինչպես նաև բուլինգի հիմնախնդրի շրջանակում ներպետական և միջազգային օրենսդրության վերլուծություն: Ներկայում ընթանում են ուսումնասիրության ամփոփման և վերլուծության աշխատանքները և արդյունքները կներկայացվեն 2023 թվականի ապրիլին:

3. Երեխաների իրազեկվածության բարձրացում և մասնակցության իրավունքի ապահովում

Աշխատանքներ են տարվել երեխաների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ, մասնավորապես իրականացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված հանդիպումներ և արշավներ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում՝ երեխաների և մասնագետների շրջանում: Մասնավորապես՝
ա) 2022 թվականի ընթացքում իրազեկման միջոցառումներին մասնակցել են շուրջ 1000 երեխա, որից շուրջ 300-ն այցելել են պաշտպանի աշխատակազմ: Երեխաներին ներկայացվել են իրենց իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև Պաշտպանի լիազորությունների շրջանակը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ երեխաների ինքնուրույն դիմելու, չմիջնորդավորված հաղորդակցության հնարավորությունների մասին: Երեխաներին ներկայացվել է նաև երեխաներին նվիրված Պաշտպանի էլեկտրոնային կայքէջը, որի միջոցով նրանք կարող են նաև առցանց դիմում ուղարկել Պաշտպանին կամ ստանալ խորհրդատվություն[96]:

---

[95] Տե՛ս https://www.ombuds.am/images/files/b91bbe990a6b67833cb531b6c07d18fd.pdf հղումով:

[96] Տե՛ս https://ombuds.am/am/site/ViewNews/2233?fbclid=IwAR0ta-H4yWIc4Vfey4_QizgZSOnMMM7M2g1R4lPJZjGSYeorTZeqepy8zkY, https://ombuds.am/am/site/ViewNews/2228?fbclid=IwAR2TESe9RPCaqDK6N-mhpWcoX-ngnQblJTBhFjnaDG2IaXvWcoqXMh_e_nU, https://ombuds.am/am/site/ViewNews/2318?fbclid=IwAR1Wa5R5V4NFUoWHbDkr-hXWz1aO7YXYK70lcRYEGCPwt7AfqWHpWor1OM0, http://children.ombuds.am/%d5%ba%d5%a1%d5%b7%d5%bf%d5%ba%d5%a1%d5%b6-%d6%84%d6%80%d5%ab%d5%bd%d5%bf%d5%ab%d5%b6%d5%b6%d5%a5-%d5%a3%d6%80%d5%ab%d5%a3%d5%b8%d6%80%d5%b5%d5%a1%d5%b6%d5%b6-%d5%a1%d5%b5%d6%81%d5%a5%d5%ac%d5%a5-2/, հղումներով

բ) Բացի այցերից և առանձին խմբերի հետ հանդիպումներից, կազմակերպվել են լայնածավալ միջոցառումներ՝ միաժամանակ ներառելով ՀՀ բոլոր մարզերը, Երևանը և Արցախը:

Օրինակ՝ 2022 թվականի հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, ՀՀ մարդու իրավունքների աշխատակազմի և Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-Ի գրասենյակի համագործակցությամբ կազմակերպվել է «Երեխայի իրավունքները երեխաների աչքերով» խորագրով միջոցառումը, որում ներառվել են շուրջ 400 երեխա՝ առցանց և առկա ձևաչափերով Արցախից և Հայաստանի տարբեր մարզերից: Միջոցառումը միտված էր խթանելու երեխաների լսված լինելու, կարծիք արտահայտելու իրավունքների իրացմանը՝ ստեղծելով երեխայակենտրոն հարթակ, որտեղ երեխաներն ու երիտասարդները կարող են ներկայացնել իրենց հուզող հարցերն ու խնդիրները, և դրանք քննարկել ոլորտային իրավասու ներկայացուցիչների հետ[97]:

Միջոցառման ընթացքում բանախոս երեխաները հանդես են եկել անհատական և խմբային ելույթներով, որտեղ ներկայացրել են իրենց իրավունքների իրացման հետ կապված

[97] https://ombuds.am/am/site/ViewNews/2253?fbclid=IwAR0cFL4SgrjIWkMS4C8LZwSK5tNvPGVDNWG_qUUTM_2X8iI3Maqb3kAolGs

խնդիրներ: Երեխաների ելույթները վերաբերում էին 3 հիմնական թեմաների՝ կրթությանը և սոցիալական ներառմանը, հասարակությունում և ընտանիքում երեխաների պաշտպանվածությանը և անվտանգությանը, ինչպես նաև բուլինգին և խտրական վերաբերմունքին: Միջոցառմանը ներկա էին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, ոլորտային նախարարությունների, ոստիկանության ու քաղաքային իշխանության, ինչպես նաև ՀՀ-ում հավատարմագրված միջազգային կազմակեպությունների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ելույթներից հետո երեխաները համաժողովի մասնակիցների հետ միասին անց են կացրել քննարկումներ, որտեղ առաջարկել են բարձրացված խնդիրների համար լուծումների իրենց տարբերակները:

գ) Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանում Երևանում և ՀՀ մարզերում իրականացրել է երեխաների շրջանում երեխայի իրավունքների մասին և Պաշտպանի գործունեության վերաբերյալ իրազեկման հանդիպումներ, մասնավորապես բուլինգի հիմնախնդրի վերաբերյալ հանդիպումներ աշակերտների հետ: Մասնակցել են շուրջ 250 երեխա:

դ) Ստեղծվել է ՀՀ մարդու իրավունքների Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ: Խորհրդի անդամները ընտրվել են ներկացված հայտերի ուսումնասիրության արդյունքում: Ընտրված թեկնածուները ներկայացնում են տարբեր համայնքներ, տարիքային ու սոցիալական տարբեր խմբեր (առավել մանրամասն տես սույն հաղորդման «Պաշտպանին առընթեր խորհուրդների աշխատանքը» բաժնում):

Նոյեմբերի 18-20-ը Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համատեղ Խորհրդի անդամների շրջանակում իրականացվել է կարողությունների զարգացման և երեխայի

իրավունքների վերաբերյալ դասընթացներ, իսկ նոյեմբերի 20-ին տեղի է ունեցել Խորհրդի առաջին նիստը[98]: Նիստի ընթացքում խորհրդի անդամները ներկայացրել են խորհրդի գործունեության առաջնահերթությունները, իրենց մտահոգությունները, բարձրացրել են իրենց հուզող կարևոր հարցերը և առաջարկել են տարբեր հարցերի վերաբերյալ իրենց լուծումները:

Խորհրդի նիստին հաջորդել է պատկան մարմինների հետ հարց ու պատասխանը, որն առցանց հեռաձակվել է[99]: Խորհրդի նպատակն է երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտում աջակցել Պաշտպանի գործունեությանը որպես խորհրդատվական մարմին: Խորհուրդի գործունեությունը միտված է աջակցելու Պաշտպանին երեխաների և երիտասարդների հետ համագործակցության զարգացման հարցերում, խթանելու երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության

[98] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=pP09zEE3Bnw հղումով
[99] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=fRoTXD-cHpc հղումով

ոլորտին առնչվող խնդիրների վերհանմանը, աջակցելու Պաշտպանին երեխաների և երիտասարդների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

4. Մասնագետների ու երեխաների վերապատրաստումներ երեխայի իրավունքներին առնչվող թեմաներով

Երեխայի իրավունքների պաշտպանության մանդատն իրականացնելիս Պաշտպանը մեծ նշանակություն է տվել մի կողմից հաստատության կարողությունների շարունակական զարգացմանը, մյուս կողմից հաստատության կողմից երեխաներին ու երեխաների հետ զբաղվող մասնագետների վերապատրաստումներ անցկացնելուն: Այսպիսով, երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ վերապատրաստումներ իրականացվել են ինչպես Պաշտպանի աշխատակազմի համար, այնպես էլ՝ երեխաների հետ առնչվող մասնագետների համար: Ընդհանուր՝ շուրջ 70 մասնագետ, որի 50-ը՝ երեխաների հետ առնվող այլ կառույցների աշխատակիցներ:

ա) Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համագործակցությամբ իրականցվող «Երեխաների և երիտասարդների պաշտպանության բարելավում և մասնակցության խթանում» ծրագրի շրջանակում իրականացվել է Պաշտպանի աշխատակազմի կարողությունների թրեյնինգ: Դասընթացի նպատակն է եղել բարձրացնել աշխատակազմի կարողությունները մշտադիտարկման աշխատանքերում, ձևավորել բուլինգի կանխարգելման և արդյունավետ արձագանքման նպատակով տվյալների հավաքագրման կիրառվող մոտեցումներ, ինչպես նաև աշխատակազմի հետ համատեղ փորձարկել հանրակրթական հաստատություններում Պաշտպանի աշխատակազմի կողմից բուլինգի մշտադիտարկման առաջարկվող մեթոդաբանությունը և գործիքակազմը՝ լրամշակման նպատակով: Դասընթացին մասնակցել են 20 աշխատակից Երևանի և մարզային գրասենյակներից: Քննարկվել է Հայաստանում բուլինգի հիմնախնդիրը, օրենսդրական և պրակտիկ բացերը՝ ՄԻՊ աշխատակազմում ստացված բողոքների և մշտադիտարկման համատեքստում, բուլինգի կանխարգելման և արձագանքման մեխանիզմները[100]:

բ) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2 ներկայացուցիչ մասնակցել են Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի կողմից կազմակերպված դասընթացավարների առցանց քառօրյա դասընթացին «Աջակցություն Մարդու իրավունքների ազգային ինստիտուտներին երեխաների համար մատչելի մեխամիզմների ձևավորման ուղղությամբ» թեմայով, որի շրջանակում տրամադրվել են պրատիկ

[100] Տե՛ս https://ombuds.am/am/site/ViewNews/2432?fbclid=IwAR0faLGSJVf_jQLJmyhN6znlwqmzaA6WVwMS8DKt3uRjJHoFDGsUcqrvsyU հղումով:

հմտություններ և գործիքակազմ՝մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխաների հետ աշխատանքի, երեխայի իրավունքի վրա հիմնված մոտեցումների, երեխայի համար Պաշտպանի աշխատակազմ դիմելու մատչելի մեխանիզմների, երեխաների խնամքի և պաշտպանության, ինչպես նաև փակ հաստատությունների մշտադիտարկման վերաբերյալ:

գ) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության գերությունից վերադարձած անձանց Հայաստանում» Հայաստանում Միջազգային Կարմիր խաչի և շվեդական Կարմիր Խաչի կողմից կազմակերպված եռօրյա վերապատրաստմանը, որի շրջանակում ներկայացվել է նաև գերությունից վերադարձած անձանց ընտանիքները և երեխաների հետ աշխատանքի առանձնահատկությունները, անհրաժեշտ հմտությունները և փորձարկված գործքիակազմերը:

դ) Պաշտպանի աշխատակազմի իրականանցվել է Պաշտպանի Տավուշի մարզային ստորաբաժանման գրասենյակում իրականացվել է «Միջգերատեսչական համագործակցության զարգացում երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում» թեմայով հանդիպում-քննարկում Տավուշի մարզի երեխաների պաշտպանության, սոցիալական, կրթական, մշակութային հիմնահարցերով պետական պատասխանատու կառույցների, խնամակալության և հոգաբարձության մարմինների շուրջ 25 ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկվել են երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում Պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրված խնդիրները: Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև մարզում առկա կոնկրետ դեպքեր, որոնք պահանջում են միջգերատեսչական համագործակցային մոտեցումներ: Մասնակիցներին նաև տրվել են գիտելիքներ դեպքերի վարման գործընթացում երեխայի լավագույն շահի ապահովման և երեխայի լսված լինելու իրավունքի վերաբերյալ[101]:

ե) Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվել է «Բուլինգի ճանաչում և արձագանքման հմտությունների զարգացում կրթական ոլորտի մասնագետների շրջանում» թեմայով 2-օրյա դասընթաց տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններում գործող կրթության ոլորտի պատասխանատու անձանց համար, որի մասնակցել են 25 մասնագետներ Երևանից և ՀՀ բոլոր մարզերից: Դասընթացի շրջանակում ներառված թեմաներն են եղել՝ բուլինգի հիմնախնդիրը, տեսակները, նշանները, հետևանքները և ազդեցությունը, ինչպես նաև պետության դերը բուլինգի

[101] Տե՛ս https://www.ombuds.am/am/site/ViewNews/2310 հղումով

կանխարգելման հարցում և հանրակրթական հաստատություններում բուլինգից զերծ միջավայրի ձևավորման քաղաքականությունը: Դասընթացն իրականացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում[102]:

5. Օրենսդրության բարելավում և վերլուծությունների իրականացում

2022 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անձնակազմի կողմից շարունակական աշխատանքներ են տարվել երեխաներին առնչվող օրենսդրական բարեփոխումների և իրավական ակտերի նախագծերի մշակման ուղղությամբ: Իրականացվել է երեխային առնչվող «Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում» վերլուծություն, այդ թվում՝ վերլուծվել են պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հետ աշխատանքը կանանոնակարգող իրավական կարգավորումները՝ վեր հանելով առկա իրավական ու ընթացակարգային խնդիրներ, ինչպես նաև ներկայացնելով համապատասխան առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

Պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացվել են երեխայի իրավունքներին առնչվող շուրջ 30 օրենսդրական և ենթաօրենդրական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ, ի թիվս այլնի՝ «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի, «Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի, «Հայաստանի Հանրապետության առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն և 2020 թվականի ապրիլի 2-ի N 470-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման և այլ նախագծերի վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև երեխաներին առնչվող օրենդրական նախագծերի աշխատանքային քննարկումներին:

6.Համագործակցություն

Պաշտպանի աշխատակազմը մասնակցել է Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի աշխատանքներին, որը նպատակ ունի խրախուսել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը[103]: Մարդու իրավունքների պաշտպանը Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի լիիրավ անդամ է և տարվա ընթացքում ակտիվացրել է իր ներգրավումը ցանցի աշխատանքներին, ի թիվս այլնի, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ներգրավվել է Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի 2023 օմբուդսմենների հաստատությունների դերի հարցերով զբաղվող աշխատանքային խմբում:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ներգրավվել են 2022 թվականի հոկտեմբերի 12-ին ԱՊՀ անդամ պետությունների օմբուդսմենների գրասենյակների

---

[102] Տե՛ս https://www.ombuds.am/am/site/ViewNews/2458 հղումով

[103] Տե՛ս Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի կայքէջը, հասանելի է http://enoc.eu/ հղումով, 2023 թվականի հունվարի 11-ի դրությամբ:

մակարդակով ստեղծված Երեխաների իրավունքների հարցերով հանձնաժողովում: Պաշտպանի նեկայացուցիչներն ակտիվ մասնակցություն են ապահովվել նաև երեխաների պաշտպանության հարցերով գործող ներպատական հանձնաժողովներում և խորհուրդներում:

Պաշտպանը շարունակել է սերտորեն համագործակցել պետական, միջազգային և տեղական հասարակական կառույցների հետ՝ իրականացնելով աշխատանքեր ադրբեջանական ագրեսիայից տուժած ընտանիքների համար պետության ու հասարակական դերակատարների կողմից սոցիալ-հոգեբանական աջակցության անհրաժեշտը հասանելի դարձնելու ուղղությամբ:

VIII. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ

2022 թվականի ընթացքում Պաշտպանի առաջնահերթություններից է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Այս նպատակով Պաշտպանն իր սահմանադրական և կոնվենցիոն մանդատների շրջանակներում շարունակել է իրականացնել մշտադիտարկումներ, այդ թվում՝ մեդիամոնիթորինգ, չհայտարարված այցեր, ադրբեջանական զինված ուժերի պատերազմական գործողությունների կամ Ադրբեջանի կողմից հովանավորչությամբ իրականացված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստահավաք աշխատանքներ, քննարկել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հարցեր՝ սեփական նախաձեռնությամբ և անհատական դիմումների միջոցով, միջազգային վերաբերելի կառույցներին, այդ թվում՝ Մարդու իրավունքների հանձնակատարի, ԵԽ, ՄԱԿ-ի կառույցների ներկայացուցիչներին, փորձագետներին, ինչպես նաև պետական իրավասու մարմիններին ներկայացրել է զեկույցներ և դիտարկումներ, ոլորտի բարեփոխումների վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումներ:

Կարևոր է արձանագրել, որ Պաշտպանի համար մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սկզբունքային է եղել ոչ միայն խնդիրների արձանագրումը և դրանց լուծման առաջարկների ներկայացումն իրավասու մարմիններին, այլ նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման նպատակով հանրային, այդ թվում՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակում իրազեկվածության բարձրացմանը նպաստող միջոցառումները, սոցիալական արշավներն ու ոլորտային հասարակական կազմակերպությունների, մասնագետների հետ սերտ համագործակցությունը:

Ինչպես երեխաների իրավունքների, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում առավել թիրախային, համակարգված և ռազմավարական աշխատանքներ իրականացնելու նպատակով 2022 թվականին Պաշտպանի աշխատակազմում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն, որի արդյունքում ստեղծվել է Պաշտպանի անմիջական ենթակայությամբ գործող Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչությունը: Վարչությունն ապահովում է Պաշտպանի կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման գործընթացը, այդ նպատակով մշակում և Պաշտպանին է ներկայացնում ոլորտային ռազմավարական որոշումների, դիրքորոշումների և միջոցառումների վերաբերյալ առաջարկներ, ապահովում դրանց իրականացումը: Միաժամանակ հարկ է արձանագրել, որ Պաշտպանի սահմանադրական և կոնվենցիոն մանդատների առավել արդյունավետ և լայնածավալ միջոցառումների իրականացման համար շարունակում է արդիական մնալ Պաշտպանի աշխատակազմում լրացուցիչ մարդկային ռեսուրսների (հաստիքների) հատկացման անհրաժեշտությունը, ինչն

արձանագրվել է նաև ՄԱԿ-ի հաշմանդամության հարցերով կոմիտեի կողմից Հայաստանի վերաբերյալ դիտարկումներում, ինչպես նաև տարբեր միջազգային կառույցների փորձագետների հետ աշխատանքային քննարկումներում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն իրականացնելիս Պաշտպանն առաջնորդվել է մարդու արժանապատվության հարգման, զարգացման հնարավորությունների, իրավունքների ինքնուրույն իրացման, անկախ կյանքի իրավունքի ապահովման սկզբունքներով: Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանն իր սահմանադրական և կոնվենցիոն մանդատներն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

1. Իրազեկում և կրթություն

Մարդու իրավունքների պաշտպանի կոնվենցիոն մանդատի ապահովման շրջանակներում իրականացված մի խումբ գործողություններ միտված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Կարևոր է այն ընկալումը, որ հաշմանդամության մասին իրազեկման միջոցով հնարավոր է պայքարել նաև առկա կարծրատիպերի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ թյուր պատկերացումների դեմ: Նշվածը հատկապես կարևոր է հանրային կարծիքի և ընկալումների վրա երկարաժամկետ ազդեցության տեսանկյունից: Այս տեսանկյունից շարունակում է մտահոգիչ մնալ այն, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը միտված քայլեր իրականացնելիս պետության որոշումներն որոշ դեպքերում դեռևս պայմանավորված են լինում այն հանգամանքով, թե տարբեր իրավիճակներում կոնկրետ իրավունքի իրացման հնարավորությունից քանի հաշմանդամությունը ունեցող մարդ է օգտվելու: Նշվածն անընդունելի է նաև այն նկատառմամբ, որ այս դեպքում առկա կարծրատիպերն էլ ավելի են խորանում և բացասաբար ազդում հաշմանդամություն ունեցող անձանց իրավահավասարությունը գործնականում ապահովելու վրա, ինչպես նաև լրացուցիչ մարտահրավերներ են ստեղծում իրական ներառական միջավայրի ձևավորման համար: Մինչդեռ, պետության ուղղակի պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է որ հաշմանդամություն չունեցող անձինք իրենց բոլոր իրավունքներն իրացնեն այլոց հետ հավասար եղանակով՝ առանց նախապայմանների: Նման անընդունելի մոտեցում է կիրառվել, օրինակ, Գյումրի համայնքում իրականացվելիք սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված ավտոբուսների ձեռքբերման դեպքում: Այս մասին է վկայում Պաշտպանի գրությունների ի պատասխան ներկայացված պարզաբանումների ուսումնասիրությունը:

2022 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվել են ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկման արշավներ, դասընթացներ և վերապատրաստումներ, այնպես էլ աշխատանքներ են իրականացվել հանրային լրատվամիջոցների և սոցիալական հարթակների միջոցով Պաշտպան իրավասությունների, իրականացրած աշխատանքներն ու ձեռնարկած քայլերն արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ հանրային իրազեկման բարձրացման ուղղությամբ: Այս համատեքստում կարևոր է նշել նաև այն աշխատանքային մոտեցումը, որով առաջնորդվել է Պաշտպանի աշխատակազմը նման միջոցառումներ իրականացնելիս:

Մասնավորապես, սկզբունքային է եղել Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության նախաձեռնությամբ իրականացվող միջոցառումների վայրերի ֆիզիկական մատչելիության, տեղեկատվության մատչելիության ապահովումը՝ անկախ այն հանգամանքից, թե միջոցառման մասնակիցներից քանիսն ունեն նման կարիք կամ նման կարիք առհասարակ առկա է, թե ոչ:

Այսպիսով, 2022 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից.

- իրականցվել են շուրջ 25 իրազեկման արշավներ, դասընթացներ և վերապատրաստումներ, այդ թվում՝ տարբեր կառույցների ներկայացուցիչների, ուսումնական հաստատությունների անձնակազմերի համար,
- Երեխաների «Հատուկ Ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երաժշտական և արվեստի դպրոցներում ներառականության ապահովման ուղղված դասընթացների ծրագրի» շրջանակներում հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների թեմայով վերապատրաստվել է շուրջ 650 մասնագետներ,
- երեխաների խնամք և պաշտպանություն, ինչպես նաև խնամքի այլ հաստատությունների շուրջ 30 աշխատակիցների, այդ թվում՝ բուժանձնակազմերի համար մշտադիտարկման այցերի շրջանակներում ապահովվել է ոլորտային իրավակարգավորումների և իրավունքահեն մոտեցումների կիրառման վերաբերյալ իրազեկում,
- հանրային ռադիոյի եթերում ներկայացվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում ՄԻՊ աշխատակազմի լիազորություններին104, կազմակերպվել է շուրջ 45 հանդիպումներ, որի շրջանակներում իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց խնամակալների, ոլորտայինկազմակերպությունների ներկայացուցիչների և շահառուներ ընդունելություն՝ միտված իրավունքների իրացման հնարավորությունների և իրավունքների ապահովման վերաբերյալ իրազեկմանը,
- տարբեր միջոցառումների և այցերի ընթացքում շուրջ 850 երեխաների համար իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկում, սոցիալական արշավներ և հանրային հրապարակումներ են իրականացվել Դաունի համախտանիշի միջազգային օրվա105, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա106 և Աուտիզմի իրազեկման միջազգային օրվա առիթով107, 2022 թվականի դեկտեմբերի 3-14-ը Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա առթիվ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվել է իրազեկման արշավ:

[104] Տե՛ս հաղորդումը, հասանելի է https://cutt.ly/Z2G5jXx հղումով:
[105] Տե՛ս ՄԻՊ ներկայացուցչի հարցազրույցը Ա-ԹԻՎԻ հեռուստաընկերությանը, հասանելի https://www.youtube.com/watch?v=Ucj9QGelIQQ հղումով:
[106] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանի ուղերձը հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա առթիվ: Հասանելի է shorturl.at/mpvDY հղումով:
[107] Տե՛ս ՀՀ ՄԻՊ Քրիստինե Գրիգորյանի ուղերձը նվիրված աուտիզմի իրազեկման միջազգային օրվան, հասանելի է https://www.youtube.com/watch?v=elBFyGnGPEM հղումով, աշխատակազմի ներկայացուցչի հարցազրույցը Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո» ծրագրում՝ նվիրված Աուտիզմի միջազգային օրվան https://www.youtube.com/watch?v=qnHRVyxFtNc հղումով:

Այս ընթացքում կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, քննարկումներ կամ ապահովվել է աշխատակազմի ներկայացուցչի ներկայությունը շուրջ 15 հանդիպումների և համաժողովների, որոնց ընթացքում ներկայացվել են ոլորտային խնդիրները, դրանց լուծմանը միտված առաջարկները: Իրազեկման արշավի ընթացքում աշխատակազմի կողմից նաև հրապարակվել են տեսանյութեր[108], իրազեկող նյութեր, որոնք վերաբերել են ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր իրավունքներին և ոլորտային խնդիրներին, այնպես էլ առանձին իրավունքներին (օրինակ՝ հավասարությանն ու խտրականության բացառմանը[109], աշխատանքի և զբաղվածության իրավունքին[110], հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներին[111], հանրային կյանքի բոլոր ոլորտներում մասնակցության իրավունքին[112], կրթության իրավունքին) և դրանց գործող իրավակարգավորումներին կամ ընթացակարգերին (օրինակ՝ հաշմանդամության կարգավիճակի տրամադրման կարգին): Իրազեկման արշավի ընթացքում Մանկական զարգացման հիմնադրամի և ՀՕՖ երեխաների աջակցության կենտրոնի սաների համար կազմակերպվել է ինտերակտիվ ներառական թատրոն, որի նպատակն էր խթանել ներառական, համագործակցային միջավայրի ձևավորումն ու համատեղ ջանքերով ընդհանուր նպատակի հասնելն ու խնդիրներ լուծելը, մասնակից երեխաներին իրազեկել մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի, խտրականության արգելքի սկզբունքների վերաբերյալ[113]:

2. Իրավունքների խախտումների կանխարգելում

Իրավունքների պաշտպանության տեսանկյունից սկզբունքային է ոչ միայն խախտումների բացահայտումը և փաստագրումը, այլ նաև դրանց կանխարգելումը:

Այս համատեքստում 2022 թվականի ընթացքում շուրջ 500 հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց ներկայացուցիչներին տրամադրվել է իրենց իրավունքների վերաբերյալ իրավախորհրդատվություն և կատարվել է ուղղորդում համապատասխան իրավասու մարմիններ՝ իրենց իրավունքների իրացման նպատակով:

Իրավունքների հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով կարևոր է նաև խնդիրների վերահանումը, արձանագրումը և դրանց ներկայացումը ՀՀ իրավասու մարմիններին, միջազգային վերաբերելի կառույցներին: Այսպես, Պաշտպանի

---

[108] Տե՛ս հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ տեսանյութը, հասանելի է https://www.youtube.com/watch?v=29Bj8reCQhg հղումով:

[109] Տե՛ս իրազեկումը, հասանելի է https://www.facebook.com/photo.php?fbid=468055598846711&set=pb.100069268237249.-2207520000.&type=3 հղումով:

[110] Տե՛ս հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների իրացման խնդիրների վերաբերյալ տեսանյութը, հասանելի է https://www.youtube.com/watch?v=I8FQ0pNG2Ew հղումով, ինչպես նաև իրազեկող նյութը, հասանելի է https://www.facebook.com/photo.php?fbid=468747578777513&set=pb.100069268237249.-2207520000.&type=3 հղումով:

[111] Տես՛ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկումը, հասանելի է https://www.facebook.com/photo.php?fbid=469303372055267&set=pb.100069268237249.-2207520000.&type=3 հղումով, ինչպես նաև Հանրային հեռուստաընկերության անդրադարձը հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներին, հասանելի է https://www.youtube.com/watch?v=Tzai3bUtDPM հղումով:

[112] Տե՛ս իրազեկումները, հասանելի են https://www.facebook.com/photo.php?fbid=470168541968750&set=pb.100069268237249.-2207520000.&type=3 կամ https://www.facebook.com/photo.php?fbid=470168588635412&set=pb.100069268237249.-2207520000.&type=3 հղումներով:

[113] Տե՛ս միջոցառման վերաբերյալ հրապարակումը, հասանելի է shorturl.at/hvE26 հղումով և Հանրային հեռուստատեսության լուսաբանումը, հասանելի է https://www.youtube.com/watch?v=CK-u6sX3KlU հղումով:

աշխատակազմի կողմից արձանագրված համակարգային խնդիրների վերաբերյալ 2022 թվականի ընթացքում տեղի են ունեցել.

-առնվազն 7 աշխատանքային քննարկումներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ՝ կապված բժշկասոցիալական փորձաքննությունների ընթացքում հանձնաժողովների անդամների վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման արդյունավետ մեխանիզմների և վարքագծի կանոնների ներդրման անհրաժեշտության, հաշմանդամություն ունեցող անձանց բողոքների քննարկման մատչելի և հասանելի մեխանիզմների բարելավման, որոշ դեպքերում՝ նաև նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտության, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների սաների լսված լինելու իրավունքի ապահովման, հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի բողոքարկման մեխանիզմների ներդրման անհրաժեշտության, գործնականում հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացայտման արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև ադրբեջանական զինված ուժերի անօրինական գործողությունների հետևանքով հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձանց կարիքահեն, համայնքահեն ծառայությունների հասանելիության ապահովման վերաբերյալ,

-առնվազն 5 աշխատանքային քննարկումներ ՀՀ առողջապահության նախարարության և առողջապահական ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց առողջության իրավունքի պահպանման, պետպատվերի շրջանակում դեղորայքի և բուժօգնության տրամադրման հետ կապված խնդիրների վերաբերյալ,

-առնվազն 8 աշխատանքային քննարկումներ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչների հետ՝ համընդհանուր ներառական կրթության ոլորտում առկա խնդիրներ վերաբերյալ,

-առնվազն 15 աշխատանքային քննարկումներ Երևանի քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչների հետ՝ ադրբեջանական զինված ուժերի անօրինական գործողությունների հետևանքով հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձանց իրավունքների իրացման հետ կապված խնդիրների վերաբերյալ,
առնվազն 31 աշխատանքային քննարկումներ Միասնական սոցիալական ծառայության տարբեր տարածքային կենտրոններին ներկայացուցիչների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների, կարիքների գնահատման, հաշմանդամության թոշակի սահմանման հետ կապված խնդիրներ վերաբերյալ:

Նշված քննարկումների արդյունքում հնարավոր է եղել ապահովել շուրջ 100 հաշմանդամություն ունեցող անձի կողմից բարձրացված խնդիրների արագ արձագանքում, այդ թվում՝ կարիքների գնահատման նպատակով տնայցեր իրավասու մարմինների ներկայացուցիչների կողմից և իրավունքների իրացման համար միջանկյալ հնարավորությունների ստեղծում:

Ընդլայնվել է ոլորտային համագործակցությունը միջազգային կառույցների և օտարերկրյա երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, ինչի արդյունքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ 2023 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ կոնկրետ միջոցառումների իրականացման վերաբերյալ:

2022 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն առաջին անգամ մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի անդամ պետությունների համագումարի 15-րդ նստաշրջանին, որի ընթացքում ներկայացվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքի վիճակը Հայաստանում, ենթադրյալ խախտումների կանխարգելմանը միտված միջոցառումների ընդլայնման անհրաժեշտությունը: Պաշտպանը համագումարի մասնակիցների ուշադրությունը հրավիրել է արտակարգ դրության և պատերազմական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջացող լրացուցիչ խոչընդոտների ու դրանց հաղթահարման անհրաժեշտության վրա[114]:

3. Ոլորտային իրավական դաշտի և պրակտիկայի բարելավման նպաստում

Պաշտպանն իր սահմանադրական և կոնվենցիոն մանդատների շրջանակներում 2022 թվականի ընթացքում իրավասու մարմիններին է ուղարկել Պաշտպանին կարծիքի ներկայացված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի շուրջ 30 իրավական ակտերի, ծրագրերի նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ: Առանցքային նշանակություն ունեն հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալության գնահատման և անձնական օգնականի ինստիտուտի ներդրմանը, անձի անկախ կյանքին և սոցիալական ներառմանն առնչվող իրավական ակտերի ուսումնասիրությունը՝ միջազգային փորձի համադրմամբ: Այսպես, օրինակ, «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի[115] վերաբերյալ կարծիքով արձանագրվել է, որ ներկայացված նախագծով անորոշ է, թե ինչպես է որոշվելու կամ որ դեպքում է անձնական օգնականի ծառայությունն իրականացվելու պետական ֆինանսավորմամբ, և որ դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձի միջոցների հաշվին: Միաժամանակ՝ ներկայացվել է Պաշտպանի դիրքորոշումն առ այն, որ հաշմանդամություն ունեցող անձին անձնական օգնականի ծառայություն մատուցելու գործընթացում պետության վարած սոցիալական քաղաքականության շրջանակներում պետության մասնակցությունը պետք է գերակշռող լինի և ըստ այդմ՝ հենց պետությունն առաջնահերթ պետք է հոգա անձնական օգնականի մատուցած ծառայության դիմաց վարձատրության հարցը: Նշվածը սկզբունքային է հատկապես այն համատեքստում, որ անձնական օգնականի ինստիտուտի ներդրումը չպետք է պայմանավորված լինի անձի սոցիալական վիճակով, այլ այն պետք է դիտարկվի որպես հաշմանդամություն ունեցող անձի՝ այլոց հետ համահավասար եղանակով իրավունքների իրացման համար անհրաժեշտ հնարավորությունների ապահովումն երաշխավորելու մեխանիզմ: Նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքով իրավասու մարմնի ուշադրությունը հրավիրվել էր նաև այն

[114] Տե՛ս համաժողովի մասնակցության վերաբերյալ հաղորդումը: Հասանելի է https://www.facebook.com/KristinneGrigoryan/posts/pfbid02sUZpn8SG8WdfFDFHpBuVrrkNcABe4XK2hFS6kC2z3WKSp3rv3PZ9Sa1JUE8pdT8Sl հղումով:
[115] Այսուհետ՝ Նախագիծ:

հանգամանքի վրա, որ քաղաքացիները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումներով բարձրացրել են այն խնդիրը, երբ հաշմանդամություն ունեցող անձին խնամող անձը (հիմնականում ընտանիքի անդամը), հնարավորություն չունենալով այդ անձի խնամքին զուգահեռ աշխատել, օբյեկտիվ հանգամանքներից ելնելով՝ զրկվում է ապրուստի միջոց վաստակելու հնարավորությունից: Այս խնդիրը բարձրացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված գրությամբ, որով պարզաբանումներ են պահանջվել հաշմանդամություն ունեցող անձին խնամելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու խնդրի վերաբերյալ: Նախարարության դեռևս 2019 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ ԶԲ/ԱԳ-1/17429-2019 գրությամբ ներկայացված պարզաբանումների համաձայն՝ օրակարգում է հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների խնամքով զբաղված անձանց, այդ թվում՝ նրանց ընտանիքների անդամներին որպես անձնական օգնականներ ձևակերպելու, ըստ այդմ՝ նրանց որպես աշխատող անձ ճանաչելու հնարավորության հարցը: Խնդրի արդիականությունը հաշվի առնելով՝ Պաշտպանին ներկայացված Նախագծի տարբերակից դուրս է մնացել այն հարցի կարգավորումը, թե հաշմանդամություն ունեցող անձին անձնական օգնականի ծառայություն տրամադրելու ողջ ժամանակահատվածն արդյոք հաշվառվելու է այդ անձի աշխատանքային ստաժում, թե ոչ: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկմամբ՝ հաշմանդամություն ունեցող անձին խնամելը (անձնական օգնականի ծառայություններ մատուցելը) իր բնույթով աշխատանք է, ուստի առաջարկվել է, որ անձնական օգնականի ծառայություններ մատուցելը պետք է ենթակա լինի հաշվառման անձի աշխատանքային ստաժում:

Պաշտպանին կարծիքի ներկայացված սոցիալական բնույթի իրավական ակտերի առնչությամբ կարևոր է արձանագրել Պաշտպանի այն դիրքորոշումը, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանը միտված ցանկացած բարեփոխում կամ ծրագիր մշակելիս պետք է առաջնորդվել ոչ թե սոցիալական աջակցության տրամադրման, այլ իրավունքների իրացման և հատկապես անկախ կյանքի ապահովման նոր հնարավորությունների ստեղծման ընկալմամբ:

Հաշվի առնելով խնդրի արդիականությունը՝ 2022 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացրել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի դեռևս նախագծային տարբերակով առաջարկվող Մատչելիության հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ կարծիքը (30 էջից կազմված)՝ նշելով, որ շրջանառվող առաջարկների ուսումնասիրությունը հանգում է նրան, որ.

Մատչելիության հանձնաժողովի առաջարկվող գործառույթները հիմնականում բովանդակային առումով համընկնում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործառույթների հետ: Մատչելիության հանձնաժողովի՝ նախագծով առաջարկվող որոշ գործառույթներ համընկնում են նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին վերապահված լիազորությունների հետ,

Նախագծով հաշվի առնված չէ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կոնվենցիոն կարգավիճակը, որը Պաշտպանին է վերապահվել ՄԱԿ-ի կոմիտեի՝ 2017 թվականին Հայաստանի նախնական զեկույցի մասին եզրափակիչ դիտարկումներում (CRPD/C/ARM/CO/1) մոնիթորինգի մեխանիզմի ստեղծման վերաբերյալ Հայաստանին ուղղված հանձնարարականից հետո,

մատչելիության հանձնաժողովի՝ նախագծով առաջարկվող գործառույթների ոչ հստակ տարանջատումը կարող է հանգեցնել բողոք ներկայացրած անձանց համար շփոթության՝ իրենց հասանելի պաշտպանության հնարավորությունների առումով:

Կարևոր է ընդգծել, որ Պաշտպանի աշխատակազմի դիտարկումները վերաբերել են հատկապես տարբեր պետական կառույցների իրավասությունների հստակ տարանջատման անհրաժեշտությանը, առաջարկվող լուծումների իրավական որոշակիության, իրավասությունների հստակության և բացառիկության հետ կապված խնդիրներին: Միաժամանակ, պետք է նշել, որ Պաշտպանը մշտապես կարևորել է երկրում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման համակարգի կատարելագործմանն ուղղված ցանկացած նախաձեռնություն, որի դեպքում ապահովված կլինի այդ խնդրով զբաղվող մարմինների ու կազմակերպությունների հստակ համակարգը:

4. Մշտադիտարկումներ և այցեր

2022 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վիճակի մշտադիտարկման այցեր են Տավուշի, Գեղարքունիքի մարզերի շուրջ 20 սահմանամերձ բնակավայրեր՝ ուսումնասիրելու անդրբեջանական զինված ուժերի անօրինական գործողությունների հետևանքով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման խոչընդոտների վերաբերյալ և փաստահավաք աշխատանքներ իրականացնելու նպատակով: Այս այցերի շրջանակներում հրապարակվել և/կամ իրավասու մարմիններին են ներկայացվել արտահերթ զեկույցներ, այցերի արդյունքների վերաբերյալ տեղեկանքներ՝ արձանագրված խնդիրների հնարավոր լուծումների առաջարկներով: Այցերի արդյունքներով պայմանավորված՝ պետական, տարածքային մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցների հետ համագործակցությամբ ապահովվել է տարբեր բնակավայրերի մի շարք բնակիչների սոցիալական բնույթի իրավունքներ, այդ թվում՝ կապված աջակցող միջոցների, կարիքների գնահատման հիման վրա անհրաժեշտ աջակցության տրամադրման, կրթության, առողջության պահպանման իրավունքների հետ:

Պաշտպանի մշտադիտարկման գործառույթի հատուկ ուղղությունների է եղել նաև Լաչինի միջանցքի փակման հետևանքով Արցախում շրջափակման մեջ գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ վերաբերյալ փաստահավաք աշխատանքների իրականացումը և ներկայացումը միջազգային վերաբերելի կառույցներին՝ հաշվի առնելով այն Պաշտպանի սահմանադրական և կոնվենցիոն բացառիկ մանդատը: Այս հարցում առանձնահատուկ նշանակություն է ունեցել Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ ամենօրյա աշխատանքային սերտ համագործակցությունը, որի արդյունքում ոլորտային տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ, ԵԽ, ԵՄ վերաբերելի դերակատարներին են ներկայացվել արտահերթ զեկույցներ և փաստահավաք տեղեկություններ:

2022 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը մշտադիտարկման չհայտարարված այց է իրականացրել «Խարբերդի մասնագիտացված մանկատուն[116]» և «Մանկան տուն[117]»: Այցերի արդյունքում արձանագրվել են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք շարունակական բնույթ ունեն: Օրինակ՝ դեռևս խնդրահարույց է հաստատությունների անձնակազմերի ոչ բավարար լինելու հարցը, երեխաների կարիքների գնահատման առկա գործընթացը չի երաշխավորում դրանց իրական և անհատականացված լինելը, քանի որ բացակայում են համապատասխան մասնագետների համար նախատեսված ուղեցույցներ, մասնագիտական աշխատանքի ձևաչափեր կամ այլ կարգավորումներ, մասնագիտական հստակ և թիրախային աշխատանքների արտացոլման նպատակով բացակայում են արդյունավետ փաստաթղթավորման մեխանիզմները, ինչի հետևանքով անհասկանալի է, թե բազմամասնագիտական թիմի կողմից կոնկերտ երեխայի զարգացման համար ինչ ընդհանուր նպատակներ են սահմանվել, դրանց հասնելու համար կոնկրետ ինչ աշխատանքներ են իրականացվել և ինչ խնդիրներ են վերհանվել դրանց արդյունքում: Այցերի արդյունքներն աշխատանքային կարգով քննարկվել են հաստատությունների ղեկավարների, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն 2023 թվականի ընթացքում հաստատությունների անձնակազմերի համար իրավունքների վերաբերյալ վերապատրաստումներ իրականացնելու մասին:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և հնարավոր խախտումների կանխարգելման համատեքստում, որպես ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին, 2022 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման նպատակով ձեռնարկվող քայլերի վերաբերյալ կատարվել են շուրջ 90 հարցումներ, որոնց ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի կողմից ընդունվել են սեփական նախաձեռնությամբ խնդիրների ուսումնասիրման որոշումներ, վերհանված խնդիրների վերաբերյալ իրավասու նախարարություններին են ներկայացվել առաջարկներ:

[116] Տե՛ս այցի վերաբերյալ հայտարարությունը, հասանելի է https://www.facebook.com/KristinneGrigoryan/posts/pfbid02HxjbNNdUQBa2wNuxUSsSWecuj61kg6ZvM3NqoyhNj3LVANqfK7Ez8xN3SU6KvpdRl հղումով:

[117] Տե՛ս այցի վերաբերյալ հայտարարությունը, հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2397 հղումով, ինչպես նաև Հանրային հեռուստատեսության անդրադարձը, հասանելի է https://bit.ly/3IFlf75 հղումով:

2022 թվականի ընթացքում իրականացրել է շուրջ 1700 մեդիա, ներառյալ՝ սոցիալական հարթակների մոնիթորինգ, որի արդյունքում վեր են հանվել համակարգային խնդիրներ, իրականացրել է համայնքային այցեր արձանագրված խնդիրներին տեղում ծանոթանալու համար, կազմակերպել կամ մասնակցել է աշխատանքային քննարկումների վեր հանված խնդիրների ուսումնասիրության նպատակով: Օրինակ, կարևոր է անդրադառնալ հանրային հնչեղություն ունեցող՝ «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ՀՀ կառավարություն ներկայացված «Հենաշարժողական խնդիրներ ունեցող, զինվորական ծառայության/հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձանց համար հարմարեցված տների կառուցման ծրագրին»: Այս կապակցությամբ պետք է նշել, որ մամուլի մշտադիտարկման ընթացքում իրազեկվելով ծրագրի վերաբերյալ՝ 2022 թվականի հուլիսի 25-ին ՀՀ վարչապետի ղեկավարի մոտ կայացած՝ Կազմակերպության կողմից ներկայացված՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տների կառուցման ծրագրի մասին խորհրդակցության ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, այդ թվում՝ համայնքում ապրելու, ինքնուրույն կյանք վարելու և սոցիալական ինտեգրման իրավունքների իրացման համար կարևոր նշանակություն ունեցող սկզբունքները և դիտարկումները: Կարևորելով հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար հատկապես վերականգնողական կենտրոն ստեղծելու մտադրությունը՝ Պաշտպանը միաժամանակ ընդգծել է, որ՝

ա. հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության վայրը, որտեղ և ում հետ են ապրելու, ստիպված չլինեն ապրել բնակության ինչ-որ պայմաններում,
բ. հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն մի շարք ներտնային, բնակության հետ կապված և համայնքային աջակցության այլ ծառայություններից և ստանան համայնքում ապրելու և ներգրավվելու, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անձնական աջակցություն,
գ. բնակչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հնարավորությունները հավասարապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց և համապատասխանեն նրանց կարիքներին,
դ. պետությունը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց համայնքում ապրելու, հանրությանը հասանելի ծառայություններից օգտվելու իրավունքը, այդ թվում՝ մյուսների հետ համահավասար հիմունքներով ընտրություն կատարելու հնարավորությամբ, ինչպես նաև համայնքից չմեկուսացվելու իրավունքը՝ համապատասխան ծառայություններ մատուցելու միջոցով (այդ թվում՝ անհատական աջակցություն, տնային սպասարկում և այլն),
ե. հաշմանդամություն ունեցող անձանց համար խնամքի այնպիսի հաստատություններ ստեղծելը, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք մեկուսացած են կամ զրկված են իրենց առօրյա կյանքին վերաբերող որոշումներ կայացնելու իրավունքից, արգելվում է: Այս նպատակով պետությունը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար անկախ կյանք վարելու և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծումը, այդ թվում՝

խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններում կազմակերպվող ծառայությունները համայնքահենք ծառայություններով փոխակերպելը:

Հաշվի առնելով նաև Պաշտպանի առաջարկությունը՝ 2022 թվականի հուլիսի 25-ի խորհրդակցության ընթացքում որոշվել է դիտարկել հենաշարժողական խնդիրներ ունեցող զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տների կառուցման ծրագրի նախագծի հիմնական ուղղվածության վերաշարադրման հնարավորությունը և հիմնական շեշտադրումը կրթական, այդ թվում՝ վերականգնողական բաղադրիչի վրա կատարելու հնարավորությունը՝ այն ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների հետ հակասություն չառաջացնելու և ՀՀ օրենսդրության սահմանումներին համապատասխան դարձնելու համար: 2022 թվականի օգոստոսի 17-ին Պաշտպանի դիտարկումները ներկայացվել են նաև Սոցիալական նախարարական կոմիտեի նիստի ընթացքում, որի արդյունքում նախագիծը հետ է կանչվել և ուղարկվել վերանայման: Նախագծի վերանայման ընթացքում այն չի ներկայացվել Պաշտպանի աշխատակազմ՝ կարծիքի: 2022 թվականի նոյեմբերի 24-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգում ընդգրկված ««Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության ծրագրին հավանություն տալու և գույք նվիրաբերելու մասին» հարցի քննարկմամբ նախագիծը հաստատվել է, սակայն Պաշտպանի դիտարկումները գործնականում հաշվի առնված չեն:

5. Դիմումների ուսումնասիրություն և քննարկում

Պաշտպանը՝ որպես Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության սահմանադրական անկախ մարմին, արձանագրում է, որ չնայած պետության ձեռնարկած քայլերին՝ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող մարդիկ շարունակում են բախվել խտրականության և իրենց իրավունքների իրացման տարաբնույթ խոչընդոտների: Նման եզրահանգումը բխում է ոչ միայն Պաշտպանի մշտադիտարկումների, ոլորտային հասարակական կազմակերպությունների տրամադրած տեղեկությունների, այլ նաև անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքներից:

Միաժամանակ, առանցքային նշանակություն ունի աշխատանքային այն մոտեցումը, որ Պաշտպանի սահմանադրական և կոնվենցիոն մանդատների իրականացման վերջնական արդյունքն ոչ թե իրավունքների խախտման վերաբերյալ որոշումների կայացումը կամ նման որոշման կայացման ձգտելն է, այլ Պաշտպանի իրավասությունների կիրառումը կոնկրետ դիմումով բարձրացված կամ մշտադիտարկման արդյունքում վեր հանված խնդրի կարգավորման նպատակով: Այս մոտեցման կարևորությունը գործնականում կայանում է նրանում, որ թեև Մարդու իրավունքների պաշտպանի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն, այնուամենայնիվ, Պաշտպանի ընդունած որոշումները, այդ թվում՝ իրավունքների խախտման վերաբերյալ որոշումներն իրավասու մարմինների կողմից պարտադիր կատարման ենթակա չեն՝ անկախ այն բանից, թե դրանք որքան հիմնավոր և փաստարկված կերպով են ներկայացում իրավունքի խախտման փաստը: Նշվածը պայմանավորված է ոչ միայն գործող իրավակարգավորումներով, այլ որոշ դեպքերում նաև պետական պաշտոնատար անձանց՝ իրավունքի խախտման փաստի վերաբերյալ կարծրատիպային և ոչ իրավունքահեն ընկալումներով: Արդյունքում՝ անգամ ունենալով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ընդունված իրավունքների խախտման վերաբերյալ որոշում՝ մարդը գործնականում միայնակ է մնում իր իրավունքի խախտման հետևանքների հետ այնքան ժամանակ, որքան խախտող մարմինը չի ընդունել և իրականացրել Պաշտպանի որոշմամբ ներկայացված առաջարկները: Այս հանգամանքով պայմանավորված՝ Պաշտպանի համար իրավունքների խախտման վերաբերյալ

որոշումների կայացումն ինքնանպատակ չի եղել և նկարագրված մոտեցման արդյունքում բողոքների քննարկման ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հնարավոր է եղել ապահովել անձի խախտված իրավունքների վերականգման կամ դրանք իրացնելու համար միջանկյալ հնարավորություններ: Այսպես, օրինակ, Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ քննարկվել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում սովորող լսողության խնդիրներ ունեցող ուսանողների համար ժեստերի լեզվով ուսուցում ապահովելու հարցը: Այս դեպքում, թեև իրավունքների ակնհայտ խախտման առկայությանը, հրատապ կարգով խախտման որոշում կայացնելու փոխարեն, գրավոր պարզաբանումներ պահանջելուց հետո աշխատանքային կարգով հարցը քննարկվել է պետական իրավասու մարմնի հետ՝ ներկայացնելով իրավունքների ապահովման հնարավոր լուծման եղանակները, որի արդյունքում 2023 թվականից՝ նոր ուսումնական տարին սկսելուց հետո լսողության խնդիրներ ունեցող ուսանողների համար կապահովվի ժեստերի լեզվով ուսուցումը: Այս դեպքում հարցի քննարկումը կդադարեցվի միայն խնդրի վերջնական լուծումից հետո, ինչը հնարավորություն կտա արձագանքել նաև քննարկված լուծման իրականացման ընթացքում հնարավոր խնդիրներին կամ կարիքներին:

2022 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմն ուսումնասիրել և քննարկել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ շուրջ 900 դիմում, բողոք՝ գրավոր և բանավոր ընթացակարգով: Հաշմանդամության ոլորտում Պաշտպանին հասցեագրված բողոքները հիմնականում վերաբերում են այնպիսի համակարգային բնույթի խնդիրների, ինչպիսիք են հաշմանդամության կարգավիճակի սահմանման կամ հաշմանդամության խմբի վերանայման, գնումների կամ այլ կազմակերպչական գործընթացներով պայմանավորված՝ պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքի իրացման, միջավայրային հարմարեցումների, ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության ապահովման, հաշմանդամության կամ հիվանդությունների հիմքով խտրականության դրսևորումների, համայնքահեն ծառայությունների հասանելիության, բժշկասոցիալական փորձաքննությունների, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց նկատմամբ փորձաքննությունների, վերափորձաքննությունների իրականացման վարչարարության, ԲՍՓ հանձնաժողովների անդամների՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան կացարաններով ապահովվելու, զբաղվածության իրավունքի իրացման, հանրային կյանքի տարբեր ոլորտներում մասնակցության իրավունքի իրացման, բժշկական ծառայությունների հասանելիության, սոցիալական, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքների իրացման խնդիրները: Կարևոր է նշել, որ բողոքների, դիմումների ուսումնասիրության ընթացքում Պաշտպանի իրավասությունների շրջանակում պետական իրավասու մարմիններից բացի կոնկրետ անհատական գործի վերաբերյալ գրավոր տեղեկատվության և պարզաբանումների տրամադրման վերաբերյալ պահանջի ներկայացումն ու դրանց ուսումնասիրությունը, աշխատանքային կարգով քննարկումներ են իրականացվել համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ: Այսպես, օրինակ, աշխատանքային կարգով ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության, Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչների քննարկվել է ԲՍՓ հանձնաժողովների անդամների՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելմանը միտված մեխանիզմների և գործիքակազմերի ներդրման, այդ թվում՝ բողոքների քննարկման ընթացակարգերի արդյունավետության բարձրացման անհրաժեշտության հարցերը, հաշմանդամություն ունեցող երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների անձնակազմերի կարողությունների զարգացման անհրաժեշտությունը և այլն: Իրականացված աշխատանքների համատեքստում, այնուամենայնիվ, դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ հատկապես գործնականում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորման մոտեցումները: Դեռևս հաղթահարված չեն

հաշմանդամություն ունեցող երեխաների ապաինստիտուցիոնալացման, խնամատարության շրջանակների ընդլայնման, հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի ապահովման բավարար պայմանների երաշխավորման ու ապահովման մարտահրավերները, մասնավորապես՝ քաղաքաշինության, տրանսպորտի, տեղեկատվության ու հաղորդակցության, սոցիալական, կրթական, առողջապահական, մշակութային ու սպորտային ծառայությունների բավարար հասանելիությունը: 2022 թվականին էլ ավելի է սրվել հաշմանդամության կարգավիճակի տրամադրման գործընթացի հետ կապված խնդիրը՝ պայմանավորված ոչ միայն գործող չափորոշիչների ոչ իրավունքահեն և կարիքահեն լինելով, այլ նաև մարդկանց համար հաճախ անհասկանալի պրակտիկայով:

6. Համագործակցություն քաղաքացիական հասարակության կառույցների, շահագրգիռ մարմինների հետ

2022 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը շարունակել է ինստիտուցիոնալ ակտիվ համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄԶԳ և Միջազգային հանրապետական ինստիտուտի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ 2022 մարտի 15-ին[118] հրավիրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցել են ինչպես խորհրդի անդամները, այնպես էլ ՄԻՊ աշխատակազմի, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչները: Հասարակական խորհրդի նիստի ընթացքում քննարկվել է համայնքահեն ծառայությունների մատուցման հիմնախնդիրները հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համատեքստում, ներկայացվել են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցի մշակման մեթոդաբանությունը, ինչպես նաև արտահերթ զեկույցով և տարեկան հաղորդմամբ[119] արձանագրված այն համակարգային խնդիրները, որոնք առկա են պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման ոլորտում:

Պաշտպանի՝ 2021 թվականի օգոստոսի 9-ին Պաշտպանի որոշմամբ ձևավորված հասարակական խորհրդի գործունեության ժամկետի ավարտով պայմանավորված՝ Պաշտպանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 3-ի 45-Ա որոշմամբ հաստատվել է Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով նոր հասարակական խորհրդի գործունեության կարգը և անհատական կազմը՝ ընդգրկելով 20 հասարակական կազմակերպություն, հիմնադրամ և անհատ փորձագետ[120]: Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի նիստերը տեղի են ունենում հրապարակային կամ ոչ հրապարակային, այդ թվում՝ ընդլայնված մասնակցությամբ: Հասարակական խորհրդի բոլոր նիստերի ընթացքում ապահովվել է ժեստերի լեզվով զուգընթաց թարգմանությունը, ինչը սկզբունքային նշանակություն ունի տեղեկատվության մատչելիության երաշխավորման տեսանկյունից:

---

[118] Տե՛ս Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի նիստի վերաբերյալ հրապարակումը: Հասանելի https://www.ombuds.am/am/site/ViewNews/2167 հղումով:
[119] Նշված փաստաթղթերը հասանելի են https://bit.ly/3MXkt5j և https://bit.ly/3teojPE հղումներով:
[120] Տե՛ս Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի գործունեության կարգը և անհատական կազմը: Հասանելի https://www.ombuds.am/am/site/InvalidLegalDocuments հղումով:

Պաշտպանի նախաձեռնությամբ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ[121] 2022 թվականի դեկտեմբերի 14-ին հրավիրվել է հասարակական խորհրդի ընդլայնված նիստ[122] «խտրականություն անձի հաշմանդամության, հիվանդության հիմքերով», որին մասնակցել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչներ ու միջազգային փորձագետներ: Նիստի ընթացքում ներկայացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումների արդյունքները և առաջարկները՝ անդրադառնալով ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1112-Ն որոշման կիրառման ընթացքում առկա գործնական խնդիրները[123], ինչպես նաև ներկայացվել է խտրականության դեպքերի բացահայտման մեթոդաբանություն ու ՄԻԵԴ դիրքորոշումը, 2021-2030 թթ Եվրոպական հաշմանդամության ռազմավարությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցության արդյունավետ և կարևոր օրինակներից է Հայաստանի և Արցախի պաշտպանների հաստատությունների և նրանց առընթեր հասարակական խորհուրդների ինստիտուցիոնալ համագործակցությունը, որի արդյունքում ապահովվել է Արցախից տեղահանված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը Հայաստանում: Օրինակ, նման համագործակցության արդյունքում հնարավոր է եղել հաշմանդամություն ունեցող երեխայի տեղափոխումը Հայաստանը, նրա կարիքների գնահատումը, խնամքի և կարիքահեն ծառայությունների տրամադրումը Հայաստանում: Կարևորելով միջգերատեսչական և միջոլորտային համագործակցությունը՝ ի նպաստ համակարգային խնդիրների լուծման, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2022 թվականի ընթացքում մասնակ ցել են գործադիր, օրենսդիր մարմինների նախաձեռնությամբ, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի նախաձեռնությամբ պետական, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև մարզային ոլորտային այլ կառույցների հետ կազմակերպված առնվազն 76 խորհրդաժողովների,

[121] Խորհրդի նիստը կազմակերպվել է «Արդարադատության մատչելիության խթանում՝ Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար արտադատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Գործընկերություն հանուն լավ կառավարման II» (2019-2022) ծրագրային ձևաչափի շրջանակներում և իրականացվում Եվրոպայի խորհրդի կողմից:

[122] Տե՛ս Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի նիստի վերաբերյալ հրապարակումը: Հասանելի է shorturl.at/EGRTW հղումով:

[123] Տե՛ս 2015 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1112-Ն որոշումը: Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=171453 հղումով:

աշխատանքային քննարկումների, որոնց ընթացքում ներկայացվել են նաև Պաշտպանի մշտադիտարկումներին արդյունքները, ոլորտային համակարգային խնդիրները՝ ընդգծելով օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումները և հնարավոր լուծումների առաջարկները:

Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումը շարունակել է համագործակցությունը լրագրողների հետ, ինչի արդյունքում տրամադրվել են պարզաբանումներ, տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև աշխատանքային կարգով տրամադրվել է խորհրդատվություն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ լուսաբանումների իրականացման իրավունքահեն մոտեցումների հետ կապված շուրջ 23 հարցում, խորհրդատվություն:

IX. ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ (ԿԱՄ), հաշվետու ժամանակահատվածում հաստատության սահմանած մեթոդաբանությամբ մշտադիտարկել է հետևյալ հաստատությունները՝

- 3 մեծ քրեակատարողական հաստատություններ՝ Աբովյան, Արմավիր և Գորիս ՔԿՀ-ները;
- 3 խոշոր հոգեբուժական հաստատություն՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ««Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ը և ՀՀ առողջապահության նախարարության «Ավան» հոգեկան առողջության կենտրոնը;
- 9 ձերբակալված անձանց պահելու վայր՝ Արմավիրի մարզային վարչության Արմավիրի և Վաղարշապատի, Արարատի մարզային վարչության Արտաշատի, Մասիսի և Արարատի, Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի և Դիլիջանի ձերբակալված անձանց պահելու վայրերը;
- 6 դատարանի խցեր՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աշտարակի, Ապարանի, ինչպես նաև Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրու և Մարալիկի նստավայրեր:

Նշված հաստատությունների մշտադիտարկման արդյունքում ԿԱՄ վերհանած խնդիրների մասին սույն հաղորդման մեջ կներկայացվի ստորև՝ ըստ հաստատության տեսակների:

Հաշվետու ժամանակահատվածում կայացվել է մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին մեկ որոշում, որը վերաբերել է օտարերկրացի ազատությունից զրկված անձին իր կամքին հակառակ հոգեբուժական օգնություն տրամադրելուն, անձի համար մատչելի լեզվով հաղորդակցության չապահովմանը, ստացած մարմնական վնասվածքների ոչ պատշաճ արձանագրմանը, արտաքին աշխարհի հետ կապի չապահովմանն ու առաջին անհրաժեշտության կենցաղային և անկողնային պարագաներ չտրամադրելուն:



Մեկ այլ դեպքով (Արմավիր ՔԿՀ-ում) քոս հիվանդության արձանագրման դեպքում սանիտարահիգենիկ կանոնների պահպանման ուղված միջոցառումների օրենսդրական պահանջներին անհամապատասխան կազմակերպման հետևանքով հիվանդության տարածման անթույլատրելության հարցի կապակցությամբ նախաձեռնվել է ուսումնասիրություն և տրվել առաջարկներ՝ մասնավորապես՝ ՔԿՀ վարչակազմի և "Քրեակատրողական բժշկության կենտրոն" ՊՈԱԿ-ի համագործակցության հստակ մեխանիզմների մշակում և իրականացում վարակիչ հիվանդությունների հայտնաբերման և դրա հետագա տարածումը կանխելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի հաստատությունն իր կոնվենցիոն մանդատի շրջանակներում իրականացրել է Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում ծառայող ավելի քան 75 ծառայողի վերապատրաստում՝ ներառելով Երևանի ու մարզային ստորաբաժանումները[124]: Վերապատրաստումն իրականացվել է

ԿԱՄ կողմից ՁՊՎ-ների մշտադիտարկման արդյունքներում վերհանված խնդիրները հասցեագրելու նպատակով: Վերապատրաստումների ընթացքում ԿԱՄ ներկայացուցիչները կենտրոնացել են ազատությունից զրկված անձանց պահման պայմանների, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ազատությունից զրկված անձանց իրավունքների իրացման կարևոր երաշխիք հանդիսացող փաստաթղթավորման հարցերի ու ոստիկանության ծառայողի կողմից անհրաժեշտ գործելակերպերի վրա:

[124] https://ombuds.am/am/site/ViewNews/2376

Ոստիկանության ծառայողներին ներկայացվել է խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ոլորտի ներպետական և միջազգային չափանիշները, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատը և գործառույթները:

Պաշտպանը բարձր է գնահատում Ոստիկանության կողմից ցուցաբերված նախանձախնդրությունը՝ Պաշտպանի հաստատության կողմից վերհանված խնդիրները լուծելու նպատակով ոստիկանության ծառայողների վերապատրաստումներ կազմակերպելու առաջարկություն ներկայացնելու համար:

2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության ներկայացուցիչները «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում վերապատրաստել են շուրջ 500 քրեակատարողական ծառայողների «Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշները», «Քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները» և «Մարդու թրաֆիքինգի կանխարգելում» թեմաներով:

1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների մշտադիտարկման արդյունքները

Մշտադիտարկման այցերի պահին՝
«Աբովյան» ՔԿՀ-ում պահվել է ազատությունից զրկված 66 անձ (40 կալանավորված անձ և 26 դատապարտյալ): Ազատությունից զրկված 66 անձանցից 4-ը եղել են արական սեռի անչափահաս կալանավորված անձինք, իսկ մեկը՝ չափահաս: Վերջինս չափահաս է դարձել քրեակատարողական հիմնարկում պահվելու ընթացքում:

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվել է ազատությունից զրկված 926 անձ (603 կալանավորված անձ և 323 դատապարտյալ):
«Գորիս» ՔԿՀ-ում պահվել է 48 դատապարտյալ և 39 կալանավորված անձ, ընդհանուր՝ ազատությունից զրկված 87 անձ, ընդ որում 7 դատապարտյալ և 9 կալանավորված անձ արցախից:

Հեշտացնելու համար ընթերցողի գործը՝ սույն մասում երեք քրեակատարողական հիմնարկներում իրավունքների իրացման յուրաքանչյուր հարցի ներքո կներկայացվեն մշտադիտարկման արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր ՔԿՀ-ի առանձնահատկությունների: Այդպիսիով Պաշտպանը հնարավորություն կունենա ներկայացնելու խնդիրները ոչ թե անորոշ շարադրանքով, այլ կոնկրետ ՔԿՀ-ի կոնկրետ օրինակներով, միևնույն ժամանակ, սույն մասում իրավունքների իրացման հարցերի բաժանումը (պահման պայմաններ, բժշկական սպասարկում և այլն) հնարավորություն կտա ընթերցողին ընդհանուր պատկերացում կազմելու խնդիրների համակարգային բնույթի և դրանց մասշտաբների մասին:

Նկատի ունենալով այն, որ ՔԿՀ-ների մշտադիտարկումը որպես մեծ հաստատություններ, գեներացրել է մեծ թվով առաջարկություններ, յուրաքանչյուր ՔԿՀ-ի մասով Պաշտպանի առաջարկությունները կներկայացվեն առանձին հավելվածի ձևով (Հավելված 2)՝ այդպիսիով ընթերցողի համար մատչելի ձևով հաղորդումը ներկայացնելով և միևնույն ժամանակ քաղաքականություն մշակողի համար մեկ տեղում ներկայացնելով նաև վերհանված խնդիրների լուծման առաջարկությունները:

1) Պահման պայմաններ. (ա) Աբովյան ՔԿՀ-ում անչափահաս ազատությունից զրկված անձանց պահման պայմանները, որևէ կերպ չեն տարբերվել չափահասների պահման պայմաններից: Հարկ է նշել, որ ԽԿԿ-ի համաձայն՝ ազատությունից զրկված բոլոր անչափահասները պետք է պահվեն իրենց տարիքի համար հատուկ նախատեսված հիմնարկներում, որոնք ունեն անչափահասների կարիքներին հարմարեցված ռեժիմներ, և որտեղ անչափահասների հետ վարվեցողության կապակցությամբ վարչակազմը վերապատրաստված է: Ավելին, անչափահասների համար նախատեսված ազատությունից զրկման վայրերում պետք է հատուկ ջանքեր գործադրվեն երկարաժամկետ սոցիալական մեկուսացման ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: Սա ենթադրում է բազմակողմանի մոտեցում՝ օգտագործելով մի շարք մասնագետների (այդ թվում՝ ուսուցիչներ, դասընթացավարներ, հոգեբաններ) հմտություններն անչափահասների անհատական կարիքներն անվտանգ կրթական և սոցիալթերապևտիկ միջավայրում ապահովելու նպատակով:[125]

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի շենքային պայմանները գտնվում են անբավարար և սանիտարական անընդունելի վիճակում: Մեկուսարանի միջանցքներում, խցերում և աշխատասենյակներում խոնավության մակարդակը եղել է բարձր, դրանց պատերի և առաստաղների ծեփամածիկը եղել է թափված, որոշ տեղերում՝ քանդված և բորբոսնած: Նույն վիճակն է արձանագրվել նաև մեկուսարանի մարզասրահում, լվացքատանը և պահեստային սենյակում:

Մեկուսարանի առաջին հարկում տեղակայված կարանտինային խուցը և պատժախուցը նույնպես գտնվել են անբավարար վիճակում: Խոնավության բարձր մակարդակի պատճառով նշված խցերում, այդ թվում դրանց սանհանգույցներում, պատերի և առաստաղի ծեփամածիկը եղել է թափված:

Ուսումնասիրված խցերի մակերեսները հիմնականում կազմել են 13-ից 15 քառակուսի մետր, որոնք կահավորված են եղել ազատությունից զրկված 4 անձ պահելու համար նախատեսված գույքով: Մշտադիտարկման պահին խցերում առավելագույնը տեղաբաշխված է եղել ազատությունից զրկված 3 անձ:

Հարկ է նշել, որ այցի ընթացքում մեկուսարանի մասնաշենքի առաջին հարկում արդեն սկսվել էին հիմնանորոգման աշխատանքները, ինչը ողջունելի է:

Այսպիսով, կանաց տեղամասում չեն պահպանվել օրենսդրությամբ սահմանված նորմերը և կացարանում համատեղ պահվել է կրկնակի ավել թվով ազատությունից զրկված անձ:

Խնդրահարույց է համարվել, որ կանանց տեղամասի ընդհանուր կացարանն օրվա հերթապահ պատասխանատուների հսկիչ կետից շարունակել է առանձնացված լինել ապակե միջնորմով, ինչն արձանագրվել է դեռևս նախորդ մշտադիտարկման այցերի ընթացքում[126]

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ քրեակատարողական հիմնարկում պահվել է իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող երեք կին, որից երկուսը՝ մեկուսարանում, իսկ մեկը՝ կանանց տեղամասում: Մեկուսարանում պահվող նշված կանանց պահման պայմանները առանձնապես չեն տարբերվել ազատությունից զրկված մյուս անձանց պայմաններից: Նրանց խցերը երեխայի խնամքի առանձնահատուկ

[125] Տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 9-րդ ընդհանուր զեկույցը https://rm.coe.int/1680696a73 կայքէջում, կետ 28:

[126] Տե՛ս https://www.ombuds.am/images/files/a18fe372eb128c32e7b10c30c44030d6.pdf կայքէջում՝ 30-31 էջեր:

պահանջների հաշվառմամբ կահավորված չեն եղել. խցերում բացակայել է, օրինակ, երեխայի օրորոց կամ մանկական մահճակալ, տաք ջուր, երեխայի խնամքի համար կահավորված լոգարան և սանհանգույց, առկա չի եղել առանձին, կահավորված խաղահրապարակով զբոսաբակ, ինչպես նաև երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանը նպաստող միջավայր:

Մեկ այլ խնդիր է երեխայի լոգանքը ընդհանուր բաղնիքում կազմակերպելու հարցը, այն էլ՝ շաբաթը մեկ անգամ, քանի որ խցում համապատասխան պայմաններ առկա չեն: Ավելին՝ մեկուսարանի լոգարաններից մեկում, որտեղ կազմակերպվել է երեխաների լոգանքը, առկա է եղել կոտրված եզրերով տաշտ, ինչը կարող է վտանգավոր լինել վերջիններիս համար:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն[127] որոշման հավելվածի 79-րդ կետը սահմանում է, որ հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում տեղավորվում են այնպես, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետ շփումը:

Այսպիսով, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում բացակայում են հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար հատուկ նախատեսված խցեր կամ կացարաններ, չեն ապահովվում նրանց վիճակի առանձնահատկություններին համապատասխան պայմաններ:

Մշտադիտարկման այցի պահին «Աբովյան» ՔԿՀ-ում պահվել է կալանավորված անձի կարգավիճակ ունեցող 4 անչափահաս և 1 չափահաս անձ (18 տարեկան), որը չափահաս է դարձել քրեակատարողական հիմնարկում պահվելու ընթացքում: Վերջինս պահվել է միայնակ: Քրեակատարողական հիմնարկում պահվող 4 անչափահաս կալանավորված անձինք տեղաբաշխված են եղել 3 խցերում: Անչափահասներից երկուսը պահվել են միասին, իսկ մյուս երկուսը միայնակ՝ առանձին խցերում:

Անչափահաս կալանավորված անձինք պահվել են հիմնարկի մեկուսարանի երկրորդ հարկի խցերում, որտեղ խոնավության մակարդակը եղել է բարձր, իսկ պատերի և առաստաղների ծեփամածիկը՝ թափված, որոշ տեղերում՝ նաև քանդված: Վերոնշյալ խցերը կանանց համար նախատեսված խցերից տարբերվել են միայն կահավորանքով. դրանք կահավորված են եղել երկու մեկհարկանի մահճակալներով:
Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ անչափահասները պետք է պահվեն իրենց համար հատուկ նախատեսված հաստատություններում և չպետք է պահվեն չափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում[128]: Ուստի, ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման առանձնահատուկ պայմանների բացակայությունը խնդրահարույց է:

Շարունակում է մտահոգիչ մնալ ազատությունից զրկված անձանց, իրենց կամքից անկախ, երկարատև միայնակ պահելը: Այսպես, այցի պահի դրությամբ 18-ամյա արական սեռի կալանավորված անձը 10 ամիս պահվել է միայնակ՝ քրեակատարողական հիմնարկում չափահաս դարձած արական սեռի այլ կալանավորված անձինք չլինելու պատճառով: Միայնակ է պահվել նաև դատապարտյալ չափահաս տղան: Նրա միակ զբաղմունքը միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող դասընթացներն են, իսկ օրվա մնացած մասը փաստացի վերջինս անցկացնում է խցում՝ հիմնականում

[127] ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշում:

[128] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կանոն 11.1:

հեռուստացույց դիտելով: Վերջինս դասընթացներին մասնակցում է միայնակ և սահմանափակված են շփումներն ազատությունից զրկված անչափահաս տղաների հետ՝ չնայած նրանց մինչև լավ հարաբերություններին: Անչափահաս ազատությունից զրկված անձինք շփվում են հարակից խցերի պատերին խփելու և բարձրաձայն խոսելու, ինչպես նաև խցերի պատուհաններից միմյանց հետ զրուցելու միջոցով: Այսպիսով, ազատությունից զրկված այլ անչափահասների բացակայության և անչափահասներին չափահասներից անջատ պահելու կանոնի կիրառման արդյունքում անձը տևական ժամանակ (10 ամիս) պահվում է միայնակ՝ առանց այլ անձանց հետ բավարար շփման հնարավորության:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տրամադրած պարզաբանումների համաձայն՝ ազատությունից զրկված անչափահաս անձանց շփումներն ապահովելու նպատակով իրենք ժամանակ առ ժամանակ ռոտացիայի մեխանիզմով փոփոխում են վերջիններիս խցերը, որպեսզի նրանցից ոչ ոք երկարատև միայնակ չմնա: Այնուամենայնիվ, քրեակատարողական ծառայողները նշել են, որ վերը նշված միայնակ պահվող կալանավորված անձանց խցերում այլ անձանց տեղաբաշխել չեն կարող վերջիններիս անվտանգության ապահովման խնդիրների պատճառով: Հետևաբար, անընդունելի է, որ ազատությունից զրկված անչափահաս անձինք ոչ միայն պահվում են «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կանանց մեկուսարանի մասնաշենքում, այլև առկա չեն անչափահասների համար նախատեսված հատուկ խցեր՝ վերջիններիս տարիքին և առանձնահատուկ կարիքներին համապատասխան պայմաններով:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում յուրաքանչյուր խցում պահվել է մինչև 4 անձ: Դիտարկված խցերում պահման պայմանները եղել են անբավարար, մասնավորապես՝ խցերում բարձր է եղել խոնավության մակարդակը, դրանց պատերի ծեփամածիկը եղել է թափված, որոշ տեղերում՝ քանդված և բորբոսնած: Խցերում խոնավության հիմնական պատճառը եղել է սանհանգույցների ոչ բարեկարգ վիճակը: Խոնավության բարձր մակարդակի պատճառով խցերի սանհանգույցներում նույնպես պատերի և առաստաղի ծեփամածիկը եղել է թափված: Նույն վիճակն է արձանագրվել նաև մասնաշենքի 2-րդ հարկում տեղակայված խցերում:

Ուսումնասիրված խցերի մակերեսները հիմնականում կազմել են 18 քմ (ներառյալ՝ 2 քմ մակերեսով սանհանգույցը), որոնք կահավորված են եղել ազատությունից զրկված 4 անձ պահելու համար նախատեսված գույքով:

Մշտադիտարկման այցի պահին դեռևս լուծված չի եղել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի արհեստական օդափոխության հարցը, ինչը խիստ մտահոգիչ է: Հաճախ ազատությունից զրկված անձինք փորձում են սեփական միջոցներով ձեռք բերել էլեկտրական հովհարիչներ և խցում ապահովել բավարար ջերմային ռեժիմ: Մշտադիտարկման այցի պահին որոշ խցերում տեղադրված են եղել մինչև անգամ երեք հովհարիչներ: Ավելին, խցերում տոթը մեղմելու համար բաց են թողնվում նաև խցերի կերակրադռնակները:

Մասնաշենքի խցերում, միջանցքներում և աշխատասենյակներում արձանագրվել են նաև միջատներ՝ ուտիճներ, մոծակներ, ճանճեր, խավարասերներ և այլն: Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք նշել են, որ խցերում հանդիպել են նաև փայտոջիլներ և լվեր:

Քրեակատարողական հիմնարկում սանիտարահիգիենիկ անբավարար վիճակը չի նպաստում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի պատշաճ ապահովմանը:

Պատժախցային մասնաշենքը գտնվել է անմխիթար վիճակում: Մասնաշենքի միջանցքի, բոլոր խցերի, այդ թվում՝ դրանց սանհանգույցների պատերը եղել են խոնավացած, բորբոսնած, ծեփամածիկը թափված: Առկա է եղել վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հրատապ անհրաժեշտություն:

Սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ են արձանագրվել նաև պատժախցային բաժանմունքի լոգարանում, որտեղ նախատեսված է եղել հինգ լոգախցիկ: Բաղնիքի ցնցուղները եղել են հանված, լոգախցիկների պատերը եղել են ժանգի փառով պատված: Լոգարանում բացակայել է ինչպես բնական, այնպես էլ արհեստական լուսավորությունը, լամպեր տեղադրված չեն եղել: Բաղնիքում բացակայել է նաև օդափոխության համակարգը:

Մշտադիտարկման այցի ընթացքում պարզվել է, որ պատժախուց տեղափոխելու ձևով կարգապահական տույժի ենթարկված դատապարտյալներից առնվազն երկուսը պաժախցային ռեժիմում են պահվել համապատասխանաբար 50 օր և 6 ամիս:

Այս առումով Պաշտպանն արձանագրել է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 107-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանվում է, որ դատապարտյալը պատժախցում կարող է անընդմեջ պահվել քսան օրից ոչ ավելի: Այսպիսով, վերոնշյալ պրակտիկան խիստ խնդրահարույց է և առանց որևէ պայմանի, ենթակա է բացառման:

(գ) Գորիս ՔԿՀ-ում շենքը 4-րդ աստիճանի վթարային է, ինչով հիմնականում պայմանավորված են քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց պահման և քրեակատարողական ծառայողների աշխատանքային անբավարար պայմանները:
ՔԿՀ մի շարք հատվածներում, այդ թվում՝ խցերում և միջանցքներում արձանագրվել է վերանորոգման անհրաժեշտություն, մասնավորապես՝ պատերը եղել են խոնավացած, որոշ հատվածներում ծեփամածիկը՝ թափված, հատակը՝ ճաքած կամ քանդված: Գրեթե բոլոր խցերում արձանագրվել են միևնույն անբավարար պայմանները՝ խոնավության բարձր մակարդակը, ոչ բավարար լուսավորությունը և օդափոխությունը, բետոնապատ հատակը, մետաղյա հնամաշ մահճակալները:

Դիտարկված խցերում այդ պահին պահվող անձանց քանակը համապատասխանել է խցի մակերեսի նկատմամբ 1 հոգուն հատկացվող մինիմալ պահանջներին, չնայած խցերում տեղադրված մահճակալների քանակը եղել ավելի շատ քան պահվող անձինք:

ՔԿՀ-ի 1-ին հարկում առանձին տեղակայված լոգարաններից մեկում առկա է եղել վերանորոգման և մաքրման աշխատանքներ իրականացնելու հրատապ անհրաժեշտություն, մասնավորապես՝ լոգարանի հանդերձարանում հատակը բետոնե է, պատերի ծեփամածիկը որոշ հատվածներում՝ թափված, փայտե նստարանները՝ հնամաշ և կեղտոտ, իսկ լոգարանում պատերը խոնավացած են, ծեփամածիկը՝ թափված, սալիկապատ հատակը հնամաշ է և որոշ հատվածներում պոկված, տեղադրված նստարանը նույնպես հնամաշ է և կեղտոտ: Լոգարանի սանիտարահիգիենիկ վիճակը եղել է խիստ անբավարար:

Ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ լվացքատան աշխատողի բացակայության պատճառով ազատությունից զրկված անձինք ինքնուրույն են իրականացնում իրենց լվացքը, սակայն խցերն ապահովված չեն տաք ջրով, ինչի հետևանքով յուրաքանչյուր դեպքում վերջիններս ջուրը տաքացնում են էլեկտրական տաքացուցիչներով:

Ըստ էության արձանագրվել է, որ 2019թ ԿԱՄ այցից ի վեր շենքային պայմանները չեն բարելավվել:

2) Սնունդ և խմելու ջուր. Մշտադիտարկված բոլոր ՔԿՀ-ներում սննդի մատակարարումը պատվիրակված է մասնավոր ընկերության:

(ա) Աբովյան ՔԿՀ-ում արձանագրվել է, որ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից տրամադրվող սնունդը բերվում է Քրեակատարողական հիմնարկ ընդհանուր մեծ տարաներով, որից հետո Քրեակատարողական հիմնարկում այն կշռվում է և ընդունվում: Խիստ մտահոգիչ է, որ սնունդն ընդունելիս չի իրականացվում որևէ վերահսկողություն սննդի որակի, սննդի էներգետիկ արժեքի, տեղափոխման և պահպանման սանիտարահիգիենիկ պայմանների տեսանկյունից:
Այսպիսով, քրեակատարողական հիմնարկներ ընդունվող պատրաստի սննդի պատշաճ վերահսկողության մեխանիզմների և դրանց օրենսդրական կարգավորումների բացակայությունը կարող է հանգեցնել տարատեսակ խախտումների, այդ թվում՝ սննդի որակի, սննդի էներգետիկ արժեքի, սանիտարահիգիենիկ, տեղափոխման և պահպանման պայմանների հաշվառմամբ:

Ճաշացանկերի նկատմամբ վերահսկողության առումով հարկ է նկատել, որ դրանք, բացի «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի տնօրենից և պատասխանատուից հաստատում է նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետը, ինչպես նաև նույն հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի պետը: Սակայն հաստատված ճաշացանկերում սննդամթերքների նախատեսվող չափաբաժինների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման 129 հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժիններին:

Այսպիսով, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ճաշացանկերի մեխանիկական հաստատումը, առանց նախատեսվող սննդամթերքի օրական նվազագույն չափաբաժինների վերանայման և օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանեցման, չի բխում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունների պատշաճ կատարման պարտավորությունից և ազատությունից զրկված անձանց սննդով պատշաճ ապահովման Պետության պարտավորությունից:

Տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի չափաբաժինները որոշ դեպքերում չեն համապատասխանել ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժիններին, ինչը խիստ մտահոգիչ է:

Այսպես, 2022 թվականի մայիսի 16-ից հունիսի 19-ը (ընդհանուր՝ 28 օր) ընկած ժամանակահատվածի ճաշացանկերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ որոշ սննդամթերքների սահմանված օրական նվազագույն չափաբաժինները չեն պահպանվել: Մասնավորապես, կարտոֆիլը սահմանված օրական նվազագույն չափաբաժինը (500 գրամ) պահպանելով նշված ժամանակահատվածում միայն երկու անգամ է տրամադրվել՝ մայիսի 19-ին և հունիսի 1-ին, համապատասխանաբար՝ 543գ և 621գ), մնացած օրերին նվազագույնը 500 գրամի փոխարեն տրամադրվել է 60-483 գրամների սահմաններում: Բանջարեղենը 11 օր տրամադրվել է 250 գրամ նվազագույն

[129] ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական նվազագույն չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1182-Ն որոշում:

չափաբաժնից էականորեն պակաս չափով, օրինակ՝ 7 գրամ: Կաթ և կաթնամթերքի համար օրենսդրությամբ սահմանված չափաբաժնի նվազագույն 100 գրամը նույնպես չի պահպանվել: Մասնավորապես, ճաշացանկերի ուսումնասիրությունն արձանագրել է, որ վերոնշյալ ժամանակահատվածում միայն երկու օր է տրամադրվել նվազագույն 100 գրամը, ավելին, մնացած օրերին այն տրամադրվել է սահմանված չափաբաժնից ավելի քան տասնապատիկ անգամ քիչ, օրինակ՝ 6 գրամ:

Սահմանված օրական նվազագույն չափաբաժինները չեն պահպանվել նաև բուսական յուղի, ձեթի դեպքում: Բուսական յուղը, ձեթը 13 օր տրամադրվել է օրենսդրությամբ սահմանված 30 միլիլիտրից պակաս (նվազագույն չափաբաժին արձանագրվել է մայիսի 22-ին՝ 14 միլիլիտր): Կարագի դեպքում սահմանված օրական չափաբաժինը 15 գրամն է, մինչդեռ նշյալ ժամանակահատվածում կարագ առնվազն երկու օր (հունիսի 2 և հունիսի 9) ընդհանրապես չի տրամադրվել, իսկ մյուս օրերին տրամադրվել է էականապես քիչ չափաբաժնով (օրինակ՝ մայիսի 16-ին՝ 3 գրամ, մայիսի 17-ին՝ 2 գրամ):

Խնդրահարույց է նաև մրգի օրական նվազագույն չափաբաժնի՝ 200 գրամի չպահպանման պրակտիկան: Ուսումնասիրությունը վկայում է, որ միրգ առավելապես տրամադրվել է 20 գրամի չափով, իսկ միայն երեք օր՝ շաբաթ օրերին տրամադրվել է 120 գրամ: Ճաշացանկերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ ձավարեղենի և մակարոնեղենի՝ 120 գրամ և 30 գրամ, չափաբաժինները նույնպես չեն պահպանվել: Մասնավորապես, ուսումնասիրված ժամանակահատվածում ձավարեղենը 21 օր տրամադրվել է 120 գրամից պակաս չափով (օրինակ՝ հունիսի 4-ին՝ 35 գրամ կամ հունիսի 15-ին՝ 30 գրամ), իսկ մակարոնեղենը, որը ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված է, որ մակարոնեղենը պետք է տրամադրվի ամեն օր, սակայն նշված ժամանակահատվածում 7 օր ընդհանրապես չի տրամադրվել: Ավելին, մակարոնեղենի չափաբաժինը սահմանված 30 գրամից կրկնակի պակաս է եղել տրամադրված հինգ օրերին:

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել են նաև ազատությունից զրկված կանանց հետ մինչև երեք տարեկան մանկահասակ երեխաներին օրենսդրությամբ սահմանված սննդի համապատասխան չափաբաժիններով և տեսականիով ապահովման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք ապահովվում են մանկական սնունդով, և նրանց երեխայի խնամքի համար տրամադրվում է հագուստ, կոշկեղեն ու փափուկ գույք՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշմամբ սահմանված չափաբաժիններով և ժամկետներով՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 9 հավելվածների:

Մինչդեռ, երեխաներին սնունդ է տրամադրվել՝ հիմք ընդունելով «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի մանկաբույժի կողմից տրամադրված, առողջապահական ոլորտում ընդունված և տարիքային առանձնահատկություններով պայմանավորված սննդամթերքի ցանկը, որը Ստորաբաժանման բժշկի համապատասխան գրությամբ նախատեսված է եղել իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանցից միայն մեկի համար: Ավելին, երեխաներին սնունդը տրամադրվել է օրական նույն պարբերականությամբ՝ հաշվի չառնելով նրանց տարիքային առանձնահատկությունները: Ըստ ստացված տեղեկությունների՝ երեխաներին տրամադրվում է գրեթե նույն սնունդը, ինչ մեծահասակներին, երբեմն, լրացուցիչ տրամադրվում է միրգ, կաթ, հազվադեպ՝ նաև կաթնաշոռ և թթվասեր: Նման մոտեցումը խիստ մտահոգիչ է:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում Պաշտպանի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք իրենց դժգոհությունն են հայտնել քրեակատարողական հիմնարկում տրամադրվող սննդի համի, որակի,

արտաքին տեսքի, քանակի և բազմազանության կապակցությամբ: Վերջիններս նշել են, որ սնունդը, երբեմն, համեղ չէ: Դժգոհություններ են արձանագրվել որոշ սննդատեսակների (օրինակ՝ հացի, բրնձի, մածնաբրդոշի, հյութի, կոմպոտի, մսամթերքի) որակից:

Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների զգալի մասը դժգոհություն է հայտնել նաև տրամադրվող մսամթերքի փոքր չափաբաժնից՝ միևնույն ժամանակ նշելով, որ միսը երբեմն տրամադրվում է կիսաեփ կամ չափից շատ տապակված (վառված) վիճակում: Ազատությունից զրկված անձինք նշել են, որ հաճախ ստիպված են լինում տրամադրված սնունդը վերամշակել, լրացուցիչ եփել: Վերջիններս Կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ նախընտրում են օգտվել հանձնուքներով փոխանցվող սննդամթերքից:

Արմավիր ՔԿՀ-ի ևս արձանագրվել է, որ սննդի որակի, էներգետիկ արժեքի և պահպանման սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ որևէ վերահսկողություն չի իրականացվում: Այլ կերպ ասած, սա համակարգային խնդիր է և արձանագրվել է մշտադիտարկված բոլոր ՔԿՀ-ներում:

Մշտադիտարկման ընթացքում կալանավորված անձինք և դատապարտյալները բարձրացրել են նաև քրեակատարողական հիմնարկում խմելու ջրի անպիտանելիության հետ կապված հարցեր՝ նշելով, որ որպես խմելու ջուր են օգտագործվում ստորգետնյա արտեզյան ջրերը, ինչն առաջացնում է աղեստամոքսային համակարգի հետ կապված տարբեր խնդիրներ:

(գ) Գորիս ՔԿՀ-ում սննդից դժգոհություններ չեն արձանագրվել, իսկ հանձնուքների մասով առկա են եղել դժգոհություններ կապված մեկանգամյա հանձնուքի քաշի վերաբերյալ. մասնավորապես առաջարկվել է շաբաթական 1 անգամ 20կգ ի փոխարեն թույլատրել օրինակ 2 շաբաթը մեկ 40կգ կամ 4 շաբաթը մեկ 80կգ, ինչը կպակասեցնի հանձնուքների բերման հաճախությունը՝ դժվարություն չառաջացնելով հեռու ապրող հարազատների համար, նաև պարենի պակաս չի առաջացնի երկարատև տեսակցությունների ժամանակ:

3) Բժշկական օգնություն և սպասարկում (ա) Աբովյան ՔԿՀ-ում արձանագրվել է, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ստորաբաժանումում հաստիքները համալրված են: Բժշկական անձնակազմում դեռևս ներգրավված չէ ընդհանուր պրոֆիլի բժիշկ՝ թերապևտ կամ ընտանեկան բժիշկ, ինչի պատճառով թերապևտիկ բնույթի բուժօգնություն տրամադրվում է Ստորաբաժանման այլ մասնագիտացում ունեցող բժիշկների կողմից: Ավելին, երբեմն դրանք իրականացվում են բուժքրոջ կողմից՝ առանց բժշկի համապատասխան ցուցումի:

«Դեղերի հատկացման և ընդունման» մատյանի ուսումնասիրությամբ արձանագրված ազատությունից զրկված անձանց տրամադրված դեղորայքի և վերջիններիս բժշկական քարտերում դրանք տրամադրելու հիմքերի համադրությամբ պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում դեղորայքն ազատությունից զրկված անձին տրամադրվում է առանց բժշկի ցուցումի և վերջինիս կողմից զննության արդյունքում: Նման պրակտիկան խիստ մտահոգիչ է և պետք է այն դադարեցնել:

Մեկուսարանում առանձնացված է մեկ կահավորված բժշկական սենյակ՝ այնտեղ պահվող կանանց և անչափահասների բժշկական սպասարկումը կազմակերպելու համար: Նշված սենյակը, այդ թվում՝ սանհանգույցը, գտնվում են անընդունելի, անբարեկարգ վիճակում և հիմնովին վերանորոգման կարիք ունեն:

ՔԿՀ-ում կուտակվող բժշկական սրածայր թափոնները հավաքվում են պլաստմասե տարայի մեջ և բժշկական անձնակազմը տեղեկացված չէ, թե հետագայում այն ինչպես է ոչնչացվելու: Հարկ է նշել, որ սրածայր թափոններով լի պլաստմասե տարան այցի պահին եղել է բաց վիճակում:

Որոշ դեղամիջոցներ հերթապահ բուժքույրը տրամադրում է ազատությունից զրկված անձանց՝ իրենց մոտ պահելու և սնվելուց հետո կամ ցուցված ժամին այն ընդունելու համար: Սակայն, ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ երբեմն անվտանգության աշխատակիցներն արգելում են իրենց մոտ դեղորայք ունենալ կամ կարգապահական տույժի ենթարկում՝ դիտարկելով այն որպես արգելված իր:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի համաձայն՝ քրոնիկական հիվանդությունների դեպքում, երբ դեղի ընդունումը կրում է մշտական բնույթ, բժշկական ստորաբաժանման բժշկի կողմից նշանակման դեղատոմսի հետ միասին 5 օրվա համար նախատեսված դեղը կարող է տրամադրվել կալանավորված անձին կամ դատապարտյալին՝ բացառությամբ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի:

Ստորաբաժանումում առկա չեն եղել նաև մանկահասակ երեխաների առաջին բժշկական օգնության համար նախատեսված դեղամիջոցներ (օրինակ՝ ջերմիջեցնողներ): Տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ըստ անհրաժեշտության մանկահասակ երեխաներին շարունակվում է տրամադրվել մեծահասակների համար նախատեսված դեղորայքի (օրինակ՝ «Պարացետամոլ») հաբը կիսելով՝ ½ կամ ¼ չափաբաժնով: Իսկ մանկաբույժի կողմից նշանակված դեղորայքը հիմնականում տրամադրում է «Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Հարցի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը դեռևս 2022 թվականի հունիսի 13-ի թիվ //25850-2022 գրությամբ ներկայացրել է պարզաբանումներ առ այն, որ մանկահասակ երեխաներին դեղորայքի տրամադրումը կատարվում է նշված պոլիկլինիկայում, իսկ անհրաժեշտության դեպքում, մասնավորապես՝ մարմնի ջերմաստիճանի բարձրացման դեպքում, հրավիրվում է շտապ օգնություն, որը երեխաներին տեղափոխում է մասնագիտացված մանկական բժշկական հաստատություն՝ գործնականում առկա են անհրաժեշտ երաշխիքներ մանկահասակ երեխաների առողջության պահպանման իրավունքն իրացնելու նպատակով:

Մինչդեռ, առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ երեխաները տեղափոխվում են մասնագիտացված բժշկական կենտրոններ միայն առողջական վիճակի էլ ավելի վատթարացման պարագայում, մինչ այդ տրամադրվում է մեծահասակների համար նախատեսված կամ Ստորաբաժանման դեղատանն առկա դեղորայքի համապատասխան տարիքային խմբի չափաբաժնով:

Այսպիսով, ազատությունից զրկված անչափահաս անձինք և քրեակատարողական հիմնարկում ծնողների հետ բնակվող երեխաները զրկված են դեղորայքային միջամտություն պահանջող առաջին բժշկական օգնության պատշաճ կազմակերպման հնարավորությունից:

Դեղորայքի, գինեկոլոգիական զննության և հետազոտությունների համար անհրաժեշտ պարագաների և գործիքների բացակայությունը խոչընդոտ է պատշաճ գինեկոլոգիական ծառայությունների մատուցման համար:

Մշտադիտարկման այցի ժամանակ ուսումնասիրվել են գինեկոլոգի այցելությունների արձանագրման մատյանում կատարված գրառումները: Նախորդ մշտադիտարկման այցի համեմատ վերջին երկու տարիներին դրանք էլ ավելի են նվազել: Այսպես, 2021 թվականին գինեկոլոգիական զննության ենթարկվել է 10 անձ, իսկ 2022 թվականին, մինչ այցի պահը՝ 7, իսկ 2019 թվականին գինեկոլոգիական զննության է ենթարկվել 37 ազատությունից զրկված անձ: Հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2022 թվականի մարտի 16-ին իրականացված այցի ժամանակ արձանագրվել է, որ այդ օրվա դրությամբ գինեկոլոգիական զննության է ենթարկված եղել ընդամենը 1 անձ: Մտահոգիչ է նաև գինեկոլոգիական բնույթի բժշկական օգնության համար նախատեսված դեղամիջոցների և պարագաների սղությունը:

Մեկ այլ խնդիր է ազատությունից զրկված անձանց նկատմամբ ոչ պատշաճ դիսպանսեր հսկողության իրականացումը, մասնավորապես՝ չի իրականացվում քրոնիկ հիվանդություններ ունեցող ազատությունից զրկված անձանց պատշաճ հաշվառում և հսկողություն, ինչը կարող է հանգեցնել անվերահսկելի զարգացման և ծանր հետևանքների:

Ըստ արձանագրված տեղեկությունների՝ հիվանդությունների կանխարգելման նպատակով քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս կամ այնտեղ պահվելու ընթացքում կանայք և անչափահասները տարվա մեջ մեկ անգամ ենթարկվում են սկրինինգային հետազոտության, որոնք իրենց մեջ ներառում են անձի ֆիզիկական, հեմոդինամիկ տվյալների, օբյեկտիվ զննության, լաբորատոր քննության և խորհրդատվական բաժիններ: Ուսումնասիրված մի շարք «տարեկան կանխարգելիչ այցերի իրականացման թերթիկները» վկայում են, որ տարեկան կանխարգելիչ միջոցառումները ամբողջ ծավալով չեն իրականացվում:

Անչափահասների՝ ազատությունից զրկված վայր ընդունվելու կապակցությամբ ԽԿԿ-ն շեշտել է, որ անհրաժեշտ է ապահովել, որ հաստատություն նոր ընդունված բոլոր անչափահասները, ինչպես նաև փախուստի դիմած կամ այլ վայր տեղափոխված անչափահասները հաստատություն վերադառնալուց հետո ենթարկվեն բժշկական զննության: Պետք է նաև ապահովել մանկաբույժի կանոնավոր այցելություններ: ԽԿԿ-ն նշել է նաև, որ յուրաքանչյուր երեխայի համար պետք է կազմել անձնական բժշկական փաստաթուղթ, որը պարունակում է ախտորոշման վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև դրա զարգացման և ցանկացած առանձնահատուկ հետազոտության մասին գրառումներ: Այլ հաստատություն անձի փոխադրման դեպքում նշված փաստաթուղթը պետք է ուղարկվի ընդունող հաստատության բժշկին[130]:

Խիստ մտահոգիչ է ազատությունից զրկված անձանց մոտ վնասվածքների ոչ պատշաճ արձանագրումը՝ դրանց անատոմիական նկարագրությունը, ստացման պատճառների մասին տեղեկությունների հավաքագրումը, և իրավապահ մարմիններին չփոխանցելու անթույլատրելի պրակտիկան: Այսպես, Ստորաբաժանումում վարվում է «ՔԿՀ-ից դուրս բերվող և մուտք գործող դատապարտյալների և կալանավորված անձանց» բուժզննման մատյան, որտեղ արձանագրվում է անձի առողջական վիճակը՝ «բավարար» և երբեմն նշվում է միայն առողջապահական մարմինների բուժական հիմնարկի անվանումը և դուրս բերման ու վերադարձի ամսաթիվն ու ժամը:

---

[130] Տե՛ս Բուլղարիայի վերաբերյալ 2002 թվականի ԽԿԿ-ի զեկույցը https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680694040 կայքէջում, կետ 189:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում Այցի ընթացքում պարզվել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում տեղակայված «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորաբաժանում) բժշկական անձնակազմի հաստիքները հիմնականում համալրված են: Այցի պահի դրությամբ այնտեղ նաև գործուղված են եղել ՊՈԱԿ-ի այլ ստորաբաժանումների բժիշկներ:

Դժվարություններ են արձանագրվել նաև ազատությունից զրկված օտարերկրացի անձանց կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումները հավաստող՝ QR կոդով փաստաթղթի տրամադրման հետ կապված: Վերջիններիս չի տրամադրվում վերոգրյալ փաստաթուղթը, քանի որ նրանք կցագրված չեն էլեկտրոնային առողջապահության համակարգին, ինչն էլ իր հերթին լրացուցիչ դժվարություններ է առաջացնում օտարերկրացի անձանց իրենց երկրներ հանձնել կազմակերպելու գործընթացում: Ազատությունից զրկված օտարերկրացի անձանց տրամադրվում է միայն տեղեկանք կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստում ստացած լինելու վերաբերյալ: Առանձին դեպքերում դժվարություններ են արձանագրվել վերը նշված անձանց ամբուլատոր հետազոտությունների կազմակերպման, ինչպես նաև դրանց արդյունքների ստացման հետ կապված: Այսպիսով, էլեկտրոնային առողջապահության համակարգին կցագրման հետ կապված տեխնիկական դժվարությունները չպետք է պատճառ հանդիսանան ազատությունից զրկված օտարերկրացի անձանց արտահիվանդանոցային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը պատշաճ կազմակերպելու համար:

Բժշկական մասնաշենքի առաջին օգնության սենյակը (վիրակապարանը) գտնվել է սանիտարահիգիենիկ անընդունելի վիճակում: Բացի այն, որ սենյակն ունեցել է շտապ վերանորոգման կարիք (խոնավության բարձր մակարդակի պատճառով դրա պատերի ծեփամածիկը եղել է թափված), այնտեղ տիրել է գարշահոտություն և ամենուր եղել են օգտագործված բժշկական պարագաներ և արյունոտ վիրակապեր՝ բաց վիճակում: Բժշկական թափոնների հետ մեկտեղ եղել է նաև կենցաղային աղբ: Խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ այցի ընթացքում կրկնակի դիտարկման արդյունքում արձանագրվել է, որ վիրակապարանում մաքրման աշխատանքներ չեն իրականացվել և չի վերացվել սանիտարահիգիենիկ անբավարար վիճակը, այնուամենայնիվ, այնտեղ շարունակել է բուժօգնություն տրամադրվել ազատությունից զրկված անձանց, մասնավորապես՝ վիրակապվել են վերքեր:

Նույն իրավիճակն է արձանագրվել նաև սոնոգրաֆիկ հետազոտությունների իրականացման համար առանձնացված սենյակում: Այսպես, սենյակը եղել է թափթփված, սանիտարահիգիենիկ ոչ պատշաճ վիճակում, ամենուր եղել են օգտագործված «Ուլտրաձայնային գելի» դատարկ շշեր և օգտագործված հիգիենիկ թղթեր:
Բժշկական մասնաշենքում հակասանիտարական պայմանները անընդունելի են և չեն նպաստում ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովմանը:

Այցի ընթացքում արձանագրվել են նաև ազատությունից զրկված անձանց ցուցված դեղորայքով ապահովման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, հացադուլ հայտարարած Ա.Ա.-ն 2022 թվականի օգոստոսի 31-ին «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ է տեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքից, որտեղ 2022 թվականի ապրիլի 4-ից ստացել է համապատասխան բուժում: Սակայն անձի ինքնազգացողությունը վատացել է, քանի որ իրեն ցուցված հոգեմետ դեղորայքը չի տրամադրվել: Այդ պատճառով Ա.Ա.-ն հայտարարել է հացադուլ և պահանջել իրեն տեղափոխել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ: Ա.Ա.-ի բժշկական քարտի ուսումնասիրությամբ պարզվել

է, որ վերջինիս հացադուլ հայտարարելու պատճառը «առողջական խնդիրներն են»: Միաժամանակ, նշանակման թերթիկների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ նրան չի տրամադրվել հոգեբույժի կողմից ցուցված դեղորայքը: Հատկանշական է, որ հոգեբույժի նշանակումների մասին տեղյակ չի եղել Ստորաբաժանման բժշկական անձնակազմը:

Մեկ այլ դեպքում, շաքարային դիաբետով տառապող ազատությունից զրկված օտարերկրացի Բ.Դ. -ին չի տրամադրվել ցուցված հակադիաբետիկ դեղորայքը, որը այցից 4 օր առաջ էր ընդունվել քրեակատարողական հիմնարկ:

Այսպիսով, նույնիսկ այն պարագայում, երբ ազատությունից զրկված անձը դուրս է գրվում ստացիոնարից և տեղափոխվում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ ամբուլատոր բուժումը շարունակելու նպատակով դուրս է մնում Ստորաբաժանման հսկողությունից, չի ստանում անձին ցուցված դեղորայքը, ինչն էլ պատճառ է դառնում դիմելու ծայրահեղ քայլի՝ հացադուլի:

Մշտադիտարկման ընթացքում իրականացված առանձնազրույցները և կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ստորաբաժանումում առկա չեն ազատությունից զրկված անձանց ցուցված մի շարք դեղամիջոցներ, օրինակ՝ «Կոնկոր», «Կարդիոլայֆ», և այլն: Բավարար քանակով չեն եղել նաև ցավազրկող, ջերմիջեցնող դեղորայքը, ինչպես նաև հակաբորբոքային քսուքները: Ստորաբաժանումում դեղորայքի տեսականու և քանակի անբավարարության մասին է վկայում նաև ազգականների միջոցով ազատությունից զրկված անձանց փոխանցվող դեղորայքի մեծ քանակը:

Այցի ընթացքում պարզվել է, որ ազատությունից զրկված անձինք անհրաժեշտ դեղորայքը հիմնականում ձեռք են բերում իրենց միջոցների հաշվին, և (կամ) դրանք փոխանցվում են ազգականների կողմից: Դեղորայքային ապահովման պետական քաղաքականության՝ օրենքով ամրագրված հիմնական ուղղություններն ու սկզբունքները պետք է կիրառելի լինեն նաև ազատությունից զրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման գործընթացում:

Ակնհայտ է, որ խնդիրը պետք է հիմնարար լուծում ստանա, այն է՝ դեղերի գնումները պետք է կազմակերպվեն այնպես, որ ավելացվի դեղորայքի տեսականին և բժշկական ցուցման պարագայում ազատությունից զրկված անձին առանց ձգձգումների տրամադրվի անհրաժեշտ դեղորայքային բուժում:

Ստորաբաժանումում ազգականների կողմից բերվող դեղամիջոցներն ընդունվում են դիմումով և հաշվառվում են համապատասխան մատյանում: Դրանցից շատերն ազատությունից զրկված անձանց տրամադրվում են առանց բժշկի նշանակման: Հատկանշական է, որ ազգականների կողմից բերված դեղամիջոցների մի մասն առկա է եղել Ստորաբաժանումում:

Խնդիրներ են արձանագրվել նաև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների սպառման հետ կապված: Այսպես, 2022 թվականի սեպտեմբեր ամսին արդեն իսկ դժվարություններ են արձանագրվել. հետազոտությունները և (կամ) ստացիոնար բուժումը կազմակերպելու համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման համապատասխան ուղեգրի առկայության պարագայում առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում հրաժարվել են սպասարկել ազատությունից զրկված անձանց:

Ազատությունից զրկված անձինք իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում ստացիոնար բուժում

ստանալու համար անհրաժեշտ է լինում ազատությունից զրկված անձի ֆինանսական միջոցների հաշվին վճարել առանձին հիվանդասենյակի համար, քանի որ քրեակատարողական ծառայությունը չի կարող վերջինիս անվտանգությունն ապահովել անվճար հիմունքներով տրամադրվող ընդհանուր հիվանդասենյակներում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսների անբավարարությունը չի կարող արդարացնել անձի առողջության պահպանման իրավունքի չապահովումը:

Բժշկական թափոնների ոչ պատշաճ պայմաններում պահպանումը՝ առանց սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման, ստեղծում է բարենպաստ միջավայր վարակների զարգացման, ինչը խիստ մտահոգիչ է:

Խնդիրներ են արձանագրվել նաև բժշկասոցիալական փորձաքննությունների կազմակերպման հետ կապված: Մասնավորապես, տրամադրած տեղեկությունների համաձայն՝ բժշկասոցիալական փորձաքննությունները հետաձգվում են անհրաժեշտ հետազոտությունների ամբողջական ծավալն ապահովված չլինելու պատճառով: Բժշկասոցիալական փորձաքննություններ իրականացնող հանձնաժողովի կողմից չի մատնանշվում՝ յուրաքանչյուր դեպքում ինչ հետազոտություններ կամ նեղ մասնագիտական խորհրդատվություններ են անհրաժեշտ ազատությունից զրկված անձի բժշկական փաստաթղթերի ամբողջական փաթեթն ունենալու համար:

Բժշկական անձնակազմի հավաստմամբ՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ մուտք գործող անձանց նկատմամբ իրականացնում են ռապիդ թեստավորմամբ ՄԻԱՎ-ի, Հեպատիտ «Ց»-ի և կորոնավիրուսային վարակի արագ հայտնաբերում, ինչը ողջունելի է: Սակայն, դեռևս ամբողջապես լուծված չէ Հեպատիտ «Ց»-ի հայտնաբերման դեպքում դրա բուժման գործընթացի կազմակերպումը:

Արձանագրվել է նաև, որ չեն պահպանվում ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ բուժում սկսելու կապակցությամբ վերջիններիս իրազեկված համաձայնության ստացման օրենսդրական պահանջները, և դրանց նկատմամբ չի իրականացվում հսկողություն:

(գ) Գորիս ՔԿՀ-ում պարզվել է, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանման (այսուհետ՝ Ստորաբաժանում) բժշկական անձնակազմի հաստիքներից՝ բժշկի 2 (0.5-ական դրույք), ինչպես նաև հոգեբույժի (0.5 դրույք) հաստիքները եղել են թափուր, քանի որ Գորիս քաղաքում հոգեբույժներ չկան: Ստորաբաժանումը համալրված է եղել 5 բուժքույրերով՝ 4-ը հերթափոխային և 1-ը ցերեկային, ատամնաբույժով և վիրաբույժով: Բժշկական անձնակազմի հավաստմամբ՝ քրեակատարողական հիմնարկում առկա է բավարար տեսականիով և քանակությամբ դեղորայք, սակայն որոշ տեսակի դեղամիջոցներ բացակայել են:

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ազատությունից զրկված անձինք բազմատեսակ և բազմաքանակ դեղամիջոցներ են ստանում ազգականների կողմից:

Դեղորայքի մեծ մասն ազատությունից զրկված անձանց տրամադրվում է առանց բժշկի նշանակման: Հարկ է արձանագրել, որ ազատությունից զրկված անձանց բժշկի կողմից չնշանակված դեղորայքի տրամադրումը կամ դեղորայքի ընդունման նկատմամբ հսկողության բացակայությունը կարող է հանգեցնել վերջիններիս առողջական վիճակի վատթարացմանը: Ուստի, ազատությունից զրկված անձանց ազգականների կողմից բերվող դեղորայքի ընդունման նկատմամբ պետք է իրականացնել պատշաճ հսկողություն՝

բացառելով բժշկի կողմից չնշանակված դեղորայքի ընդունումը և պահպանելով չվնասելու սկզբունքը:

ԲՍԲ-ում բժշկական թափոնները (վիրակապեր, օգտագործված այլ բժշկական պարագաներ, այդ թվում՝ սրածայր) հավաքվում են և այրվում՝ չպահպանելով բժշկական թափոնների խոտանման օրենսդրությամբ սահմանված դրույթները, որոնց Քրեակատարողական հիմնարկի բժշկական անձնակազմը ծանոթ չի եղել:

Ողջունելի է, որ քրեակատարողական հիմնարկում կատարվել է բժշկական տեխնիկայի համալրում՝ էլեկտրասրտագիր, բակտերիոցիդ լամպ, գլյուկոմետր, տոնոմետր, օտոլարինգոսկոպ, շտատիվ, ատամնաբուժական տեխնիկա, մանրէազերծման սարք և այլն:

4) Զբոսանք և զբաղվածություն (ա) Աբովյան ՔԿՀ-ի մեկուսարանում պահվող ազատությունից զրկված անձանց համար նախատեսված է 4 զբոսաբակ (զբոսախուց), որոնք կահավորված են եղել նստարանով, աղբամանով և եղանակային վատ պայմաններից պատսպարվելու համար նախատեսված ծածկերով: Չնայած համապատասխան ծածկերի առկայությանը՝ այցի պահին արձանագրվել է, որ անձրևի հետևանքով որոշ զբոսաբակերի նստարաններ ամբողջությամբ եղել են թրջված: Զբոսաբակերում չեն արձանագրվել մարմնամարզությամբ զբաղվելու համար հարմարություններ կամ սարքավորումներ: Մեկուսարանի մասնաշենքից դեպի զբոսաբակեր դուրս գալու համար նախատեսված են երկաթե աստիճաններ, որոնք հարմարեցված չեն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց, ինչպես նաև մանկահասակ երեխաների տեղաշարման համար, որը կարող է իր հերթին խոչընդոտ լինել վերջիններիս զբուսանքի իրավունքն ապահովելու համար:

Ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ վերջիններս հաճախ չեն օգտվում իրենց զբոսանքի իրավունքից, իսկ օգտվելու դեպքում ընդամենը 15-30 րոպե են անցկացնում զբոսախցերում: Այս կապակցությամբ ազատությունից զրկված անձինք նշել են, որ զբոսաբակերը չափազանց փոքր են, այնտեղ զբաղմունքի որևէ միջոց առկա չէ, և այդ իսկ պատճառով զբոսանքի համար տրամադրվող 1 ժամը զբոսախցերում անցկացնելն անիմաստ է:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հանգստի, այդ թվում՝ բացօթյա զբոսանքի իրավունքը երաշխավորված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային փաստաթղթերով[131]:

Քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի առաջին հարկում տեղակայված է եղել մեկուսարանի մարզասրահը: Հարկ է նշել, որ մարզասրահում արձանագրվել են անբավարար պայմաններ. պատերի և առաստաղի ծեփամածիկը եղել է թափված, բարձր է եղել խոնավության մակարդակը: Մարզասրահում տեղադրված մարզասարքերից ոչ մեկը սարքին չի եղել: Դրանք եղել են կոտրված կամ վնասված, ինչը խնդրահարույց է: Մարզասրահի նման պայմանների պատճառով ազատությունից զրկված անձինք դրանից գրեթե չեն օգտվել: Մեկ այլ մարզասարքերով կահավորված մարզասրահ էլ առկա է եղել Քրեակատարողական հիմնարկի կանանց տեղամասում:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչները ԿԱՄ ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների ընթացքում հայտնել են, որ քրեակատարողական հիմնարկի կողմից պարբերաբար կազմակերպվում են սպորտային միջոցառումներ (շախմատի, սեղանի թենիսի, մրցումներ)՝ յուրաքանչյուր անգամ ներգրավելով ազատությունից զրկված անձանց: Նշվածը հաստատել են նաև

[131] Եվրոպական բանտային կանոններ, 27.3-րդ և 27.4-րդ կանոնները, ինչպես նաև Նելսոն Մանդելայի կանոնների 23-րդ կանոնը:

ազատությունից զրկված անձինք՝ նշելով, որ սովորաբար սպորտային միջոցառումները կազմակերպվում են իրենց ինքնավար միությունների աջակցությամբ:

ՔԿՀ վարչակազմի ներկայացուցիչները հայտնել են նաև, որ պարբերաբար կազմակերպվում են մշակութային տարբեր միջոցառումներ: Նշվածը փաստել են նաև ազատությունից զրկված անձինք՝ նշելով, որ հիմնականում մասնակցում են վերոնշյալ միջոցառումներին դատապարտյալների անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության գնահատման չափորոշիչների համաձայն միավոր ստանալու նպատակով: Այսպիսով, ՔԿՀ-ում իրականացվող մշակութային և սպորտային միջոցառումները կարևոր բաղադրիչ են հանդիսանում անձի վերասոցիալականացման և վարքագծի ուղղման տեսանկյունից և այն չպետք է սահմանափակվի միավորներ վաստակելու հնարավորությամբ:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ազատությունից զրկված անձանց զբաղվածության պատշաճ ապահովման հարցին, քանի որ դրանց ոչ բավարար ապահովվումը միջանձային հարաբերություններում լարվածության աճին նպաստող գործոն է և չի նպաստում վերասոցիալականացման նպատակներին:

Մշտադիտարկման այցի պահին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավված է եղել 13 դատապարտյալ, որոնք իրականացրել են բաղնիքի, պահեստասենյակի, մարզասենյակի սպասարկման, հավաքարարի, բանվորի աշխատանքներ:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում արձանագրվածը խիստ նմանություններ ունի Աբովյան ՔԿՀ-ին, ինչը վկայում է խնդրի համակարգային բնույթի մասին: Արմավիրում յուրաքանչյուր մասնաշենքում ազատությունից զրկված անձանց զբոսանքը ապահովվելու համար նախատեսված է եղել զբոսաբակեր, որոնք կահավորված են եղել նստարանով, աղբամանով և եղանակային վատ պայմաններից պատսպարվելու համար նախատեսված ծածկերով:

Չնայած այն հանգամանքին, որ դիտարկված 4-րդ մասնաշենքի զբոսաբակում առկա են եղել մարմնամարզությամբ զբաղվելու համար հարմարություններ, սարքավորումներ, այնուամենայնիվ դրանք եղել են ժանգոտված և հնամաշ, որոշները՝ ոչ պիտանի: Ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ վերջիններս հաճախ չեն օգտվում իրենց զբոսանքի իրավունքից, իսկ օգտվելու դեպքում ընդամենը 15-30 րոպե են անցկացնում զբոսաբակում, քանի որ զբոսանքի համար իրենց տրամադրած մեկ ժամվա ընթացքում պետք է հասցնեն նաև կազմակերպել հեռախոսազանգերը:

(գ) Գորիս ՔԿՀ-ի առաջին հարկում են տեղակայված 4 առանձնացված փոքր զբոսաբակերը (զբոսախուց), որոնք միմյանցից բաժանված են պատերով: Զբոսաբակերը 4 կողմից փակ են, բաց է միայն առաստաղի հատվածը, որտեղ տեղադրված է ճաղավանդակ: Զբոսաբակերից մեկում նախատեսված են մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ՝ մարմնամարզական ձող, զուգափայտ, երկու ծանրաձող՝ իր կշռաքարերով, գնդակ: Զբոսաբակերի ծածկերը մի մասը եղել է փակ՝ եղանակային վատ պայմաններից պատսպարվելու համար: Զբոսաբակերում տեղադրված են եղել երկու նստարան, որոնցից միայն մեկն է գտնվել ծածկի տակ: Զբոսաբակերում տեղադրված են եղել ինքնաշեն աղբամաններ:

Ըստ տրամադրված տեղեկությունների քրեակատարողական հիմնարկն ունի մեկ հավաքարար, ով մաքրություն է իրականացնում միայն վարչական մասում: Չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված են 4 անձ, ովքեր քրեակատարողական հիմնարկի մաքրման աշխատանքներին մասնակցում են ըստ ցանկության:

ՔԿՀ-ում մտահոգիչ է ազատությունից զրկված անձանց զբաղվածության հարցը, մասնավորապես՝ պահվող անձանց համար սպորտային մրցաշարեր ու մշակութային միջոցառումներ հիմնականում չեն կազմակերպվում, խիստ հազվադեպ են իրականացվում վերասոցիալականացման ծրագրեր, նպատակային դասընթացներ, կրթական ծրագրեր առհասարակ չեն իրականացվում: Ըստ վարչակազմի տրամադրած տեղեկության՝ քրեակատարողական հիմնարկում սպորտային միջոցառումներ իրականացնել հնարավոր չէ, քանի որ մարզադահլիճ առհասարակ առկա չէ: Վարչակազմի տրամադրած տեղեկության համաձայն՝ 2022 թվականի սեպտեմբեր ամսից «Գորիս» քրեակատարողական հիմնարկում իրականացվում են օճառագործության դասընթացներ հասարակական կազմակերպության կողմից, ինչը ողջունելի է:

5) Կապն արտաքին աշխարհի հետ (ա) Աբովյան ՔԿՀ-ում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում առկա է կարճատև տեսակցությունների մեկ սենյակ, որտեղ տեղադրված է եղել թվով 7 սեղան՝ իրենց ամրացված նստարաններով: Կարճատև տեսակցությունների սենյակում կարող է միաժամանակ կազմակերպվել մի քանի կարճատև տեսակցություն, սակայն դրանց ընթացքում անձանց առանձնացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովված չեն: Կարճատև տեսակցությունների սենյակի հարևանությամբ տեղակայված սանհանգույցը եղել է վերանորոգված և գտնվել է բավարար սանիտարահիգիենիկ վիճակում:

Քրեակատարողական հիմնարկում առկա է երկարատև տեսակցությունների համար նախատեսված երկու սենյակ: Երկարատև տեսակցության սենյակներն ունեցել են կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտություն, դրանց հատակը եղել է հնամաշ: Սենյակների սանհանգույցները կահավորված են եղել զուգարանակոնքերով, որոնք չեն ունեցել նստատեղ:

Ուսումնասիրված երկարատև տեսակցության սենյակներում առկա է եղել ընդամենը մեկ երկտեղանոց մահճակալ, ինչը կարող է խնդրահարույց լինել ազատությունից զրկված անձի ընտանիքի մի քանի անդամների (այդ թվում՝ երեխաների) հետ տեսակցելու դեպքում: Տեսակցության եկած անձինք, այդ թվում՝ անչափահասները, չունեն նաև զբոսանքի դուրս գալու հնարավորություն՝ առանձնացված զբոսաբակի բացակայության պատճառով: Երկարատև տեսակցության սենյակներին հարակից երկու սենյակներն օգտագործվել են քննչական գործողությունների և փաստաբանների հետ տեսակցությունների համար: Ոչ բավարար պայմաններ են արձանագրվել նաև նշված սենյակների սանհանգույցում:

Պաշտպանի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված կանայք դժգոհություն են հայտնել քարտերով տրամադրվող հեռախոսային կապի բարձր սակագներից՝ նշելով, որ դրանցից օգտվելը ֆինանսապես ձեռնտու չէ: Ըստ վերջիններիս՝ մեկ քարտն արժե 1200-ից 1500 դրամ, որով հնարավոր է խոսել ընդամենը 52 րոպե: Ազատությունից զրկված անձինք դժգոհություն են հայտնել նաև տեսազանգերի տրամադրման քանակի և տևողության սակավությունից:

«Աբովյան» ՔԿՀ-ի բոլոր տաքսոֆոններն այցի պահին եղել են սարքին, և դրանցից հնարավոր է եղել անվճար զանգահարել Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին: Տաքսոֆոնների մոտ փակցված են եղել նաև Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին զանգ կատարելու վերաբերյալ համապատասխան ուղեցույցներ, ինչը ողջունելի է: ՔԿՀ-ի նախկինում անչափահաս դատապարտյալների պահելու մասնաշենքում տեսազանգերի համար նախատեսված է եղել առանձին սենյակ: Տեսազանգերի գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ազատությունից զրկված անձինք պարբերաբար օգտվում են տեսազանգից:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում Պարզվել է, որ այդ տարածքում, չնայած կայուն ուղևորահոսքի առկայությանը (օրվա կտրվածքով աշխատանքի հաճախող աշխատակիցների թվաքանակը՝ 200-ից ավելի, ընտանիքի անդամների հետ տեսակցությունների թիվը՝ նվազագույնը 40, իսկ հանձնուքների թիվը՝ 100)՝ առհասարակ չի գործում հասարակական տրանսպորտ: Հասարակական տրանսպորտի բացակայությունը քրեակատարողական հիմնարկ այցելող մարդկանց, ինչպես նաև անմիջապես աշխատակիցների համար առաջացնում է մի շարք սոցիալական և այլ տեսակի խնդիրներ ու անհարմարություններ:
Հարցի առնչությամբ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն նշել է, որ այն դեպքում, երբ ազատազրկման վայրը հեռու է տեղակայված տրանսպորտային կանգառներից, քրեակատարողական ծառայությունը պետք է քայլեր ձեռնարկի դեպի ազատազրկման վայր կանոնավոր և հասանելի տրանսպորտային հաղորդակցություն ապահովելու ուղղությամբ[132]:

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի՝ ազատությունից զրկված անձանց այցելուների, այդ թվում՝ նրանց հետ քրեակատարողական հիմնարկ այցելող անչափահաս երեխաների համար նախատեսված չեն համապատասխան կահավորանքով սպասասրահներ: Այդ պատճառով քրեակատարողական հիմնարկի այցելուները մինչև հիմնարկի տարածք մուտք գործելը ստիպված են լինում սպասել հսկիչ-անցագրային կետի մոտ, որտեղ առկա չէ սպասասրահ, բացակայում են նստարանները և արևից ու վատ եղանակային պայմաններից պաշտպանվելու համար նախատեսված ծածկերը:
ՔԿՀ վարչական շենքի սպասասրահում արձանագրվել են կահավորվածության հետ կապված խնդիրներ: Չնայած մեծ սպասասրահի առկայությանը՝ այցելուները, այդ թվում՝ երեխաները, ստիպված են եղել սպասել քրեակատարողական հիմնարկի նախամուտքում՝ նստելով նախամուտքի աստիճաններին: Սպասասրահն ապահովված է եղել սանհանգույցով, որը գտնվել է սանիտարահիգիենիկ անընդունելի վիճակում:

ՔԿՀ-ում առկա է կարճատև տեսակցությունների մեկ սենյակ, որտեղ տեղադրված է եղել թվով 7 սեղան՝ իրենց ամրացված նստարաններով: Սպասասրահում տեղակայված սանհանգույցը գտնվել է սանիտարահիգիենիկ անբավարար վիճակում: Այցի ընթացքում կարճատև տեսակցությունների սենյակում միաժամանակ կազմակերպվել են մի քանի կարճատև տեսակցություններ, սակայն դրանց ընթացքում անձանց առանձնացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովված չեն եղել:

ՔԿՀ-ում առկա է եղել երկարատև տեսակցությունների համար նախատեսված թվով տասնմեկ սենյակ: Սենյակները եղել են վերանորոգված, սակայն առկա է եղել սենյակների, այդ թվում՝ դրանց սանհանգույցների ընդհանուր մաքրման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտություն: Մշտադիտարկման այցի պահին երկարատև տեսակցության նպատակով դատապարտյալն իր կնոջ և մանկահասակ երեխայի հետ գտնվել է երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակում: Ստացված տեղեկությունների համաձայն՝ մանկական մահճակալի բացակայության պատճառով վերջիններիս երեք տարեկան երեխան քնել է ծնողների հետ՝ երկտեղանոց մահճակալում: Երկարատև տեսակցության համար նախատեսված մեկ այլ սենյակում առկա է եղել մանկական մահճակալ, ուստի տվյալ պարագայում պարզ չէ, թե ինչու է վերը նշված անձանց երկարատև տեսակցությունը կազմակերպվել մանկական մահճակալով չկահավորված սենյակում, որտեղ չեն ապահովվել երեխայի քնի համար անհրաժեշտ պայմաններ:
Այսպիսով, անհրաժեշտ է ապահովել երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակների նպատակային բաշխվածությունը՝ ելնելով տեսակցության եկած անձանց տարիքային առանձնահատկություններից և այլ առաջնային կարիքներից:

[132] տե՛ս ԽԿԿ-ի 2008 թվականի փետրվարի 11-ից 20-ը Դանիա կատարած այցելության վերաբերյալ զեկույցը, կետ 63:

Ուսումնասիրված երկարատև տեսակցության սենյակներում, որոնք այցի պահին ազատությունից զրկված անձանց կողմից զբաղեցված չեն եղել, ջրի ծորակները գտնվել են բաց վիճակում: Այսպիսով, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակներում ջրի անտեղի վատնումը բացառելու ուղղությամբ:

(գ) Գորիս ՔԿՀ-ի առաջին հարկում տեղադրված է եղել մեկ տաքսաֆոն և մեկ հեռախոս: Տաքսաֆոնից զանգահարելու ուղեցույց փակցված չի եղել, իսկ մյուս հեռախոսն առանց քարտի թեժ գծերին անվճար զանգահարելու հնարավորություն չի ունեցել: Երկրորդ հարկի տաքսոֆոնը գտնվել է սարքին վիճակում, իսկ առաջին հարկում այցի ընթացքում տաքսոֆոնի մոտ փակցվեց պաստառ՝ զանգահարելու ուղեցույցով:

Մշտադիտարկման այցի դրությամբ առկա է եղել կարճատև տեսակցության 2 սենյակ: Սենյակները կահավորված են եղել սեղանով, անկյունակով և աթոռներով: Սենյակներից մեկում տեղադրված են եղել համակարգիչ, ականջակալներ՝ միկրոֆոնով: Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ կարճատև տեսակցությունների սենյակներում են իրականացվում նաև ազատությունից զրկված անձանց խուզարկությունը և արտաքին զննությունը, դրանք ծառայում են նաև որպես քննչական գործողությունների և փաստաբանների հետ հանդիպումների սենյակներ, ինչը կարող է խնդրահարույց լինել:

Առկա է երկարատև տեսակցությունների մեկ սենյակ, որը եղել է վերանորոգված և կահավորված: Սենյակն ունեցել է խոհանոցային հատված, առանձին ննջասենյակ, ինչպես նաև սալիկապատ, զուգարանակոնքով կահավորված և առանձին ցնցուղով սանհանգույց: Սենյակում առկա են եղել նաև հեռուստացույց, սառնարան և էլեկտրական տաքացուցիչներ: Երկարատև տեսակցության եկած անձինք, այդ թվում՝ անչափահասները, չունեն զբոսանքի դուրս գալու հնարավորություն՝ առանձնացված զբոսաբակի բացակայության պատճառով: Բացակայել է նաև երեխաների համար առանձնացված մանկական սենյակը, ինչը խնդրահարույց է տեսակցության եկած երեխաների զբաղմունքի ապահովման տեսանկյունից:

6) Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ. ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացում. (ա) Աբովյան ՔԿՀ-ում աշխատում է երկու հոգեբան, որոնցից մեկը՝ քրեակատարողական ծառայող է և հոգեբանական ծառայություններ է մատուցում մեկուսարանում պահվող ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասներին, իսկ կանանց տեղամասում հոգեբանն աշխատում է ծառայության մատուցման պայմանագրով: Մինչ 2022 թվականի փետրվար ամիսը հոգեբանները սպասարկել են հակառակ տեղամասերը՝ կանանց տեղամասում այցի պահին աշխատող հոգեբանը նախկինում սպասարկել է մեկուսարանում պահվող ազատությունից զրկված անձանց, իսկ մեկուսարանում սպասարկող հոգեբանը՝ կանանց տեղամասում:

Արձանագրվել է, որ հոգեբանական աջակցության համար նախատեսված սենյակի կահավորանքի ոչ ճիշտ դասավորվածությունը, ներքին հարդարվածությունը և հոգեբանական աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար այլ բաղադրիչների անբավարարությունը չեն նպաստում հոգեբանի և այցելուի միջև հոգեթերապևտիկ վստահելի և ապահով մթնոլորտի ստեղծմանը՝ հոգեբանական աշխատանքի արդյունավետության տեսանկյունից:
Մշտադիտարկման ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ անչափահասների հետ անհատական և խմբային հոգեբանական աշխատանքները կանոնակարգված են, անհատական հոգեբանական աշխատանքներն իրականացվում են շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ, իսկ խմբային աշխատանքներն՝ ամսական երկու անգամ: Այնուամենայնիվ, «Կալանավորված անձանց և դատապարտյալների անհատական ընդունելիությունների գրանցման» մատյանում առկա գրառումների

համաձայն՝ 2022 թվականի ընթացքում անչափահասների հետ իրականացվել է մեկ խմբային հանդիպում՝ 2022 թվականի մայիսի 17-ին:
Ընդհանուր առմամբ, մտահոգիչ է գնահատվել դատապարտյալների շրջանում հոգեբանական աշխատանքների հանդեպ ստեղծված անվստահության մթնոլորտը:

ՔԿՀ-ում առկա չեն հոգեբանի, հոգեբույժի, սոցիալական աշխատողի, իրավաբանի համատեղ աշխատանքների արձանագրման ու վերահսկման միասնական մեխանիզմներ: Միջմասնագիտական կանոնավոր համագործակցության բացակայությունը խոչընդոտում է ազատությունից զրկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությանը, հետագա աշխատանքների գրագետ կազմակերպմանը: Բացի այդ, հոգեբանի կողմից արված գրառումները կրում են ֆորմալ բնույթ, չեն արտացոլում ազատությունից զրկվածն անձի հետ իրականացված աշխատանքը, նրա հոգեբանական վիճակի հստակ նկարագրությունը և դրանց արդյունքները: Գրառումների պատշաճ կատարումը կարող է նպաստել ազատությունից զրկված անձի հետ հետագա աշխատանքների առավել ճկուն, թիրախային կազմակերպմանը:

Մյուս կողմից հաշվի առնելով հոգեբանների աշխատանքի ոչ համամասնորեն բաշխված հլինելը, հոգեբանական աշխատանքի բնույթի տարբերությունը (պարտադիր և ոչ պարտադիր) աշխատավարձերի էական տարբերությունները՝ աշխատակիցների մոտ առաջացնում են սոցիալական երաշխիքների հանդեպ դժգոհություններ, ինչը կարող է լուրջ ազդեցություն ունենալ աշխատանքի որակի վրա: Բացի այդ, ազատությունից զրկված անձանց մոտ ինքնասպանությունների կանխարգելման և նրանց նկատմամբ հոգեբանական աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ են մասնագիտական ուղեցույցներ և, ըստ անհրաժեշտության, խորքային հոգեբանական աշխատանքներ:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում աշխատում է երեք հոգեբան, որոնցից մեկն այցի պահին եղել է արձակուրդում, թեև փաստացի գտնվել է աշխատավայրում: Հիմնարկի սոցիալական աշխատողը մասնագիտությամբ եղել է իրավաբան: Առանձնացված չեն եղել հոգեբանների համար աշխատասենյակներ, ինչն այդ աշխատանքները կազմակերպելու տեսանկյունից խոչընդոտող հանգամանք է հանդիսանում և առաջացնում է մի շարք խնդիրներ:

Ըստ տրամադրված տեղեկությունների՝ առավել «բարդ» դեպքերը վարում են քրեակատարողական հիմնարկի արական սեռի հոգեբանները, իսկ առավել «անվտանգ» համարվող դեպքերը՝ իգական սեռի հոգեբանը: Նման մոտեցումը խնդրահարույց է. հոգեբանն ազատությունից զրկված անձանց հետ պետք է հաղորդակցվի իր մասնագիտական որակներից, հմտություններից, այլ ոչ սեռով պայմանավորված առանձնահատկություններից ելնելով:

Այցի պահին ՔԿՀ-ում պահվել է ազատությունից զրկված 926 անձ, մինչդեռ երեք հոգեբանների աշխատանքային գործունեության ընթացքում գործնականում պարզապես հնարավոր չէ դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրել որակյալ հոգեբանական ծառայություն: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հոգեբանական ծառայությունների պատշաճ մատուցումը նպաստում է ինչպես անձի հոգեվիճակի կարգավորմանը, հարմարվողականության գործընթացների և միջանձնային փոխհարաբերությունների բարելավմանը, այնպես էլ անձի վերասոցիալականացման գործընթացին: Այսպիսով, քրեակատարողական հիմնարկում հոգեբանների թիվը խիստ անբավարար է և կարիք ունի անհապաղ վերանայման:

Մշտադիտարկման այցի ընթացքում ուսումնասիրվել են ազատությունից զրկված անձանց անհատական քարտերը: Հատկանշական է, որ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներից տևական ժամանակ է պահանջվել նշված անձանց անհատական

քարտերը Պաշտպանի ներկայացուցիչներին ներկայացնելու համար, իսկ Է.հ.-ի անհատական քարտն այցի ընթացքում ընդհանրապես չի ներկայացվել: Ավելին, դրանց ընդհանուր նկարագրությունը ցույց է տալիս, որ մասնագետների կողմից կատարված գրառումները կրում են տիպային և ձևական բնույթ, իրականացված աշխատանքների ամբողջական և բովանդակային նկարագրությունն ազատությունից զրկված անձանց վերաբերյալ փաստաթղթերում բացակայում է: Կատարված կամ նախատեսված աշխատանքների վերաբերյալ գրառումների պատշաճ կատարումը կարող է նպաստել ազատությունից զրկված անձի հետ հետագա աշխատանքների առավել ճկուն, թիրախային կազմակերպմանը:

Արմավիր ՔԿՀ-ում ևս չի ապահովվում հոգեբանի, հոգեբույժի, սոցիալական աշխատողի, իրավաբանի համատեղ, թիմային աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև առկա չեն այդ աշխատանքների արձանագրման ու վերահսկման միասնական մեխանիզմներ:

(գ) Գորիս ՔԿՀ-ում պահվող անձանց համար վերասոցիալականացման ծրագրեր առհասարակ չեն իրականացվում. չկան կրթական ծրագրեր, բացակայում է նպատակային որևէ զբաղմունք: Ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում պարզվել է, որ գրադարանից օգտվողների թիվը շատ փոքր է, իսկ ոմանք էլ գանգատվել են խիստ սակավաթիվ և չթարմացվող գրքերի տեսականուց:

Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնում առկա է բաժնի պետի, սոցիալական աշխատողի, հոգեբանի և գլխավոր իրավաբանի մեկական հաստիք: Այցի պահին սոցիալական աշխատողը եղել է արձակուրդում, իսկ հոգեբանի հաստիքը համալրված չի եղել: Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ հոգեբանի հաստիքը թափուր է եղել 2020 թվականից: Ուստի, ազատությունից զրկված անձանց հետ որևէ հոգեբանական աշխատանք չի իրականացվում արդեն շուրջ 2 տարի:

Հոգեբանական ծառայությունների մատուցման անհնարինությունը կարող է խիստ բացասաբար անդրադառնալ ազատությունից զրկված անձանց հետ նախատեսվող աշխատանքների ապահովման տեսանկյունից:

7) Բացասական հակումներ. (բոլոր երեք ՔԿՀ-ներ) ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանի հավելված 1-ի 45-րդ կետը սահմանում է, որ բացասական հակում ունեցող են համարվում այն կալանավորված անձինք և դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշումներ:

Միաժամանակ, կալանավորված անձին և դատապարտյալին՝ որպես բացասական հակում ունեցողի հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու կարգը սահմանված է վերոնշյալ հրամանի 46-րդ կետում, համաձայն որի՝ կալանավորված անձը և դատապարտյալը, որպես բացասական հակում ունեցող հաշվառման է վերցվում և հաշվառումից հանվում է հիմնարկի պետի որոշմամբ՝ հիմնարկի անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական, բժշկական սպասարկման, օպերատիվ ստորաբաժանումների կողմից տրված տեղեկությունների կամ եզրակացությունների հիման վրա:

Խնդրահարույց է նաև դատապարտյալի կամ կալանավորված անձի՝ որպես բացասական հակում ունեցողի հաշվառման վերցվելու և հաշվառումից հանվելու կարգավորումները: Բացասական հակում ունենալու հիմքով հաշվառման վերցնելու և, հատկապես,

հաշվառումից հանելու գործընթացը պրակտիկայում ազատությունից զրկված անձանց համար կանխատեսելի և որոշակի չէ, ինչը բարձրացնում է կամայականությունների ռիսկը:

Կալանավորված անձի և դատապարտյալի անհատական քարտում վարվում է ուղղման անհատական պլան, որում ի թիվս այլ տեղեկությունների, պետք է ներկայացվեն նաև դատապարտյալի հոգեբանական առանձնահատկությունները (անհատական քարտի VI մաս). հուզական վիճակը, ադապտիվությունը, միջանձնային հարաբերությունները, անձնային որակները, խառնվածքը, ինտելեկտուալ մակարդակը: Բացի այդ, պետք է գնահատվեն բացասական վարքի դրդապատճառները, քրեածին վարքի դրդող գործոնը, կրկին հանցագործություն կատարելու ռիսկայնությունը, բացասական հակումները, սոցիալական պահանջմունքները և հնարավորությունները: Նմանատիպ խորքային հոգեբանական տեղեկությունների հավաքը ենթադրում է բազմակողմանի և պրոֆեսիոնալ հոգեդիագնոստիկ գործընթաց՝ հոգեբանական հետազոտական մեթոդաբանության կիրառմամբ՝ խորքային հարցազրույց, կառուցվածքայնացված դիտում, թեսթավորում (անկետավորում) և այլն:

Այնուամենայնիվ, գործնականում նմանօրինակ աշխատանքներ հիմնականում չեն կատարվում՝ անհատական քարտերում գրառումները հիմնականում կրել են ձևական բնույթ, եղել են ընդհանրական և չեն պարունակել բազմակողմանի և մասնագիտական հոգեդիագնոստիկ աշխատանքների պլանի մանրամասն նկարագրություն:

«Արմավիր» ՔԿՀ-ում հանցածին հակման վերցված քսաներեք անձանցից միայն տասներկուսի անվան դիմած է լրացված եղել «Հակումների նվազեցման ուղղությամբ իրականացված աշխատանքների համառոտ բովանդակությունը» աղյուսակը, դարձյալ կատարված են եղել նույնաբովանդակ գրառումներ: Երեք անձանց վերաբերյալ նշված են եղել միայն նրանց անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, բացակայել է նույնիսկ հաշվառման վերցնելու ամսաթիվը, ինչպես նաև այդ անձանց վերաբերյալ այլ տեղեկություններ: Նմանատիպ գրառումներ և բացթողումներ են առկա նաև մյուս հակումների վերաբերյալ կատարված գրառումներում:

«Բացասական հակում ունեցողներ կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման» մատյանի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ «Հակումների նվազեցման ուղղությամբ իրականացված աշխատանքների համառոտ բովանդակությունը» սյունակում հիմնականում արձանագրվում են ընդհանուր բնույթի տեղեկություններ, չմասնավորեցնելով հակումների նվազեցման ուղղությամբ տարված աշխատանքների հստակ նկարագրությունը: Համապատասխան թիվ 5 մատյանի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ «Հակումների նվազեցման ուղղությամբ իրականացված աշխատանքների համառոտ բովանդակությունը» սյունակում հիմնականում արձանագրվում են ընդհանուր բնույթի տեղեկություններ՝ չմասնավորեցնելով հակումների նվազեցման ուղղությամբ տարված աշխատանքների հստակ նկարագրությունը:

«Գորիս» ՔԿՀ-ում համապատասխան մատյանի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2022 թվականի ընթացքում բացասական հակման է վերցվել թվով 2 ազատությունից զրկված անձ, որոնցից մեկը սույն թվականի մարտի 17-ին տեղափոխվել է այլ քրեակատարողական հիմնարկ:
ՔԿՀ-ում ինքնավնասումների և ինքնասպանությունների զննության գործիքը կիրառվում է անվտանգության բաժնի պատասխանատու հերթապահի կողմից, ով պատասխանատու է ազատազրկվածին քրեակատարողական հիմնարկ ընդունելու գործընթացի համար: Իսկ ռիսկի խորքային գնահատման գործիքը կիրառվում է հոգեբանի կողմից: Հոգեբանի բացակայության (հաստիքը թափուր լինելու պարագայում) գործիքը պետք է կիրառվի այդ

ոլորտում վերապատրաստում անցած սոցիալական աշխատողի կողմից: Սա խնդրահարույց պրակտիկա է:

8) Ազատությունից զրկված օտարերկրացի անձանց իրավունքների ապահովումը. (ա) Աբովյան ՔԿՀ-ում պահվել է ազատությունից զրկված օտարերկրացի վեց անձ: Վերջիններս եղել են Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության, Պերուի Հանրապետության, Գվատեմալայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներ: Ազատազրկված անձանցից 5-ը եղել են կալանավորված անձ, մեկը՝ դատապարտյալ: **(բ) «Արմավիր» ՔԿՀ-ում** պահվել է ազատությունից զրկված օտարերկրացի 63 անձ: Վերջիններս եղել են Վրաստանի, Թուրքիայի, Հունաստանի, Ռուսաստանի Դաշնության, Հնդկաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաև ազգությամբ քուրդ և եզդի ազատությունից զրկված անձինք:

ԿԱՄ ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված օտարերկրացի անձինք որպես իրենց իրավունքների պաշտպանության առաջնային խոչընդոտ նշել են հաղորդակցման դժվարությունները, մասնավորապես լեզվական խոչընդոտները, որոնք առաջացնում են մի շարք բարդություններ ինչպես առաջնային կարիքների բավարարման, բուժօգնության ապահովման, միջավայրում սոցիալ-հոգեբանական ինտեգրման տեսանկյունից: Ինչպես արձանագրվել է առանձնազրույցների ընթացքում՝ ազատությունից զրկված օտարերկրացի անձանցից ոմանք անձնակազմի հետ իրենց առօրյա շփումները հնարավոր դարձնելու համար ստիպված են եղել սովորել հայերեն որոշ բառեր կամ բառակապակցություններ:

Փաստացի, քրեակատարողական հիմնարկներում թարգմանչական ծառայությունների բացակայության պատճառով հայերեն լեզվին չտիրապետող ազատությունից զրկված անձանց հետ հնարավոր չէ իրականացնել արդյունավետ հաղորդակցություն: Ավելին, նրանց հետ վերասոցիալականացման, հոգեբանական աշխատանքները լիարժեք չեն կազմակերպվում կամ ընդհանրապես չեն իրականացվում: Մասնավորապես՝ ազատությունից զրկված անձինք նշել են, որ շփման և հաղորդակցման խոչընդոտների պատճառով իրենք հնարավորություն չեն ունենում լիարժեք մասնակցել Քրեակատարողական հիմնարկում կազմակերպվող մշակույթային միջոցառումներին, ինչպես նաև լիարժեք օգտվել բժշկական, հոգեբանական և իրավաբանական ծառայություններից: Մեկ այլ խնդիր է ազատությունից զրկված օտարերկրացի անձանց բժշկական օգնության և սպասարկման պատշաճ ապահովումը՝ պայմանավորված լեզվական խոչընդոտով:

Չնայած նրան, որ ՀՀ արդարադատության նախարարությունը 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով բոլոր քրեակատարողական հիմնարկներում 32 լեզուների բանավոր և գրավոր թարգմանության ծառայությունների պատշաճ ապահովման նպատակով դեռ 2022 թվականի ապրիլ ամսին կնքել է պայմանագիր, սակայն այցերի պահի դրությամբ այդ ծառայությունից քրեակատարողական հիմնարկը չի օգտվել:

Այսպիսով, խնդրահարույց է ազատությունից զրկված օտարերկրացի անձանց առողջության պահպանման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն ստանալու և այլ հասանելի ծառայություններից օգտվելու իրավունքների ապահովման հարցը: Նշվածը, իր հերթին, կասկածի տակ է դնում օտարերկրացի դատապարտյալների հետ ուղղման ու վերասոցիալականացման աշխատանքների իրականացման արդյունավետությունը:

ԽԿԿ-ն դեռևս Հունաստանի վերաբերյալ 1994 թվականի զեկույցում նշել է նաև, որ քրեակատարողական հիմնարկներում պահվում են զգալի թվով ազատությունից զրկված

օտարերկրացի անձինք, և նրանցից ոմանք չունեն լիարժեք պատկերացում հիմնարկի ռեժիմի կամ իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և ազատությունից զրկված օտարերկրացի անձանց հաղորդակցման կապակցությամբ առկա են լուրջ բարդություններ: Նման իրավիճակը կարող է առաջացնել թյուրըմբռնումներ և վեճեր: Հետևաբար, ԽԿԿ-ն առաջարկել է համապատասխան քայլեր ձեռնարկել այդ բարդությունները հաղթահարելու ուղղությամբ (օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում սահմանված կարգը և ռեժիմը, ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև բողոքարկման և կարգապահական ընթացակարգերը նկարագրող տեղեկատվական գրքույկների պատրաստում և համապատասխան օտար լեզուներով թարգմանություն, ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների միջև ամենօրյա փոխհարաբերություններում առավել հաճախ օգտագործվող արտահայտությունների թարգմանություն, քրեակատարողական ծառայողների համար օտար լեզուների տարրական ուսուցում[133]:

Շփման համար լեզվական խնդիրները լուծելու և ազատությունից զրկված օտարերկրացի անձանց և քրեակատարողական համակարգի աշխատակիցների հաղորդակցվելու հնարավորությունն ապահովելու կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս առաջարկել է Քրեակատարողական հիմնարկներում նրանց հետ աշխատանքներում ներգրավել թարգմանիչներ, մշակել զրուցարաններ, ձեռք բերել թարգմանչական հատուկ սարքեր կամ աշխատակիցների համար կազմակերպել համապատասխան օտար լեզուների ուսուցման դասընթացներ:

Մեկ այլ խնդիր է ազատությունից զրկված օտարերկրացի անձանց ազգականների և ազատությունից զրկված օտարերկրացի անձի տարբեր ժամային գոտիներում գտնվելու հանգամանքով պայմանավորված տեսազանգերի կազմակերպման դժվարությունները: Մասնավորապես, հաճախ ազատությունից զրկված օտարերկրացի անձինք հնարավորություն չեն ունենում տեսազանգի միջոցով կապ հաստատել ազգականների հետ, քանի որ նրանք գտնվում են այլ ժամային գոտիներում և քրեակատարողական հիմնարկում տեսազանգի թույլատրերի ժամերը չեն համընկնում իրենց ազգականների գտնվելու վայրի ժամային գոտու հետ:

9) Ազատությունից զրկված անչափահաս անձանց կրթության իրավունքի ապահովումը (ա) Աբովյան ՔԿՀ-ում պահվել են կալանավորված անձի կարգավիճակ ունեցող 4 անչափահաս անձինք, ովքեր ներգրավված են եղել հանրակրթական ուսումնական ծրագրերում: Ուսումնական ծրագրում ներգրավված է եղել նաև մեկ 19 տարեկան կալանավորված անձ (կին), որը մինչ կալանավորվելը չէր ավարտել հանրակրթական ծրագիրը և իր խնդրանքով դասընթացներին մասնակցել է արական սեռի ներկայացուցիչներից առանձին:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն ունի օրենքով նախատեսված կրթություն ստանալու իրավունք: Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով: ԽԿԿ-ի 2-րդ ընդհանուր զեկույցում նշված է, որ ազատությունից զրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են դրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների:[134]

---

[133] Տե՛ս https://rm.coe.int/16806964c9 կայքէջում, կետ 102:

[134] Տե՛ս https://rm.coe.int/1680696a3f կայքէջում, կետ 47:

Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ ազատությունից զրկված անչափահաս անձանցից մեկի 18-ը լրանալուն պես տեղափոխվել է Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ, բայց, քանի որ կրթական ծրագիրն ավարտված չի եղել մասնագետներն իր հետ հեռավար կարգով են կազմակերպել դասընթացները:

Մշտադիտարկման ժամանակ անչափահասները եղել են ամառային արձակուրդում, որոշներն էլ ավարտական քննական շրջանում: Ուսումնասիրելով 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասացուցակները՝ կարող ենք փաստել, որ անչափահասներն աշխատանքային օրերին մինչև ժամը 16:00-ի սահմաններում գտնվել են դասապրոցեսի մեջ: Ավելին, միջնակարգ կրթական ծրագրի շրջանակներում վերջիններս ուսանում են հայոց լեզու, գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, հայոց պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, համաշխարհային պատմություն, հասարակագիտություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, կենսաբանություն, ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա առարկաները և խեցեգործություն:

Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում Քրեակատարողական հիմնարկում դասավանդող ուսուցիչները նշել են, որ ցածր աշխատավարձով պայմանավորված՝ ստիպված են լինում համատեղել Քրեակատարողական հիմնարկում իրենց աշխատանքը հանրակրթական դպրոցում աշխատանքի հետ, ինչը ֆիզիկապես և հուզականորեն սպառում է իրենց: Վերոնշյալ հանգամանքը կարող է բացասաբար անդրադառնալ ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա:

Դասընթացները կազմակերպվել են առանձնացված շենքում, որը հիմնանորոգման և մաքրման խիստ անհրաժեշտություն է ունեցել: Մասնավորապես, շենքում իրականացվել են ջրահեռացման համակարգի մասնակի վերանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում ողջ շենքը գտնվել է կիսաքանդված վիճակում՝ լի է եղել շինարարական աղբով, ինչը դժվարացրել է շենքում տեղաշարժվելը: Դասասենյակները կահավորված են եղել հին նստարաններով, սեղաններով և անհրաժեշտ այլ պարագաներով: Դպրոցում առանձնացված է եղել նաև մարզադահլիճ, որը ևս հիմնանորոգման անհրաժեշտություն է ունեցել:
Դպրոցի շենքային հատվածի ողջ տարածքն ունեցել է մաքրման խիստ անհրաժեշտություն, իսկ սանհանգույցը՝ հիմնանորոգման:

Ըստ ԽԿԿ-ի՝ նպատակային զբաղմունքների բացակայությունը, հատկապես վնասակար է ազատությունից զրկված անչափահասների համար, ովքեր ֆիզիկական ակտիվության և մտավոր խթանման հատուկ կարիք ունեն: Ազատությունից զրկված անչափահասներն օրվա ընթացքում պետք է ապահովվեն կրթական, սպորտային, մասնագիտական դասընթացների, հանգստի և արտախցային այլ նպատակային գործունեության ամբողջական ծրագրերով[135]:

Կրթության ապահովումն (բ) Արմավիր ՔԿՀ-ում ազատությունից զրկված անձանց համար ներառում է նախնական մասնագիտական, մասնագիտական միջին կրթությունը, բարձրագույն կրթությունը, առաջիկայում՝ նաև հանրակրթությունը: Ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում իրականացվում են նաև մի շարք կրթական ծրագրեր և դասընթացներ:

[135] Տե՛ս ԽԿԿ գործունեության վերաբերյալ 24-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 2013 թվականի օգոստոսի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, https://rm.coe.int/1680696a9c կայքէջում, կետ 107:

Մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրվել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում է ապահովել ազատությունից զրկված անձանց միջնակարգ կրթություն ստանալու գործընթացը, ինչը ողջունելի է: Այդ նպատակով «Արմավիր» ՔԿՀ-ում կառուցվել են ուսումնական սենյակներ: Այցի պահի դրությամբ նշված սենյակներում դեռևս բացակայել է կահավորանքը: Վարչակազմի հայտնած տեղեկության համաձայն՝ ուսումնական սենյակները շուտով շահագործման են հանձնվելու:

Ողջունելի են ազատությունից զրկված անձանց հանրակրթության կազմակերպմանն ուղղված քայլերը, դա նպաստում է նրանց կրթության իրավունքի պատշաճ իրացմանը: Բացի այդ, ներդրված ջանքերը կարևոր են վերջիններիս վերասոցիալականացման տեսանկյունից:

Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկում մինչև 2022 թվականի սեպտեմբեր ամիսը բարձրագույն ուսուցում ստացել է 5 ազատությունից զրկված անձ, այցի պահի դրությամբ բարձրագույն ուսուցում ստացող անձանց թիվը եղել է 3: Ըստ ստացված տեղեկությունների՝ այցի պահի դրությամբ 1 անձ նույնպես ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն և շուտով ընդգրկվելու է բարձրագույն կրթություն ստացող ազատությունից զրկված անձանց ցանկում:

«Արմավիր» ՔԿՀ-ում բարձրագույն ուսուցման դասընթացները կազմակերպվում են առցանց և ապահովվում են ամենօրյա ռեժիմով: Միևնույն ժամանակ, իրականացված մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրվել է, որ բարձրագույն կրթության կազմակերպման տեսանկյունից առկա են խնդիրներ: Մասնավորապես՝ խնդրահարույց է բարձրագույն կրթությունը կազմակերպելու համար դասասենյակների բացակայությունը և առկա տարբերակների հասանելիությունն ու արդյունավետությունը:

Ըստ վարչակազմի հայտնած տեղեկության՝ քրեակատարողական հիմնարկը համագործակցում է տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ կրթական գործունեություն իրականացնողների հետ՝ ապահովելու համար ազատությունից զրկված անձանց ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը, սակայն այդ հարցում առաջընթաց չի նկատվում:

10) Քրեակատարողական ծառայողների կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելուն առնչվող խնդիրներ «Արմավիր» ՔԿՀ-ում.
Այցի ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրության առարկա են դարձել քրեակատարողական ծառայողների կողմից ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման դեպքերը: Համապատասխան մատյանների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 2022 թվականի ընթացքում այցի պահի դրությամբ հատուկ միջոցներ կիրառվել է 5 ազատությունից զրկված անձի նկատմամբ:

Վերոգրյալի վերաբերյալ տեսաձայնագրությունները քրեակատարողական հիմնարկի կողմից չեն տրամադրվել այն պատճառաբանությամբ, որ դրանք պահպանվում են Քրեակատարողական ծառայությունում: Պաշտպանի ներկայացուցիչների արձանագրած տվյալներն ամփոփվել ու գրություններ են ուղարկվել իրավասու մարմիններ՝ ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ արդարադատության նախարարություն և Քրեակատարողական ծառայություն: Մասնավորապես, Քրեակատարողական ծառայությանն ուղղված գրությամբ պահանջվել է 2022 թվականի ընթացքում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ազատությունից զրկված անձանց նկատմամբ հատուկ միջոցների կիրառման գործընթացի վերաբերյալ տեսաձայնագրությունների ամբողջական փաթեթը: Մինչդեռ, Քրեակատարողական ծառայությունը տեսաձայնագրությունների փաթեթը փաստացի չի

տրամադրել, ինչը խոչընդոտել է Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման մեխանիզմի գործառույթների իրականացմանը:

ՀՀ արդարադատության նախարարության հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն տեսաձայնագրությունները տեղում՝ Քրեակատարողական ծառայությունում, ուսումնասիրելու հարցում: Պաշտպանի ներկայացուցչի՝ Քրեակատարողական ծառայությունում կատարված տեսաձայնագրությունների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել ինչպես օրենսդրական, այնպես էլ էլեկտրոնային հսկողության սարքերի՝ տեսաձայնագրող միջոցների տեխնիկական, ոչ պատշաճ կամ սխալ գործարկման խնդիրներ:

Արդյունքում արձանագրվել է, որ տեսաձայնագրությունների իրականացումը չի ծառայում պատշաճ էլեկտրոնային հսկողություն իրականացնելու նպատակին: Տեսաձայնագրող սարքերը պետք է տեղադրված լինեն այնպես, որ հնարավոր լինի նկարահանելու և հետևելու քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ գործադրելու ընթացքում աշխատակիցների կողմից իրականացվող գործողություններին: Բացի այդ, դրանք պետք է լինեն անընդմեջ բարձր որակի (HD) տեսաձայնագրություն իրականացնող սարքեր՝ օրվա մութ ժամերին նկարահանելու և տեսաձայնագրությունն երկարաժամկետ պահպանելու համար: Կարևոր է նաև տեխնիկական միջոցներն ապահովել բավարար ծավալով հիշողության կրիչներով:

«Արմավիր» ՔԿՀ կատարված այցի ընթացքում ուսումնասիրվել են նաև հիմնարկում առկա հատուկ միջոցները և քաղաքացիական զենքերը՝ մահակները, գազային զենքը (պղպեղի սփրեյ), էլեկտրահարող սարքը և ձեռնաշղթաները:

Պարզվել է, որ գազային զենքերը եղել են ժամկետանց (պահպանման ժամկետը մինչև 2020 թվականի նոյեմբերի 10-ը): Ժամկետանց գազային զենքերի պահպանումը և առավել ևս օգտագործումը կարող են վնասակար լինել և՛ այն կիրառողի, և՛ այն անձի համար, որի նկատմամբ այն կիրառվում է: Ավելին, ՀՀ օրենսդրությամբ ժամկետանց հատուկ միջոցների խոտանման կարգավորումներ նախատեսված չեն:

Մտահոգիչ է այն, որ քրեակատարողական հիմնարկում էլեկտրահարող սարքի առկայության պարագայում անվտանգության բաժնի ծառայողները հիմնականում տեղեկացված չեն դրա կիրառման չափանիշների մասին: Ուստի, քաղաքացիական զենքի գործադրման դեպքերի հնարավոր անհրաժեշտությամբ պայմանավորված համապատասխան վերապատրաստումների կարիքն առանցքային է:

Մեկ այլ խնդիր է խուզարկությունների պլանավորման և իրականացման ներքին ընթացակարգերի բացակայությունը: Խուզարկությունների ոչ ճիշտ պլանավորումը որոշ դեպքերում կարող է հանգեցնել ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ գործադրելու անհրաժեշտության: Այսպես, քրեակատարողական հիմնարկի անվտանգության բաժնի աշխատակիցների հետ զրույցի ընթացքում արձանագրվել է, որ քրեակատարողական ծառայողները խուզարկություններ իրականացնելիս հիմնվում են միայն ՀՀ օրենսդրությամբ ամրագրված ընդհանուր դրույթների վրա:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ԽԿԿ-ն իր գործունեության 2-րդ ընդհանուր զեկույցի 53-րդ և 55-րդ կետերում նկարագրել է ուժի գործադրմանն առնչվող հիմնական չափանիշները, որոնք հետագայում լրամշակել և կատարելագործել են առանձին

պետություններ կատարված այցելությունների զեկույցներում[136]: ԽԿԿ չափանիշների համաձայն՝
նախապես ծրագրված միջամտությունները (ներառյալ՝ խուզարկությունները) պետք է տեսագրվեն,
ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների ստացած մարմնական վնասվածքների պետք է պատշաճ արձանագրվեն,
յուրաքանչյուր միջամտությունից անմիջապես հետո դրան մասնակցող բոլոր ծառայողները և բոլոր վերադասները պետք է հանգամանալից զեկույց կազմեն,
միջամտության գործառույթ կատարելիս դրան մասնակցող բոլոր աշխատողները պետք է հստակորեն տեսանելի անձնական նույնացման նշաններ և տարբերանշաններ կրեն, ինչպես նաև պահպանեն օրինականության, անհրաժեշտության և համաչափության հիմնարար սկզբունքները,
այդ ամենից խուսափելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի անվտանգության աշխատողները խոսքի միջոցով լարվածության թոթափման, ուժի գործադրման և դրանց մասին զեկուցելու թեմաներով պատշաճ վերապատրաստվեն:

(գ) Գորիս ՔԿՀ-ում Մարդու իրավունքի պաշտպանի ներկայացուցիչներին ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ կամ զենք գործադրելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից: Աշխատակիցների պնդմամբ քրեակատարողական հիմնարկում 2022 թվականի ընթացքում ֆիզիկական ուժի կիրառման, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման որևէ դեպք չի արձանագրվել:

Մշտադիտարկման այցի ընթացքում ուսումնասիրվել են նաև հատուկ միջոցների պահման պայմանները: Այսպիսով, բնակելի գոտու տարածքում գտնվող տեսուչների սենյակում առկա է եղել 1 ձեռնաշղթա, 1 արցունքաբեր գազ և 15 ռետինե մահակ: Իսկ պատասխանատու հերթապահի սենյակում՝ 1 արցունքաբեր գազ, 1 ձեռնաշղթա և 1 էլեկտրահարող սարք: Արցունքաբեր գազերը եղել են ժամկետանց (պահպանման ժամկետը նշված է եղել 10.11.2020): Հարկ է նշել, որ ժամկետանց արցունքաբեր զենքերի պահպանումը և առավել ևս օգտագործումը կարող է վնասակար լինել և՛ այն կիրառողի, և՛ այն անձի համար, որի դեմ այն կիրառվում է: Այսպիսով, ժամկետանց արցունքաբեր գազերի առկայությունը քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ է բացառել, ավելին՝ դրանք պետք է ոչնչացվեն:

11) Աշխատակիցների աշխատանքային պայմաններ. (ա) Աբովյան ՔԿՀ-ում վերանայման և համակարգային փոփոխությունների կարիք ունեն քրեակատարողական ծառայողների և բժշկական անձնակազմի բավարար ու համաչափ աշխատավարձի, ինչպես նաև խրախուսման ճկուն մեխանիզմների ստեղծման հարցերը: Այս լուծումներն անմիջական դրական նշանակություն կունենան քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման վիճակի, անմարդկային վերաբերմունքի և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տեսանկյունից:
Խնդրահարույց է նաև «Աբովյան» ՔԿՀ-ի ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող քրեակատարողական ծառայողների հարաբերակցությունը՝ սեռով պայմանավորված: Այսպես, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ընդհանուր 135 աշխատակիցներից ընդամենը 36-ն են կին, ընդ որում՝ 13-ը քաղաքացիական ծառայողներ: Հարկ է ընդգծել, որ հերթապահ խմբի 16 հաստիքներից 3-ն են զբաղեցված իգական սեռի ծառայողներով, իսկ անվտանգության ապահովման բաժնի 48 հաստիքներից՝ 18-ը:

[136] Տե՛ս https://rm.coe.int/1680696a3f կայքէջում:

Պաշտպանի նախորդ այցի համեմատ ազատությունից զրկված անձանց հետ անմիջական շփման մեջ գտնվող նշված խմբերի իգական սեռի քրեակատարողական ծառայողների թիվն նվազել է (հերթապահ խմբում 1-ով, անվտանգության ապահովման բաժնում 3-ով), ինչը մտահոգիչ է:

Ապահովված չէ նաև ծառայողների սննդի կազմակերպում ՔԿՀ տարածքում: Բացի այս, մեկուսարանում արձանագրվել են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների աշխատասենյակների անբավարար պայմաններ:

(բ) Արմավիր ՔԿՀ-ում աշխատակիցների աշխատանքային պայմանների առումով արձանագրվել են նույն խնդիրներն, ինչ Աբովյան ՔԿՀ-ում: Ի լրումն դրա, Արմավիր ՔԿՀ-ում Քրեակատարողական ծառայողները Պաշտպանի ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների ընթացքում իրենց դժգոհությունն են հայտնել գերծանրաբեռնված աշխատանքի և հանգստի պատշաճ հնարավորության բացակայության կապակցությամբ, ինչը պայմանավորված է քրեակատարողական հիմնարկում ռեսուրսների անբավարարությամբ: Վերջիններս, մասնավորապես, նշել են, որ շուրջօրյա հերթափոխից հետո, առանց բավարար հանգստի հնարավորության, երբեմն ստիպված են լինում ներկայանալ աշխատանքի: Քրեակատարողական ծառայողները նշել են, որ նույն խնդրին բախվում են նաև վերապատրաստման դասընթացների ժամանակ, երբ դասընթացներին մասնակցելու համար ծառայողական պարտականությունների կատարումից որոշակի օրերով ազատված լինելով հանդերձ՝ ստիպված են լինում բաց թողնել որոշ դասընթացներ և ներկայանալ քրեակատարողական հիմնարկ:

(գ) Գորիս ՔԿՀ-ում ևս արձանագրվել են աշխատողների համար ոչ բավարար աշխատանքային պայմաններ, մասնավորապես աշխատասենյակներում խոնավության բարձր մակարդակ, ինչպես նաև վերանորոգման կարիք:

2. Հոգեբուժական հաստատությունների մշտադիտարկման արդյունքները

Հոգեբուժական հաստատություններ իրականացված այցերի գլխավոր նպատակը եղել է ուսումնասիրել ինչպես նախկինում արձանագրված (այդ թվում՝ համակարգային) խնդիրներն ու դրանք վերացնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը, այնպես էլ վեր հանել նոր խնդիրներ: Ուստի, հաղորդման սույն հատվածում տեղ են գտել մշտադիտարկված հաստատություններում ԿԱՄ վերհանած խնդիրներն ու դրանց լուծման առաջարկները: Հետևություններն ու առաջարկությունները ներկայացվում են բոլոր երեք հաստատությունների տվյալների ամփոփմամբ և յուրաքանչյուր հարցի դեպքում առավել կոնկրետ հոկգեկան առողջության կենտրոնի (ՀԱԿ) օրինակով կարվեն հղումներ:

1) Հոգեկան առողջապահության կազմակերպման առնչվող խնդիրներ. Ապաինստիտուցիոնալացման, միասնական քաղաքականության անհրաժեշտությունը և հոգեբուժական ծառայությունների վճարովիությունը.
Որպես համակարգային խնդիր շարունակում է առանձնանալ Հայաստանում հոգեբուժական օգնության և սպասարկման կամ հոգեկան առողջապահության հիվանդանոցային ինստիտուցիոնալացման կենտրոնացումը և համայնքահեն ծառայությունների անարդյունավետ կիրառությունը: Պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, ըստ որի՝ չնայած Կառավարության կողմից հաստատվել է ապաինստիտուցիոնալացման և համայնքահեն ծառայություններին անցում կատարելու հեռանկար, առանձին դեպքերով ձեռնարկվել են որոշակի աշխատանքներ, սակայն բավարար չեն: Կարևոր է և հրատապ համայնքահեն ծառայությունների մոդելին անցում կատարելու համար հանրային իրազեկման միջոցով իրականացնել աշխատանքներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ սոցիալական խարանը

բացառելու ուղղությամբ: Մտահոգիչ է այն, որ հոգեկան առողջության պահպանման ոլորտում առկա համակարգային խնդիրների լուծմանը համապարփակ մոտեցում չի ցուցաբերվում, առկա չեն հոգեբուժական կազմակերպություններում վճարովի ծառայությունների մատուցման միասնական չափանիշներ, նշված հարցին վերաբերող ռազմավարական փաստաթղթեր չեն մշակվել, որոնք թույլ կտային վերհանված խնդիրները կարգավորել միասնական քաղաքականության շրջանակներում և պատշաճ հսկողություն իրականացնել ոլորտի նկատմամբ՝ անկախ գերատեսչական ենթակայությունից: Այսպիսով, անհրաժեշտ է՝

մշակել հոգեկան առողջության ոլորտում ապահնստիտուցիոնալացման և այլընտրանքային ծառայություններին անցում կատարելու համար ռազմավարական փաստաթղթեր՝ հաշվի առնելով ոլորտի միջազգային չափանիշները, սկզբունքները և դրական փորձը.

սահմանել այլընտրանքային ծառայությունների նախաձեռնված համակարգի լիարժեք ներդրմանն ուղղված հստակ և գործնական քայլեր ենթադրող միջոցառումներ.

ընդլայնել առկա այլընտրանքային ծառայությունների շրջանակը՝ նպատակ ունենալով աջակցել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնավարության, համայնքային կյանքին ընդգրկվելու և այլ սոցիալական հարցերում.

իրականացնել իրազեկման աշխատանքներ ինչպես առկա այլընտրանքային ծառայությունների վերաբերյալ, այնպես էլ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ առկա սոցիալական խարանը բացառելու նպատակով.

համակարգել հոգեկան առողջության ոլորտի իրավասու մարմինների աշխատանքը, նրանց միջև փոխկապակցված համագործակցությունը՝ իրականացնելով պատշաճ վերահսկողություն.

ոլորտի քաղաքականությունը մշակող մարմնի կողմից սահմանել հոգեբուժական օգնության և սպասարկման անվճար ապահովման՝ օրենքով նախատեսված երաշխիքների պայմաններում վճարովի ծառայությունների ցանկերը՝ հոգեբուժական կազմակերպություններում վճարովի ծառայությունների տեսակի և սակագների չհիմնավորված տարբերակվածությունը բացառելու նպատակով.

հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրել ամբողջական և մատչելի տեղեկատվություն հոգեբուժական անվճար օգնության և սպասարկման տրամադրման կազմակերպման մասին:

2) Անգործունակ անձանց իրավունքների ապահովման հետ կապված խնդիրներ

Տարիներ շարունակ ԿԱՄ-ի կողմից որպես համակարգային հարց շարունակում է մտահոգիչ մնալ այն, որ անգործունակ ճանաչված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի խնամակալը որոշ դեպքերում հանդիսանում է այն հաստատությունը, որտեղ գտնվում է անձը: Որպես սկզբունքային դիրքորոշում՝ Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է նշել, որ ոչ մի պարագայում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի խնամակալ չի կարող լինել հոգեբուժական կազմակերպությունը կամ բժշկական անձնակազմի ներկայացուցիչը, որտեղ պահվում է տվյալ անձը կամ որի կողմից կազմակերպվում է վերջինիս բուժումն ու խնամքը: Այս համատեքստում առկա է անխուսափելի շահերի բախում, ինչպես նաև խնամակալի անաչառության և անկողմնակալության վերաբերյալ լուրջ մտավախություն: Ավելին, դա հակասում է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին, ուստի ներպետական օրենսդրական կարգավորումները պետք է անհապաղ վերանայվեն: Առկա չեն նաև անձի փոխարեն որոշում կայացնելու համակարգը որոշումների կայացմանն աջակցելու ռեժիմներով փոխարինելու մեխանիզմներ: Ուստի, անգործունակ ճանաչված անձանց իրավունքների պաշտպանության համար անգործունակության ինստիտուտը պետք է անհապաղ վերանայվի և ներդրվեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց որոշումների կայացմանն աջակցության նոր ինստիտուտներ ու մեխանիզմներ: Կարևոր է նաև հաշվի առնել անձի կարծիքը խնամակալի ընտրության հարցում, ինչպես նաև խնամակալին աջակցման և վերահսկման մեխանիզմների ներդրումը: Այսպիսով, անհրաժեշտ է՝

հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ խնամակալություն սահմանելիս հաշվի առնել խնամարկյալի կարծիքը.
իրավասու պետական մարմնի կողմից քննարկման առարկա դարձնել խնամակալի և խնամարկյալի միջև առկա տարաձայնությունները և շահերի բախման խնդիրը՝ վերջինիս խնամակալ նշանակելիս.
մշակել խնամակալներին աջակցության մեխանիզմներ.
խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից հսկողություն իրականացնել խնամակալների՝ ի շահ խնամարկյալների գործունեության նկատմամբ.
պարբերաբար իրականացնել խնամակալների գործունեության նկատմամբ մշտադիտարկում, արդյունքներով ձեռնարկել օրենքով սահմանված քայլեր.
անհապաղ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև 41-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների վերանայման նպատակով.
պահպանել «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնության վերաբերյալ:

3) Իրազեկված համաձայնություն. Հոժարակամ և ոչ հոժարակամ բուժում.

Խիստ անթույլատրելի է անձանց նկատմամբ հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու վերաբերյալ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավական կարգավորումները չպահպանելու պրակտիկան: Մասնավորապես՝ մշտադիտարկումը ցույց է տալիս, որ բազմիցս են դեպքերը, երբ հոգեբուժական հաստատություններում չի ստացվում բուժում սկսելու համար անձի իրազեկված համաձայնությունը կամ այն ապահովվում է ձևական: Սա ենթադրում է, որ հոգեբուժական կազմակերպությունը, ստանալով ընդունված անձանց կողմից բուժման և հոսպիտալացման համաձայնության ձևական դիմումները, որոնք իրականում չեն արտահայտում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ազատ և իրազեկված կամարտահայտությունը, շրջանցում է ոչ հոժարակամ բուժման համար նախատեսված դատական ընթացակարգերը, ինչն օրենսդրի կողմից սահմանվել է անձանց հոգեբուժական կազմակերպություններում կամայականորեն պահելը բացառելու նպատակով: ԿԱՄ իրականցրած այցի ընթացքում հիվանդության պատմագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ պացիենտներից մեկը հաստատություն է ընդունվել 2022 թվականի մայիսի 16-ին՝ ժամը 10:05-ին: Անձի վերաբերյալ բժշկական փաստաթղթերում առկա չի եղել վերջինիս գրավոր համաձայնությունն իր նկատմամբ ստացիոնար բուժում ստանալու վերաբերյալ, ինչպես նաև իրազեկված չի եղել իր իրավունքների իրացման ընթացակարգերի վերաբերյալ: Հարկ է ընդգծել, որ այցի պահի դրությամբ հաստատություն ընդունվելուց անցել է ավելի քան 74 ժամ, սակայն վերջինիս նկատմամբ ոչ հոժարակամ բուժում սկսելու ընթացակարգ հոգեբուժական կազմակերպությունը չի նախաձեռնել: Անձը փաստացի պահվել է ապօրինի: Ավելին՝ անձի նկատմամբ առաջին իսկ օրվանից նշանակված է եղել բուժում, որն էլ շարունակել է ստանալ իր կամքին հակառակ, որը հաստատվել է նաև «Բաժանմունքի օրագիր» մատյանում արված գրառումներով՝ «...դեղորայքը ստացել է ստիպողաբար...»: Հոգեբուժական հաստատություններ իրականացված մշտադիտարկման ընթացքում բազմիցս են եղել նաև դեպքեր, երբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք նշել են, որ ցանկանում են դուրս գրվել հաստատությունից՝ չնայած նրան, որ փաստաթղթային առումով անձի համաձայնությունը հոգեբուժական հաստատությունը ստացել է: Օրինակ՝ ԿԱՄ-ի այցերից մեկի ընթացքում արձանագրվել է դեպք, երբ պացիենտները հենց այցի ընթացքում մոտեցել են բժշկական անձնակազմին և հայտնել, որ ցանկանում են դուրս գրվել, սակայն նշված պահանջը չի արձանագրվել և այդ կապակցությամբ որևէ գործողություն չի նախաձեռնվել:

Այս հարցում մտահոգիչ է նաև «Զորակ» խնամքի կենտրոնում իրականացված մշտադիտարկման արդյունքները: Մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ հաստատությունում պահվող խնամարկյալները չեն ներկայացնում բուժօգնություն և սպասարկում, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն ստանալու վերաբերյալ համաձայնություն, չնայած նրան, որ վերջիններիս տրամադրվում է և՛ սոմատիկ, և՛ հոգեբուժական օգնություն ու սպասարկում, ինչպես նաև իրականացվում են տարբեր բժշկական միջամտություններ, լաբորատոր-գործիքային հետազոտություններ: Ավելին, հոգեբուժական օգնություն ստացող (հոգեմետ դեղորայք ընդունող) խնամարկյալները ոչ միայն չեն ներկայացրել իրենց իրազեկված համաձայնությունը, այլև նրանց նկատմամբ չի նախաձեռնվել ոչ հոժարակամ բուժման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգ, այնինչ խնամարկյալներից շատերը չեն ցանկացել անցնել բժշկական հետազոտություն՝ ֆլյուորոգրաֆիա կամ ստանալ դեղորայք: Դեղորայք ընդունելու դժվարությունների մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ դեղորայքը անձանց տրամադրվում է առանց վերջիններիս իմացության՝ հյութի կամ ճաշի մեջ լցնելու ձևով:

Այս առումով կարևոր է նաև հոգեբուժական օգնության և սպասարկման համար պացիենտի կողմից իրազեկված համաձայնության տրամադրումը, ինչպես նաև իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը: Խնդիրը հետևանք է նաև հոգեբուժական կազմակերպությունների բժշկական անձնակազմերի՝ հոժարակամ և ոչ հոժարակամ բուժման իրականացման իրավական հիմքերի և ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման պակասի: Բացի այդ, խնամքի կարիք ունենալը կամ ազգականների կողմից լքված լինելը չեն կարող բավարար հիմք համարվել հոգեբուժական կազմակերպությունում պահվելու համար: Նման պարագայում առաջ է գալիս մեկ այլ համակարգային հարց՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար համայնքահեն ծառայությունների կամ սոցիալական խնամք ապահովող հաստատությունների արդյունավետությունը: Հաշվի առնելով վերևում բարձրացրած հարցերը՝ անհրաժեշտ է՝

քայլեր ձեռնարկել հոգեբուժական կազմակերպություն հոսպիտալացման և բուժման համաձայնություն տալու կամ չտալու իրավունքի, հետագայում համաձայնությունը վերանայելու, բուժումից հրաժարվելու, ինչպես նաև հոգեբուժական կազմակերպություն հոժարակամ ընդունված անձին իր կողմից այդ կազմակերպությունը լքելու հնարավորության և իր այլ իրավունքների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ տրամադրելու ուղղությամբ.

ստանալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հոսպիտալացման և բուժման վերաբերյալ իրազեկված համաձայնությունը.

խթանել հոգեբուժական կազմակերպությունների բժշկական անձնակազմերի համար հոժարակամ և ոչ հոժարակամ բուժման իրականացման իրավական հիմքերի և ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման աշխատանքները.

բացառել առանց համապատասխան իրավական հիմքերի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ոչ հոժարակամ բուժման ենթարկելու ընթացակարգի նախաձեռնումը.

հոսպիտալացման և բուժման համաձայնություններում արձանագրել դրանց ներկայացման ամսաթիվը.

պահպանել «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնության վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրել ոչ հոժարակամ բուժման, ինչպես նաև ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու դատական վարույթի ժամկետներ:

4) Դատարանների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման

մասին դատական ակտերի կատարման և կատարման ընթացքի նկատմամբ պետական վերահսկողության բացակայությունը.
ԿԱՄ-ի իրականացրած մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրությամբ վեր են հանվել խնդիրներ դատարանների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման մասին դատական ակտերի կատարման և կատարման ընթացքի նկատմամբ պետական վերահսկողության բացակայության հետ կապված: Մասնավորապես՝ «Ձորակ» խնամքի կենտրոն իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ խնամարկյալներից մեկի նկատմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով նշանակվել է հարկադիր բուժում ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում: Գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դատավճռի կայացումից հետո անձը տեղափոխվել է «Ձորակ» խնամքի կենտրոն և մինչ այցի պահը գտնվել է այնտեղ, չնայած նրան, որ հաստատությունը հարկադիր բուժում իրականացնելու իրավասություն չունի: Հարցի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ այդ անձի նկատմամբ երբևէ, որևէ հաստատությունում հարկադիր բուժում չի իրականացվել: Հարցի կապակցությամբ գրություններ են ուղարկվել իրավասու մարմիններ: Այսպիսով, խնդրահարույց են դատարանի կողմից կայացված դատական ակտերն ի կատար ածելու և այդ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հետ կապված հարցերը, որոնք սեղմ ժամանակահատվածում պետք է ստանան օրենսդրական լուծում:
Ուստի, անհրաժեշտ է՝ գործուն քայլեր ձեռնարկել հարկադիր բուժում իրականացնելու մասին դատական ակտերի կատարման գործընթացը և կատարման նկատմամբ վերահսկողության հարցերը օրենսդրության շրջանակներում կարգավորելու ուղղությամբ:

5) Խոսքի և լսողության խանգարումներ ունեցող անձանց և օտարերկրացիների հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու գործընթացում առաջացող խնդիր.
ԿԱՄ-ի իրականացրած մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է մեկ այլ համակարգային բնույթ ունեցող խնդիր: Մտահոգիչ է խոսքի և լսողության խանգարումներ ունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիներին հոգեբուժական օգնության և սպասարկում տրամադրելը: Մասնավորապես՝ ԿԱՄ-ի «Ավան» ՀԱԿ իրականացրած այցի ընթացքում արձանագրվել է, որ լեզվական արգելքի պատճառով անձի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվել է օրենսդրության պահանջների խախտումներով. հնարավոր չի եղել անձից լսել իր առողջական վիճակի վերաբերյալ գանգատները, վերջինիս հասկանալի լեզվով իրազեկել իր իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների մասին, անձը զրկված է եղել իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու վերաբերյալ, ինչի արդյունքում կիրառվել են զսպման միջոցներ:
Այսպիսով, խոսքի և լսողության խանգարումներ ունեցող անձանց և օտարերկրացիների հոգեբուժական օգնությունն ու սպասարկումը հոգեբուժական հաստատություններում պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան մասնագիտացմամբ թարգմանչական ծառայություններից օգտվելու հնարավորություն:

6) Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման վիճակը. Մշտադիտարկման ընթացքում իրականացված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ դիտարկված հոգեբուժական կազմակերպություններում 2022 թվականի ընթացքում գրանցվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շրջանում նոր կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքեր: Խնդիրներ են արձանագրվել ինչպես բուժառուների հետազոտությունների կազմակերպման, հաստատված դեպքերի հաշվառման հետ կապված, այնպես էլ նրանց բաժանմունքներում մեկուսացման, վարակի տարածումը կանխարգելելու գործընթացներում: Օրինակ՝ ՊՇՌ (պոլիմերազային շղթայական ռեակցիայի) թեստավորում իրականացվել է միայն այն պացիենտների նկատմամբ, որոնք

ունեցել են բարձր ջերմություն (Գյումրու ՀԱԿ): Միևնույն ժամանակ, նշված կենտրոնում կորոնավիրուսային վարակի հաստատված դեպքերով պայմանավորված՝ մյուս պացիենտների (նույն հիվանդասենյակում պահվող կոնտակտավոր անձանց) նկատմամբ կանխարգելիչ հետազոտություններ չեն իրականացվել:
Ավանի ՀԱԿ-ում չնայած այն հանգամանքին, որ հաստատությունում մշտադիտարկման պահին արձանագրված են եղել նոր կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքեր, միևնույն է կանխարգելիչ միջոցառումները պատշաճ չեն իրականացվել՝ այցելուները չեն տեղեկացվել վարակի առկայության մասին, ոչ բոլորն են կրել պաշտպանիչ դիմակներ և պահպանել կանխարգելիչ սանիտարական նորմերը:

Մշտադիտարկված հոգեբուժական կազմակերպություններում բուժառուների գերակշիռ մասը եղել է պատվաստված նոր կորոնավիրուսային վարակի դեմ: Մինչդեռ, բացակայել են պացիենտների գրավոր համաձայնությունները՝ նոր կորոնավիրուսային վարակի դեմ պատվաստում ստանալու կապակցությամբ: Ստացվում է, որ պացիենտներն իրենց կամքին հակառակ ենթարկվել են բժշկական միջամտության՝ կանխարգելիչ պատվաստման, ինչը չի բխում անձի առողջության պահպանման իրավունքի ապահովման պարտավորությունից:
Այս կապակցությամբ մեկ անգամ ևս հարկ է ընդգծել, որ պացիենտն իր կամքին հակառակ բժշկական միջամտության՝ տվյալ պարագայում՝ կանխարգելիչ պատվաստման ենթարկելը չի բխում անձի առողջության պահպանման իրավունքի ապահովման պարտավորությունից, ընդհակառակը՝ կարող է հանգեցնել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի, ինչպես նաև անմարդկային վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի խախտման: Ուստի, անհրաժեշտ է՝
հոգեբուժական կազմակերպություններում կազմակերպել նոր կորոնավիրուսային վարակի տարածումը կանխարգելող բոլոր միջոցառումներն ու ուժեղացնել դրանց նկատմամբ վերահսկողությունը.
անձի նկատմամբ բժշկական միջամտությունները, այդ թվում՝ պատվաստումները, անկախ դրանց նպատակներից և բժշկական անհրաժեշտությունից, իրականացնել վերջինիս իրազեկված համաձայնությամբ:

7) Զսպման միջոցներ.
Շարունակում է մտահոգիչ մնալ հոգեբուժական կազմակերպություններում զսպման միջոցների կիրառումը ու դրանց օրենսդրական հիմքերին առնչվող խնդիրները:
Գործնականում արձանագրվել է, որ դեռևս ոչ բոլոր հոգեբուժական կազմակերպություններում են առանձնացվել զսպման միջոցների կիրառման համար կահավորված սենյակներ, ինչի արդյունքում զսպման միջոցները կիրառվել են հիվանդասենյակներում, բաժանմունքների միջանցքներում մյուս պացիենտների ներկայությամբ, ինչն անթույլատրելի է և հակասում է ՀՀ օրենսդրությանը:
Մեկ այլ խնդիր է հոգեբուժական կազմակերպություններում առկա զսպման միջոցների հարմարավետության հարցը: Դիտարկված զսպման միջոցները կիրառվել և արձակվել են մեծ դժվարություններով:

Օրինակ՝ Գյումրու ՀԱԿ-ում մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ կանանց բաժանմունքում պացիենտի նկատմամբ ֆիզիկական զսպում կիրառելու պարագայում անհրաժեշտ է բարձրացնել մահճակալի վրա դրված ներքնակը՝ կիրառվող զսպման միջոցի գոտիները մահճակալի կողային հենակներին ամրացնելու համար: Հարկ է նշել, որ դա կարող է լրացուցիչ դժվարություն ստեղծել ֆիզիկական զսպման անհապաղ և արդյունավետ կիրառման համար, մեծացնել տրավմատիզացիայի և ոչ համաչափ ուժի կիրառման ռիսկը: Որպես մեխանիկական զսպման միջոց կիրառվել են հաստ, կաշվե երկու ամրակապեր՝ մետաղյա կողպեքներով և բանալիներով:
Ավանի ՀԱԿ-ում, բացի նախատեսված զսպման միջոցի կիրառումից, օգտագործվել են լրացուցիչ գոտիներ և կտորներ՝ բուժառուին լիարժեք անշարժացնելու համար, որոնք եղել են դժվար արձակվող:

Մեկ այլ խնդիր է բժշկական անձնակազմի պատրաստվածությունը և հմտությունների բացակայությունը զսպման միջոցների կիրառման հարցում:
Արձանագրվել են խնդիրներ բուժանձնակազմի կողմից բաժանմունքի միջանցքում բուժառուի նկատմամբ դեղորայքային զսպում իրականացնելու, ինչպես նաև այդ ընթացքում անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման հետ կապված: Բուժանձնակազմի ներկայացուցիչները փորձել են ոտքերով, ձեռքերով և նույնիսկ ամբողջ մարմնով զսպել բուժառուին, որը կարող է առաջացնել տարբեր վնասվածքներ:

Խիստ կարևոր է ֆիզիկական ուժի՝ որպես զսպման միջոցի կիրառումն օրենսդրական մակարդակում ամրագրելու և այն կանոնակարգող նորմեր սահմանելու անհրաժեշտությունը: Թեև «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում որպես զսպման միջոց նախատեսվել է նաև ֆիզիկական ուժի կիրառումը, այնուամենայնիվ գործող օրենսդրությամբ ֆիզիկական ուժի կիրառման և դրա արձանագրման հստակ մեխանիզմ կամ կարգ նախատեսված չէ: Այն հոգեբուժական կազմակերպություններում, որտեղ 24 ժամյա հերթապահություն չեն իրականացնում հոգեբույժներ, ոչ աշխատանքային օրերին և ժամերին պացիենտների նկատմամբ ֆիզիկական զսպման գործընթացն իրականացնում են բաժանմունքի հերթապահ բուժքույրն ու սանիտարը, քանի որ վերջիններս միայնակ են հերթապահում: Հոգեբուժական կազմակերպություններում զսպման միջոցների կիրառման պարագայում պացիենտները պատշաճ զննության չեն ենթարկվում, չեն պահպանվում օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ֆիզիկական և դեղորայքային հանդարտեցման մեթոդի կիրառման կամ կիրառումը դադարեցնելու մասին որոշման հիմնավորման արձանագրման կարգը: Նշված պրակտիկան խնդրահարույց է դեպքի նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև կիրառված զսպման միջոցներից յուրաքանչյուրի արդյունավետությունը գնահատելու և դրանց համադրությունը կարևորելու տեսանկյունից:

Արձանագրվել են դեպքեր, երբ բուժառուների նկատմամբ հաստատություն ընդունվելիս կամ այնտեղ գտնվելու ընթացքում կիրառվում են նշանակված բուժման կուրսից զատ այլ դեղամիջոցներ, երբեմն միանվագ, սակայն այն չի հաշվառվել որպես դեղորայքային հանդարտեցման միջոց:

Շարունակում է մտահոգիչ մնալ օրենքով չնախատեսված դեղորայքային հանդարտեցման միջոցների կիրառումը, օրինակ «Ավան» ՀԱԿ-ում, որպես դեղորայքային հանդարտեցման միջոց «Սիբազոնի» լուծույթի հետ կիրառվել է նաև «Դիմեդրոլի» լուծույթի ներարկում: Վերջինը ներառված չէ որպես հանդարտեցման միջոց օրենսդրությամբ սահմանված թույլատրելի դեղամիջոցների ցանկում: Հարկ է նշել, որ պացիենտի հիվանդության պատմագրում չի հիմնավորվել «Դիմեդրոլի» լուծույթի ներարկումը՝ որպես հանդարտեցնող դեղի կողմնակի ազդեցությունը կառավարելու միջոց (կորեկտոր կամ սոմատիկ վիճակը կարգավորող դեղամիջոց):

Երբեմն արձանագրվում է միայն դեղորայքի նշանակման փաստը՝ առանց անձի հոգեկան վիճակի նկարագրության կամ նշված դեղորայքի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկության: Շարունակում է մտահոգիչ մնալ ֆիզիկական զսպման և դեղորայքային հանդարտեցման միջոցների զուգակցված կիրառումը՝ առանց դրա պատշաճ հիմնավորման: Ուսումնասիրված բոլոր հոգեբուժական կազմակերպություններում, որտեղ ֆիզիկական զսպումը կիրառվել է դեղորայքային հանդարտեցման միջոցի հետ, դրանց զուգակցման անհրաժեշտությունը չի հիմնավորվել: Դեղորայքային հանդարտեցման միջոցի կիրառման պարագայում պացիենտները պատշաճ զննության չեն ենթարկվում, չեն պահպանվում օրենսդրության պահանջները: Միաժամանակ, չի պահպանվում օրենսդրությամբ սահմանված՝ դեղորայքային

հանդարտեցման մեթոդի կիրառման կամ կիրառումը դադարեցնելու մասին որոշման հիմնավորման արձանագրման կարգը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝
հոգեբուժական կազմակերպությունների բաժանմունքներում նախատեսել զսպման միջոցների կիրառման համար սենյակներ.
բացառել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ զսպման միջոցների կիրառումը հիվանդասենյակներում կամ դրա կիրառման համար չնախատեսված վայրերում՝ այլ պացիենտների կամ խնամարկյալների ներկայությամբ.
գործնականում ապահովել ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման կարգի վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարումը.
ապահովել, որ ֆիզիկական զսպման մեխանիկական միջոցները լինեն ոչ տրավմատիկ, հեշտությամբ արձակվող, պացիենտին ցավ չպատճառեն և սպառնալիքներ չստեղծվեն նրա առողջության համար.
պատշաճ վարել օրենսդրությամբ սահմանված ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցի կիրառման կամ կիրառումը դադարեցնելու մասին որոշումների հիմնավորման արձանագրման մատյանները.
զսպման միջոցների կիրառման դեպքերում իրականացնել պատշաճ բժշկական հսկողություն.
մշակել ֆիզիկական ուժի կիրառման մեթոդաբանություն և կազմակերպել բժշկական անձնակազմի վերապատրաստումներ:
կազմակերպել բուժանձնակազմի պարբերական վերապատրաստումներ զսպման միջոցների կիրառման մեթոդների, կարգի և մատյանների լրացման կարգի վերաբերյալ.
հոգեբուժական կազմակերպությունների վարչակազմերին և բժշկական անձնակազմերին պարբերաբար իրազեկել ոլորտի օրենսդրական կարգավորումների մասին.
բացառել օրենսդրությամբ չնախատեսված դեղերի կիրառումը՝ որպես դեղորայքային հանդարտեցման մեթոդ.
պատշաճ կազմակերպել դեղորայքային հանդարտեցման մեթոդի կիրառման կամ կիրառումը դադարեցնելու մասին որոշման հիմնավորման արձանագրումը.
պատշաճ հսկողություն սահմանել այն պացիենտների նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվել է դեղորայքային հանդարտեցման միջոց՝ սահմանված կարգով կատարելով այդ մասին արձանագրություններ:

8) Դեղեր և բժշկական պարագաներ.
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման անհատական ծրագրերում հոգեբուժական տարբեր կազմակերպություններում շարունակում է գերակշիռ տեղ զբաղեցնել դեղորայքային բուժումը, իսկ այլընտրանքային (արտթերապիա, ուսումնական, զբաղմունքային, աշխատանքային և այլն) բուժման ծրագրեր գրեթե չեն իրականացվում:

Շարունակում են մտահոգության առարկա լինել հոգեբուժական կազմակերպություններում ժամկետանց դեղերի առկայությունը, ինչպես նաև դեղերի պահման ռեժիմի և պայմանների խախտումներն ու դրանց պատշաճ խոտանման կազմակերպումը: Հոգեբուժական կազմակերպություններում ազգականների կողմից բերվող դեղորայքի նկատմամբ հսկողության միասնական քաղաքականություն առկա չէ, ինչն իր հերթին դժվարացնում է դրանց նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը: Մշտադիտարկումների արդյունքում հոգեբուժական կազմակերպություններում արձանագրվել են նաև դեղորայքի հաշվառման հետ կապված խնդիրներ: Թե՛ հոգեմետ, թե՛ սոմատիկ դեղորայքի հաշվառման մատյաններում դեղերի մնացորդների քանակներն արձանագրվել են բազմաթիվ ջնջումներով և ուղղումներով: Ավելին, երբեմն դեղորայքի մնացորդի հաշվառում չի իրականացվել, կամ դեղորայքի քանակական հաշվառման տվյալները բուժաշխատողի ստորագրությամբ չեն հաստատվել (Գյումրու ՀԱԿ): Նշվածը նույնպես կարող է հանգեցնել չարաշահումների:
Վերը շարադրվածի հիման վրա՝ անհրաժեշտ է՝

սահմանել պատշաճ հսկողություն հոգեբուժական կազմակերպություններում ժամկետն անհայտ, ինչպես նաև ժամկետանց դեղերի և պարագաների շրջանառության, այդ թվում՝ դրանք օգտագործելու նկատմամբ՝ բացառելու համար ցանկացած նման պրակտիկա.
ապահովել հոգեբուժական կազմակերպություններում դեղերի, այդ թվում՝ հոգեմետ դեղորայքի պահման պատշաճ և անվտանգ պայմաններ.
հոգեմետ դեղորայքի տնօրինման և դրա փաստացի արձանագրման նկատմամբ սահմանել խիստ հսկողություն.
քայլեր ձեռնարկել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հաշվառման փաստաթղթերը պատշաճ վարելու և վերահսկելու ուղղությամբ.
սահմանել հոգեբուժական կազմակերպությունում ազգականների կողմից բերվող դեղամիջոց փոխանցելու հստակ ընթացակարգեր, այդ թվում՝ ժամկետների նկատմամբ խիստ հսկողությամբ:

9) Լաբորատոր և այլ հետազոտություններ.
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժումն ու խնամքը պատշաճ կազմակերպելու համար հոգեբուժական կազմակերպություններում անհրաժեշտ է լինում իրականացնել լաբորատոր-գործիքային հետազոտություններ:

ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի օգոստոսի 2-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հոգեբուժական օգնության և սպասարկման կազմակերպման ու իրականացման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 49-Ն հրամանով հաստատատվել են հիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնության և սպասարկման նպատակով հոսպիտալացված անձանց լաբորատոր-գործիքային հետազոտությունների ծավալը, սակայն մշտադիտարկման պահի դրությամբ ուսումնասիրված հոգեբուժական հաստատություններում լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման գործընթացը, ծավալները, պարբերականությունն ու պահանջները սահմանվել են ինքնուրույն՝ երբեմն հաշվի առնելով դրանք հոգեբուժական կազմակերպությունում իրականացնելու հնարավորությունը:

Մշտադիտարկմամբ արձանագրվել է, որ ուսումնասիրված հոգեբուժական կազմակերպություններից միայն Գյումրու ՀԱԿ-ն է լիցենզավորված լաբորատոր ախտորոշիչ ծառայություններ մատուցելու համար, այն էլ որոշակի ծավալների հնարավորություններով: Մասնավորապես, Գյումրու ՀԱԿ ընդունվող պացիենտների նկատմամբ իրականացվում են արյան և մեզի ընդհանուր քննություն, որոշվում է արյան մեջ շաքարի և բիլիռուբինի մակարդակը, և կատարվել է էլեկտրասրտագրություն, իսկ ստացիոնարում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ամիսը մեկ անգամ ենթարկվում են արյան և մեզի ընդհանուր քննության, իսկ «Ազալեպտին» («Կլոզապին») տեսակի դեղորայք տրամադրելու դեպքում՝ վերջիններս ամիսը մեկ անգամ ենթարկվում են արյան ընդհանուր քննության (լեյկոֆորմուլայով):
«Ձորակ» խնամքի կենտրոնում խնամարկյալները պարբերաբար և ըստ անհրաժեշտության լաբորատոր-գործիքային հետազոտություններն անցել են «Թիվ 16 պոլիկլինիկա» առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունում տարվա ընթացքում մեկ անգամ:

Ողջամիտ մտահոգություններ են առաջանում «Ձորակ» խնամքի կենտրոնում ֆլուորոգրաֆիկ հետազոտությունների իրականացման հետ կապված: Մասնավորապես, խնամարկյալները մինչ Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացրած այցի օրը չեն ենթարկվել ֆլուորոգրաֆիկ հետազոտության, իսկ այցի ընթացքում իրականցվող ֆլյուորոգրաֆիկ հետազոտությունների կազմակերպման նախաձեռնությունը եղել է «Թոքաբանության ազգային կենտրոնի» ՊՈԲԸ-ինը: Ելնելով վերոգրյալից՝
սահմանել ժամանակացույց և պարբերաբար իրականացնել արյան լեյկոֆորմուլայի հետազոտություն երկարատև «Ազալեպտին» դեղամիջոց ստացող անձանց մոտ.

հոգեբուժական կազմակերպություններում երկարատև խնամքի պացիենտների նկատմամբ սահմանել ժամանակացույց և պարբերաբար իրականացնել տուբերկուլոզի կանխարգելմանն ուղղված ֆլուորոգրաֆիկ հետազոտություն:

10) Նեղ մասնագիտական բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չէ հոգեբուժական կազմակերպություններում նեղ մասնագիտացում ունեցող բժիշկների (բացառությամբ հոգեբույժների) և բուժանձնակազմի հստակ ցանկ: Այդ իսկ պատճառով ուսումնասիրված բոլոր հոգեբուժական կազմակերպությունները նեղ մասնագիտական բժշկական ծառայություններից օգտվելու համար պայմանագրեր են կնքել տարածքային բազմամասնագիտացված կամ առողջության առաջնային պահպանման բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների հետ: Հոգեբուժական կազմակերպություններում բժիշկ մասնագետների խորհրդատվությունները կամ անհրաժեշտ բժշկական միջամտությունները կազմակերպվում են խիստ անհրաժեշտությամբ պայմանավորված կամ ըստ տնօրինության նախապատվության: Շարունակում է համընդհանուր խնդիր դիտարկվել հոգեբուժական կազմակերպություններում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ատամների հետ կապված խնդիրներ՝ մասնակի կամ լրիվ ադենտիա, ատամների կամ լնդերի բուժման, ինչպես նաև պրոթեզավորման կազմակերպումը: Ատամնաբուժական խնդիրները կարող են առաջ բերել թերսնուցում և ունենալ բացասական հետևանքներ: Չնայած այն հանգամանքին, որ որոշ հոգեբուժական կազմակերպություններում առկա է ատամնաբուժական ծառայություն («Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի ատամնաբույժը այցի պահին եղել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում), հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ատամնաբուժական օգնությունը լիարժեք չի կազմակերպվում, ինչը չափազանց մտահոգիչ է:

Մեկ այլ մտահոգիչ խնդիր է որոշ հոգեբուժական կազմակերպություններում շուրջօրյա հերթափոխում հոգեբույժներ չընդգրկելը: Այս առումով խնդրահարույց է իրավիճակը Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, որ ոչ աշխատանքային օրերին և ժամերին հոգեբույժի հերթապահության չի իրականացվում:

Շարունակում է մտահոգիչ մնալ հոգեբույժների թափուր հաստիքների համալրման հարցը, ՀՀ-ում հոգեբույժների անհամեմատ փոքր թիվը: Շարունակում են մտահոգիչ մնալ նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոմատիկ խնդիրների կապակցությամբ բազմամասնագիտացված բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման կազմակերպման հետ կապված հարցերը: Նշված բժշկական հաստատություններում երբեմն հրաժարվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անհրաժեշտ ժամանակով ապահովել պատշաճ խնամքով կամ պահանջում են բուժքրոջ ծառայության ապահովումը հոգեբուժական կազմակերպության կողմից: Լրացուցիչ ծառայությունների մատուցման դժվարությունների պատճառով երբեմն բուժառուները դժվարությամբ են ընդունվում բժշկական կենտրոններ կամ դուրս են գրվում՝ առանց վերջնական ապաքինման:

Բազմամասնագիտացված բժշկական հաստատություններում բուժման անհրաժեշտության պարագայում բուժառուի խնամքը հիմնականում կազմակերպվում է սպասարկող հոգեբուժական կազմակերպության միջին բժշկական անձնակազմի կողմից (բացառությամբ թոքախտաբանական խնդրի կապակցությամբ, որը կազմակերպվում է «Թոքախտաբանական ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի առանձնացված բաժանմունքում): Հոգեբուժական կազմակերպության բուժքույրերից (բուժակներից) մեկը մշտապես ուղեկցում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին այլ բժշկական կենտրոնում բուժում ստանալու ողջ ընթացքում: Ստացվում է, որ բժշկական անձնակազմի

ներկայացուցիչը տևական ժամանակ խնամում է պացիենտին՝ իր բնակության վայրից և ընտանիքից հեռու:

Այսպիսով, հոգեբուժական կազմակերպության բուժքրոջ վրա դրվում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Նշվածը մտահոգիչ է նաև պացիենտի և բուժաշխատողի սննդի ապահովման, ինչպես նաև վերջինիս սոցիալական կապերի պահպանման տեսանկյունից: Նկատի ունենալով վերոգրյալը՝

մշակել հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սոմատիկ հիվանդությամբ պայմանավորված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ստացիոնար բուժումն ու խնամքն այլ բժշկական կենտրոններում պատշաճ կազմակերպելու հստակ մեխանիզմներ.

սահմանել հոգեբուժական կազմակերպություններում հաստիքային նեղ մասնագետների պարտադիր շրջանակ՝ ապահովելով ծառայությունների մատուցման միասնական մոտեցում.

հոգեբուժական կազմակերպություններում պատշաճ կազմակերպել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ատամնաբուժական օգնությունը, այդ թվում՝ պրոթեզավորումը.

գործուն քայլեր ձեռնարկել հոգեբուժի թափուր հաստիքները համալրելու ուղղությամբ:

11) Հոգեբուժական կազմակերպություններում հեպատիտ «Ց» հիվանդության կապակցությամբ բժշկական հետազոտությունների և բուժման կազմակերպման խնդիր.

Հոգեբուժական հաստատություններ ԿԱՄ իրականացրած մշտադիտարկման արդյունքում որպես համակարգային խնդիր արձանագրվել է համապատասխան ընթացակարգերի բացակայության պատճառով բուժառուների մոտ հեպատիտ «Ց» հիվանդության կապակցությամբ բժշկական հետազոտությունների և բուժման կազմակերպման բացակայությունը: Օրինակ՝ Գյումրու ՀԱԿ իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ հաստատությունում նախատեսված չեն այլ մասնագիտացումներ ունեցող բժիշկների հաստիքներ, բժշկական անձնակազմում ընդգրկված թմրաբանը հիմնական մասնագիտացմամբ թերապևտ է և, ըստ անհրաժեշտության, պացիենտներին տրամադրում է խորհրդատվություն: Պարզվել է նաև, որ անհրաժեշտության դեպքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տեղափոխվում են մասնագիտացված բժշկական կենտրոններ: Դեպքերից մեկով երկարատև խնամքի պացիենտներից առնվազն մեկը պարբերաբար ջերմել է, վերջինիս մոտ ախտորոշված է հեպատիտ «Ց», սակայն նշված հիվանդության կապակցությամբ նրա նկատմամբ հաստատությունում որևէ հետազոտություն և բուժում չի իրականացվել: Նման պրակտիկան խիստ մտահոգիչ է: Այս հարցում անհրաժեշտ է հոգեբուժական կազմակերպություններում ցուցաբերել համակարգային մոտեցում: Խնդրահարույց է նաև այն, որ Հայաստանում անվճար հիմունքներով հեպատիտ «Ց»-ի ախտորոշումն ու բուժման կազմակերպումն ապահովող ծրագրերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ներառելու ընթացակարգեր հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրող հաստատությունների պարագայում առկա չեն, չնայած նրան, որ դրա համար համապատասխան օրենսդրական հիմքեր[137] առկա են:

Այսպիսով, անհրաժեշտ է՝ հոգեբուժական կազմակերպություններում մշակել ընթացակարգեր՝ հեպատիտ «Ց»-ի ախտորոշումը, անհրաժեշտ հետազոտությունները և բուժումը կազմակերպելու համար:

12) Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անչափահաս անձանց տրամադրվող ստացիոնար հոգեբուժական օգնություն և սպասարկում.

«Ավան» ՀԱԿ-ի կահավորված, վերանորոգված և առանձնացված մանկական բաժանմունքում մշտադիտարկման այցի պահին պահվել է 6 անչափահաս անձանց:

[137] ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի N 65-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելված, ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 12-ի N 3064-Լ հրաման

Շարունակում է խնդրահարույց մնալ հեռավոր մարզերում բնակվող անչափահասների ստացիոնար հոգեբուժական օգնության և սպասարկման կազմակերպումը: Սուր հոգեբուժական ախտանիշների պարագայում, երբ անհրաժեշտություն է առաջանում ստացիոնար պայմաններում հետազոտման կամ բուժման, պացիենտները պետք է շտապ բժշկական օգնության ծառայության տրանսպորտային միջոցով տեղափոխվում Երևան, որի համար պետք է վճարվում պատկառելի գումար: Նշվածը ոչ միայն ֆինանսական դժվարություններ է ստեղծում, այլ նաև առաջացնում է սոցիալական մի շարք խնդիրներ թե՛ անչափահաս անձի, թե՛ վերջինիս ազգականների համար (օրինակ՝ անչափահասի խնամքի կազմակերպում, ընտանիքից հեռու գտնվել և այլն):

Վերոգրյալի պատճառով հանդիպում են դեպքեր, երբ անչափահասի ազգականները, սոցիալական խնդիրներով պայմանավորված, չեն կարողանում երեխային տեղափոխել համապատասխան բժշկական հաստատություն և միայն ծայրահեղ դեպքում են դիմում հոգեբույժների օգնությանը:
Խնդիրներ են արձանագրվել «Ավան» ՀԱԿ-ի մանկական բաժանմունքում, որտեղ 10 և 14 տարեկան տարբեր սեռի պացիենտների բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվել է նույն հիվանդասենյակում: Այցի պահին մանկական բաժանմունքում առանձնացված չի եղել կահավորված զսպման համար նախատեսված սենյակ, և այն իրականացվել է հիվանդասենյակներից մեկում՝ նշված հիվանդասենյակի բուժառուներին բաժանմունքի միջանցքում պահելու պայմանով: Նշվածը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում բուժառուի զսպումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից, եթե այդ պահին պետք է դուրս հրավիրել հիվանդասենյակում գտնվող այլ բուժառուների: Մեկ այլ խնդիր է զսպան միջոցների առկայությունը հիվանդասենյակում, որն արդեն իսկ հոգեբանական ճնշվածություն է առաջացնում այդ հիվանդասենյակում բուժում և խնամք ստացող բուժառուների մոտ, իսկ այլ բուժառուների նկատմամբ զսպման միջոցի կիրառման պարագայում, խնդրահարույց է բուժառուների ըստ անհրաժեշտության իրենց հիվանդասենյակից օգտվելու հարցը: Ավելին, մահճակալին, որ վրա ամրացված է եղել զսպման միջոցը, անկողնային պարագաները եղել են օգտագործված և չեն փոխվել նույնիսկ այցի ընթացքում զսպման միջոցների հաջորդաբար կիրառման երկու դեպքում: Հարկ է ընդգծել, որ դեպքերից մեկով անչափահաս բուժառուի նկատմամբ զսպման միջոցներ կիրառվել են այն պարագայում, երբ վերջինս հրաժարվել է առանց ծնողի մնալ բաժանմունքում և դրսևորել է կամակոր, չենթարկվող վարքագիծ: Մինչդեռ նման պարագայում զսպման միջոցների կիրառումը չի բխում օրենսդրության պահանջներից, ինչը անթույլատրելի է: Զսպման միջոցներ կարող են կիրառվել միայն օրենսդրությամբ նախատեսված կոնկրետ դեպքերում: Ավելին, մինչ բուժառուի նկատմամբ մեխանիկական զսպման միջոցների կիրառում, վերջինիս փորձել են զսպել՝ ֆիզիկական ուժ կիրառելով միաժամանակ բաժանմունքի բժշկական անձնակազմի չորս ներկայացուցիչներ: Նրանցից մեկը նույնիսկ փորձել է ոտքերով միջամտել՝ անչաափահաս բուժառուի մարմինը ցանկալի դիրքում պահելու համար: Այս համատեքստում խնդրահարույց է զսպման միջոցների կիրառման մեթոդական ուղեցույցների և ցուցումները բացակայությունը, ինչպես նաև բժշկական անձնակազմի վերապատրաստումների բացակայությունը վերջինների հմտությունների և կարողությունների զարգացման համար: Մեկ այլ դեպքում անչափահասի նկատմամբ կիրառվել է դեղորայքային հանդարտեցման միջոց (այն էլ օրենսդրությամբ չնախատեսված դեղորայքի՝ «Դիմեդրոլի» լուծույթի համադրությամբ) հենց բաժանմունքի միջանցքում՝ այլ անչափահաս բուժառուների ներկայությամբ և միայն վարքի որոշակի հանդարտեցումից հետո տեղափոխվել է հիվանդասենյակ և կիրառվել ֆիզիկական զսպում: Հարկ է ընդգծել, որ զսպման միջոցների կիրառման պարագայում անչափահաս բուժառուների նկատմամբ պատշաճ բժշկական հսկողություն չի իրականացվել՝ նրանք մնացել են միայնակ հիվանդասենյակում՝ փակ դռների հետևում: Մեկ այլ խնդիր է անչափահասների սննդով ապահովման հարցը: Վերջիններիս տրամադրվում է 3 անգամյա սնունդ՝ ժամը 10:00-ին, 13:00-ից 14:00-ն ընկած ժամանակահատվածում և 18:00-ն: Փաստացի երեխաների սննդի կազմակերպման

ռեժիմում ընդմիջումների անհամաչափ բաշխման հետևանքով երեկոյան տևական ժամանակ վերջիններս մնում են քաղցած, ավելին, նրանք դեղամիջոցներ են ընդունում հիմնականում օրը 4 անգամ (վերջինը քնելուց առաջ՝ ժամը 22:00) և հաճախ ունենում են սովի զգացողություն:

Մեկ այլ խնդիր է անչափահաս բուժառուների զբոսանքը հաստատության բակում կազմակերպելու խնդիրը, քանի որ բուժանձնակազմի անբավարար քանակի պատճառով նրանք զբոսաբակում կամ բաժանմունքում կարող են հայտնվել առանց բավարար հսկողության: Ավելին, զբոսանքի համար պայմանականորեն առանձնացված հատվածը կահավորված չի եղել եղանակային պայմաններից պատսպարվելու ծածկով և պատշաճ կահավորված խաղահրապարակով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

մշակել մարզային բնակչության համար հիվանդանոցային հոգեբուժական օգնությունն ու սպասարկումը բարելավելու նպատակով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անչափահաս անձանց անվճար հիմունքներով համապատասխան բժշկական հաստատություն տեղափոխելու ընթացակարգ.,

պացիենտների հիվանդասենյակներում տեղաբաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով վերջիններիս սեռային պատկանելությունը, տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև համատեղ կենցաղավարության կանոնները.

մանկական բաժանմունքում նախատել առանձնացված և պատշաճ կահավորված զսպման միջոցների կիրառման սենյակ.

բացառել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անչափահաս անձանց նկատմամբ զսպման միջոցների կիրառումը հիվանդասենյակներում կամ դրա կիրառման համար չնախատեսված վայրերում՝ այլ պացիենտների կամ խնամարկյալների ներկայությամբ.

գործնականում ապահովել ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման կարգի վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարումը.

կազմակերպել բուժանձնակազմի պարբերական վերապատրաստումներ անչափահաս բուժառուների նկատմամբ զսպման միջոցների կիրառման մեթոդների, կարգի և մատյանների լրացման կարգի վերաբերյալ.

հոգեբուժական կազմակերպությունների վարչակազմերին և բժշկական անձնակազմերին պարբերաբար իրազեկել ոլորտի օրենսդրական կարգավորումների մասին.

բացառել օրենսդրությամբ չնախատեսված դեղերի կիրառումը՝ որպես դեղորայքային հանդարտեցման մեթոդ.

պատշաճ հսկողություն սահմանել այն անչափահաս բուժառուների նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվել է զսպման միջոց՝ սահմանված կարգով կատարելով այդ մասին արձանագրություններ,

կահավորել մանկական բաժանմունքի համար առանձնացված զբոսաբակը և պատշաճ ապահովել անչափահաս բուժառուների զբոսանքը,

վերանայել անչափահաս բուժառուների սննդի ռեժիմը՝ այն սահմանելով առնվազը 4 անգամ և բավարար ընդմիջումներով, ինչը չի հանգեցնի քաղցի զգացումի:

13) Վնասվածքների արձանագրման և դրանց մասին իրավապահ մարմիններին հաղորդելու հետ կապված խնդիրներ.

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք հոգեբուժական կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ընթացքում երբեմն կարող են տարբեր պատճառներով ստանալ ֆիզիկական վնասվածքներ, այդ թվում՝ ենթարկվել ֆիզիկական կամ հոգեբանական բռնության:

Հոգեբուժական կազմակերպություններում պացիենտների մոտ վնասվածքների հայտնաբերումն ու արձանագրումը հոգեբուժական կազմակերպություններում իրականացվում է տարբեր ընթացակարգերով, ավելին, այդ ընթացակարգերը տարբեր են անգամ նույն կազմակերպության տարբեր բաժանմունքներում, ինչը կարող է խնդրահարույց լինել բռնության դեպքերի կանխման և բացահայտման տեսանկյունից: Հոգեբուժական կազմակերպություններում պացիենտների մոտ վնասվածքների պատշաճ արձանագրումը և դրա մասին իրավապահ մարմիններին ժամանակին տեղեկացումը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ու նրանց անվտանգության ապահովման տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի: Այս կապակցությամբ աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար պահանջվում է միասնական պրակտիկա: Հարկ է ընդգծել, որ հոգեբուժական կազմակերպություններում վնասվածքների հաշվառման և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու՝ իրավասու մարմինների կողմից մշակված միասնական կարգ չի հաստատվել, և կազմակերպությունները շարունակում են այն իրականացնել սեփական հայեցողությամբ:

Առավել մտահոգիչ է, երբ վնասվածքների չեն արձանագրվում կամ արձանագրվում են միայն որոշակի ընտրված դեպքերը: Այսպիսի պրակտիկա է արձանագրվել Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացրած մշտադիտարկումների ընթացքում: Գյումրու ՀԱԿ-ի բաժանմունքներում պահվող բուժառուների մոտ հայտնաբերված վնասվածքներն արձանագրվում են բուժանձնակազմի կողմից մշակած մատյաններում: Ավելին, նշված մատյանները ձևով և բովանդակությամբ տարբեր են եղել տարբեր բաժանմունքներում: Հարկ է նշել, որ նշված կենտրոն ընդունվող պացիենտների մոտ հայտնաբերված վնասվածքների մասին տեղեկությունները ոչ աշխատանքային օրերին և ժամերին չեն արձանագրվում ընդունարանում վարվող համապատասխան մատյանում:

Գյումրու ՀԱԿ-ում մշտադիտարկման այցի պահին կանանց բաժանմունքում առանձին վարվել է «Հոգեբուժական կանանց բաժանմունքի վնասվածքների գրանցման մատյան», որում 2021 թվականին ընթացքում արձանագրվել է 6 դեպք՝ մարտ, մայիս, օգոստոս և նոյեմբերի ամիսներին: Տղամարդկանց բաժանմունքում առկա է եղել 2 տարբեր մատյաններ՝ 2019 թվականի դեկտեմբերի 1-ից վարվող «Շտապ հաղորդման դեպքերի գրանցման» և «Տրավմատիզմի տեղեկացման»:

Ընդունվող պացիենտների մոտ արձանագրված վնասվածքների վերաբերյալ ընդունարանի 2020 թվականի հունվարի 8-ից վարվող «Իրավապահ մարմիններին տրված հաղորդագրությունների հաշվառման» մատյանում առկա է եղել երկու գրառում՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ին և 2021 թվականի դեկտեմբերի 6-ին: 2021 թվականի մարտի 2-ից վարվող «Բժշկական հաստատություն տեղափոխված (դիմած) պացիենտի կամ դիակի» գրանցամատյանում այցի պահին գրառումներ չեն եղել:

Գյումրու ՀԱԿ-ի տղամարդկանց բաժանմունքի «Շտապ հաղորդման դեպքերի գրանցման» մատյանում գրառումների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մատյանում վերջին գրառումն արվել է 2022 թվականի մայիսի 15-ին, ժամը 20:03-ին, սակայն տուժողի անձնական տվյալներն այցի պահի դրությամբ լրացված չեն եղել: Բաժանմունքներում վարվող վնասվածքների արձանագրման մատյաններում նույնպես այդ օրվա դրությամբ որևէ պացիենտի անհատականացնող տվյալներ առկա չեն եղել: Արդյունքում՝ հնարավոր չի եղել պարզել վնասվածք ստացած անձի, ստացած վնասվածքի, ինչպես նաև դրանց պատճառների վերաբերյալ տվյալները: Նման գործելաոճը խիստ անընդունելի է և չի նպաստում վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելմանն ու պատշաճ քննությանը:

Գյումրու ՀԱԿ-ի տղամարդկանց բաժանմունքում այցի պահի դրությամբ «Տրավմատիզմի տեղեկացման» մատյանում առկա է եղել վնասվածքների վերաբերյալ 2 գրառում, ընդ որում՝ առաջին գրառումն արվել է 2019 թվականին, իսկ երկրորդը՝ 2022 փետրվարի 22-ին, այնինչ՝

«Շտապ հաղորդման դեպքերի գրանցման» մատյանում գրանցված տվյալները տվյալ ժամանակահատվածում եղել են ավելին, թվով՝ 9, և դրանք չեն համապատասխանել «Տրավմատիզմի տեղեկացման» մատյանում առկա տվյալներին: Գյումրու ՀԱԿ-ի կանանց բաժանմունքում ուսումնասիրված մատյանների համադրությամբ արձանագրվել է, որ դրանք չեն արտացոլում բաժանմունքում բուժառուների մոտ առկա վնասվածքների իրական պատկերը: Այսպես, «Հոգեբուժական կանանց բաժանմունքի վնասվածքների գրանցման» մատյանում արված գրառումները չեն համապատասխանում նշված կենտրոնում վարվող «Շտապ հաղորդման դեպքերի գրանցման», «Իրավապահ մարմիններին տրված հաղորդագրությունների հաշվառման» մատյաններում տեղ գտած տվյալներին: Այսպես, «Հոգեբուժական կանանց բաժանմունքի վնասվածքների գրանցման» մատյանում 2019 թվականի դեկտեմբերի 1-ից հաշվառված 13 գրառումներից միայն մեկ դեպքի, վերաբերյալ է հաստատությունը հայտնել Ոստիկանություն, ինչի վերաբերյալ առկա է եղել համապատասխան արձանագրություն «Շտապ հաղորդման դեպքերի գրանցման» մատյանում: Նշվածը վկայում է վնասվածքների մասին իրավապահ մարմիններին իրազեկելու հայեցողական մոտեցման և հստակ չափանիշների բացակայության մասին: Ընդ որում, տվյալ դեպքով վերոնշյալ երկու մատյաններում արված գրառումներն էականորեն տարբերվել են, մասնավորապես «Հոգեբուժական կանանց բաժանմունքի վնասվածքների գրանցման» մատյանում նշվել է, որ բուժառուն բաժանմունք է ընդունվել «քթի վրա թեթև վնասվածքով և կապտուկով՝ աջ աչքի տակ» և դեպքը տեղի է ունեցել ու գրառումը կատարվել է 2021 թվականի օգոստոսի 26-ին, մինչդեռ, «Շտապ հաղորդման դեպքերի գրանցման» մատյանում նշվել է, որ նույն բուժառուն «ստացել է քթի շրջանում քերծված վերք և թեթև կապտուկ», իսկ դեպքը տեղի է ունեցել ու գրառումը կատարվել է 2021 թվականի օգոստոսի 27-ին: Մեկ այլ դեպքով էլ «Շտապ հաղորդման դեպքերի գրանցման» մատյանում 2021 թվականի հուլիսի 9-ին կատարվել է գրառում բուժառուի վերաբերյալ՝ «մարմնի տարբեր հատվածներում՝ ձեռքերի, ոտքերի, մեջքի և կրծքավանդակի բազմաթիվ կապտուկներ» ունենալու մասին, որի վերաբերյալ ահազանգ է ներկայացվել Ոստիկանություն: Հարկ է նշել, որ այդ անձի՝ վնասվածքներ ստանալու վերաբերյալ տվյալներն առկա չեն եղել «Հոգեբուժական կանանց բաժանմունքի վնասվածքների գրանցման» և «Իրավապահ մարմիններին տրված հաղորդագրությունների հաշվառման» մատյաններում»: Հոգեբուժական հաստատության մատյանների վարման նման գործելաոճը խնդրահարույց է գործնականում տվյալների արձանագրման միասնականության ապահովման տեսանկյունից: Պարզ չէ՝ ինչ սկզբունքով է որոշվում, թե վնասվածք ստացած անձի մոտ առաջացած որևէ վնասվածքի դեպքում հաստատությունում վարվող ո՞ր մատյանում է գրառվում է դեպքը և ո՞ր դեպքերում է հաստատությունը հայտնում Ոստիկանությանը: Խնդրահարույց է նաև ստացված վնասվածքների ոչ պատշաճ նկարագրությունը: Ուսումնասիրություններով արձանագրվել է հոգեբուժական կազմակերպություններում պացիենտների ստացած վնասվածքների մասին նշումները եղել են առանց վնասվածքների և դրանց ստացման եղանակի մանրամասն մասնագիտական նկարագրի: Օրինակ, չեն արձանագրվում օբյեկտիվ բժշկական զննության արդյունքների ամբողջական պատկերը, չեն նկարագրվում վնասվածքների հստակ անատոմիական տեղակայումը, գույնը, մակերեսը և վնասվածքը նկարագրող այլ չափանիշներ: Արձանագրություններում բացակայում է նաև բժշկի եզրակացությունը՝ վնասվածքի օբյեկտիվ նկարագրության և վնասվածքի պատճառների վերաբերյալ պացիենտի հայտարարության համադրությամբ: Միաժամանակ, վնասվածքները չեն արձանագրվում գծապատկերներում և չեն լուսանկարվում: Արձանագրության վերոնշյալ չափանիշների բացակայությունը չի բխում զննության հիմնական նպատակներից և պահանջներից: Այսպիսով, իրավասու պետական մարմնի միասնական կարգի բացակայության արդյունքում հոգեբուժական կազմակերպություններում ստացված վնասվածքների հաշվառվման և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացման սկզբունքները տարբեր են և չեն արտացոլում հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց անվտանգության ապահովման, ինչպես նաև խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման, դրա արդյունավետ քննությանն ուղված աշխատանքների իրական պատկերը: Խնդիրներ են արձանագրվել նաև «Ձորակ» խնամքի կենտրոնում, որտեղ 2022 թվականի ընթացքում արձանագրվել են խնամարկյալների կողմից վնասվածքներ ստանալու տարբեր դեպքեր, որոնք չեն հաշվառվել համապատասխան մատյաններում, և դրանցից որևէ մեկի մասին իրավապահ մարմիններին չի հայտնվել: Խնամարկյալների ստացած վնասվածքների մասին բուժանձնակազմն իրավապահ մարմիններին տեղեկացնում է միայն իրենց նախընտրած «լուրջ» դեպքերը, երբ խնամարկյալը պետք է տեղափոխվի բժշկական հաստատություն, որտեղից տեղեկությունը այնուամենայնիվ փոխանցվելու է իրավապահ մարմիններին: Նման պրակտիկան խիստ մտահոգիչ է: Ավելին, «Ձորակ» խնամքի կենտրոնում վնասվածքների մասին իրավապահ մարմիններին հաղորդագրությունների հաշվառումն իրականացվել է օրենսդրությամբ չնախատեսված ձևաչափով: Ըստ նշված կենտրոնում վարվող «Տարեց և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող պետական ոչ առևտրային կազմակերպություններում խնամվող անձանց նկատմամբ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի, նրանց ստացած վնասվածքների գրանցման» մատյանի տիտղոսաթերթի՝ այն կազմվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 140Ա/1 հրամանի հավելված 2-ի համաձայն, սակայն մատնանշված դրույթն ուժը կորցրել է:

Հատկանշական է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 9-ի N 171-Ա/1 հրամանով հաստատվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող շահառուների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման, համապատասխան մարմիններին իրազեկման և բռնության ենթարկված անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացման կարգը, համապատասխան գրանցամատյանի, հաշվետվության և սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի ձևերը:

Այսպիսով, վնասվածքների մասին իրավապահ մարմիններին հաղորդագրությունների հաշվառումն իրականացվել է օրենսդրությամբ չնախատեսված ձևաչափով**:** Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

մշակել հոգեբուժական կազմակերպություններում խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման, դրանց արձանագրման ձևաթղթեր, ինչպես նաև վերջիններիս լրացման ուղեցույցներ.
համապատասխան փաստաթղթերում պատշաճ արձանագրել հոգեբուժական կազմակերպություններում ընդունվող և այնտեղ բուժում կամ խնամք ստացող անձանց վնասվածքները՝ ապահովելով դրանց մասնագիտական նկարագրումը.
հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սահմանել այնտեղ բուժում և խնամք ստացող անձանց վնասվածքների պատշաճ հաշվառման և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու ընթացակարգ.
իրականացնել բուժանձնակազմի վերապատրաստումներ հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ վնասվածքներով ընդունվող անձանց պատշաճ հաշվառելու և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու վերաբերյալ:

14) Բժշկական փաստաթղթերի վարում և բժշկական միջամտությունների կազմակերպում.
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, դրա ընթացքի և արդյունքների մասին տվյալները բժշկական հաստատություններում արձանագրվում են բժշկական փաստաթղթերում,

մասնավորապես՝ հիվանդության պատմագրերում և բժշկական քարտերում: Նշված փաստաթղթերում, ի թիվս վերոգրյալ տեղեկությունների, արձանագրվում են նաև պացիենտների իրավունքների սահմանափակումների, դրանց հիմքերի, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ կարևոր տեղեկություններ:

Օրենսդրությամբ սահմանված են բժշկական տարբեր փաստաթղթերի վարման կարգեր: Սակայն հատուկ ընթացակարգերի բացակայության պատճառով հոգեբուժական կազմակերպություններում շարունակում է խնդրահարույց մնալ պացիենտներին վարելու և այդ մասին հիվանդության պատմագրերում արձանագրելու միասնական մոտեցման հարցը: Հոգեբուժական կազմակերպություններում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր կազմակերպություններում հիվանդությունների պատմագրերը լրացվում են տարբեր, ոչ միասնական ձևով և հաճախականությամբ:

Ըստ հիվանդության պատմագրերի գրառումների ուսումնասիրության՝ «Գյումրու» ՀԱԿ-ում քրոնիկ պացիենտների հիվանդության պատմագրերի մեծ մասում վերջին 5-6 ամիսների ընթացքում պացիենտների առողջական վիճակի դինամիկայի վերաբերյալ գրառումները բացակայել են: Հարկ է նշել, որ «Գյումրու» ՀԱԿ-ի բժշկական անձնակազմի պնդմամբ՝ «սուր դեպքերի» ժամանակ հիվանդության պատմագրերը լրացվում են ամենօրյա ռեժիմով: Պացիենտների հոգեկան վիճակի կայունացման հետ զուգահեռ դրա մասին գրառումներն իրականացվում են ամեն շաբաթ կամ ամսվա մեջ երկուսից երեք անգամ: Կենտրոնում երկարատև բուժում և խնամք ստացող քրոնիկ պացիենտների հիվանդության պատմագրերը լրացվում են ամիսը մեկ անգամ:

Այս ամենի հետ մեկտեղ, հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տևական ժամանակ պահելու դեպքերում հիվանդության պատմագրերի էջերը սովորաբար չեն բավարարում, ինչի արդյունքում պատմագրերում ավելացվում են լրացուցիչ էջեր: Այս հարցում ևս միասնական կանոններ կամ պրակտիկա առկա չէ:

Խնդրահարույց են նաև վարվող մատյանների, հատկապես սոմատիկ և հոգեմետ դեղորայքի մատյանների ջնջումներով և ուղղումներով վարումը: Բժշկական փաստաթղթերի ոչ պատշաճ վարումը խնդրահարույց է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման և վերահսկման, ինչպես նաև անձի պատշաճ բուժումը կամ իրավունքների սահմանափակման հիմնավորումները գնահատելու տեսանկյունից:

Մտահոգիչ է, որ որևէ իրավական ակտով սահմանված չեն հատուկ տիպի (մասնագիտացված) խնամքի հաստատություններում բժշկական փաստաթղթերի ձևերը և դրանց վարման կարգը: Այնուամենայնիվ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում յուրաքանչյուր խնամարկյալի համար ընդունման օրվանից վարվում է «մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ»:
Ամփոփելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է՝
սահմանել հոգեբուժական կազմակերպություններում բժշկական փաստաթղթերի վարման միասնական չափանիշներ և ապահովել դրանց պատշաճ վարումը, ինչպես նաև դրանց նկատմամբ սահմանել խիստ վերահսկողություն.
մշակել հատուկ տիպի (մասնագիտացված) խնամքի հաստատություններում բժշկական փաստաթղթերի ձևերը և դրանց վարման կարգը.
սահմանել հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում խնամարկյալների բժշկական զննության պարբերականությունը և կարգը:

15) Բժշկական անձնակազմ, աշխատանքային պայմաններ և սոցիալական երաշխիքներ.

Մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի մոտեցում պահանջող գործընթաց է: Այս առումով, հատկապես կարևոր է այն հաստատությունների աշխատակիցների աշխատանքային պայմաններն ու իրավունքների պաշտպանությունը, որոնք ապահովում են հատուկ (մասնագիտացված) հաստատություններում պացիենտների և խնամարկյալների խնամքը, այդ թվում՝ բժշկական և հոգեբանական օգնությունը:

Հոգեբուժական կազմակերպությունների աշխատակիցների բարենպաստ պայմաններում աշխատելու հնարավորությունը Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում է: Աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավումը հանդիսանում է այդ հաստատությունների բնականոն գործունեության ապահովման հիմնական տարրերից մեկը: Աշխատանքային պայմանների բարելավման կարևոր նախապայմաններից է թափուր հաստիքների համալրումը, դրանց ավելացումը, որը կհանգեցնի աշխատակիցների աշխատանքային զբաղվածության աստիճանի նվազեցմանը և կնպաստի վերջիններիս կողմից աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացրած մշտադիտարկումների ընթացքում տարիներ շարունակ արձանագրվում են հաստիքների ոչ բավարար և անհամաչափ բաշխվածություն: Մասնավորապես, «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի 2-րդ բաժանմունքում պահվող 50-ից ավելի անձանց, և 1-ին բաժանմունքում մոտ՝ 20 անձանց խնամքն ապահավում են մեկական հերթափոխային սանիտար և մեկական բուժքույր (24-ժամյա հերթափոխով): Արդյունքում, «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պատշաճ խնամքն ու հսկողությունը կազմակերպումը դժվար է, և առկա է սպասարկող անձնակազմի հաստիքների ավելացման կարիք: Մտահոգիչ է նաև սոցիալական աշխատողների և հոգեբանների փոքր թիվը:

Մշտադիտարկման այցի պահին Գյումրու ՀԱԿ-ի հաստիքներից թափուր է եղել հոգեբույժի երկու հաստիք: Տրամադրված փաստաթղթերի վերլուծությամբ պարզվել է, որ բաժանմունքներում, որտեղ պահվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 50-ից ավելի անձինք, բժշկական անձնակազմում ընդգրկված են եղել հերթապահ բուժքույր (24-ժամյա հերթափոխով), ավագ բուժքույր, հոգեբույժ (աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից 16:45 ժամանակահատվածով), ինչպես նաև հերթապահ սանիտար: Յուրաքանչյուր հոգեբույժ վարում է մինչև 30 պացիենտ: Այսպիսով, ակնհայտ է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքն ու հսկողությունը նման պայմաններում պատշաճ կազմակերպել հնարավոր չէ, և առկա է սպասարկող անձնակազմի լրացուցիչ հաստիքների անհրաժեշտություն:

Գյումրու ՀԱԿ-ում ոչ աշխատանքային օրերին և ժամերին բժիշկ չլինելու պատճառով պացիենտների ընդունելությունը կազմակերպում են հերթապահ բուժքույրերը՝ ծայրահեղ դեպքում հոգեբույժը հրավիրվում է տանից:

Խնդրահարույց է նաև այն, որ Գյումրու ՀԱԿ-ի բաժանմունքներում նախատեսված չեն մայրապետի հաստիքներ, ինչի արդյունքում բաժանմունքների մաքրության կազմակերպման ապահովվումը դրված է հերթապահ սանիտարների վրա: Սա հատկապես մտահոգիչ է այն համատեքստում, որ բաժանմունքների, այդ թվում՝ դրանց սանհանգույցների մաքրությամբ զբաղվում են նաև որոշ պացիենտներ:

Ինչ վերաբերում է բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստմանը, ապա ոչ բոլոր հոգեբուժական կազմակերպությունների բժշկական անձնակազմերի

ներկայացուցիչներն են անցնում պարբերական վերապատրաստումներ: Մասնագիտական աշխատանքի կազմակերպման վերապատրաստումները պետք է լինեն պարբերական և ընդգրկեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բժշկական օգնության ու սպասարկման պատշաճ կազմակերպմանը, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին և միջազգային չափանիշներին վերաբերող հարցեր: Վերապատրաստումների անհրաժեշտություն է առկա նաև բուժանձնակազմի՝ պացիենտների հետ շփման և արդյունավետ հաղորդակցման հմտությունների զարգացման, անձնակենտրոն (պացիենտակենտրոն) մոտեցման կիրառման, ինչպես նաև բժշկական էթիկայի (դեոնթոլոգիայի) ժամանակակից սկզբունքներին իրազեկվելու և դրանք կիրառելու հարցերի հետ կապված: Ուստի, վերոշարադրյալ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է՝

ամբողջական գնահատման ենթարկել հոգեբուժական կազմակերպությունների բժշկական և տեխնիկատնտեսական սպասարկման անձնակազմի կարիքները.

սահմանել պացիենտների և բժշկական կամ սպասարկող անձնակազմի օպտիմալ հարաբերակցություն, ինչպես նաև հստակեցնել յուրաքանչյուրի աշխատանքի ծավալն ու գործառույթները.

մշակել մարզային հոգեբուժական կազմակերպություններում հոգեբույժների հերթապահության ճկուն մեխանիզմներ.

համալրել հոգեբուժական կազմակերպությունների թափուր հաստիքները, ինչպես նաև աշխատանքներում ներգրավել անհրաժեշտ մասնագետներ և բավարար չափով անձնակազմ.

վերանայել բժշկական անձնակազմի վերապատրաստման համապատասխան ծրագրերը, այդ թվում՝ դրանց տևողությունը, հաճախականությունը և բովանդակությունը:

16) Ոչ դեղորայքային բուժում և հոգեբանական օգնություն.

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերականգնման և սոցիալական ինտեգրման տեսանկյունից առանձնահատուկ դեր է խաղում հոգեբանական աշխատանքների գրագետ և արդյունավետ կազմակերպումն ու տրամադրումը: Մինչդեռ, Հայաստանի հոգեբուժական կազմակերպություններում առկա վիճակը թույլ է տալիս անել հիմնավորված եզրակացություն առ այն, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցությունը երկրորդական է և պատշաճ կարևորության չի արժանանում: Այս մասին են փաստում ստորև բերվող դիտարկումները:

Նախ և առաջ, անհրաժեշտ է անդրադառնալ հոգեբուժական կազմակերպություններում հոգեբանների թվաքանակի ոչ բավարար լինելուն, ինչն անմիջականորեն բացասական ազդեցություն է ունենում կատարված աշխատանքների որակի և արդյունավետության վրա:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև հոգեբանի կողմից էթիկական սկզբունքներին խստորեն հետևելու, մասնագիտական սահմանները պահպանելու հարցը, քանի որ հոգեբուժական կազմակերպություններում արձանագրվել են հոգեբանի կողմից էթիկական սկզբունքների, մասնագիտական սահմանների խախտման դեպքեր: Օրինակ, «Զորակ» խնամքի կենտրոնում հոգեբանն անձնակազմի և խնամարկյալների միջև կոնֆլիկտային իրավիճակներում ստանձնել է հաշտարարի դեր, կենցաղային բառապաշարով է խոսել խնամարկյալների հետ, տարբեր իրավիճակներում քննադատական վերաբերմունք է արտահայտել նրանց վարքային դրսևորումներին և այլն:

ԿԱՄ-ի կողմից որպես համակարգային հարց շարունակում է մտահոգիչ մնալ հոգեբուժական կազմակերպություններում անհատական և խմբային հոգեբանական աշխատանք իրականացնելու համար նախատեսված, պատշաճ կահավորված, հոգեբանական աշխատանքի առանձնահատկությունների, նրբությունների հիման վրա

կառուցված սենյակների բացակայության հարցը, ինչն առանձնահատուկ ուշադրության է արժանի հենց հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքի տեսանկյունից: Վերը նկարագրված սենյակների բացակայությունը խիստ սահմանափակող հանգամանք է հանդիսանում հոգեբանական մասնագիտական և հետևողական աշխատանքի ապահովման տեսանկյունից: ԿԱՄ-ի կողմից ուսումնասիրված հոգեբուժական կազմակերպություններից միայն Ավանի ՀԱԿ-ի մանկական բաժանմունքում է առկա եղել անհրաժեշտ չափորոշիչներին համապատասխան հոգեբանի աշխատասենյակ՝ թե՛ անհատական, թե՛ խմբային հոգեբանական աշխատանք իրականացնելու նպատակով:

ԿԱՄ-ի իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել է մեկ այլ համակարգային բնույթ ունեցող խնդիր: Մասնավորապես, մտահոգիչ է անհատական և խմբային հոգեբանական աշխատանքների կազմակերպման սահմանված ընթացակարգերի բացակայությունը: Հոգեբուժական կազմակերպության հոգեբանը չունի պարտականությունների հստակեցված ցանկ, աշխատանքի ծավալը կանոնակարգող նորմեր, հոգեբանի գործունեությունը մասնագիտական առումով չի վերահսկվում, այն չունի պլանավորում և հստակ հաշվետվողականություն: Որոշակի ներքին կանոնակարգում արձանագրվել է Գյումրու ՀԱԿ-ում. հոգեբանի առաջին հանդիպումը պացիենտի հետ տեղի է ունենում վերջինիս՝ կենտրոն ընդունվելուց 3-ից 5 օր անց, սակայն հետագա աշխատանքների համար ևս կանոնակարգող նորմեր առկա չեն եղել:

Մեկ այլ խնդիր է խմբային հոգեբանական աշխատանքի, ինչպես նաև ընտանիքի անդամների հետ հոգեբանի աշխատանքի կազմակերպումը հոգեբուժական կազմակերպություններում: ԿԱՄ-ի կողմից արձանագրվել է, որ վերոնշյալ աշխատանքները կրում են ձևական բնույթ (չեն պահպանվում այդ աշխատանքների իրականացման կարևոր պահանջները, կանոնները): Հոգեբուժական կազմակերպություններում իրականացվող խմբային հոգեբանական աշխատանքն առավելապես ունի ժամանցային բնույթ, այդ հանդիպումները թերապևտիկ չեն:

ԿԱՄ-ի կողմից մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել է ևս մեկ մտահոգիչ հանգամանք. բոլոր հոգեբուժական կազմակերպություններում բացակայել են իրականացված անհատական և խմբային հոգեբանական աշխատանքների վերաբերյալ գրառումները կամ կատարված գրառումները չեն արտացոլել այդ աշխատանքները, դրանց նպատակը, պլանավորված աշխատանքների հետագա ընթացքը, արդյունքները և այլն: Վերոնշյալի արդյունքում անհնար է լինում բովանդակային պատկերացումներ կազմել թե՛ կատարված, թե՛ նախատեսվող աշխատանքների վերաբերյալ:

ԿԱՄ-ի կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանացել նաև զսպման միջոցների կիրառման դեպքում հոգեբանական աջակցության տրամադրման հարցը: Հոգեբուժական կազմակերպություններում զսպման միջոցների կիրառման շրջանակներում տրամադրվող հոգեբանական աջակցության հարցը խիստ մտահոգիչ է: Այս պարագայում ևս առկա չեն հոգեբանի աշխատանքի կազմակերպման միասնական մեխանիզմներ: Օրինակ, Գյումրու ՀԱԿ-ում զսպման միջոցների կիրառումից հետո, ինչպես նաև սննդից հրաժարվելու դեպքերում հոգեբանական աշխատանքը սահմանափակվում է հոգեբանի կողմից հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի արարքը որպես բացասական գնահատելով, անձին խրատելով: Ասվածի շրջանակներում անհրաժեշտ է նշել, որ եթե մեծահասակ պացիենտի նկատմամբ զսպման միջոցի կիրառման ընթացքում հոգեբանի ներկայությունն անթույլատրելի է և կարող է բացասական ազդեցություն ունենալ հոգեբան-այցելու հետագա փոխհարաբերությունների կոնտեքստում՝ այցելուի մոտ առաջացնելով վստահության պակաս, պատժի, ամոթի զգացում և այլն (դեպքը գրանցվել է Գյումրու ՀԱԿ-ում), ապա անչափահաս պացիենտի պարագայում հոգեբանի ներկայությունը, որոշ դեպքերում նույնիսկ նրա միջամտությունը կարող է, պարզապես, անհրաժեշտություն

լինել: Օրինակ, Ավանի ՀԱԿ-ի մանկական բաժանմունքում հոգեբանի կողմից մասնագիտական անդրադարձ չի կատարվել անչափահասի կողմից առանց ծնողի ներկայության հոգեբուժական կազմակերպությունում գտնվել չցանկանալու պատճառով կամակոր, չենթարկվող վարքագիծ դրսևորելու հիման նրա նկատմամբ կիրառված ֆիզիկական զսպման և դեղորայքային հանդարտեցման գործընթացին: Տվյալ պարագայում հոգեբանի կողմից անչափահասի հետ առանձնազրույցը, իրավիճակի ներկայացումը՝ տվյալ անձի կարիքները, անձնային, տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով, ինչպես նաև ծնողի հետ առանձնազրույցը, որոշակի ծնողավարման հմտություններին անդրադարձը զգալիորեն կարող էին մեղմել իրավիճակը՝ ընդհուպ մինչև ֆիզիկական զսպման և դեղորայքային հանդարտեցման կարիքի վերացումը:

Կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել է, որ Գյումրու ՀԱԿ-ում և «Զորակ» խնամքի կենտրոնում հոգեբանների կողմից կիրառվող ախտորոշիչ փաթեթը համալրման և առավել նպատակային կիրառման կարիք ունի: Այդ տեսանկյունից Ավանի ՀԱԿ-ում հոգեբանների կողմից կիրառվող ախտորոշիչ փաթեթը բավականին ընդգրկուն է, ինչը մասնագետներին մեթոդիկաների ընտրության առավել լայն հնարավորություն է տալիս, հետևաբար առավել արդյունավետ է դարձնում հոգեախտորոշման գործընթացը՝ ապահովել առավել արժանահավատ հետազոտական տվյալներ:

Շարունակում է մտահոգության առարկա լինել հոգեբուժական կազմակերպություններում միջմասնագիտական բովանդակային համագործակցության, ինչպես նաև այդ համագործակցության արձանագրման ու վերահսկման միասնական մեխանիզմների բացակայության հարցը:

Մշտադիտարկման այցերի ընթացքում ստացված տեղեկությունները համադրելով Կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչների դիտարկումների հետ՝ արձանագրվել է, որ հոգեբուժական կազմակերպություններում մտահոգիչ է նաև այլընտրանքային (ոչ դեղորայքային) թերապիայի կազմակերպումը: Մասնավորապես, «Զորակ» խնամքի կենտրոնում իրականացվող աշխատանքային թերապիան իր էությամբ արտ-թերապևտիկ աշխատանք է, որն առավելապես միտում ունի ապահովել խնամարկյալների զբաղվածությունը: Իսկ մյուս հոգեբուժական կազմակերպություններում ոչ դեղորայքային բուժման այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են, օրինակ, արտթերապիան, աշխատանքային թերապիան, չի իրականացվում անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով:

Հաշվի առնելով Կենտրոնում գտնվող անձանց մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները՝ հատկապես նպատակահարմար կարող է լինել որպես այլընտրանքային (ոչ դեղորայքային) թերապիա կիրառել էրգոթերապիան՝ համապատասխան մասնագետի ներգրավման միջոցով: Վերը շարադրվածի հիման վրա՝ անհրաժեշտ է՝

վերանայել հոգեբուժական կազմակերպություններում աշխատող հոգեբանների թիվը.
ապահովել հոգեբանների կողմից այցելուների հետ մասնագիտական էթիկայի սկզբունքների հիման վրա հաղորդակցումը, ըստ անհրաժեշտության վերանայել հոգեբանի մասնագիտական գործունեության նպատակը և սահմանները.
հոգեբուժական կազմակերպություններում նախատեսել հոգեբանական աշխատանքի (այդ թվում՝ խմբային) կազմակերպման համար անհրաժեշտ պատշաճ կահավորված սենյակներ, վերանայել առկա սենյակների կահավորանքը, դասավորությունը, ներքին հարդարվածությունը.
սահմանել հոգեբանի աշխատանքի կազմակերպման հստակ ընթացակարգեր, հանդիպումների որոշակի պարբերականություն.

վերանայել խմբային հոգեբանական աշխատանքների և պացիենտի ընտանիքի անդամների հետ իրականացվող աշխատանքների կազմակերպումը՝ ապահովելով այդ հանդիպումների թերապևտիկ բնույթը.
ապահովել մասնագետների կողմից առկա փաստաթղթերի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների պատշաճ, բովանդակային լրացման կարգը, այդ կարգի պահպանումը.
վերանայել զսպման միջոցների կիրառման, ինչպես նաև սննդից հրաժարման դեպքերում հոգեբանի մասնագիտական գործունեությունը, այդ ուղղությամբ մշակել որոշակի ընթացակարգեր.
իրականացնել հոգեբանական ախտորոշիչ փաթեթների վերանայում և համալրում՝ ապահովելով հոգեախտորոշիչ մեթոդիկաների առավել նպատակային կիրառումը.
հոգեբուժական կազմակերպություններում ձևավորել հոգեբույժ-հոգեբան և այլ նեղ մասնագետների համագործակցության մշակույթ և մշակել այդ համագործակցության ձևաթղթային համակարգ:

17) Գերբնակեցվածություն. Հիվանդասենյակների գերբնակեցվածության հետ կապված խնդիրներ են արձանագրվել Գյումրու ՀԱԿ-ում և «Զորակ» խնամքի կենտրոնում: Հիվանդասենյակներում չի ապահովվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող յուրաքանչյուր անձի համար ՀՀ օրենսդրությամբ և միջազգային չափանիշներով ամրագրված նվազագույն բնակելի տարածությունը: Այցի պահին «Զորակ» խնամքի կենտրոնի մահճակալային հզորությունն ամբողջովին օգտագործված է եղել, և հերթագրված են եղել բազմաթիվ անձինք:

Կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացրած մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրվել է, որ Գյումրու ՀԱԿ-ի գրեթե բոլոր հիվանդասենյակներում և «Զորակ» խնամքի կենտրոնի 2-րդ բաժանմունքի 1-ին հարկի սենյակներից մեկում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված չի եղել նվազագույն բնակելի տարածք:

Գյումրու ՀԱԿ-ում արձանագրվել են նաև իրար կիպ դրված կամ բավականին խիտ դասավորված մահճակալներ: «Զորակ» խնամքի կենտրոնի որոշ սենյակներում բնակվել են մինչև անգամ 14 խնամարկյալներ, որտեղ, թեև պահպանվել են նվազագույն բնակելի մակերեսների նախատեսված օրենսդրական պահանջները, այնուամենայնիվ, դրանք եղել են գերբնակեցված և չեն համապատասխանել օրենսդրության՝ «յուրաքանչյուր սենյակում ոչ ավելի, քան 4 խնամարկյալ» պահանջին: Այսպիսով, առաջարկվել է՝
վերանայել հաստատությունների մահճակալային ֆոնդը և քայլեր ձեռնարկել խնամքի հատուկ տիպի տուն-ինտերնատներ ընդունվող անձանց հերթագրումները նվազեցնելու ուղղությամբ.
հաստատությունների սենյակներում նվազեցնել բնակեցվածության մակարդակը՝ ապահովելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող յուրաքանչյուր անձի համար անհատական բնակելի տարածք.
բացառել իրար շատ մոտ տեղադրված մահճակալների առկայությունը.
քայլեր ձեռնարկել մեծ հիվանդասենյակներն աստիճանաբար ավելի փոքր սենյակների վերափոխելու ուղղությամբ:

18) Կենցաղային պայմաններ. Ուսումնասիրված հոգեբուժական կազմակերպությունները, մասնավորապես՝ դրանց աստիճանավանդակները և սանհանգույցները հարմարեցված չեն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին: Օրինակ, Գյումրու ՀԱԿ-ում սանհանգույցները տեղադրված են եղել դռան մուտքից մեկ աստիճան բարձրության վրա:

Չհարմարեցված աստիճանավանդակների պատճառով «Զորակ» խնամքի կենտրոնում տեղաշարժման խնդիրներ ունեցող անձինք հիմնականում պահվել են բաժանմունքների առաջին հարկում:

«Զորակ» խնամքի կենտրոնի և «Ավան» ՀԱԿ-ի հիվանդասենյակների հատակները հիմնականում եղել են հնամաշ՝ փայտյա, գորգապատ կամ լինոլիումապատ: Որոշ սենյակներում հատակի լինոլիումի կամ գորգի որոշ հատվածներ եղել են հնամաշ, տեղ-տեղ պատռված և դուրս ցցված, ինչը խնդրահարույց է այն համատեքստում, որ այնտեղ պահվող խնամարկյալների մեծ մասն ունեցել է տեղաշարժման խնդիրներ և դժվարությամբ է տեղաշարժվել: Նշվածը կարող է խոչընդոտ հանդիսանալ անվասայլակով տեղաշարժվելիս, և պատճառ դառնալ քայլելիս վայր ընկնելու համար:

Մեկ այլ խնդիր է հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անհատական կողապահարաններով ապահովվածությունը: Մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ հիվանդասենյակներում տեղադրված կողապահարանների թիվը չի համապատասխանել առկա մահճակալների թվին, և ոչ բոլոր անձինք են ապահովված եղել անձնական իրերը պահելու հնարավորությամբ: Այսպիսի պայմաններն անընդունելի են և խախտում են մարդու նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ու նրա մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Ուսումնասիրված հաստատություններում հիվանդասենյակների արհեստական լուսավորությունն ապահովելու համար անջատիչները տեղադրված են եղել միջանցքներում և գիշերային ժամերին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տեղաշարժվել են մութ սենյակում: «Զորակ» խնամքի կենտրոնի բաժանմունքների սենյակներում առկա արհեստական լուսավորության լամպերից որոշները չեն աշխատել կամ միացված չեն եղել հոսանքին:

Հոգեբուժական կազմակերպությունների սանհանգույցները և լոգարանները եղել են վերանորոգված: «Զորակ» խնամքի կենտրոնի սանհանգույցներում տեղադրված են եղել զուգարանակոնքեր, գիշերանոթներ և պիսուարներ: Հարկ է նշել, որ ոչ բոլոր զուգարանախցիկներն են ունեցել դռներ, իսկ որոշ զուգարանակոնքերի նստատեղերը բացակայել են: Զուգարանակոնքերով են կահավորված եղել նաև «Ավան» ՀԱԿ-ի սանհանգույցները: Ի տարբերություն վերը նշված հաստատությունների՝ Գյումրու ՀԱԿ-ի բուժառուների սանհանգույցները եղել են ասիական տիպի, և զուգարանակոնքերով են կահավորված եղել միայն բուժաշխատողների համար նախատեսված սանհանգույցները:

«Զորակ» խնամքի կենտրոնի սանհանգույցներից մեկում, որտեղ տեղադրված են եղել զուգարանակոնքեր և գիշերանոթներ, առկա է եղել թափանցիկ ապակիով մեծ պատուհան՝ առանց վարագույրի, ինչի արդյունքում դրսից հնարավոր է եղել դիտարկել սանհանգույցը: Չնայած նրան, որ հաստատությունում պահվող խնամարկյալներն ունեցել են գիտակցության տարբեր մակարդակներ՝ նշված պայմանները խախտում են վերջիններիս մասնավոր կյանքի գաղտնիությունը և ոտնահարում արժանապատվությունը:

Ուսումնասիրված հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ժամանցի համար նախատեսված վայրերում հիմնականում տեղադրված է եղել հեռուստացույց: Հարկ է նշել, որ «Զորակ» խնամքի կենտրոնի ժամանցի սենյակներում տեղադրված որոշ հեռուստացույցներ եղել են անսարք, իսկ սենյակներից մեկում հեռուստացույց առհասարակ չի եղել: Հաշվի առնելով վերը նշված խնդիրները՝ անհրաժեշտ է՝

ապահովել ֆիզիկական միջավայրի հարմարեցվածությունը տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց պահանջմունքներին.

հաստատություններում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող բոլոր անձանց տրամադրել կողպելու հնարավորություն ընձեռող անձնական տարածություն, որտեղ նրանք կարող են պահել իրենց անձնական իրերը.
հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել պահման արժանապատիվ պայմաններ՝ ապահովելով վերջիններիս մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

19) Հիգիենայի և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, լվացքի և լոգանքի կազմակերպում. Գյումրու ՀԱԿ-ում լվացքն իրականացվել է լվացքատանը, որն ունեցել է կոսմետիկ վերանորոգման կարիք: Լվացքատանն առկա է եղել մեկ 12 կգ տարողությամբ լվացքի մեքենա, որը եղել է սարքին, բայց բավականին հին: Հոգեբուժական կազմակերպության աշխատակիցները բարձրացրել են ևս մեկ լվացքի մեքենայի անհրաժեշտության հարցը՝ նշելով, որ դրա առկայությունը կդյուրացներ իրենց աշխատանքը:

«Ձորակ» խնամքի կենտրոնի լվացքը նույնպես իրականացվել է հաստատության լվացքատանը, իսկ «Ավան» ՀԱԿ-ի լվացքն իրականացվել է պայմանագրային հիմունքներով:

Մշտադիտարկումների արդյունքում հոգեբուժական կազմակերպություններում արձանագրվել են նաև լոգանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ: Գյումրու ՀԱԿ-ում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց լոգանքը կազմակերպվում է բաժանմունքների լոգարաններում՝ 7-10 օրը մեկ հաճախականությամբ, երբ գործարկվում է հաստատության կաթսայատունը: Մինչդեռ, ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան[138] հրամանի 9-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունը պետք է ապահովվի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի շաբաթական առնվազն երկու անգամ (անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ) լողանալու հնարավորությունը: Այսպիսով, Գյումրու ՀԱԿ-ում պատշաճ կերպով չի ապահովվում բուժառուների լոգանքի կազմակերպման օրենսդրական պահանջի կատարումը, ինչը մտահոգիչ է: Առանձնազրույցների ընթացքում Գյումրու ՀԱԿ-ում պահվող կանայք դժգոհություն են հայտնել բաժանմունքում միայն առանձին օրերին տաք ջուր ունենալու հանգամանքից, ինչի պատճառով մարմինը սրբում են թաց անձեռոցիկով կամ թրջած սրբիչով: Հատկանշական է, որ կանանցից ոմանք օգտվել են բաժանմունքի բժշկական անձնակազմի մոտ առկա էլեկտրական թեյնիկից և տաք ջրից: Նշվածը որոշ դեպքերում կարող է ընկալվել որպես տարբերակված մոտեցում:

Ստացված տեղեկությունների համաձայն՝ «Ավան» ՀԱԿ-ում բուժառուների լոգանքը կազմակերպվում է ըստ ցանկության, և վերջիններս հնարավորություն ունեն ամեն օր լոգանք ընդունելու: «Ձորակ» խնամքի կենտրոնի 1-ին բաժանմունքի խնամարկյալների լոգանքը կազմակերպվում է ամեն օր՝ օրական 2-3 անգամ՝ կենտրոնի աշխատակիցների աջակցությամբ, իսկ 2-րդ բաժանմունքի խնամարկյալների լոգանքը՝ շաբաթական 2 անգամ: «Ձորակ» խնամքի կենտրոնում ամեն օր է կազմակերպվում նաև գիշերամիզող խնամարկյալների լոգանքը:

Գյումրու ՀԱԿ-ում տղամարդկանց և կանանց բաժանմունքների լոգարաններում առանձնացված է եղել նախասրահ և երեքական լոգախցիկներ, սակայն այցի պահին և՛ կանանց, և տղամարդկանց բաժանմունքների լոգարաններում լոգախցիկներից մեկը չի շահագործվել: Մի դեպքում ջրի ծորակը և ցնցուղը եղել են ապամոնտաժված, իսկ մյուս դեպքում լոգախցիկում պահվել են տնտեսական իրեր: Գյումրու ՀԱԿ-ում կանանց

[138] 2022 թվականի հունվարի 4-ի «Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցությանն անհրաժեշտ պայմանները սահմանելու մասին» N 01-Ն

բաժանմունքի հարևանությամբ գտնվող նարկոլոգիական բաժանմունքում պահվող տղամարդ պացիենտները լոգանքի օրերին նույնպես օգտվում են կանանց լոգարանից, ինչը խնդրահարույց է:

«Զորակ» խնամքի կենտրոնի լոգարաններում առանձին տարաներում պահվել են օճառներ, որոնցից մի մասի վրա գրված են եղել խնամարկյալների անունները: Արձանագրվել է, որ լոգանքի համար նախատեսված սպունգները հիմնականում չեն անհատականացվել և պահվել են իրար վրա դրված՝ լոգախցիկի հենակալին: Այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ խնամարկյալների ներքնաշորերը եղել են հնամաշ: Այսպիսով՝ առաջարկվում է՝

Գյումրու ՀԱԿ-ի լվացքատունն ապահովել նոր լվացքի մեքենայով.
ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց լոգանքի կազմակերպումն օրենսդրության պահանջներին համապատասխան.
հաստատությունների լոգարանների լոգախցիկները կահավորել ցնցուղներով և անհրաժեշտ այլ պարագաներով.
ապահովել հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց հիգիենայի պարագաների անհատականացումը, պատշաճ ախտահանումը և սանիտարահիգիենիկ պայմաններում պահումը.
հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ապահովել պատշաճ հանդերձանքով:

21) Խոհանոց և սննդի ապահովում. Գյումրու ՀԱԿ-ում և «Զորակ» խնամքի կենտրոնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող սնունդը պատրաստվում է տեղում, իսկ «Ավան» ՀԱԿ-ում մատակարարվում է մասնավոր կազմակերպության կողմից:

Այցերի ընթացքում արձանագրվել է, որ հոգեբուժական կազմակերպություններում նախորդ օրը տրամադրված կերակրատեսակները եղել են նմուշառված և պահվել են սառնարաններում:

Գյումրու ՀԱԿ-ի խոհանոցը եղել է վերանորոգված, մաքուր, պատշաճ կահավորված և մշտական ու տաք ջրով ապահովված: Մաքուր և հարդարված է եղել նաև «Զորակ» խնամքի կենտրոնի խոհանոցը, սակայն անսարք է եղել խոհանոցի օդափոխության համակարգը, իսկ այնտեղ օգտագործվող տեխնիկան եղել է հին: Խոհանոցի, դրա հարակից սենյակների, ինչպես նաև ճաշարանի որոշ հատվածներում պատերի և առաստաղի ծեփամածիկը եղել է թափված, սալիկները և հատակը եղել են հնամաշ, առկա է եղել վերանորոգման անհրաժեշտություն:

Գյումրու ՀԱԿ-ի բաժանմունքների ճաշասրահները նույնպես եղել են վերանորոգված և մաքուր: «Զորակ» խնամքի կենտրոնի խոհանոցին կից ճաշարանը կահավորված է եղել ինչպես նոր, այնպես էլ հին գույքով՝ սեղաններով և աթոռներով: Ըստ տրամադրված տեղեկությունների՝ նոր գույքը հաստատությանն է փոխանցվել «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ից, որը դադարեցրել է իր գործունեությունը: Հարկ է նշել, որ ճաշարանը տեղակայված է շենքի երկրորդ հարկում, որտեղ հնարավոր է բարձրանալ միայն աստիճաններով, և աստիճանավանդակները հարմարեցված չեն եղել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին:

Ուսումնասիրված հոգեբուժական կազմակերպություններում սնունդը տրամադրվում է օրական երեք անգամ՝ ժամը 09:00-ից 10:00-ն ընկած ժամանակահատվածում, 13:00-ից 15:00-ն ընկած ժամանակահատվածում և 18:00-ից 19:00-ն ընկած ժամանակահատվածում: Հոգեբուժական կազմակերպությունների ոչ բոլոր բաժանմունքներում են փակցված եղել ճաշացանկեր, և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք օրվա ճաշացանկի վերաբերյալ տեղեկություններ չեն ունեցել:

Արձանագրված խնդիրներից է նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բավարար կալորիականությամբ և անհրաժեշտ չափաբաժնով սննդով ապահովումը, ինչպես նաև դրա բազմազանությունը: Հաստատություններում առկա ճաշացանկերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ չեն պահպանվում օրենսդրությամբ[139] նախատեսված նվազագույն չափորոշիչները:
Ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ հաստատություններում որոշակի սննդատեսակներ առհասարակ չեն տրամադրվել, ամենօրյա տրամադրման համար նախատեսված որոշ սննդատեսակներ տրամադրվել են ոչ բոլոր օրերին կամ տրամադրվել են սահմանված օրական նվազագույն չափաբաժնից ավելի քիչ քանակությամբ: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ հաստատություններում տրամադրվող որոշ ճաշատեսակներ պարբերաբար կրկնվել են: Օրինակ, «Ձորակ» խնամքի կենտրոնում մեկ շաբաթվա ընթացքում խնամարկյալներին 5 օր տրամադրվել է հնդկաձավարով փլավ:
Այցի ընթացքում «Ավան» ՀԱԿ-ում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք իրենց դժգոհությունն են հայտնել սննդի անալի լինելու կապակցությամբ:

Խնդրահարույց է նաև հոգեբուժական կազմակերպություններում պահվող հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար դիետիկ սնունդ նշանակելու և այն կազմակերպելու հնարավորության բացակայությունը: Մշտադիտարկման այցերի ընթացքում հաստատություններում պահվել են շաքարային դիաբետով, հեպատիտ «Ց»-ով և այլ քրոնիկ հիվանդություններով տառապող անձինք, որոնց համար առանձին ճաշացանկ նախատեսված չի եղել, և նրանք օգտվել են ընդհանուր կարգով տրամադրվող սննդից: Նշվածի կապակցությամբ բացակայում են նաև համապատասխան օրենսդրական կարգավորումները:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1724-Ն որոշմամբ որոշ սննդատեսակների օրական միջին չափաբաժինները նվազեցվել են՝ առանց պատշաճ հիմնավորման: Խիստ նվազել է տրամադրվող հացի, մսի, ձվի, կարագի, բուսական յուղի, բանջարեղենի և կարտոֆիլի կշիռը: Վերոգրյալի կապակցությամբ իրենց դժգոհությունն են հայտնել ինչպես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, այնպես էլ աշխատակիցները: Վերջիններս նշել են, որ սննդատեսակների նվազեցված չափաբաժինները պացիենտներին չեն բավականացնում, և հիմնականում խնդրահարույց է շաքարավազի, հրուշակեղենի և աղի չափաքանակների նվազեցումը: Ըստ աշխատակիցների՝ պացիենտին հասանելիք 10 գրամ շաքարավազը կամ 5 գրամ աղն օգտագործվում է կերակրատեսակների մեջ, ինչի արդյունքում Կենտրոնը ստիպված է լինում թեյը տրամադրել առանց շաքարի, իսկ ձուն՝ առանց աղի: Աշխատակիցները հավելել են, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շրջանում մեծ դժգոհություն է առաջացրել նաև մեղրի, ջեմի և քաղցրավենիքի օրական չափաքանակների նվազեցումը:

Ուսումնասիրված հաստատությունների սննդի և իրային պահեստների պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը, ընդհանուր առմամբ, եղել են բավարար, և լուրջ խնդիրներ չեն արձանագրվել: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝
«Ձորակ» խնամքի կենտրոնի խոհանոցում և ճաշարանում իրականացնել վերանորոգման աշխատանքներ՝ խոհանոցը կահավորելով խոհանոցային նոր տեխնիկայով.

[139] ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի «Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 711-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1724-Ն որոշմամբ նախատեսված սննդի օրական նվազագույն չափաբաժինները և ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման N 3 հավելվածով ծերերի և հաշմանդամների հատուկ տիպի տուն-ինտերնատներում խնամվողներին հատկացվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի չափորոշիչները:

հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց տրամադրել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված սննդի տեսականին և օրական նվազագույն չափաբաժինները:
ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող սննդի բազմազանությունը՝ բացառելով նույն սննդատեսակների հաճախակի տրամադրումը.
վերանայել ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1724-Ն որոշմամբ սահմանված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող սննդի օրական նվազագույն չափաբաժինները.
նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և հոգեբուժական կազմակերպություններում պահվող քրոնիկ հիվանդություններով տառապող և դիետիկ սննդի կարիք ունեցող պացիենտների համար նախատեսել առանձին ճաշացանկ և վերջիններիս ապահովել համապատասխան սննդով:

22) Կապն արտաքին աշխարհի հետ. Գյումրու ՀԱԿ-ի և «Ավան» ՀԱԿ-ի բաժանմունքների մուտքերի հարևանությամբ տեղադրված են եղել տաքսոֆոններ (հեռախոսներ), սակայն դրանց մոտ փակցված չեն եղել Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարը և դրան զանգահարելու ուղեցույցը: Գյումրու ՀԱԿ-ի բժշկական անձնակազմի ներկայացուցիչները հայտնել են, որ բուժառուները հիմնականում չեն օգտվում տաքսոֆոնի քարտերից, քանի որ դրանց համար վճարել չեն կարողանում: Տնօրինության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հաստատությունը ձեռք է բերել երկու բջջային հեռախոս՝ տարբեր օպերատորների քարտերով, որպեսզի ապահովվի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց անվճար հեռախոսակապն ազգականների հետ, ինչը ողջունելի է:

Տաքսոֆոններ առկա չեն եղել «Ձորակ» խնամքի կենտրոնում և «Ավան» ՀԱԿ-ի կանանց բաժանմունքում: Դրա հետ մեկտեղ, «Ձորակ» խնամքի կենտրոնում խնամարկյալների շատ փոքր մասն է ունեցել բջջային հեռախոսներ, և հեռախոսակապից օգտվելու համար որոշ դեպքերում աշխատակիցները խնամարկյալներին են տրամադրում իրենց անձնական բջջային հեռախոսները: Անձնական բջջային հեռախոսներ չի ունեցել նաև Գյումրու ՀԱԿ-ի կանանց բաժանմունքում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մեծ մասը, նրանցից ոմանք օգտվել են այլ բուժառուների հեռախոսներից:

Հատկանշական է, որ Գյումրու ՀԱԿ-ում բուժառուներին չի թույլատրվել իրենց մոտ պահել բջջային հեռախոս, բջջային հեռախոսները հիմնականում պահվել են բժշկական անձնակազմի մոտ՝ բուժքրոջ սենյակում, և նրանց տրամադրվել են միայն բժշկի ցուցմամբ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հեռախոսակապից օգտվելու իրավունքի սահմանափակումները պացիենտների նկատմամբ պետք է կիրառվեն հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ, եթե այդ իրավունքի իրականացումն իրական վտանգ է ներկայացնում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ շրջապատի համար:

Այսպիսով, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հեռախոսակապից օգտվելու իրավունքը սահմանափակվում է ընդհանուր սկզբունքով՝ առանց բժշկական համապատասխան ցուցման, ինչն անթույլատրելի է և չի նպաստում սոցիալական կապերի պահպանմանը: Փաստացի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք զրկված են իրենց մոտ բջջային հեռախոս ունենալու հնարավորությունից, բաժանմունքներում առկա տաքսոֆոններից անվճար օգտվելու հնարավորություն առկա չէ, և վերջիններս ուղղակիորեն կախվածության մեջ են գտնվում բժշկական անձնակազմից:

Հեռախոսներ ունենալու արգելքը չափազանց խնդրահարույց է, այն առանց իրավական հիմքի սահմանափակում է պացիենտների իրավունքը և, հետևաբար, ենթակա է անհապաղ բացառման:

«Ավան» ՀԱԿ-ում անձնական բջջային հեռախոսների հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել, բուժառուների մեծ մասն ունեցել է անձնական հեռախոսներ, որոնք մշտապես գտնվել են վերջիններիս մոտ:
Մշտադիտարկումների ընթացքում խնդիրներ են արձանագրվել նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տեսակցությունների կազմակերպման հետ կապված: Այսպես, Գյումրու ՀԱԿ-ում բուժառուների հետ ազգականների տեսակցությունները կազմակերպվում են տղամարդկանց բաժանմունքի «հանգստի սենյակներում», որը նաև ծառայում է ծխարան, իսկ կանանց բաժանմունքում՝ բաժանմունքի մուտքի մոտ՝ ոտքի վրա կանգնած: Խնդրահարույց է, որ բաժանմունքներում շենքային պայմաններից ելնելով՝ տեսակցությունների համար սենյակ հարմարեցված չէ, ինչի արդյունքում տեսակցությունների ժամանակ պացիենտներին հարազատների հետ առանձնանալու հնարավորություն չի ընձեռնվում:

«Զորակ» խնամքի կենտրոնում խնամարկյալների տեսակցությունները կազմակերպվում են բակում առկա տաղավարներում և դրա համար նախատեսված շենքում: Պաշտպանի ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների ընթացքում Կենտրոնի աշխատակիցները հայտնել են, որ խնամարկյալների միայն փոքր մասն է ազգականների հետ տեսակցություններ ունենում և դրանք հիմնականում չեն կրում պարբերական բնույթ: «Ավան» ՀԱԿ-ում տեսակցությունները կազմակերպվում են բաժանմունքներից դուրս՝ տեսակցությունների համար առանձնացված հատվածում:

Նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված՝ տեսակցությունների պարբերաբար և հնարավոր սահմանափակման պայմաններում Գյումրու ՀԱԿ-ում և «Զորակ» խնամքի կենտրոնում բացակայել է տեսազանգի հնարավորությունը: «Զորակ» խնամքի կենտրոնում «Բողոքների և առաջարկությունների արկղը» տեղադրված է եղել բաժանմունքներից դուրս՝ հաստատության վարչական մասում, և հիմնականում խնամարկյալների համար եղել է անհասանելի: Այսպիսով, առաջարկվում է՝
ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հեռախոսակապից օգտվելու իրավունքի լիարժեք իրացումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն.
հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց համար նախատեսել ինքնուրույն հեռախոսակապ հաստատելու հնարավորություններ.
ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 116 «թեժ գծի» հեռախոսահամարին զանգ կատարելու վերաբերյալ համապատասխան ուղեցույցների առկայությունը.
բացառել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մոտ բջջային հեռախոսներ ունենալու արգելքը՝ հեռախոսակապից օգտվելու իրավունքը սահմանափակելով միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով.
Գյումրու ՀԱԿ-ում նախատեսել ազգականների հետ տեսակցությունների համար առանձնացված և պատշաճ կահավորված սենյակ.
քննարկել հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար տեսազանգի հնարավորություն նախատեսելու հարցը.
ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ գաղտնիության պահպանմամբ դիմում-բողոք գրելու հնարավորությունը:

23) Բացօթյա զբոսանք. Մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց զբոսանքի կազմակերպման հետ կապված խնդիրներ:

Այսպես, Գյումրու ՀԱԿ-ում զբոսանքի համար հատուկ տարածք նախատեսված չի եղել: Բուժառուները զբոսնել են բակում, որտեղ տեղադրված են եղել նստարաններ, սակայն վատ եղանակներից պաշտպանվելու համար ծածկեր առկա չեն եղել: Այցի ընթացքում բակի

տարածքում խոտածածկույթը հնձված և հարդարված չի եղել, ինչը մտահոգիչ է, հատկապես այն համատեքստում, երբ բակում լվացքը փռելու ընթացքում լվացքատան երկու աշխատակիցների կծել է տիզ: Բակի տարածքում եղել են նաև թափառող շներ:

«Ավան» ՀԱԿ-ում զբոսանքը նույնպես կազմակերպվել է հաստատության բակում 20 րոպեից մինչև մեկ ժամ տևողությամբ՝ կախված եղանակային պայմաններից և բժշկական անձնակազմի ծանրաբեռնվածությունից: Պաշտպանի ներկայացուցիչների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք նշել են, որ անձրևային եղանակի դեպքում հաճախ իրենք հրաժարվում են դուրս գալ զբոսանքի, քանի որ հաստատության բակում վատ եղանակներից պաշտպանվելու համար ծածկեր և տաղավարներ առկա չեն:

«Ձորակ» խնամքի կենտրոնում բացօթյա զբոսանքը կազմակերպվել է կենտրոնի ընդարձակ բակում, որտեղ առկա են եղել տաղավարներ: Կենտրոնի բակը և տարածքը եղել են մաքուր և խնամված: Խնամարկյալներից ոմանք նշել են, որ մասնակցում են բակի մաքրման և բարեկարգման աշխատանքներին: Այցի ընթացքում արձանագրվել է, որ կենտրոնի 2-րդ բաժանմունքում պահվող խնամարկյալներն առանց խոչընդոտի կարող են օգտվել բացօթյա զբոսանքի իրավունքից, որը կազմակերպվում է ամեն օր: Միևնույն ժամանակ, «Ձորակ» խնամքի կենտրոնի 1-ին բաժանմունքում պահվող խնամարկյալները բակ են դուրս բերվում միայն ճաշարան ուղևորվելիս կամ այլ միջոցառումների մասնակցելու նպատակով: Վերջիններս օրվա հիմնական մասն անցկացնում են բաժանմունքի ժամանցի սենյակներում:

Մշտադիտարկումների ընթացքում ուսումնասիրվել են նաև հոգեբուժական կազմակերպություններում վարվող մատյանները և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բժշկական փաստաթղթերը, ինչի արդյունքում պարզվել է, որ Գյումրու ՀԱԿ-ում բուժառուների զբոսանքի իրավունքի սահմանափակման վերաբերյալ որևէ նշում վերջիններիս բժշկական փաստաթղթերում չի կատարվում: Ավելին, խնդրահարույց պրակտիկա է արձանագրվել նաև զբոսանքի կազմակերպման արձանագրման հետ կապված: Այսպես, Գյումրու ՀԱԿ-ի բաժանմունքներում վարվել է «Բացօթյա զբոսանք» վերտառությամբ մատյան, որտեղ գրառումները հիմնականում ունեցել են ձևական բնույթ և չեն արտացոլել զբոսանքի կազմակերպման իրական պատկերը: Մասնավորապես, բժշկական անձնակազմի պնդմամբ՝ կանանց բաժանմունքում մի քանի օր առաջ ընդունված պացիենտներից մի քանիսի զբոսանքի իրավունքը, սուր հոգեախտաբանական վիճակով պայմանավորված, եղել է սահմանափակված, նշվածը հաստատել են նաև բուժառուները, սակայն համապատասխան մատյանում պացիենտների ստորագրությամբ հաստատված է եղել, որ վերջիններս դուրս են եկել զբոսանքի: Մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ վատ եղանակային պայմաններով պայմանավորված՝ բուժառուները դուրս չեն բերվում զբոսանքի կամ ամբողջ բաժանմունքը, առանց պատճառաբանության, բացօթյա զբոսանքից հրաժարվում է:

Բացօթյա զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպումը չի բխում օրենսդրությամբ նախատեսված պահանջներից, ինչը խիստ մտահոգիչ է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

պատշաճ կազմակերպել պացիենտների զբոսանքի իրավունքի իրացումը.
հոգեբուժական կազմակերպությունների բակերում նախատեսել վատ եղանակային պայմաններից պաշտպանվելու համար ծածկեր և տաղավարներ.
զբոսանքի մատյանը վարել ըստ օրենսդրությամբ սահմանված կարգի:

23) Զբաղվածություն. Մշտադիտարկումների արդյունքում ի հայտ են եկել նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց զբաղվածության ապահովման հետ կապված խնդիրներ:

Այսպես, Գյումրու ՀԱԿ-ի տղամարդկանց բաժանմունքում առանձնացված է եղել բուժառուների հանգստի համար նախատեսված սենյակ, որտեղ տեղադրված են եղել հեռուստացույց և սեղանի խաղեր (շախմատ, շաշկի): Հանգստի սենյակը ծառայել է նաև որպես ծխարան, ինչը խնդրահարույց է: Կանանց բաժանմունքում գերբեռնվածության պատճառով հանգստի սենյակն օգտագործվել է որպես հիվանդասենյակ, իսկ հանգստի սենյակի գույքը տեղադրված է եղել միջանցքում: Նշված սենյակում առկա են եղել հեռուստացույց և բազմոց, իսկ զբաղմունքի այլ տեսակներ բաժանմունքում նախատեսված չեն եղել:

Հեռուստացույցից և սեղանի խաղերից զատ զբաղմունքի այլ տեսակներ նախատեսված չեն եղել նաև «Ավան» ՀԱԿ-ում: Այնտեղ բուժառուների ժամանցը կազմակերպվել է բաժանմունքի միջանցքում և ճաշասրահում, որտեղ վերջիններս հեռուստացույց են դիտել կամ սեղանի խաղեր խաղացել:

«Զորակ» խնամքի կենտրոնի բաժանմունքներում առանձնացված են եղել հանգստի (ժամանցի) սենյակներ, սակայն դրանցից մի քանիսը մեկտեղված են եղել ննջասենյակի հետ, ինչն ինքնին խնդրահարույց է: Հանգստի սենյակներում առկա են եղել հեռուստացույց, բազմոց և բազկաթոռներ: Խնամքի կենտրոնի 2-րդ բաժանմունքում տեղադրված է եղել նաև սեղանի թենիս, և այցի ընթացքում մարմնակրթության հրահանգիչի հսկողությամբ խնամարկյալներից ոմանք թենիս են խաղացել: Կենտրոնի 1-ին բաժանմունքի ժամանցի սենյակներում տեղադրված հեռուստացույցներից երկուսը եղել են անսարք, իսկ մեկ սենյակում հեռուստացույց առհասարակ չի եղել: Այսպիսով, բաժանմունքի հանգստի սենյակների կահավորանքը պատշաճ ու ամբողջական չի եղել և չի համապատասխանել օրենսդրական պահանջներին: Խնամարկյալների զբաղվածության ապահովման խնդիրն առավել ակնառու է դարձել «Զորակ» խնամքի կենտրոնի 1-ին բաժանմունքում իրականացված դիտարկումների ընթացքում, որտեղ խնամարկյալների մեծ մասը այցի ողջ ընթացքում գտնվել են ժամանցի սենյակներում՝ զետնին կամ աթոռներին նստած վիճակում՝ առանց որևէ զբաղմունքի:
«Զորակ» խնամքի կենտրոնում առկա է գրադարան, սակայն ըստ աշխատակիցների տրամադրած տեղեկությունների՝ խնամարկյալների մեծ մասը տառաճանաչ չէ և չի կարողանում օգտվել գրադարանից: Կենտրոնի տարածքում առկա է նաև մարզադահլիճ, որն ունեցել է վերանորոգման կարիք: Մասնավորապես, մարզադահլիճի առաստաղի ծեփամածիկը տեղ-տեղ եղել է թափված, իսկ մանրահատակը որոշ հատվածներում՝ քանդված: Խնամարկյալները մարզադահլիճից հիմնականում օգտվում են առավոտյան ժամերին, վերջիններս մարզադահլիճ են բերվում ըստ խմբերի, որտեղ էլ հրահանգչի հսկողությամբ իրականացնում են պարապմունքներ և խաղում խաղեր:

«Զորակ» խնամքի կենտրոնում իրականացված մշտադիտարկման ընթացքում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ կենտրոնը «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն - Հայաստան» գրասենյակի աջակցությամբ պարբերաբար կազմակերպում է սպորտային միջոցառումներ (թիավարության մրցումներ, «սպորտլանդիա» և այլն), որոնցում ընդգրկվում են խնամարկյալները: Պաշտպանի ներկայացուցիչների հետ զրույցներում կազմակերպվող սպորտային միջոցառումների կապակցությամբ իրենց գոհունակությունն են հայտնել նաև խնամարկյալները՝ նշելով, որ կցանկանային՝ դրանք կազմակերպվեին ավելի հաճախ: Նման միջոցառումների կազմակերպումը ողջունելի է, քանի որ դրանք չափազանց կարևոր նշանակություն ունեն խնամարկյալների զբաղվածության ապահովման տեսանկյունից:

Խնամարկյալների առողջ ապրելակերպի խթանման և առողջության պահպանման համար կարևոր նշանակություն կունենա նաև հաստատության՝ բուժական ֆիզկուլտուրայի

մասնագետներով համալրումը և խնամարկյալների կարիքներին համապատասխան բուժական միջոցառումների կազմակերպումը:

«Զորակ» խնամքի կենտրոնի տարածքում առկա է նաև ջերմոց, որտեղ աճեցված են եղել լոբի, լոլիկ և պղպեղ: Տրամադրված տեղեկությունների համաձայն՝ ջերմոցի մշակման աշխատանքներով զբաղվում է աշխատակիցը, իսկ խնամարկյալներն այդ աշխատանքներին մասնակցում են ըստ ցանկության: Ջերմոցում խնամարկյալները հիմնականում զբաղվում են մշակաբույսերը ջրելով:

Մշտադիտարկման այցերի ընթացքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել են, որ իրենց զբաղմունքի հիմնական միջոցը հեռուստացույց դիտելը և սեղանի խաղեր խաղալն է: Վերջիններս նշել են նաև, որ օրվա մեծ մասն անցկացնում են հիվանդասենյակներում՝ միմյանց հետ զրուցելով: Գյումրու ՀԱԿ-ում բուժառուները զրույցների ընթացքում ցանկություն են հայտնել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություն ունենալու վերաբերյալ, ինչը տվյալ հոգեբուժական կազմակերպությունում բացակայել է:

Պետք է ընդգծել, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար միայն հեռուստացույցի և սեղանի խաղերի առկայությունը չի լուծում նրանց զբաղվածությամբ ապահովելու հարցը: Անհրաժեշտ է նպատակային կազմակերպել բուժառուների առօրյան՝ հաշվի առնելով վերջիններիս նախասիրությունները և հնարավորությունները: Անչափ կարևոր են խաղային մեթոդներով իրականացվող ուսուցողական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի նվազագույն պահանջներին և հոգեբուժական կազմակերպությունների համար նախատեսված անվտանգության կանոններին բավարարող պարապմունքների անցկացումը: Այսպիսով, անհրաժեշտ է՝
հոգեբուժական կազմակերպությունների հանգստի (ժամանցի) սենյակներն ապահովել պատշաճ կահավորանքով, սարքին հեռուստացույցներով և սեղանի խաղերով.
հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ավելացնել նպատակային զբաղմունքների տեսակներ և ստեղծել լրացուցիչ հնարավորություններ՝ հաշվի առնելով վերջիններիս մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները.
«Զորակ» խնամքի կենտրոնի մարզադահլիճում իրականացնել վերանորոգման աշխատանքներ. քայլեր ձեռնարկել Գյումրու ՀԱԿ-ում բուժառուների համար մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություն ստեղծելու ուղղությամբ:

24) Հոգեբուժական հաստատություններում կենսաթոշակի (նպաստի) ինքնուրույն տիրապետման և տնօրինման խնդիր Հոգեբուժական կազմակերպություններում պետք է կարևորվի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալական ապահովության և աջակցության իրավունքների ապահովումը՝ այն հաշվառմամբ, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք առավել խոցելի են նյութական շահերի պաշտպանության տեսանկյունից: Այս առումով հատկապես ուշադրության արժանի են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից կենսաթոշակների (նպաստների) ստացման, ինքնուրույն տիրապետման, տնօրինման և իրավունքի իրացման ու վճարումը շարունակելու համար համապատասխան մարմին դիմելու հարցերը: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք կենսաթոշակներն ու նպաստները ստանում են հիմնականում անկանխիկ ձևով: Այս առումով խնդրահարույց է, որ կենսաթոշակի բանկային քարտերը և կանխիկ ձևով ստացված կենսաթոշակը պացիենտներից ոչ բոլորը կարող են իրենց մոտ պահել, և դրանք հիմնականում ի պահ են հանձնվում բաժանմունքների բուժքույրերին: Հոգեբուժական հաստատություններից մեկում արձանագրվել են դեպքեր, երբ պացիենտների կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանում և տնօրինում են վերջիններիս ընտանիքի անդամները, մինչդեռ ոչ ի շահ նրանց: Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է այդպիսի կոնկրետ դեպք: Մասնավորապես, պարզվել է, որ պացիենտներից մեկի կենսաթոշակի բանկային քարտը

վերցրել են ազգականները և հրաժարվում են վերադարձնել՝ չնայած հաստատության բժշկական անձնակազմի գործադրած ջանքերին:

Հոգեբուժական կազմակերպություններում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից իրենց գույքի և եկամուտների ինքնուրույն տնօրինումը կամ ի շահ իրենց օգտագործումն անհրաժեշտ է ապահովել կոնկրետ և գործուն մեխանիզմների գործադրմամբ:

Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրված մեկ այլ դեպքով հարկադիր բուժում ստացող պացիենտներից փաստացի չի ստացել սոցիալական նպաստ: Այցից հետո բարձրացված հարցը Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը քննարկել է Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժնի աշխատակցի հետ, որը նշել է, որ անձի սոցիալական նպաստի իրավունքը դադարեցվել է սոցիալական նպաստը 3 ամիս անընդմեջ անհարգելի պատճառով չստանալու հիմքով: Խնդրահարույց է այն, որ հոգեբուժական հաստատությունում գտնվելու հանգամանքը կարող է գնահատվել անհարգելի պատճառ նպաստը 3 ամիս անընդմեջ չստանալու հիմքով անձի սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարացնելու համար: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու դեպքում անձին սոցիալական նպաստ չվճարելու վերաբերյալ կարգավորում չի նախատեսում: Ավելին, ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված 8-րդ հավելվածի 20-րդ կետը սահմանում է, որ նպաստը կամ հրատապ օգնությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վճարվել նաև քաղաքացու օրինական ներկայացուցչին (խնամակալ, հոգաբարձու): Ստացվում է, որ եթե անձը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ և միաժամանակ գտնվում է հոգեբուժական կազմակերպությունում, ապա նրա փոխարեն նպաստ կամ հրատապ օգնություն կարող է ստանալ խնամակալը կամ հոգաբարձուն: Արդյունքում, առաջանում է տարբերակված մոտեցման խնդիր հոգեբուժական կազմակերպությունում գտնվող ու բուժում ստացող և բուժում ստացող, բայց խնամակալ ունեցող անձանց միջև: Ուստի, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել իրավական մակարդակում խնդիրներ առաջացնող նշված հարցի կարգավորման ուղղությամբ:
Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝
մշակել պացիենտների դրամական միջոցները, բանկային քարտերն իրենց մոտ պահելու և ինքնուրույն տնօրինելու գործուն մեխանիզմներ,
իրականացնել անձնակազմի նպատակաուղղված վերապատրաստումներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կողմից իրենց գույքի և եկամուտների ինքնուրույն տնօրինումը կամ ի շահ իրենց օգտագործումը քրեաիրավական պաշտպանության միջոցով ապահովելու համար.
հետևողականություն ցուցաբերել հոգեբուժական հաստատություններում պահվող անձանց սոցիալական ապահովության իրավունքը պատշաճ ապահովելու հարցում.
ներդնել օրենսդրական հստակ մեխանիզմներ հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սոցիալական ապահովության իրավունքի (նպաստ, կենսաթոշակ) անխոչընդոտ իրացումն ապահովելու համար:

3. Ոստիկանության ներբակալված անձանց պահման վայրերի մշտադիտարկման արդյունքները

Նախորդ մասերի տրամաբանությամբ սույն մասում մշտադիտարկված ՁՊՎ-ներում իրավունքների իրացման յուրաքանչյուր հարցի ներքո կներկայացվեն մշտադիտարկման արդյունքները՝ ըստ ՁՊՎ-ների առանձնահատկությունների: Այդպիսիով Պաշտպանը հնարավորություն կունենա ներկայացնելու խնդիրները ոչ թե անորոշ շարադրանքով, այլ կոնկրետ ՁՊՎ-ի կոնկրետ օրինակով, միևնույն ժամանակ, սույն մասում իրավունքների իրացման հարցերի բաժանումը (պահման պայմաններ, բժշկական սպասարկում և այլն) հնարավորություն կտա ընթերցողին ընդհանուր պատկերացում կազմելու խնդիրների համակարգային բնույթի և դրանց մասշտաբների մասին: Սույն մասում Պաշտպանի առաջարկությունները կներկայացվեն խնդիրների ներկայացման հետ միասին:

1) Խցային պայմաններ. Ուսումնասիրված ՁՊՎ-ների խցերը եղել են մեկտեղանոց կամ երկտեղանոց Մշտադիտարկման այցի պահին ՁՊՎ-ներում պահվող ազատությունից զրկված անձինք չեն եղել: Խցերը հիմնականում եղել են մաքուր և կոկիկ հարդարված: Արմավիրի, Վաղարշապատի, Արտաշատի և Արարատի ՁՊՎ-ները եղել են վերանորոգված: Պահման պատշաճ պայմաններ են արձանագրվել նաև Տավուշի և Դիլիջանի ՁՊՎ-ներում: Մասիսի և Նոյեմբերյանի ՁՊՎ-ներում առկա է եղել կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտություն, մասնավորապես՝ ՁՊՎ-ների հատակը եղել է հնամաշ, պատերի և առաստաղի ծեփամածիկը՝ տեղ-տեղ թափված, բարձր է եղել խոնավության մակարդակը: Հիմնանորոգման հրատապ անհրաժեշտություն է ունեցել Իջևանի ՁՊՎ-ն, որտեղ բավականին բարձր է եղել խոնավության մակարդակը:

Այցերի ընթացքում արձանագրվել է, որ ուսումնասիրված բոլոր ՁՊՎ-ների խցերում բնական լուսավորության մակարդակը եղել է ցածր, ինչը պայմանավորված է փոքր և ցանցապատ պատուհաններով:

Իջևանի և Դիլիջանի ՁՊՎ-ների խցերում էլեկտրական լուսավորությունը չի անջատվում կամ թուլացվում ողջ գիշերվա ընթացքում: ՁՊՎ-ների վարչակազմի ներկայացուցիչների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ էլեկտրական լուսավորությունը չի անջատվում խցերում պահվող անձանց հսկելու նպատակով: Արդյունքում, ազատությունից զրկված անձանց համար չեն ստեղծվում քնելու համար պատշաճ պայմաններ: ՁՊՎ-ների խցերում արհեստական լուսավորությունը գիշերը մշտապես վառ թողնելու հարցը բազմիցս արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ՁՊՎ-ներում իրականացվող մշտադիտարկումների արդյունքներն ամփոփող տեղեկանքներում:

Այս կապակցությամբ, թեև Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացրած առաջարկությունների հիման վրա 2019 թվականի սեպտեմբերի 10-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարծիքին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, այնուամենայնիվ, մտահոգիչ է, որ նախագծի ընդունման ուղղությամբ ակտիվ քայլեր չեն ձեռնարկվել:
Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն առաջարկել է՝
ձեռնարկել միջոցներ ՁՊՎ-ներում անհրաժեշտ վերանորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ.
ՁՊՎ-ների խցերն ապահովել արհեստական լուսավորության թուլացման համար էլեկտրական կարգավորիչներով.
Իջևանի ՁՊՎ-ի բոլոր խցերն ապահովել կանչի կոճակներով և ռադիոընդունիչներով:

2) Լոգարան, սանհանգույց և սանատիրահիգիենիկ պայմաններ. Ուսումնասիրված բոլոր ՁՊՎ-ների սանհանգույցները, բացառությամբ Տավուշի ՁՊՎ-ի, եղել են ասիական տիպի և հարմարեցված չեն եղել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար:

Ի տարբերություն Վաղարշապատի և Արտաշատի ՁՊՎ-ների, Արմավիրի, Մասիսի, Արարատի, Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի և Դիլիջանի ՁՊՎ-ների սանհանգույցների և լոգարանների դռների վրա առկա պատուհաններից հնարավոր է եղել անմիջապես դիտարկել ներսում գտնվող անձին: Պաշտպանն արձանագրել է, որ այսպիսի պայմաններն անընդունելի են մարդու նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի և նրա մասնավոր կյանքի անձեռնմխելիության տեսանկյունից:

Ուսումնասիրված ՁՊՎ-ներում սանիտարահիգիենիկ պայմանները հիմնականում եղել են բավարար: Ողջունելի է նաև, որ ուսումնասիրված ՁՊՎ-ներում առկա են եղել կանացի հիգիենիկ պարագաներ: Դրանք բացակայել են միայն Տավուշի ՁՊՎ-ում, սակայն մինչև մշտադիտարկման այցի ավարտը ՁՊՎ-ն ապահովվել է կանացի հիգիենիկ պարագաներով: Այսպիսով ԿԱՄ-ն արձանագրել է, որ անհրաժեշտ է՝

ՁՊՎ-ներում առանձնացնել լոգարանն ու սանհանգույցը.

ՁՊՎ-ների սանհանգույցները հարմարեցնել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին.

բացառել ՁՊՎ-ների սանհանգույցի և լոգարանի հատվածի անմիջական դիտարկման հնարավորությունը՝ ապահովելով անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը.

ՁՊՎ-ներն ապահովել լվացքի չորացման համար նախատեսված պատշաճ հարմարանքներով.

մշակել և հաստատել ՁՊՎ-ներում պատշաճ ախտահանման միասնական ձև՝ նախատեսելով նաև անկողնային պարագաների ախտահանման չափանիշներ, ինչը կբացառի վարակիչ հիվանդությունների տարածման հնարավորությունը:

3) Խոհանոց, սնունդ և հանձնուքներ. Ուսումնասիրված ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց սնունդն ապահովվում է պատվիրակված ծառայությունների միջոցով՝ մասնավոր կազմակերպությունների հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա: Ազատությունից զրկված մեկ անձին ՁՊՎ-ում մեկ օրվա սննդով ապահովելու համար նախկինում հատկացվող գումարի չափն ավելացել է՝ 830 ՀՀ դրամից դառնալով 1200 ՀՀ դրամ (հղի կանանց կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին՝ 1400 ՀՀ դրամ), ինչը ողջունելի է: Առաջարկվել է՝

վերանայել ազատությունից զրկված մեկ անձին ՁՊՎ-ում մեկ օրվա սննդով ապահովելու համար հատկացվող գումարի չափը.

Իջևանի ՁՊՎ-ում նախատեսել սննդի տաքացման հնարավորություն.

ՁՊՎ-ներն ապահովել հանձնուքների ստուգման տեխնիկական հատուկ միջոցներով՝ բացառելով սննդի անհարկի մասնատումն ու փչացումը:

4) Բժշկական օգնություն և սպասարկում. Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ որոշ ՁՊՎ-ներում բուժզննության սենյակը մեկտեղված է այլ նպատակային նշանակություն ունեցող սենյակների հետ: Օրինակ, Դիլիջանի ՁՊՎ-ում բուժզննության սենյակը մեկտեղված է եղել տեսակցության, իսկ Նոյեմբերյանի ՁՊՎ-ում քննչական սենյակի հետ: Հարկ է նաև նշել, որ Իջևանի ՁՊՎ-ի բուժզննության սենյակում է տեղադրված եղել ՁՊՎ-ի լվացքի մեքենան: Արդյունքում, վերը նշված ՁՊՎ-ներում գործնականում հնարավոր չէ ապահովել նշված սենյակների միաժամանակյա նպատակային օգտագործումը:

Խնդրահարույց է նաև այն, որ ՁՊՎ-ներում բուժզննության սենյակներն ապահովված չեն եղել մշտական ջրով և լվացարանով: Մասնավորապես, Արմավիրի ՁՊՎ-ի բուժզննության սենյակն ապահովված չի եղել մշտական հոսող ջրով, իսկ Տավուշի ՁՊՎ-ի բուժզննության սենյակում առհասարակ բացակայել է լվացարանը:

ԿԱՄ-ն արձանագրել է, որ բժշկական զննության համար նախատեսված սենյակների ոչ բավարար պայմանները չեն նպաստում առողջության պահպանման իրավունքի պատշաճ իրացմանը:

ՁՊՎ-ների դեղապահարաններում առկա դեղորայքը եղել է ժամկետի մեջ, դեղաթիթեղների որոշ դեղահաբեր եղել են օգտագործված: Հարկ է նշել, որ ՁՊՎ-ների դեղապահարաններում առկա դեղորայքի օգտագործման և դրա հիմնավորման վերաբերյալ գրառումներ առկա չեն եղել, և պարզ չէ, թե նշված դեղամիջոցներն ում և ինչ նպատակով են տրամադրվել: Այսպիսով, արձանագրվել է, որ ՁՊՎ-ներում ոչ միասնական դեղացանկերի առկայությունը և դեղամիջոցների առանց բժշկական հիմնավորման օգտագործումը մտահոգիչ է և կարող է խնդրահարույց լինել ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովման տեսանկյունից:

Դիլիջանի ՁՊՎ-ի «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՁՊՎ-ում հաշվառված երկու անձանցից միայն մեկն է զննվել շտապ բժշկական օգնության ծառայության բժշկի կողմից, իսկ Տավուշի ՁՊՎ-ի «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում արձանագրված երեք անձանցից միայն երկուսի բուժզննության վերաբերյալ են առկա եղել գրառումներ «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանում: Արմավիրի ՁՊՎ-ի «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» մատյանում արձանագրված 14 անձանցից «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանում գրառումներ առկա են եղել միայն 4 անձի բուժզննության վերաբերյալ: Ավելին, նրանց բժշկական զննություններն իրականացվել են ՁՊՎ ընդունվելուց տևական ժամանակ հետո: Այսպիսով, ոչ բոլոր դեպքերում են ՁՊՎ ընդունվող անձինք ենթարկվում բժշկական զննության, ինչն անթույլատրելի է:

ՁՊՎ-ներում վարվող «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՁՊՎ ընդունվող ազատությունից զրկված անձանց նկատմամբ նախնական բժշկական զննությունն իրականացվել է շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահ անձնակազմի կողմից: Սակայն, որոշ դեպքերում բացակայել են բուժզննում իրականացրած բժշկի կողմից զննման ժամի վերաբերյալ տեղեկությունները, ինչի արդյունքում հնարավոր չէ գնահատել, թե ազատությունից զրկված անձի ՁՊՎ ընդունվելուց հետո երբ է հրավիրվում շտապ բժշկական օգնության ծառայության բրիգադ, և երբ է իրականացվում ազատությունից զրկված անձի բժշկական զննությունը:

Պաշտպանն արձանագրել է, որ ՁՊՎ մուտք գործած ցանկացած անձ պետք է ենթարկվի արտաքին բժշկական զննության՝ անկախ նրա կողմից բժշկական զննության ենթարկվելու պահանջ ներկայացնելու կամ տեսանելի մարմնական վնասվածքների առկայության հանգամանքներից:

ՁՊՎ-ների մատյանների ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ շտապ բժշկական օգնության ծառայության բրիգադի կողմից ազատությունից զրկված անձանց բժշկական զննությունը, երբեմն, իրականացվել է ՁՊՎ ընդունվելուց անմիջապես մի քանի րոպե անց, երբեմն տևական ժամանակ հետո՝ ՁՊՎ ընդունվելուց մինչև 4 ժամ հետո:

ՁՊՎ-ների «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ, նույնիսկ այն դեպքերում, երբ ազատությունից զրկված անձի բժշկական զննությունն իրականացնում է շտապ բժշկական օգնության ծառայության բժիշկը, երբեմն ազատությունից զրկված անձի վերաբերյալ անձնական տվյալները և գանգատները լրացվում են Ոստիկանության ծառայողների կողմից: Այս համատեքստում, անհրաժեշտ է ՁՊՎ-ներում բժշկական

օգնության և սպասարկման տրամադրման ժամանակ բացառել ոչ բժշկական անձնակազմի ներկայությունը և մասնակցությունը:

Միջազգային ու ազգային օրենսդրության պահանջ է, որ բժշկական զննությունը պետք է իրականացվի միայն բժշկի կողմից և ազատությունից զրկման վայրի անձնակազմի լսելիության սահմաններից և տեսադաշտից դուրս: Ըստ ԽԿԿ-ի չափանիշների՝ յուրաքանչյուր բժշկական հետազոտության արդյունք, ինչպես նաև ձերբակալված անձի կողմից արված համապատասխան պնդում և բժշկի հետևություն պետք է պաշտոնապես գրանցվեն հետազոտող բժշկի կողմից և տրամադրվեն ձերբակալված անձին և նրա փաստաբանին (տե՛ս ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր զեկույցը, որն ընդգրկում է 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը, կետ 38): Վերոնշյալ խնդիրները 2017 թվականից ի վեր մշտապես արձանագրվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման կողմից ՁՊՎ-ներում իրականացվող մշտադիտարկման աշխատանքներն ամփոփող տեղեկանքներում և Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում, սակայն խնդիրները շարունակում են չլուծված մնալ: Ողջունելի է, իհարկե, որ որոշ ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձանց մուտք գործելու յուրաքանչյուր դեպքում հրավիրվում է շտապ բժշկական օգնության ծառայություն, որն իրականացնում է անձանց բժշկական զննությունը, սակայն խնդիրը համակարգային բնույթ է կրում և դեռևս ամբողջովին լուծված չէ:

Մշտադիտարկման այցերի արդյունքները վկայում են նաև, որ Ոստիկանության ՁՊՎ-ներում նախնական բժշկական զննություն և դրա վերաբերյալ պատշաճ մասնագիտական արձանագրում չի իրականացվում: Վերոգրյալից ակնհայտ է, որ շտապ բժշկական օգնության ծառայության բժիշկները չեն արձանագրում օբյեկտիվ բժշկական զննության արդյունքների ամբողջական պատկերը, երբեմն չեն նկարագրվում վնասվածքների հստակ անատոմիական տեղակայումը, գույնը, մակերեսը և վնասվածքը նկարագրող այլ չափանիշները: Նախնական զննության մեջ վերոնշյալ չափանիշների արձանագրման բացակայությունը չի բխում նախնական զննության հիմնական նպատակներից և պահանջներից: Արձանագրությամբ նախատեսվում են խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկված անձանց բժշկական զննության համար չափանիշներ: Դրա 175-րդ կետի համաձայն՝ զննություն իրականացնողը պետք է նշի վերաբերելի բոլոր դրական և բացասական տվյալները՝ գրանցելով մարդու սխեմատիկ պատկերի կիրառմամբ բոլոր վնասվածքների տեղակայումը և դրանց բնույթը: Այդ նպատակով Արձանագրության հավելվածով նախատեսված են հատուկ ձևաթղթեր, որոնք պարունակում են տղամարդու և կնոջ անատոմիական գծապատկերներ՝ նշումներ կատարելու համար համապատասխան ուղենիշներով:

Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը դեռևս գտնվում է շրջանառման փուլում՝ այս փուլում Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել Ոստիկանության ՁՊՎ-ներում համանման ձևաթղթերի և ուղեցույցների ներդրման հարցը: Ուստի, անհրաժեշտ է՝

ՁՊՎ-ներում առանձնացնել բժշկական զննության և բժշկական օգնության համար նախատեսված վայրն այլ նպատակային նշանակություն ունեցող սենյակներից.

ՁՊՎ-ների բուժզննության սենյակներն ապահովել լվացարանով և մշտական հոսող ջրով.

ազատությունից զրկված անձանց տրամադրել դեղորայք միայն բժշկական զննության և ցուցման պարագայում՝ այդ մասին գրառումներ կատարելով համապատասխան մատյանում.

կազմակերպել ԶՊՎ մուտք գործած յուրաքանչյուր անձի բժշկական զննությունը և դրա պատշաճ արձանագրումը (այդ թվում՝ բժշկական զննության իրականացման ժամը)՝ անկախ նրանց կողմից գանգատներ ներկայացնելու, զննության ենթարկվելու պահանջի կամ տեսանելի մարմնական վնասվածքների առկայության հանգամանքներից,
մշակել Ոստիկանության ԶՊՎ-ներում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արձանագրման ձևաթղթեր և համապատասխան ուղեցույցներ.
իրականացնել շտապ բժշկական օգնության ծառայության բժիշկների մասնագիտական վերապատրաստումներ՝ վնասվածքների պատշաճ արձանագրման վերաբերյալ:
5) Կապն արտաքին աշխարհի հետ. Ձերբակալված անձանց համար արտաքին աշխարհի հետ կապի պահպանումն ունի չափազանց կարևոր նշանակություն: Դրա դերը, հատկապես, կարևորվում է նրանով, որ ազատությունից զրկված անձինք չպետք է կորցնեն ազատության մեջ գտնվելու ընթացքում ձևավորած սոցիալական կապերը: Մշտադիտարկման արդյունքներով առաջարկվել է՝
ապահովել ազատությունից զրկված անձանց տեսակցությունների կազմակերպումն առանց ֆիզիկական շփման հնարավորությունը սահմանափակող ապակե միջնորմի.
ապահովել Արմավիր ԶՊՎ-ի տեսակցության սենյակում առկա հեռախոսների սարքինությունը՝ ազատությունից զրկված անձի և տեսակցողի շփումը պատշաճ կազմակերպելու համար.
Իջևանի և Դիլիջանի ԶՊՎ-ներում առանձնացնել տեսակցությունների համար նախատեսված սենյակն այլ նպատակային նշանակություն ունեցող սենյակներից.
բացառել Ոստիկանության ծառայողների ներկայությունն ազատությունից զրկված անձանց տեսակցությունների ժամանակ՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով միայն տեսողական հսկողություն.
«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի թիվ 574-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հավելվածում ազատությունից զրկված անձանց մերձավոր ազգականների հետ տեսակցությունների նկատմամբ սահմանել միայն տեսողական հսկողության պահանջ.
ԶՊՎ-ներում տաքսոֆոնն առանձնացնել տեսակցությունների համար նախատեսված սենյակից՝ ապահովելով ազատությունից զրկված անձանց՝ կոնֆիդենցիալ հեռախոսազրույց և տեսակցություն ունենալու հնարավորությունը.
հետևողական լինել տաքսոֆոնների անխափան աշխատանքին և ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի 116 հեռախոսահամարին անարգել զանգահարելու հնարավորությունը:

6) ԶՊՎ ծառայողների աշխատանքային պայմաններ ու տեխնիկական ապահովում. Մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի գործընթաց է, որը ենթադրում է այդ գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքների երաշխավորում, նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ապահովում և փոխադարձ հարգանք երաշխավորող հարաբերությունների հաստատում: Այս սկզբունքային մոտեցման բաղադրիչներից է իրավասու այն մարմինների աշխատակիցների, ծառայողների իրավունքների վիճակը, որոնք իրենց գործունեությամբ կոչված են իրականացնել հասարակության անդամների իրավունքների պաշտպանությունը: Նշվածը վերաբերում է նաև Ոստիկանության ծառայողներին, նրանց աշխատանքային պայմաններին ու սոցիալական երաշխիքներին, այդ թվում՝ աշխատավարձերին:

Շարունակում է չլուծված մնալ Ոստիկանության կողմից ձերբակալվածներին տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների հագեցման հարցը՝ ներառյալ այնպիսի հարմարեցումներով, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքների սպասարկման համար:

Ուստի, անհրաժեշտ է ԶՊՎ-ներում նախատեսել ծառայողների համար պատշաճ աշխատանքային պայմաններ, բարելավել նրանց սոցիալական երաշխիքների համակարգը,

ներառյալ՝ աշխատավարձը, ինչպես նաև ապահովել տրանսպորտայինն միջոցների համապատասխան հարմարեցումներով հագեցումը:

4. Դատարաններում ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահելու համար նախատեսված խցերի մշտադիտարկման արդյունքները

Նախորդ մասերի տրամաբանությամբ սույն մասում մշտադիտարկված դատարանների խցերում իրավունքների իրացման յուրաքանչյուր հարցի ներքո կներկայացվեն մշտադիտարկման արդյունքները՝ ըստ դատարանների առանձնահատկությունների: Այդպիսիով Պաշտպանը հնարավորություն կունենա ներկայացնելու խնդիրները ոչ թե անորոշ շարադրանքով, այլ կոնկրետ դատարանի կոնկրետ օրինակով՝ միաժամանակ ընթերցողին ընդհանուր պատկերացում տրամադրելով խնդիրների համակարգային բնույթի և դրանց մասշտաբների մասին: Սույն մասում Պաշտպանի առաջարկությունները կներկայացվեն խնդիրների ներկայացման հետ միասին:

Դատարանների խցերի մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրման առարկա են դարձվել ազատությունից զրկված անձանց ժամանակավոր պահման խցերի սանիտարահիգիենիկ վիճակն ու պահման պայմանները, ինչպես նաև տեղի են ունեցել առանձնազրույցներ դատարանների աշխատակազմերի ներկայացուցիչների և դատական կարգադրիչների հետ:

1) Պահման պայմաններ. Կատարված մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ Գյումրու նստավայրի ժամանակավոր պահման խցերը գտնվում են շենքի նկուղային հարկում, ինչի արդյունքում բնական լուսաթափանցելիության մակարդակը ցածր է: Դրա հետ մեկտեղ, խցերում արհեստական լուսավորություն առկա չէ, այն ապահովվում է միջանցքի լամպերի միջոցով: Խցերում որպես պատուհան ծառայում են բետոնե ծածկույթով փոսանման բացվածքները, որոնք կահավորված են ճաղավանդակներով և չունեն ապակե ծածկ: Նշվածը խնդրահարույց է հատկապես ցուրտ եղանակային պայմաններում խցերում պատշաճ ջերմային ռեժիմի ապահովման տեսանկյունից: Այցի ընթացքում Գյումրու նստավայրի խցերում բարձր է եղել նաև խոնավության մակարդակը, հատակին եղել են ջրի կուտակումներ, և առկա է եղել վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հրատապ անհրաժեշտություն: Աշտարակի նստավայրում առկա է եղել երկու խուց, որոնցից մեկում բացակայել է պատուհանը, ինչի հետևանքով հնարավոր չի եղել այնտեղ ապահովել բնական լուսավորություն և պատշաճ օդափոխություն: Այցերի ընթացքում արձանագրվել է նաև, որ Մարալիկի նստավայրի բոլոր երեք խցերում, ինչպես նաև Գյումրու նստավայրի չորս խցերից երկուսում բացակայել են նստարանները: Համեմատության համար հարկ է նշել, որ Մարալիկի և Ապարանի նստավայրերի խցերի պայմաններն առավել բարեկարգ են, և դրանց սանիտարահիգիենիկ վիճակն ու լուսաթափանցելիությունը գնահատվում են բավարար:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ դատարանների ժամանակավոր պահման որոշ խցերում խմելու ջրին հասանելիություն չի եղել՝ ծորակների բացակայության կամ անսարքության պատճառով: Այցերի ընթացքում արձանագրվել է նաև, որ մշտադիտարկված խցերում բացակայել են հիգիենիկ պարագաները, մասնավորապես՝ ուսումնասիրված բոլոր խցերում առկա չի եղել օճառ, իսկ հիգիենիկ թուղթ առկա է եղել միայն Ապարանի նստավայրում: Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) Մալթայի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում նշել է, որ ազատությունից զրկված անձինք դատարանների խցերում պետք է ունենան խմելու ջրի

հասանելիություն, իսկ խցերը պետք է լինեն ամբողջովին վերանորոգված ու պահվեն ապահով և պատշաճ վիճակում[140] :

Մշտադիտարկված բոլոր դատարանների շենքերը, խցերը և դրանց սանհանգույցները հարմարեցված չեն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին: Այսպիսի պայմանները Պաշտպանը համարել է բացարձակ անընդունելի և նշել, որ խախտում են մարդու նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ու նրա մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

2) Սնունդ և տեղափոխում. Գործնականում հաճախ խնդիրներ են առաջանում կապված այն հարցի հետ, թե որ պետական մարմնի վրա պետք է դրվի կալանավորված անձանց դատարանի խցերում տեղաբաշխելու, պահման բավարար պայմաններ, ներառյալ՝ պատշաճ սնունդ և բուժօգնություն ապահովելու, նրանց առողջության պահպանման, ինչպես նաև դատարանի շենքում վերջիններիս անվտանգությունն ապահովելու պարտականությունը: Հատկանշական է, որ ՀՀ կառավարության կողմից 2009 թվականի ապրիլի 2-ին ընդունված «Ձերբակալված և կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 351-Ն որոշումը Ոստիկանության ուղեկցող գումարտակի ծառայողների համար չի նախատեսում կալանավորված անձանց դատարանի խցերում տեղաբաշխելու, պահման բավարար պայմաններ, ինչպես նաև դատարանի շենքում նրանց անվտանգությունն ապահովելու պարտականություն: Համաձայն վերոնշյալ որոշման 70-րդ կետում տեղ գտած կարգավորումների՝ դատարան ժամանելով՝ պահակախմբի ավագը դատարանի աշխատակազմի ղեկավարին հայտնում է ձերբակալված կամ կալանավորված անձանց բերելու մասին, որից հետո ձերբակալված կամ կալանավորված անձինք ուղեկցվում են վերջիններիս պահելու համար նախատեսված դատարանի խցերը: Նախքան նշված անձանց խցերում տեղավորելը, խցերը պարտադիր կերպով զննվում են: Նշված կարգավորումները վկայում են այն մասին, որ Ոստիկանության ուղեկցող ստորաբաժանման գործառույթներն ավարտվում են կալանավորված անձին դատարանի շենք տեղափոխելով: Նույն որոշման 72-րդ կետը սահմանում է, որ դատական նիստերի ընթացքում հասարակական կարգն ու դատավարության մասնակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով դատարանի միջնորդությամբ կամ, ըստ անհրաժեշտության, նախապես մշակվում և գործի է դրվում հատուկ պլան, որը նախատեսում է ուժեղացված տարբերակով ծառայության կազմակերպում, պահակետերի և վերակարգերի նշանակում, ուժերի և միջոցների հաշվարկ, ինչպես նաև դատարանի դահլիճում քաղաքացիական հագուստով ոստիկանության ծառայողների ներկայություն: Հատուկ պլանը մշակում է ուղեկցող ստորաբաժանման հրամանատարը: Դատարանի նախագահի հետ համաձայնեցնելուց հետո այն հաստատում է ոստիկանության Երևան քաղաքի (մարզային) վարչության պետը: Այսինքն՝ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ծառայողները դատարաններում (դատական նիստերին) կարող են ներկա գտնվել միայն հասարակական կարգի պահպանության ու դատավարության մասնակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով: Ստացվում է, որ կալանավորված անձանց դատարանի խցերում տեղաբաշխելու, դատարանի շենքում վերջիններիս անվտանգությունը և պահման բավարար պայմաններն ապահովելու հարցերը մնում են բաց: Ներկայում այս բոլոր գործառույթները փաստացի իրականացվում են Ոստիկանության ուղեկցող ստորաբաժանման ծառայողների կողմից: Արդյունքում՝ մեծանում են մարդու իրավունքների խախտման ռիսկերը պետության անկատար ընթացակարգերի պատճառով:

[140] Տե՛ս https://rm.coe.int/16806b26e8 կայքէջում, կետ 28:

Այսպիսով, ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի թիվ 351-Ն որոշման կարգավորումներից և գործող պրակտիկայից ելնելով՝ կարելի է արձանագրել, որ ազատությունից զրկված անձանց դատարանում ուղեկցելու, դատարանի շենքում նրանց անվտանգությունը և պահման բավարար պայմաններ, ինչպես նաև վերջիններիս առողջության պահպանումն ապահովելու մասով առկա է օրենսդրական բաց: Միաժամանակ, օրենսդրական հստակ կարգավորումների բացակայությունը հանգեցնում է ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման խնդիրների:

Հաշվի առնելով մշտադիտարկման արդյունքները՝ անհրաժեշտ է՝

դատարանների խցերում իրականացնել անհրաժեշտ վերանորոգման և մաքրման աշխատանքներ.

խցերում նախատեսել պատշաճ լուսավորություն.

բացառել առանց ապակե ծածկի պատուհանների առկայությունը.

Մարալիկի և Գյումրու նստավայրերի բոլոր խցերը կահավորել նստարաններով.

դատարանների խցերում նախատեսել սննդի ընդունման համար անհրաժեշտ պայմաններ.

Գյումրու և Ապարանի նստավայրերի խցերն ապահովել ջրի ծորակներով, իսկ Աշտարակի նստավայրի խցում տեղադրել լվացարան.

դատարանների խցերն ապահովել հիգիենիկ պարագաներով.

դատարանների խցերի սանհանգույցները բնակելի տարածքից առանձնացնել ամբողջական պատով և կահավորել դռներով.

դատարանների շենքերը, խցերը և դրանց սանհանգույցները հարմարեցնել տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին.

օրենսդրությամբ պատշաճ և հստակ կարգավորել ազատությունից զրկված անձանց դատարանի խցերում տեղաբաշխելու, պահման բավարար պայմաններ, ներառյալ՝ պատշաճ սնունդ և բուժօգնություն ապահովելու, նրանց առողջության պահպանման, ինչպես նաև դատարանի շենքում վերջիններիս անվտանգությունն ապահովելու հարցերը:

X. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ




Դիմում-բողոքներ սեփական նախաձեռնություններ՝ ըստ մարմինների և կազմակերպությունների (ըստ բողոքներում ներառված անձանց քանակի)
2021թ
2022թ.
1078
1708
1359
975
739
874
893
538
382
396
492
338
347
308
434
289
355
288
305
236
272
184
294
155
160
118
209
113
11084
8953
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Հարցերի նախարարությունը
ԵՐԵՎԱՆԻ քաղաքապետարան
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ նախարարությունը
ՔՐԵԱԿԱՆԱՐՈՂԱԿԱՆ ծառայությունը
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ նախարարությունը
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍՏԵ
ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
ՀԱՆՐԱՅԻՆ ծառայության ՈՒՂՂՈՒՄ գործող կաշխատակցություններ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ծառայությունը
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ նախարարության ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ նախարարությունը
ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ և ԿԱՇԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Դիմում-բողոքներ և սեփական նախաձեռնություններ՝
ըստ վարչատարածքային միավորների
(ըստ բողոքներում ներառված անձանց քանակի)
Երևան
40%
Գեղարքունիք
6%
Արմավիր
4%
Շիրակ
3%
Կոտայք
2%
Սյունիք
2%
Լոռի
2%
Արարատ
2%
Արագածոտն
0%
Տավուշ
0%
Վայոց ձոր
0%
Հասցե չպարունակող բողոքներ
39%
Երևան
Գեղարքունիք
Արմավիր
Շիրակ
Կոտայք
Սյունիք
Լոռի
Արարատ
Արագածոտն
Տավուշ
Վայոց ձոր
Հասցե չպարունակող բողոքներ

ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ



Վերականգնվել է **312** անձի իրավունք

Պաշտպանի ներկայացուցիչները Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում ապահովել են բերման ենթարկված ավելի քան 1176 անձի իրավունքների պաշտպանություն

25 ապրիլ - 10 հունիս, 2022թ.



ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ

850
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԻՐԱԶԵԿՈՒՄ

1002
ԴԻՄՈՒՄՆԵՐ/ԲՈՂՈՔՆԵՐ

30
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

1700
ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

25
ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՇԱՎՆԵՐ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

500
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ/ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

680
ՄԱՍՆԱԳԵՏ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է

76
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

58
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՏԻՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

22
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ-ՆԵՐ ԵՎ ԱՅՑԵՐ ՆԱԵՎ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ

30
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ, ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

996
ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐ

70
ԱՆՁ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ

1250
ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՔԱՆԱԿ

17
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՅՑԵՐ

Ստեղծվել է ՀՀ մարդու իրավունքների Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ:


ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ
«Աբովյան» 2 օր
«Արմավիր» 2 օր
«Գորիս» 1 օր
24 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՅՑԵՐ
ԽՈՇՈՐ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
Գյումրու հոգեկան առողջության կենտրոն
«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն
«Ավան» հոգեկան առողջության կենտրոն
ՁՊՎ
9
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԽՑԵՐ
6
75
դասընթաց ՁՊՎ-ում

XI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ՔՐԻՍՏԻՆՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ

(ՓԵՏՐՎԱՐ 2022Թ – ՀՈՒՆՎԱՐ 2023Թ)

1.	Փետրվարի 17, 2022	Սիվիլներթ	https://youtu.be/njpXFXUrWcA
2.	Մարտի 3, 2022	Արցախպրես	https://youtu.be/r4bce2zPY3w
3.	Մարտի 9, 2022	Հանրային հեռուստաընկերություն	https://youtu.be/ENSTZ15SuG8
4.	Մարտի 11, 2022	Ճանթ TV	https://youtu.be/lHQrcEkszAg
5.	Մարտի 21, 2022	1in.am	https://youtu.be/z7-JgF2p0Wc
6.	Մարտի 24, 2022	Rusarminfo	https://youtu.be/cphhcNp-vFo
7.	Մարտի 25, 2022	Հանրային հեռուստաընկերություն	https://youtu.be/HelGyOyYBGQ
8.	Մարտի 28, 2022	Սիվիլներթ	https://youtu.be/QIXLsV7lCp8
9.	Ապրիլի 5, 2022	News.am	https://youtu.be/uyXftphFv8U
10.	Ապրիլի 11, 2022	Հանրային հեռուստաընկերություն	https://youtu.be/VOxYI6ImVZ0
11.	Ապրիլի 15, 2022	1in.am	https://youtu.be/eEqa_jAD6Ps
12.	Ապրիլի 21, 2022	Ա1+	https://youtu.be/zn2nlgIRMeM
13.	Մայիսի 3, 2022	1in.am	https://youtu.be/ky7ILfh8rL8
14.	Մայիսի 4, 2022	Ամերիկայի ձայն	https://youtu.be/3JWrgQyAgVE
15.	Մայիսի 9, 2022	Ֆակտոր TV	https://youtu.be/t6M17Suk2EA
16.	Մայիսի 9, 2022	Հանրային Հեռուստաընկերություն	https://youtu.be/IKt8y5E8b2E
17.	Մայիսի 11, 2022	Սիվիլներթ	https://youtu.be/d5dZQbGl_FU
18.	Մայիսի 17, 2022	1in.am	https://youtu.be/h1icFow6JsU

19. Մայիսի 28, 2022	**Կենտրոն TV**	https://youtu.be/JeOC_8TptqE
20. Հունիսի 1, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/Iz3IVhOFDbw
21. Հունիսի 15, 2022	**Հոդված 3 ակումբ**	https://youtu.be/CnadyangmmM
22. Հունիսի 20, 2022	**1in.am**	https://youtu.be/EV01giHKgtg
23. Հունիսի 22, 2022	**Ամերիկայի ձայն**	https://youtu.be/nQ7k15KTbbk
24. Հուլիսի 2, 2022	**Ֆակտոր TV**	https://youtu.be/iAV2Hc-GkjI
25. Հուլիսի 3, 2022	**1in.am**	https://youtu.be/zjbWrSL8Y_0
26. Հուլիսի 12, 2022	**Xirat Media**	https://youtu.be/7Fs9P75MXjM
27. Հուլիսի 14, 2022	**24 TV**	https://youtu.be/KFgwIOVWLn4
28. Հուլիսի 15, 2022	**Թիվ 1 ստուդիա**	https://youtu.be/EDpdzKZFD6s
29. Հուլիսի 28, 2022	**1in.am**	https://youtu.be/IpuBOSS_OzQ
30. Հուլիսի 29, 2022	**Freenews**	https://youtu.be/thLWoCgtHhY
31. Օգոստոսի 8, 2022	**1in.am**	https://youtu.be/3UuGH1L4aNs
32. Օգոստոսի 31, 2022	**Armenia Today**	https://youtu.be/tfDYgx63N68
33. Օգոստոսի 31, 2022	**Կենտրոն TV**	https://youtu.be/84-Ri7DX2bE
34. Սեպտեմբերի 1, 2022	**Ալիք Մեդիա**	https://youtu.be/TqUF1qeFGgU
35. Սեպտեմբերի 7, 2022	**Ֆակտոր TV**	https://youtu.be/EmuCtiJ4zxU
36. Սեպտեմբերի 8, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/js43nqzHnjY
37. Սեպտեմբերի 8, 2022	**Ժողովուրդ օրաթերթ**	https://youtu.be/UBz6WXs7UGg
38. Սեպտեմբերի 9, 2022	**Ազատություն TV**	https://youtu.be/jnnPq_0abu4
39. Սեպտեմբերի 9, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/LrIiuBOvBq4
40. Սեպտեմբերի 14, 2022	**Le monde**	https://www.lemonde.fr/international/article/2022/09/14/retour-de-violences-entre-l-armenie-et-l-azerbaidjan_6141542_3210.html

41. Սեպտեմբերի 15, 2022	**Courrier.am**	https://www.courrier.am/fr/societe/entretien-avec-kristine-grigoryan-defenseur-armenien-des-droits-de-lhomme
42. Սեպտեմբերի 15, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/UNCO8pFQis4
43. Սեպտեմբերի 19, 2022	**Ազատություն TV**	https://youtu.be/QbPQMduMV58
44. Սեպտեմբերի 20, 2022	**Ձինուժ մեդիա (23-րդ րոպեից)**	https://youtu.be/F6VvYNC20G4
45. Սեպտեմբերի 20, 2022	**Կենտրոն TV**	https://youtu.be/AYRGdbJNsQc
46. Սեպտեմբերի 21, 2022	**Tempi**	https://www.tempi.it/cosi-l-azerbaigian-tortura-mutila-e-fa-a-pezzi-i-soldati-armeni-armenia/?fbclid=IwAR2H6_kmnhQix0r3Q_Tl2-idrje2cFCGN6RKUGx5qeizaVSLhLB3_ibXDXA
47. Սեպտեմբերի 21, 2022	**Le point**	https://www.lepoint.fr/monde/l-armenie-de-nouveau-sous-la-menace-de-l-azerbaidjan-20-09-2022-2490716_24.php#11
48. Սեպտեմբերի 23, 2022	**Նոյյան Տապան TV**	https://youtu.be/oCMZfaLkHzQ
49. Սեպտեմբերի 23, 2022	**24 TV**	https://youtu.be/lGztN1xq9Ks
50. Սեպտեմբերի 22, 2022	**Հոդված 3 ակումբ**	https://youtu.be/dpPrpUP9s-g
51. Սեպտեմբերի 28, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/xwFow59_mGM
52. Հոկտեմբերի 3, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/Q1EUIorSc5o
53. Հոկտեմբերի 4, 2022	**Al - Aan TV**	https://bit.ly/3HiImUd
54. Հոկտեմբերի 6, 2022	**Ֆակտոր TV**	https://youtu.be/Ao3cv9BZh6k
55. Հոկտեմբերի 7, 2022	**Մամուլի ասուլիս (Ա1+)**	https://youtu.be/sG509Y4rZeQ
56. Հոկտեմբերի 10, 2022	**Sputnik Արմենիա**	https://www.facebook.com/SputnikArmeniaAgency/posts/pfbid02CvvVuS94kvb1kEFYeTcNyffskpnngWcxP37rG2rMUAw3bUvsPeoPSBqsXMujdyfrl
57. Հոկտեմբերի 16, 2022	**GB news**	https://youtu.be/55_H6Q733y4

58. Հոկտեմբերի 17, 2022	**Le monde**	https://www.lemonde.fr/international/article/2022/10/17/l-azerbaidjan-face-aux-crimes-de-guerre-de-ses-soldats-contre-des-armeniens_6146082_3210.html
59. Հոկտեմբերի 17, 2022	**Radio France**	https://www.radiofrance.fr/franceculture/podcasts/grand-reportage/grand-reportage-emission-du-vendredi-16-decembre-2022-2995887?fbclid=IwAR1T8RL8KyF_iY9c5Uqv5k20t4tds6isvyrtIDZaYzMg310om9wxh9StEfk
60. Նոյեմբերի 3, 2022	**Le Figaro**	https://www.lefigaro.fr/international/entre-erevan-et-bakou-le-fosse-des-crimes-de-guerre-20221125?fbclid=IwAR2oI0fZBW78ItWaL_RKFlkpJrZQ2rnc1HZE0Mw65LIS7cZyRPOs4y2L-hQ
61. Նոյեմբերի 5, 2022	**Paris Match**	http://cloud.ombuds.am/index.php/s/rE8twZR2GicoMEN
62. Նոյեմբերի 12, 2022	**Irakanum.am**	https://www.facebook.com/watch/?v=677987700387897
63. Նոյեմբերի 14, 2022	**Revue Des Deux Mondes**	https://www.revuedesdeuxmondes.fr/reportage-armenie-menacee-epuration-ethnique/?fbclid=IwAR22LuGRGekU9qV-jodJUp9z6QcjLUL4HvGk7qYCMjNndLcx_dxmup81tVQ
64.	**Le Point**	https://www.lepoint.fr/monde/l-armenie-de-nouveau-sous-la-menace-de-l-azerbaidjan-20-09-2022-2490716_24.php?fbclid=IwAR3QUaUTZQ0eXbLeoIAr0WjYOL8s_Jt76DB4eLupdC_mqduyiIn2bLNWeH4#11
65.	**Le Monde**	https://www.lemonde.fr/international/article/2022/10/17/l-azerbaidjan-face-aux-crimes-de-guerre-de-ses-soldats-contre-des-armeniens_6146082_3210.html?fbclid=IwAR1WkkAiiMr3bsTdNrJLF9vh8HifhwqdwxJnsDNAMRf1x35yByRSTo3ivuo
66. Նոյեմբերի 17, 2022	**1in.am**	https://youtu.be/cZRR4qiLY9U
67. Նոյեմբերի 30, 2022	**Sputnik Արմենիա**	https://armeniasputnik.am/20221130/stambuljan-kvonvencia-mipi-hamar-karevvor-gvortsiq-e-yst-zvohrabjani-miaserakanutjan-qarvoz-52035682.html
68. Դեկտեմբերի 6, 2022	**BBC**	https://www.bbc.com/russian/features-63872328?fbclid=IwAR3b0FpdyKPdUXrxfnA7BRC1d1_TUkj5s5pDT_gOL7uQkC34SxM1fgb1InE
69. Դեկտեմբերի 10, 2022	**Ամերիկայի ձայն**	https://www.amerikayidzayn.com/a/6870416.html?fbclid=IwAR3h8TxYnXs8imcTdi65guL_q6372n6voxculEenuAmcq6WaWcY4Zu0alzg

70. Դեկտեմբերի 16, 2022	**EVN Report**	https://evnreport.com/podcasts/evn-talks/the-legal-and-humanitarian-implications-of-the-lachin-blockade/?fbclid=IwAR09dAH4Yu4SSuSGOP1Jl8oOQrp8LrlwoGJ7PFn_eljVmtRlcnmM2Umhr-c
71. Դեկտեմբերի 16, 2022	**Մեդիա կենտրոն**	https://youtu.be/k2e308a6ehw
72. Դեկտեմբերի 16, 2022	**Արմենպրես**	https://armenpress.am/arm/news/1099827.html?fbclid=IwAR0uJRabTepqmlNzkAVzl43A7xWpsqEcDmXwOcJIRG5DSeGj90T_tLMqvVQ
73. Դեկտեմբերի 19, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://youtu.be/8we8WSzWvSE
74. Դեկտեմբերի 23, 2022	**Գալա TV**	https://youtu.be/PoTh5r81nrI
75. Դեկտեմբերի 23, 2022	**La nouvelle république**	https://www.lanouvellerepublique.fr/france-monde/blocus-du-corridor-de-latchin-bakou-engage-l-arme-de-la-faim?fbclid=IwAR0couB4jcPPiekwHHq6MwlE3V0fZJmfXKvUxjjrn-z5IZZmhmN1lAebvPE
76. Դեկտեմբերի 27, 2022	**Ազատություն TV**	https://www.facebook.com/watch/live/?ref=watch_permalink&v=3469693753268158
77. Դեկտեմբերի 27, 2022	**Հանրային հեռուստաընկերություն**	https://bit.ly/3wxBvA9
78. Դեկտեմբերի 27, 2022	**Հանրային ռադիո**	https://bit.ly/3Xoswgb
79. Հունվարի 4, 2023	**Ժողովուրդ օրաթերթ**	https://youtu.be/Zx-Hrknym3c
80. Հունվարի 5, 2023	**1in.am**	https://youtu.be/5jGtNo3y8WM

ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. Արևների օրվա շրջանակում ՄԻՊ աշխատակազմի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ/ ԺՊ Մոնիկա Սարգսյանի հարցազրույցը Ա-ԹԻՎԻ Հեռուստաընկերությանը	21.03.22	https://www.youtube.com/watch?v=Ucj9QGelIQQ
2. Աուտիզմի միջազգային օրվան նվիրված հարցազրույց ՄԻՊ աշխատակազմի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ/ ԺՊ Մոնիկա Սարգսյանի հետ Հանրային	04.04.22	https://www.youtube.com/watch?v=qnHRVyxFtNc

հեռուստաընկերության «Առավոտ լուսո» ծրագրում:		
3. Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարի եթերում անդրադարձել է իրավունքների պաշտպանության ոլորտում ՄԻՊ աշխատակազմի լիազորություններին- ՄԻՊ աշխատակազմի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ/ ԺՊ Մոնիկա Սարգսյան	26.04.22	https://www.youtube.com/watch?app=desktop&v=WtRXGxeiI60&fbclid=IwAR0fSamPfsg88J8c-uny_aqWDApsfbWA3DHkFNodmqc44wPzT5o8QWqaiDs
4. Ռեպորտաժ Հանրային հեռուստաընկերության հետ- Մեկ պատուհան. Կենսաթոշակի անցնելու կարգը և տեսակները- ՄԻՊ աշխատակազմի սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչության պետ Սյուզաննա Սարգսյան	17.05.22	https://www.youtube.com/watch?v=Y899e9TTZSo
5. Քննարկում՝ «Հոդված 3» ակումբում- Չլուծված խնդիրներ. Որքանով են պաշտպանված երեխաների իրավունքները Հայաստանում - ՄԻՊ աշխատակազմի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ/ ԺՊ Մոնիկա Սարգսյան, ՄԻՊ ներկայացուցիչ Լաուրա Կարապետյան	02.06.22	https://www.youtube.com/watch?v=bldVBO1VHVc
6. Առաջին ալիքի տաղավար- Զրույց՝ «Առավոտ լուսոյի» տաղավարում երեխաների միջազգային օրվան նվիրված- Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անահիտ Խաչատրյան	02.06.22	https://www.youtube.com/watch?v=wHhOhrrAIa8
7. Գյումրի-Քննարկում՝ «Հուսալի և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցումը» ծրագրի շրջանակներում- ՄԻՊ աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավար Քրիստինե Առաքելյան	04.06.22	https://www.youtube.com/watch?v=ZXUNWdzDj5w
8. Տավուշ թիվի -Երեխայի իրավունքները Տավուշի մարզում Հարցազրույց-Տավուշի ստորաբաժանման ղեկավար Էրիկ Ծերունյանը	02.07.22	https://www.youtube.com/watch?v=syfhkM0to-U
9. Արմենիա թիվի, «Սուր անկյուն»- գործազրկության վերաբերյալ ռեպորտաժ-ՄԻՊ աշխատակազմի	03.07.22	https://www.youtube.com/watch?v=raazbAjrldo

սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչության պետի տեղակալ-Մարիամ Մաշինյան		
10. «Հոդված 3» ակումբում Հանրային քննարկում՝ «Կալանքը որպես խափանման միջոց համատարած կիրառման խնդիրներն ու առողջապահական իրավունքի հասանելիությունը» թեմայով—ՄԻՊ աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Լաուրա Գասպարյան	19.07.22	https://www.youtube.com/watch?v=sgreTj5R744
11. Մեդիա կենտրոն-քննարկում- Քրեակատարողական հիմնարկներում ինչպե՞ս են պաշտպանվում կալանավորների՝ բժշկական ծառայությունից օգտվելու իրավունքները թեմայով- ՄԻՊ աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Լաուրա Գասպարյան	20.07.22	https://www.facebook.com/mediacenterarmenia/videos/342321678107781/
12. Հարցազրույց՝ Հանրային հեռուստաընկերության հետ- ՄԻՊ-ին առընթեր նոր հասարակական խորհուրդ է ձևավորվում թեմայով, Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անահիտ Խաչատրյան, ՄԻՊ ներկայացուցիչ Լաուրա Կարապետյան	29.08.22	https://www.youtube.com/watch?v=LFtbR_LpSZ8
13. «Մեդիա կենտրոնի» տաղավար. Քննարկում- 24 միլիոն դրամ. «բանակից ազատվելու գի՞ն», թե՞ պրոֆեսիոնալ բանակի գրավական- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Հրանտ Ջիլավյան	30.08.22	https://www.youtube.com/watch?v=86WN4WZBzhw
14. Հարցազրույց՝ «Ճանթ»-ի հետ- 1 զոհ, 7 վիրավոր քաղաքացիական անձանց շրջանում և նախնական 10 գերի. ամփոփվում է սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական հարձակման	16.09.22	https://www.youtube.com/watch?v=XLW_6ogSOJM

հետևանքները- ՄԻՊ աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ Աննա Կարապետյան		
15. Ռեպորտաժ՝ Factor TV-ի հետ - Սոթքի դպրոցը թիրախավորվել է. Ադրբեջանը խաթարել է 25 հազար աշակերտի կրթության իրավունքը- Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անահիտ Խաչատրյան	17.09.22	https://www.youtube.com/watch?v=NXrutcfemuQ
16. Հարցազրույց՝ «Լրատվական ռադիոյի» հետ- Ադրբեջանական կողմից գերեվարման պաշտոնական հաստատումներ դեռևս չկան. «Թարմ ուղեղով»՝ Հրանտ Ջիլավյանի հետ- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Հրանտ Ջիլավյան	20.09.22	https://lratvakan.am/details/51500/am/
17. Քննարկում՝ «Մեդիա կենտրոնում»- Պատերազմական հանցագործություն.Ադրբեջանին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավոր ուղիներ - ՄԻՊ աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Լաուրա Գասպարյան	23.09.22	https://www.youtube.com/watch?v=ZJ0GPaAnC8w
18. Հարցազրույց «Լուրեր»-ին- ՄԻՊ գրասենյակը Ադրբեջանի ագրեսիայի հետևանքները ներկայացրել է միջազգային հանրությանը - ՄԻՊ աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ Աննա Կարապետյան	26.09.2022	https://www.youtube.com/watch?v=Vo3dznryaF0
19. Հարցազրույց՝ «Սուր անկյուն»-ի հետ- Ադրբեջանական ագրեսիայի հետևանքները- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Հրանտ Ջիլավյան	09.10.22	https://www.youtube.com/watch?v=SwAAJFVCVi8
20. Հարցազրույց Արմենիա թիվի «Սուր անկյուն»- Հաշմանդամության սահմանման չափորոշիչները,		https://www.youtube.com/watch?v=PDJ20LiCIvo&feature=youtu.be

զինվորական հաշմանդամություն ունեցող անձինք, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Անի Օհանջանյան		
21. «Հոդված 3» ակումբ Գերությունից՝ քննչական մարմիններ. հայրենադարձված զինծառայողների վերականգնողական խնդիրները. քննարկում- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Հրանտ Ջիլավյան	08.11.22	https://www.youtube.com/watch?v=75Z1Z6QT0DM
22. Հարցազրույց՝ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» լրատվականի հետ- ՄԻՊ գրասենյակը Երևանի «Մանկան տանը» խախտումներ է արձանագրել- Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անահիտ Խաչատրյան	11.11.22	https://www.youtube.com/watch?v=um57oQLU7qk
23. Հարցազրույց՝ «Ազատության» հետ- Ծե՞ծ, թե՞ զսպում հոգեբուժարանում. կողմերը պատմում են բոլորովին տարբեր պատմություններ--ՄԻՊ աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Լաուրա Գասպարյան	18.11.22	https://www.youtube.com/watch?v=UzpA3CfAeso
24. Հարցազրույց Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» լրատվականի հետ -Երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերի հասարակական խորհուրդ է ստեղծվել- Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անահիտ Խաչատրյան	22.11.22	https://www.youtube.com/watch?v=ZoEIXMSjwqc&t=2s
25. Հարցազրույց՝ Կենտրոն հեռուստաընկերության հետ-Կնոջ նկատմամբ բռնության դեպքի վերաբերյալ, քրեական գործը, և ՄԻՊ-ի աշխատանքը- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության	29.11.22	https://www.youtube.com/watch?v=XAgM2NgxbxE

դեպարտամենտի ղեկավար Հրանտ Ջիլավյան		
26. Հարցազրույց -Սիվիլնեթ - Մտահոգիչ իրավիճակ հոգեբուժարաններում և բանտերում. զրույց ՄԻՊ ներկայացուցչի հետ - ՄԻՊ աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Լաուրա Գասպարյան	29.11.22	https://www.youtube.com/watch?app=desktop&v=jx5KY6VHVmQ
27. Ռեպորտաժ-Արարատ թիվի- Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված այցի վերաբերյալ- ՄԻՊ-ի ներկայացուցիչների այցը՝ Արարատի մարզ	10.12.22	https://www.youtube.com/watch?v=4J-n93STHDM
28. Ռեպորտաժ-Սյունիք թիվի-ՄԻՊ ներկայացուցիչները մարզերում էին- ՄԻՊ աշխատակազմի քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար-Վլադիմիր Հովհաննիսյան	10.12.22	https://www.youtube.com/watch?v=-wR_QKiiCpE
29. Ռեպորտաժ- Ցայգ թիվի- Ընդունելություն և խորհրդատվություն Արթիկում՝ ՄԻՊ աշխատակազմի կողմից- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության պետ Արամ Մինասյան	10.12.22	https://www.youtube.com/watch?v=EuleM1eQZrM&t=11s
30. Ռեպորտաժ-Կոտայք թիվի- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը ՄԻՊ ներկայացուցիչները եղել են Ճամբարակում- Գեղարքունիքի ստորաբաժանման ղեկավար Հայկ Խաչատրյան	10.12.22	https://www.youtube.com/watch?v=dg_ejMEQVKw
31. Հարցազրույց՝ Ipress.am-ի հետ- Հայաստանը դեռ ընդունում է ընտանեկան ծեծը- ՄԻՊ աշխատակազմի հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ղեկավար- Թագուհի Հարությունյան	12.12.22	https://www.youtube.com/watch?v=2nc6wqtIeq4
32. Հարցազրույց Հանրային հեռուստաընկերությանը -«Լուրեր»- Հաշմանդամություն ունեցող կանայք՝ ընդդեմ բռնության- ՄԻՊ խորհրդական Մոնիկա Սարգսյան	15.12.2022	https://www.youtube.com/watch?v=Tzai3bUtDPM

33. Հարցազրույց Հարցազրույց Հանրային հեռուստաընկերությանը - «Լուրեր»- - Խթանել ներառականությունը. ինտերակտիվ թատրոն՝ ՄԻՊ գրասենյակում- ՄԻՊ խորհրդական Մոնիկա Սարգսյան	17.12.22	https://www.youtube.com/watch?v=CK-u6sX3KlU
34. Հարցազրույց՝ Հանրային հեռուստաընկերությանը -«Լուրեր»- Ավան» հոգեկան առողջության կենտրոնում թերություններ են արձանագրվել- ՄԻՊ աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Լաուրա Գասպարյան	21.12.22	https://www.youtube.com/watch?v=6IN8l6Rk5W0
35. Հարցազրույց՝ Հանրային հեռուստաընկերությանը -«Լուրեր»- Պաշտպանի գրասենյակ. ՄԻՊ-ն ուսումնասիրել է սեպտեմբերի ռազմական գործողությունների վերաբերյալ բոլոր դիմում բողոքները- ՄԻՊ աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Հրանտ Ջիլավյան	22.12.22	https://www.youtube.com/watch?v=a5PEAWGqvQA

ՀԱՎԵԼՎԱԾ 2.ՊԱՇՏՊԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ

1. «Աբովյան» ՔԿՀ

- Ազատությունից զրկված անձանց տրամադրել պատշաճ որակի անկողնային պարագաներ.
- իրականացնել մեկուսարանում պատժախցերի վերանորոգման աշխատանքներ. վերանորոգման աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի անարգել ապահովվի դեպի խցեր մուտքն ու ելքը.
- իրականացնել կանանց տեղամասի կացարանում ձևափոխման այնպիսի աշխատանքներ, որոնք կապահովեն օրենսդրությամբ սահմանված թվից ոչ ավել ազատությունից զրկված անձ պահելու հնարավորություն.
- «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների

համար ապահովել իրենց կարիքներին համարժեք միջավայր և պահման առանձնահատուկ պայմաններ.

- նախատեսել և կահավորել առանձնացված խաղահրապարակ և կանաչապատ զբոսաբակ մինչև երեք տարեկան երեխաների համար.
- առանձնացնել և պատշաճ կահավորել խուց (կացարան) հղի և իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանց համար.
- նախատեսված խցերի և կացարանների սանհանգույցներն ու լոգարանները հարմարեցնել հղի կնոջ և մինչև երեք տարեկան երեխաների առանձնահատուկ պահանջներին, այն է՝ ապահովել տաք ջրով, զուգարանակոնքով կահավորված սանհանգույցով, լոգասենյակով և առաջին անհրաժեշտության այլ պարագաներով.
- նախատեսել երեխաների զարգացման համար անհրաժեշտ խաղեր և պարագաներ, ինչպես նաև ծրագրեր:
- քայլեր ձեռնարկել Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Աբովյան» ստորաբաժանումը (այսուհետ՝ Ստորաբաժանում) «ընտանեկան բժիշկ» մասնագիտացմամբ բժշկի ներգրավման ուղղությամբ կամ Ստորաբաժանման բժիշկներին ընդգրկել ընտանեկան բժշկության վերապատրաստման դասընթացներում.
- ազատությունից զրկված անձանց գանգատների դեպքում բժշկական զննությունը կազմակերպել բժշկի կողմից և դեղորայքային նշանակումներն իրականացնել միայն վերջինիս ցուցմամբ.
- կանանց տեղամասի բժշկական սպասարկման բաժանմունքն ապահովել հոսող ջրով և սանհանգույցով.
- մեկուսարանում և կանանց տեղամասում իրականացնել բժշկական սպասարկման համար նախատեսված սենյակների վերանորոգման աշխատանքներ.
- բացառել խոտանման ենթակա դեղերի առկայությունը Ստորաբաժանումում և սահմանել դրանց ոչնչացման հստակ մեխանիզմներ՝ պահպանելով օրենքով սահմանված ընթացակարգերը.
- ապահովել բժշկական թափոնների հավաքման և փոխադրման օրենքով սահմանված հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների պահպանումը. մշակել Ստորաբաժանումում բժշկական թափոնների հավաքման, պահման և փոխադրման հստակ մեխանիզմներ և վերոգրյալի կապակցությամբ իրականացնել բժշկական անձնակազմի վերապատրաստումներ.
- քայլեր ձեռնարկել ծնողների հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև երեք տարեկան երեխաներին անհրաժեշտ առաջին օգնության դեղամիջոցներով Ստորաբաժանման դեղորայքային ֆոնդը համալրելու ուղղությամբ.
- Ստորաբաժանման կաբինետները համալրել ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1936-Ն որոշման հավելված 3-ով նախատեսված պարագաներով և գործիքներով.
- պատշաճ իրականացնել ազատությունից զրկված անձանց դիսպանսեր հաշվառումը.
- դիսպանսեր հաշվառման վերցված ազատությունից զրկված անձանց նկատմամբ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացնել ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-ն որոշմամբ սահմանված լաբորատոր-գործիքային հետազոտությունները և նեղ մասնագիտական խորհրդատվությունները.

- մշակել ազատությունից զրկված անձանց բժշկական միջամտություններին գրավոր իրազեկված համաձայնություն տալու ընթացակարգեր և ձևաթղթեր՝ բացառելով առանց անձի գրավոր համաձայնության բժշկական միջամտությունների իրականացումը.
- ազատությունից զրկված անձին յուրաքանչյուր անգամ հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու պարագայում՝ ստանալ անձի գրավոր իրազեկված համաձայնությունը, իսկ դրանից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկել ոչ հոժարակամ բուժում սկսելու անհրաժեշտության հարցը.
- ազատությունից զրկված անձանց մոտ հիվանդությունների կանխարգելման նպատակով արդեն իսկ մշակված տարեկան կանխարգելիչ միջոցառումներն իրականացնել ամբողջական ծավալով.
- քրեակատարողական հիմնարկն ապահովել անհրաժեշտ և բավարար քանակի դեղամիջոցներով և բժշկական պարագաներով.
- կատարելագործել ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դեղորայքով ապահովելու գործընթացը՝ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ դեղերի ցանկի ընդլայնման, դրանց քանակի ավելացման և դեղերի ձեռք բերման այլընտրանքային մեխանիզմների ներդրման միջոցով.
- ազատությունից զրկված անձանց կողմից սեփական կամ մերձավոր ազգականների միջոցների հաշվին ձեռք բերված դեղամիջոցները քրեակատարողական հիմնարկ ընդունել բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով.
- ապահովել ազատությունից զրկված անձանց նախնական բժշկական զննության պատշաճ պայմաններ.
- աշխատանքային օրերին և ժամերին ազատություն նախնական բժշկական զննությունը կազմակերպել բժիշկի կողմից.
- ենթադրյալ խոշտանգման դեպքերում իրականացնել ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական զննություն և ապահովել դրա պատշաճ արձանագրումն ու օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապահ մարմիններին դրանց ներկայացումը.
- իրականացնել հսկողություն ազատությունից զրկված անձանց տրամադրվող ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժինների պահպանման նկատմամբ.
- քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ճաշացանկերը հաստատել միայն ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժինների առկայության դեպքում,
- քայլեր ձեռնարկել մասնավոր ընկերության կողմից ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի անվտանգության, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժինների պահպանման նկատմամբ վերահսկման մեխանիզմների և դրանց օրենսդրական կարգավորումների ներդրման ուղղությամբ.
- ազատությունից զրկված կանանց հետ մինչ երեք տարեկան երեխաներին ապահովել օրենսդրությամբ սահմանված սննդի համապատասխան չափաբաժիններով և տեսականիով.
- ազատությունից զրկված անձանց լոգանքի պատշաճ կազմակերպման նպատակով լոգասենյակներում իրականացնել համապատասխան վերանորոգման աշխատանքներ.

- ապահովել լոգասենյակների պատշաճ կահավորումը և լոգանքի տրամադրումը.
- ապահովել լվացքի պատշաճ կազմակերպումը.
- նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսելով շաբաթական առնվազն 2 անգամ լոգանքի հնարավորություն՝ ելնելով ազատությունից զրկված կանանց ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունից և յուրահատկություններից.
- «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի զբոսաբակերում ստեղծել բացօթյա զբոսանքի լիարժեք հնարավորություն, այդ թվում՝ ներառելով անբարենպաստ եղանակային պայմաններից պատսպարվելու պատշաճ ծածկեր.
- քրեակատարողական հիմնարկում նախատեսված զբոսանքի վայրերը կահավորել մարմնամարզությամբ, խաղերով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պարագաներով.
- մեկուսարանի մարզասրահում իրականացնել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ՝ այն կահավորելով նոր մարզասարքերով.
- անազատության մեջ գտնվող անձանց համար կազմակերպել պարբերական, համակարգված և նպատակաուղղված դասընթացներ ու միջոցառումներ (կրթական, մշակութային, սպորտային և այլն).
- մշակութային միջոցառումների պատշաճ կազմակերպման և իրականացման նպատակով դահլիճում իրականացնել վերանորոգման աշխատանքներ.
- բարելավել գրադարանում պահվող գրքերի պահման պայմանները.
- բարձրացնել զբաղվածության մակարդակը՝ ազատությունից զրկված անձանց ներգրավելով տարբեր բնույթի նպատակային զբաղմունքներում (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն):
- քայլեր ձեռնարկել դեպի զբոսաբակեր տանող աստիճանավանդակը տեղաշարժման դժվարություններ ունեցող, ինչպես նաև մանկահասակ երեխաների կարիքներին հարմարեցնելու համար.
- ապահովել տեսակցության եկած անձանց առանձնանալու հնարավորությունը միաժամանակյա կարճատև տեսակցությունների կազմակերպման դեպքում.
- երկարատև տեսակցության սենյակներում, այդ թվում՝ դրանց սանհանգույցներում ապահովել պատշաճ պայմաններ.
- ապահովել երկարատև տեսակցության եկած անձանց, այդ թվում՝ անչափահասների համար նախատեսել զբոսանքի դուրս գալու հնարավորությամբ.
- քրեակատարողական հիմնարկի մանկական սենյակում իրականացնել կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ՝ այն ապահովելով տարբեր տարիքային խմբերի երեխաների համար խաղալիքներով և պարագաներով.
- քայլեր ձեռնարկել ազատությունից տաքսոֆոնների սակագները նվազեցնելու ուղղությամբ.
- ազատությունից զրկված օտարերկրացի անձանց իրավունքների պաշտպանության համար ապահովել վերջիններիս և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջև պատշաճ հաղորդակցվելու հնարավորությունը՝ թարգմանիչներ ներգրավելու, զրուցարաններ մշակելու, թարգմանչական հատուկ սարքեր ձեռք բերելու կամ քրեակատարողական համակարգի աշխատակիցների համար համապատասխան օտար լեզուների ուսուցման դասընթացներ կազմակերպելու միջոցով.

- կազմակերպել հայերեն լեզվին չտիրապետող ազատությունից զրկված անձանց հետ հաղորդակցությունը բժշկական օգնության տրամադրման և սպասարկման ընթացքում.
- ազատությունից զրկված օտարերկրացի անձանց հասկանալի լեզվով պատշաճ իրազեկել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին՝ դրանք թարգմանելով անհրաժեշտ համապատասխան լեզուներով.
- կալանավորվածներին պահելու վայրերի և պատիժ կատարող հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին համապատասխան որոշման մշակման փուլում նախատեսել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց տեսազանգի հնարավորությունից օգտվելու ողջամիտ հաճախականություն և տևողություն.
- բացառել քրեակատարողական հիմնարկ հանձնուքներով ընդունվող սննդի մեխանիկական միջոցներով ստուգման պրակտիկան.
- քրեակատարողական հիմնարկում աշխատող հոգեբանների համար նախատեսել հոգեբանական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պատշաճ կահավորված սենյակներ.
- իրականացնել ախտորոշիչ փաթեթների համալրում՝ անձի՝ առավել բազմակողմանի ուսումնասիրության նպատակով.
- ապահովել մասնագետների կողմից առկա փաստաթղթերի, դատապարտված և կալանավորված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների պատշաճ, բովանդակային լրացման կարգը.
- ձևավորել միջմասնագիտական համագործակցության մշակույթ և մշակել այդ համագործակցության ձևաթղթային համակարգ.
- մշակել մեխանիզմներ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալների և նրանց երեխաների հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ.
- մշակել հոգեբանների աշխատանքային գործունեությունը կարգավորող ընթացակարգեր, վերանայել հոգեբանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ անդրադառնալով նաև նրանց սոցիալական երաշխիքներին, այդ թվում աշխատավարձին.
- բացասական հակում ունեցող անձանց հետ իրականացնել հակումների նվազեցման աշխատանքներ և դրանք պատշաճ կերպով արձանագրել համապատասխան մատյանում.
- սահմանել «բացասական հակում» հասկացությունը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել որոշակի տեսակի հակումները (ինքնավնասման, ագրեսիայի և կոնֆլիկտայնության) բացասական հակումների շարքին դասելու հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով անձի անհատական ռիսկայնության գործոնը.
- անազատության մեջ գտնվող անչափահասների համար կազմակերպել պարբերական, համակարգված և նպատակաուղղված դասընթացներ ու միջոցառումներ (կրթական, մշակութային, սպորտային և այլն).
- ապահովել միայնակ պահվող ազատությունից զրկված անձանց՝ մարդկային անհրաժեշտ շփումը.
- նախատեսել ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված առանձին խցեր՝ ապահովելով պահման պատշաճ պայմաններ.
- քայլեր ձեռնարկել դպրոցի հիմնանորոգման և մաքրման աշխատանքներն իրականացնելու շուրջ.
- անազատության մեջ գտնվող անչափահասների համար կազմակերպել պարբերական, համակարգված և նպատակաուղղված դասընթացներ ու միջոցառումներ (կրթական, մշակութային, սպորտային և այլն).

- ապահովել քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց հետ անմիջական շփման մեջ գտնվող իգական սեռի քրեակատարողական ծառայողների բավարար հարաբերակցությունը.
- հիմնովին բարելավել քրեակատարողական համակարգի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգը, այդ թվում՝ աշխատավարձը.
- ապահովել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ծառայողների համար բավարար աշխատանքային պայմաններ, ներառյալ՝ բավարար պայմաններով աշխատասենյակներ, սննդի ընդունման պատշաճ պայմաններ, բավարար սանիտարահիգիենիկ պայմաններով սանհանգույցներ:

2. «Արմավիր» ՔԿՀ

- Կազմակերպել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց ՀՀ կառավարության թիվ 825-Ն որոշմամբ ամրագրված ազատությունից զրկված անձանց լիցենզավորված արտահիվանդանոցային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունում կցագրումը.
- պատշաճ կազմակերպել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց բժշկական հետազոտություններն ու նեղ մասնագիտական խորհրդատվությունները.
- քրեակատարողական հիմնարկի բժշկական մասնաշենքի հիվանդասենյակներն ապահովել օրենսդրությամբ սահմանված խցի կահավորման համար անհրաժեշտ իրերով (սեղան, նստարան, կենցաղային իրերի պահարան և այլն).
- քրեակատարողական հիմնարկի բժշկական մասնաշենքում, մասնավորապես բժշկական միջամտությունների սենյակներում, միջանցքում ապահովել պատշաճ սանիտարահիգիենիկ պայմաններ.
- Ստորաբաժանումում նախատեսել մայրապետի հաստիք.
- ազատությունից զրկված անձանց ապահովել բավարար քանակությամբ և տեսականիով անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով.
- բացառել բժշկական ցուցման առկայության դեպքում ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ դեղորայք չտրամադրելու անթույլատրելի պրակտիկան.
- քննարկել հոգեբույժի ամենօրյա կամ ավելի հաճախ այցելությունների հնարավորության հարցը քրեակատարողական հիմնարկ՝ հաշվի առնելով հիմնարկի ծանրաբեռնվածությունը.
- կատարելագործել ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դեղորայքով ապահովելու գործընթացը՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ դեղերի ցանկի ընդլայնման, դրանց քանակի ավելացման և դեղերի ձեռք բերման այլընտրանքային մեխանիզմների ներդրման միջոցով.
- ապահովել ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ բժշկական օգնության կազմակերպումն առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում՝ ժամանակին և առանց անհարկի ձգձգումների.
- քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ տեղափոխումն անվճար իրականացնելու ուղղությամբ.
- առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում ստացիոնար բուժման մեջ գտնվող ազատությունից զրկված անձանց համար ապահովել հիվանդասենյակներից անվճար հիմունքներով օգտվելու հնարավորություն.
- ապահովել տեղաշարժման խնդիրներ ունեցող ազատությունից զրկված անձանց տեղափոխումը հարմարեցված և պատշաճ պայմաններ ունեցող տրանսպորտային միջոցներով.

- պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով ամրագրված բժշկական թափոնների հավաքման և վնասազերծման միջոցառումները.
- քայլեր ձեռնարկել Ստորաբաժանումում տրամադրվող ատամնաբուժական ծառայությունները բարելավելու ուղղությամբ.
- մշակել ազատությունից զրկված անձանց բժշկական միջամտություններին, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու դեպքում, գրավոր իրազեկված համաձայնություն տալու ընթացակարգեր և ձևաթղթեր՝ բացառելով առանց անձի գրավոր համաձայնության բժշկական միջամտությունների իրականացման օրենսդրական պահանջները.
- բացառել Ստորաբաժանումում ժամկետանց դեղորայքի առկայությունը և ազատությունից զրկված անձանց տրամադրումը.
- պահպանել դեղորայքի պահման պայմանները.
- մշակել քրեակատարողական հիմնարկներում դեղորայքի ժամկետների վերահսկման գործուն մեխանիզմներ.
- ապահովել բժշկական փաստաթղթերի, այդ թվում՝ մատյանների պատշաճ վարումը և դեղորայքի հաշվառումը.
- ազատությունից զրկված անձանց արտաքին բժշկական զննությունը կազմակերպել քրեակատարողական հիմնարկ մուտքի և ելքի ցանկացած դեպքում՝ դրա համար հատուկ հարմարեցված և բավարար պայմաններով վայրում.
- ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դեպքերի վերաբերյալ Ձևաթղթերը կազմել օրենսդրությամբ սահմանված դեպքերում և համապատասխան ընթացակարգի պահպանմամբ.
- իրականացնել վերահսկողություն և վերլուծություն՝ ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դեպքերի վերաբերյալ Ձևաթղթերը կազմելու և դրանց ընթացակարգերը հետագայում պահպանելու նպատակով.
- պարբերաբար կազմակերպել բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, այդ թվում՝ մարմնական վնասվածքների պատշաճ արձանագրման վերաբերյալ.
- բացառել ազատությունից զրկված անձանց նկատմամբ տարբերակված մոտեցման դրսևորումները՝ հացադուլ հայտարարած անձանց համար ապահովելով պահման նույնանման պայմաններ.
- բացառել հացադուլ հայտարարած անձանց պատժախցային մասնաշենքում պահելու պրակտիկան.
- ապահովել հացադուլ հայտարարած անձանց պատշաճ բժշկական հսկողությունը, մասնավորապես՝ դրա հասանելիությունը և բժշկական գաղտնիքի պահպանումը.
- հացադուլ հայտարարած ազատությունից զրկված անձանց կշռումն իրականացնել շարժական կշեռքի միջոցով.
- ազատությունից զրկված անձանց տրամադրել պատշաճ որակի ներքնակներ և անկողնային այլ պարագաներ.
- իրականացնել խցերի վերանորոգման աշխատանքներ.
- մասնաշենքում տեղադրել աղբի հավաքման փակ տարաներ և այն տարհանել ավելի հաճախ.
- քրեակատարողական հիմնարկում իրականացնել միջատասպան միջոցառումներ.

- ազատությունից զրկված անձանց լոգանքի պատշաճ կազմակերպման նպատակով խցերի սանհանգույցներում իրականացնել համապատասխան վերանորոգման աշխատանքներ.
- նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն՝ ազատությունից զրկված անձանց համար նախատեսելով շաբաթական առնվազն 2 անգամ լոգանքի հնարավորություն՝ ելնելով ազատությունից զրկված ընդհանուր հիգիենայի պահպանման անհրաժեշտությունից և յուրահատկություններից, ինչպես նաև հաշվի առնել եղանակային պայմանները.
- «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի պատժախցային մասնաշենքում իրականացնել հրատապ վերանորոգման և մաքրման աշխատանքներ.
- պատժախցային մասնաշենքում ապահովել ազատությունից զրկված անձանց ներքնակների պահման պատշաճ պայմաններ.
- բացառել ազատությունից զրկված անձանց պատժախցում և պատախցային ռեժիմով քսան օրից ավելի ժամկետով անընդմեջ պահելու պրակտիկան.
- քայլեր ձեռնարկել մասնավոր ընկերության կողմից ազատությունից զրկված անձանց տրամադրվող սննդի անվտանգության, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 1182-Ն որոշման հավելված 1-ով սահմանված օրական նվազագույն չափաբաժինների պահպանման նկատմամբ վերահսկման մեխանիզմների և դրանց օրենսդրական կարգավորումների ներդրման ուղղությամբ.
- ազատությունից զրկված անձանց ապահովել պատշաճ որակի խմելու ջրով.
- քրեակատարողական հիմնարկում նախատեսված զբոսանքի վայրերը կահավորել մարմնամարզությամբ, խաղերով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ և սարքին պարագաներով.
- «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում 4-րդ մասնաշենքում ծառայությունը կազմակերպել այնպես, որ հնարավոր լինի կազմակերպել ազատությունից զրկված անձանց առնվազն մեկժամյա զբոսանքը.
- քայլեր ձեռնարկել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի հարակից ճանապարհահատվածները բարեկարգելու, ինչպես նաև հասարակական տրանսպորտի սպասարկումն ապահովելու ուղղությամբ.
- քրեակատարողական հիմնարկի մուտքի մոտ՝ հսկիչ-անցագրային կետի հարևանությամբ, և շենքում նախատեսել այցելուների համար համապատասխան կահավորանքով առանձին սպասասրահներ.
- ապահովել տեսակցության եկած անձանց առանձնանալու հնարավորությունը միաժամանակյա կարճատև տեսակցությունների կազմակերպման դեպքում.
- երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակներում, այդ թվում՝ դրանց սանհանգույցներում իրականացնել մաքրման աշխատանքներ.
- ապահովել երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակների նպատակային բաշխվածությունը՝ ելնելով տեսակցության եկած անձանց տարիքային առանձնահատկություններից և այլ առաջնային կարիքներից.
- բացառել ջրի անտեղի վատնումը երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակներում.
- երկարատև տեսակցության եկած երեխաների համար նախատեսված մանկական սենյակն ու զբոսաբակը ապահովել տարբեր տարիքային խմբերի երեխաների համար անհրաժեշտ խաղալիքներով և պարագաներով.
- ազատությունից զրկված անձանց տեսազանգերը կազմակերպել պատշաճ օդափոխվող սենյակում.
- վերանայել քրեակատարողական հիմնարկում աշխատող հոգեբանների թիվը.

- մշակել հոգեբանների աշխատանքային գործունեությունը կարգավորող ընթացակարգեր,
- բացառել արձակուրդի ընթացքում հոգեբանի աշխատանքային գործունեությունը.
- մշակել և կիրառել ախտորոշիչ փաթեթ, որն ուղղված կլինի ոչ միայն անձի ագրեսիվության մակարդակի ախտորոշմանը, այլև իր մեջ կներառի անձնային հարցարաններ, հարմարվողականության, միջանձնային փոխհարաբերությունների բացահայտմանը, ինտելեկտուալ մակարդակի գնահատմանն ուղղված մեթոդիկաներ.
- ապահովել մասնագետների կողմից առկա փաստաթղթերի, դատապարտված և կալանավորված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների պատշաճ, բովանդակային լրացման կարգը.
- ձևավորել միջմասնագիտական համագործակցության մշակույթ և մշակել այդ համագործակցության ձևաթղթային համակարգ.
- վերանայել քրեակատարողական հիմնարկների պետերի որոշմամբ կալանավորված անձին և դատապարտյալին որպես բացասական հակում ունեցողի հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու կարգը.
- տալ «բացասական հակում» հասկացության սահմանումը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել որոշակի տեսակի հակումները (ագրեսիվության և կոնֆլիկտայնության) բացասական հակումների շարքին դասելու հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով անձի անհատական ռիսկայնության գործոնը.
- բացասական հակում ունեցող անձանց հետ իրականացնել հակումների նվազեցման աշխատանքներ և դրանք պատշաճ կերպով արձանագրել համապատասխան փաստաթղթերում.
- իրականացնել ինքնավնասումների և ինքնասպանությունների զննության և ռիսկի գնահատման գործիքների վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների պարբերական վերապատրաստումներ՝ շեշտադրելով դրանց կարևորությունը.
- ազատությունից զրկված անձանց բարձրագույն կրթությունն առանձին կազմակերպելու նպատակով «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում առանձնացնել համապատասխան սենյակներ.
- ապահովել ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի պատշաճ իրացումը, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում կազմակերպել պարբերական և թիրախային կրթական ծրագրեր ու մասնագիտական դասընթացներ.
- շարունակաբար խթանել ազատությունից զրկված անձանց ներգրավվածությունը կրթական ծրագրերում՝ միաժամանակ ընդլայնելով դրանց բազմազանությունը.
- քննարկել «Ինստիգեյթ Ռոբոտիքս» ՓԲԸ-ի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ժամանակակից գիտելիքներ և քաղաքացիական մասնագիտություն ստանալու դասընթացի իրականացումը շարունակելու կամ այն նմանօրինակ այլ ծրագրով փոխարինելու հնարավորության հարցը.
- հաշվի առնելով ազատությունից զրկված անձանց շրջանում էլեկտրոնային գրականության հանդեպ հետաքրքրությունը՝ ստեղծել Էլեկտրոնային գրադարան և այն համալրել անհրաժեշտ գրականությամբ.
- մշակել մշակութային և սպորտային միջոցառումների մասնակցությունը խրախուսող տարբեր գործիքակազմեր, ինչը կարևոր է ազատությունից զրկված անձի վերասոցիալականացման և վարքագծի ուղղման համար.
- յուրաքանչյուր դեպքում կայացնել ազատությունից զրկված անձին պատժախուց տեղափոխելու պատճառաբանված որոշում՝ առանձին

մատնանշելով անձին պատժախցում պահելու ժամանակահատվածի հիմնավորումը.

- բացառել նույնանման դեպքերում կարգապահական տույժերի տարբերակված կիրառումը՝ ապահովելով տույժերի կիրառման միասնական քաղաքականություն.
- բացառել անձի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու շրջանակից դուրս այլ նպատակով անձին պատժախուց տեղափոխելու և այնտեղ պահելու պրակտիկան.
- վերանայել ազատությունից զրկված անձանց նկատմամբ խրախուսանքի միջոցներ չկիրառելու կամ սակավաթիվ կիրառելու քաղաքականությունը՝ ըստ անհրաժեշտության ժամանակ առ ժամանակ կիրառելով և դրանք պատշաճ արձանագրելով.
- վերանայել տույժերի և խրախուսանքի միջոցների համակարգը, ներդնել դրանց կիրառման ճկուն և արդյունավետ մեխանիզմ.
- վերանայել քրեակատարողական հիմնարկներում էլեկտրոնային հսկողության վերաբերյալ կարգավորումները.
- փոփոխել տեսանկարահանող սարքերի տեղակայումը,
- քրեակատարողական հիմնարկն ապահովել պատշաճ որակի տեսանկարահանող սարքերով,
- ապահովել տեխնիկական միջոցները բավարար ծավալով հիշողության կրիչներով.
- մշակել ժամկետանց հատուկ միջոցների խոտանման կարգավորումներ և ընթացակարգ.
- մշակել ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառության մանրակրկիտ ուղեցույցներ.
- մշակել կայծային պարպիչների և էլեկտրահարող սարքերի կիրառման հստակ չափանիշներ՝ կազմակերպելով անվտանգության բաժինների քրեակատարողական ծառայողների պատշաճ վերապատրաստումներն այդ կապակցությամբ.
- պատշաճ պլանավորել ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման հնարավորություն ենթադրող բոլոր միջոցառումները, ներառյալ՝ նախատեսված խուզարկությունները.
- ապահովել, որ նախատեսված խուզարկությունների մասնակցող քրեակատարողական ծառայողները կրեն տեսանելի անձնական նույնացման նշաններ և տարբերանշաններ, իսկ միջոցառումները՝ պատշաճ տեսագրվեն.
- ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման յուրաքանչյուր դեպք, անկախ քրեական վարույթ նախաձեռնելու համար նյութեր նախապատրաստելու հանգամանքից, մանրակրկիտ ձևով վերլուծել անվտանգության բաժնի և առհասարակ քրեակատարողական հիմնարկի ղեկավարության կողմից.
- ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքից հետո դրան մասնակցող բոլոր ծառայողների և վերադասների կողմից կազմել հանգամանալից զեկուցագիր՝ դրա գործադրման օրինականության, կոնկրետ հանգամանքներում բացարձակ անհրաժեշտության և առկա վտանգին խստորեն համաչափության վերաբերյալ.
- պատշաճ արձանագրել ազատությունից զրկված անձանց և քրեակատարողական ծառայողների ստացած մարմնական վնասվածքները.
- կազմակերպել անվտանգության բաժինների քրեակատարողական ծառայողների պատշաճ վերապատրաստումներ՝ խոսքի միջոցով լարվածության թոթափման, ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման և դրանց մասին զեկուցելու թեմաներով.

- ազատությունից զրկված օտարերկրացի անձանց իրավունքների պաշտպանության համար ապահովել վերջիններիս և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջև պատշաճ հաղորդակցվելու հնարավորությունը՝ թարգմանիչներ ներգրավելու, առցանց թարգմանչական ծառայություններ ներդնելու, զրուցարաններ մշակելու, թարգմանչական հատուկ սարքեր ձեռք բերելու կամ քրեակատարողական համակարգի աշխատակիցների համար համապատասխան օտար լեզուների ուսուցման դասընթացներ կազմակերպելու միջոցով.
- կազմակերպել հայերեն լեզվին չտիրապետող ազատությունից զրկված անձանց հետ հաղորդակցությունը բժշկական օգնության տրամադրման և սպասարկման ընթացքում.
- ազատությունից զրկված օտարերկրացի անձանց հասկանալի լեզվով պատշաճ իրազեկել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին՝ դրանք թարգմանելով անհրաժեշտ համապատասխան լեզուներով.
- կալանավորվածներին պահելու վայրերի և պատիժ կատարող հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին համապատասխան որոշման մշակման փուլում նախատեսել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց տեսազանգի հնարավորությունից օգտվելու ողջամիտ հաճախականություն և տևողություն.
- օտարերկրացի կալանավորված անձանց ապահովել անհրաժեշտ հագուստով.
- քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված օտարերկրացի անձանց լվացքը պատշաճ կազմակերպելու ուղղությամբ.
- հիմնովին բարելավել քրեակատարողական համակարգի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգը, այդ թվում՝ աշխատավարձը.
- ապահովել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ծառայողների համար բավարար աշխատանքային պայմաններ, ներառյալ՝ բավարար պայմաններով աշխատասենյակներ, սննդի ընդունման պատշաճ պայմաններ, բավարար սանիտարահիգիենիկ պայմաններով սանհանգույցներ.
- ապահովել քրեակատարողական ծառայողների հանգստի իրավունքը, ինչպես նաև իրականացվող վերապատրաստման դասընթացներին վերջիններիս անխոչընդոտ մասնակցությունը:

3. «Գորիս» ՔԿՀ

- «Գորիս» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց ապահովել բավարար կենսապայմաններով.
- իրականացնել վերանորոգման և աշխատանքներ ողջ քրեակատարողական հիմնարկում.
- անհապաղ վերանորոգել քրեակատարողական հիմնարկում առկա բոլոր լոգարանները և դրանց կից հանդերձարանները՝ ստեղծելով լոգանք ընդունելու պատշաճ և արժանապատիվ պայմաններ.
- ապահովել քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց լվացքի պատշաճ իրականացումը.
- քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի զբոսաբակերում իրականացնել բարեկարգման աշխատանքներ.
- քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց համար ապահովել նպատակային զբաղմունքներ, ներառյալ՝ աշխատանք, պարբերական և թիրախային կրթական ծրագրեր ու մասնագիտական դասընթացներ.
- ավելացնել ազատությունից զրկված անձանց ներգրավվածությունն ինչպես քրեակատարողական հիմնարկի կենցաղային սպասարկման, այնպես էլ

հնարավոր այլ աշխատանքներում՝ հաշվի առնելով նրանց կարողությունների շրջանակը, մասնագիտությունը, սեռը, տարիքը և այլ նշանակություն ունեցող հանգամանքներ.

- գրադարանը համալրել օրենսգրքերով, օրենքներով, ինչպես նաև իրավաբանական գրականությամբ:
- կարանտինային խցում և պատժախցերում, այդ թվում՝ դրանց սանհանգույցներում իրականացնել վերանորոգման և մաքրման աշխատանքներ.
- պատժախցերի սանհանգույցները բնակելի տարածքից առանձնացնել ամբողջական պատով և կահավորել դռներով՝ բացառելով ամբողջական դիտարկան հնարավորությունը.
- ապահովել պատժախցերում պահվող անձանց անկողնային պարագաների պահման համար պատշաճ պայմաններ:
- կարանտինային խցում և պատժախցերում, այդ թվում՝ դրանց սանհանգույցներում իրականացնել վերանորոգման և մաքրման աշխատանքներ.
- պատժախցերի սանհանգույցները բնակելի տարածքից առանձնացնել ամբողջական պատով և կահավորել դռներով՝ բացառելով ամբողջական դիտարկան հնարավորությունը.
- ապահովել պատժախցերում պահվող անձանց անկողնային պարագաների պահման համար պատշաճ պայմաններ:
- բարելավել քրեակատարողական հիմնարկներում բժշկական անձնակազմի աշխատանքային պայմաններն ու սոցիալական երաշխիքները, ստեղծել բժշկական անձնակազմի հաստիքների համալրման և նրանց վերապատրաստման ճկուն մեխանիզմներ.
- վերանայել ԲՍԲ-ում մատուցվող ծառայությունների ծավալի և անձնակազմի մասնագիտական պատրաստվածության հարաբերակցությունը, մասնավորապես՝ բժշկական անձնակազմի մասնագիտական կարողությունները և լրացուցիչ բուժքրոջ հաստիք ունենալու հնարավորությունը.
- ազատությունից զրկված անձանց ապահովել բավարար քանակությամբ և տեսականիով անհրաժեշտ դեղորայքով ու բժշկական պարագաներով.
- մշակել ազատությունից զրկված անձանց իրենց կամ մերձավոր ազգականների հաշվին ձեռք բերված դեղամիջոցների քրեակատարողական հիմնարկ ընդունելու հստակ մեխանիզմներ՝ առաջնորդվելով բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով.
- պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով ամրագրված բժշկական թափոնների հավաքման և վնասազերծման միջոցառումները.
- ապահովել ազատությունից զրկված անձանց բժշկական փաստաթղթերի և մատյանների պատշաճ վարումը.
- ժամանակին և առանց անհարկի ձգձգումների ապահովել ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ բժշկական օգնության կազմակերպումն առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում.
- անհրաժեշտության դեպքում ապահովել ժամանակին և առանց անհարկի ձգձգումների ազատությունից զրկված անձանց փոխադրումը «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:
- բժշկական զննություն իրականացնելու համար նախատեսված սենյակում ապահովել անհրաժեշտ կահավորանք և նշված սենյակն, ըստ

անհրաժեշտության, քրեակատարողական ծառայողների կողմից տեսանելիության սահմաններում պահելու հնարավորություն.

- ազատությունից զրկված անձանց արտաքին բժշկական զննությունը կազմակերպել քրեակատարողական հիմնարկի անձնակազմի, ինչպես նաև ոստիկանության ուղեկցող ծառայողի լսելիության սահմաններից և տեսադաշտից դուրս.
- ազատությունից զրկված անձանց արտաքին բժշկական զննությունը կազմակերպել քրեակատարողական հիմնարկ մուտքի և ելքի ցանկացած դեպքում՝ դրա համար հատուկ հարմարեցված և բավարար պայմաններով վայրերում.
- չհամատեղել ազատությունից զրկված անձանց արտաքին զննությունն ու խուզարկությունը.
- բժշկական զննությունը միատեսակ և արդյունավետ անցկացնելու, խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի կանխարգելման և դեպքերի բացահայտման նպատակով ապահովել ազատությունից զրկված անձանց բժշկական զննության արձանագրության ձևաթղթերի գործնական կիրառությունը և մշակել դրանց լրացման ուղեցույցներ.
- կազմակերպել բժշկական անձնակազմի մասնագիտական վերապատրաստում, այդ թվում՝ մարմնական վնասվածքների պատշաճ արձանագրման վերաբերյալ:
- քրեակատարողական հիմնարկում նախատեսել քննչական սենյակ՝ քննիչների և փաստաբանների հետ տեսակցությունները պատշաճ կազմակերպելու նպատակով.
- քրեակատարողական հիմնարկում նախատեսել տեսազանգերի իրականացման համար առանձին սենյակ՝ տեսազանգերի և կարճատև տեսակցությունների պատշաճ կազմակերպման նպատակով.
- երկարատև տեսակցության եկած անձանց, այդ թվում՝ անչափահասների համար նախատեսել առանձին զբոսանքի դուրս գալու հնարավորություն.
- քրեակատարողական հիմնարկում նախատեսել տեսակցության եկած երեխաների համար առանձնացված մանկական սենյակ.
- քրեակատարողական հիմնարկում նախատեսել համապատասխան պայմաններ ՍՀԻԱ բաժնի պատշաճ աշխատանքը կազմակերպելու համար.
- քայլեր ձեռնարկել ՍՀԻԱ բաժնի հոգեբանի հաստիքը համալրելու ուղղությամբ՝ հնարավորինս վերանայելով դրան խոչընդոտող հանգամանքները, այդ թվում՝ հաստիքի համար նախատեսված սոցիալական երաշխիքները.
- ապահովել փաստաթղթերի կառուցվածքային և բովանդակային պատշաճ վարումը:
- բացասական հակում ունեցող անձանց հետ իրականացնել հակումների նվազեցմանն ուղղված աշխատանքներ և դրանք պատշաճ կերպով արձանագրել համապատասխան մատյանում.
- սահմանել «բացասական հակում» հասկացությունը, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել որոշակի տեսակի հակումները բացասական հակումների շարքին դասելու հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով անձի անհատական ռիսկայնության գործոնը.
- ինքնավնասումների և ինքնասպանությունների ռիսկի նվազեցմանն ուղղված աշխատանքների խորքային իրականացման նպատակով համալրել հոգեբանի հաստիքը:
- քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց համար ապահովել նպատակային զբաղմունքներ, ներառյալ՝ աշխատանք, պարբերական և թիրախային կրթական ծրագրեր ու մասնագիտական դասընթացներ.

- ավելացնել ազատությունից զրկված անձանց ներգրավվածությունն ինչպես քրեակատարողական հիմնարկի կենցաղային սպասարկման, այնպես էլ հնարավոր այլ աշխատանքներում՝ հաշվի առնելով նրանց կարողությունների շրջանակը, մասնագիտությունը, սեռը, տարիքը և այլ նշանակություն ունեցող հանգամանքներ.
- գրադարանը համալրել օրենսգրքերով, օրենքներով, ինչպես նաև իրավաբանական գրականությամբ:
- կարանտինային խցում և պատժախցերում, այդ թվում՝ դրանց սանհանգույցներում իրականացնել վերանորոգման և մաքրման աշխատանքներ.
- պատժախցերի սանհանգույցները բնակելի տարածքից առանձնացնել ամբողջական պատով և կահավորել դռներով.
- ապահովել պատժախցերում պահվող անձանց անկողնային պարագաների պահման համար պատշաճ պայմաններ.
- պատշաճ վերահսկողություն իրականացնել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածի պահանջների պահպանման նկատմամբ.
- բացառել կարգապահական տույժերի տարբերակված կիրառումը՝ ապահովելով տույժերի կիրառման միասնական քաղաքականություն.
- յուրաքանչյուր դեպքում կայացնել ազատությունից զրկված անձին պատժախուց տեղափոխելու պատճառաբանված որոշում՝ առանձին մատնանշելով անձին պատժախցում պահելու ժամանակահատվածի հիմնավորումը:
- վարել համապատասխան փաստաթղթեր՝ անկախ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի գործադրման դեպքերի հաճախականությունից.
- ապահովել բավարար պայմաններ հատուկ միջոցների պահման համար.
- մշակել ժամկետանց հատուկ միջոցների խոտանման կարգավորումներ և ընթացակարգ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3.ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մարդու իրավունքների պաշտպանի հետևությունները 2022թ. ապրիլի 1-ին Երևանի քաղաքապետարանի մոտ տեղի ունեցած հավաքին երեխաների մասնակցության վերաբերյալ	02.04.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2187
2. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը իրականացնում է տեղի ունեցող բողոքի ակցիաների դիտարկում ինչպես անմիջականորեն, այնպես էլ լրատվամիջոցների ու սոցիալական մեդիայի միջոցով:	26.04.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2207
3. Պաշտպանի աշխատակազմը շարունակում է իրականացնել	27.04.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2208

մշտադիտարկում քաղաքացիների կողմից անցկացվող բողոքի ակցիաների և բերման ենթարկված քաղաքացիների վերաբերյալ:		
4. Ինչպես արդեն տեղեկացրել ենք այսօր՝ ապրիլի 27-ին, Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբերն այցեր են իրականացրել Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարբեր ստորաբաժանումներ՝ Կենտրոնի, Արաբկիրի, Էրեբունու, Քանաքեռ-Զեյթունի, Մալաթիայի և Մաշտոցի բաժիններ:	27.04.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2209
5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբերը շարունակում են այցեր իրականացնել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության մի շարք ստորաբաժանումներ, մասնավորապես՝ Կենտրոնի, Արաբկիրի, էրեբունու, Քանաքեռ-Զեյթունի, Ծենգավիթի, Մալաթիայի և Մաշտոցի բաժիններ:	29.04.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2210
6. Հավաքներին երեխաների մասնակցությանը և նրանց իրավունքների իրացման ապահովման հետ կապված հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո:	02.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2211
7. Ինչպես արդեն հայտնել էինք, Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խմբերը վաղ առավոտից իրականացրել են արագ արձագանքման այցեր Ոստիկանության թվով 8 բաժիններ բերման ենթարկված թվով առավել քան 151 անձանց:	03.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2216
8. Վերջին օրերին կատարված արագ արձագանքման այցերի շրջանակում պաշտպանի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են նաև որոշ փաստաբանների կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքեր:	03.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2218
9. Այսօր Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբերն այցելել են թվով 8 ոստիկանության բաժիններ՝ Երևանում՝ խորհրդատվություն և իրավունքների իրացման աջակցություն ցուցաբերելով ավելի քան 125 անձանց:	04.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2219

10. Վերջին օրերին Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խմբերի կողմից ոստիկանության տարբեր բաժիններ կատարած արագ արձագանքման այցերի արդյունքում արձանագրված շարունակական դարձած խնդիրը վերաբերում է անձի նույնականացման /ինքությունը պարզելու/ ձևավորված արատավոր պրակտիկային:	04.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2220
11. Մայիսի 3-ի և մայիսի 4-ի օրվա երկրորդ կեսին իրականացված արագ արձագանքման այցերի և մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփ.	05.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2222
12. Մայիսի 5-ին իրականացված արագ արձագանքման այցերի և մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփ	06.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2223
13. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը շարունակում է իրականացնել հավաքների և զանգվածային լրատվության միջոցների ու սոցիալական հարթակների մշտադիտարկում:	06.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2225
14. Մայիսի 6-ին իրականացված արագ արձագանքման այցերի և մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփ	10.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2226
15. Մայիսի 10-ին իրականացված արագ արձագանքման այցերի և վերջին օրերին կատարված ՁԼՄ-ների հրապարակումների մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ ամփոփ	16.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2227
16. Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումները 16.05.2022թ իրականացված հավաքների վերաբերյալ	17.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2232
17. ՄԻՊ արագ արձագանքման այցերի և մշտադիտարկումների վերաբերյալ ամփոփ	17.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2234
18. Իրականացված արագ արձագանքման այցերի և մշտադիտարկումների վերաբերյալ ամփոփ	18.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2236
19. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել է իրականացվել Երևան քաղաքում տեղի ունեցող հավաքների մշտադիտարկում	19.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2238
20. ՄԻՊ արագ արձագանքման խմբերը 30.05.2022թ. այցեր են իրականացրել Երևան քաղաքում Ոստիկանության թվով 6	31.05.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2251

բաժիններ և իրավունքների իրացման աջակցություն ցուցաբերել շուրջ 100 անձանց		
21. 03.06.2022թ.-ին երեկոյան Երևան քաղաքի Պռոշյան-Դեմիրճյան փողոցների հատման տարածքում տեղի ունեցած գործողությունները գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Դեպքի ընթացքում Պաշտպանի արագ արձագանքման խմբերը մեկնել են Ոստիկանության համապատասխան բաժիններ, ինչպես նաև իրականացվել է ՁԼՄ հրապարակումների և տարածված տեսաձայնագրությունների ուսումնասիրություն:	04.06.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2255
22. Այսօր Պարոնյան փողոցից քաղաքացիներին բերման ենթարկելու առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խումբը մեկնել է Ոստիկանության բաժիններ՝ ապահովելու բերման ենթարկվածների իրավունքների պաշտպանությունը:	23.11.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2411
23. Երեկ Լոռու մարզում ոստիկանության ծառայողների և քաղաքացիների մասնակցությամբ տեղի ունեցած դեպքի վերաբերյալ, որի արդյունքում, ըստ որոշ հրապարակումների՝ քաղաքացիներին հասցվել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ և կիրառվել է արցունքաբեր գազ, Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել ՀՀ ոստիկանությունից, որի համաձայն՝ դեպքի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ:	28.11.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2415
24. Այսօր Հանրապետության հրապարակից և հարակից տարածքներից քաղաքացիներին բերման ենթարկելու առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խմբերը մեկնել են Ոստիկանության բաժիններ՝ ապահովելու բերման ենթարկվածների իրավունքների պաշտպանությունը:	06.12.22	https://ombuds.am/am/site/ViewNews/2429